



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9-10 1895

ՍԵՊՏԵՄ.-ՀՈԿՏԵՄ.

1895 № 9-10

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

1	ՄԱՆՈՒԷԼԵԱՆ, ԼԵՌՈՆ	1187	Գալիլէ և Միլտոն (պոէմա):
2	ԱԳԵԼԵԱՆ, Ա.	1215	Ծանր խնդիր (նամանորութիւն)
3	ՊՈՒՇԿԻՆԻՅ՝—Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ	1225	***, Բլբուլ (երկու բանաստ.):
4	ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԻՐ	1226	Ինձ ասում են (բանաստ.):
5	ՄՈՒՐԱԳԵԱՆՅ, Յ.	1227	Փոթիից-Գուլթալիս (վերջ):
6	ՇԱՆԹ.	1241	Պատկեր: (բանաստ.):
7	ՆՈՅՆԸ.	1242	Ասուպը (բանաստ.):
8	ՂԱԶԱՐԵԱՆ, ԵՐՈՒԱՆԴ.	1243	Ազատւած Բողաբիրան:
9	ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ	1257	Ռոմանս (բանաստ.):
10	ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	1259	Նամուս և Ղէլրաթ (բանաստ.):
11	ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻԲ.	1260	Կովկասը հարկւր տարի ատաջ: Աղա- Մահմադ-խանը և Թիֆլ. աւերումը:
12	ԹԱՌԱՅԵԱՆՅ, ՍԵԴՐԱԿ.	1292	Մեղ.-Թանգեանի «Մշակ և Նոր-Գար կուսակցութիւններ»:
13	ՂԱԶԱՐԵԱՆՅ, ԵՐՈՒԱՆԴ.	1295	Մամիկոնեանի «Հաղարից մէկը»:
14	ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, Ա.	1299	Ժամանակակից տեսութիւն.—Հայ- կական խնդրի նորագոյն զարգա- ցումը: Նոր կոտորածները և Իկ- ֆարմների հաստատումը:
15	ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ, ԱՏ.	1306	Նամակներ Կ. Պոլսից. Հայկական մեծ ցույց և կոտորածները Կ. Պոլսում:
16	Ա. Ա.	1314	Մեծ եղարօս Գեամիլ-փաշա.
17	ԼՈՒՍԻՆԻ.	1316	Նոր-Գար և «Չարիքների վերջը»:
18	ՄԱՆՈՒԷԼԵԱՆ, ԼԵՌՈՆ.	1321	Դրամա և բեմական գեղարեստ: Հաջոց ներկայացումները:
19	ԽՄԲ.	1334	Զանազան լուրեր:


ՏԵԼԵԿԱՏՈՒ և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՆԻ

Типография М. Д. Ротиняна, Гол. пр., д. № 41.

1895



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9—10 1895

ԱՆՊՏԵՍԲԵՐ-ՀՈԿՏԵՍԲԵՐ

1895 № 9—10

Ե Ր Ք Ե Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротвианца, Гол. пр. д. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Сентября, 1895 г.

ԳԱԼԻԼԵ ԵՒ ՄԻԼՏՈՆ

(ՊՕԼՄԱ)

ԼԵԻՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Պօէմային վերաբերեալ մի քանի խօսք հեղինակի կողմից

Գալիլէն—XVІІ դ. հռչակաւոր խաղացին է, որ նշանաւոր հետք է թողել արեգերագիտութեան մէջ և, իբր անկախ մտքի և առաջադիմութեան զօրավիգ և ճշմարտութեան մարտիրոս, կըրկնակի անմահացրել է իւր անունը:

Միլտոնը—նոյն դարու մեծահամբաւ անգլիացին է, «Կորուսեալ դրախտի» հեղինակը, բազմակողմանի և անվեհեր գործիչ գրական և քաղաքական ասպարիզում, որին անւանում են «ազատութեան քուրմ» այն սիրոյ համար, որ նա տածում էր յէպի ազատութիւն մտքի և խղճի:

Այդ երկու անձանց տեսութիւնը, որ բռնում է ներկայ պօէմայի կարեւոր մասը, պատմական եղելութիւն է և տեղի է ունեցել 1639 թ., երբ Միլտոնը ճանապարհորդում էր Իտալիայում: Տեղեկանալով, որ Գալիլէին ազատել են բանտից, նա դնաց աչցելութեան. իսկ «Տոսկանացի փիլիսոփան» կենում էր այդ ժամանակ Ֆլորենցիայի մօտ իւր Արչետրի կոչւած վիլլայում: Եօթանասուն և եօթ տարեկան զառամեալ ծերունի, զրկւած աչքերից, հալ ու մաշ եղած Ինկիզիցիայի անվերջանալի հալածանքներից, Գալիլէի մի ոտը՝ խորտակած յոցերի վերայ էր, միւսը՝ արդէն գերեզմանի մօտ: Հասկանալի է, թէ ինչ տեսակի հետաքրքրութիւն էր այն

հետաքրքրութիւնը, որ զրդեց Միլտոնին անպատճառ տեսնել մեծ ծերունու հետ: Պայծառ գաղափարների շրջանում, հազիւ երեսնամեայ վառվռուն մի երիտասարդ և լանուղղայ իդէալիստ՝ Միլտոնը սրտատրոփ և մեծ պատկառանքով պիտի մօտենար գիտութեան և ճշմարտութեան համար մարտնչող հերոսին, որին սակայն վիճակւած էր մի ծանր և տխուր բաժին՝ երբէք չազատուել Խնկիզիցիայի ճիրանիւրից:

«Բայց այնուամենայնիւ շարժւում է!» - Խորին համոզման և և մտքի անկախութեան այս կլասիկական խօսքերը, որ արտասանել է Գալիլէն այն բոլէին, երբ մահն էր տեսնում իւր աւքի առջև, պարզ է, թէ ինչ դիւթիւ գօրութեամբ պիտի հրապուրէին Միլտոնին դէպի այն անձնաւորութիւնը, որ հոգեկան այնքան ոյժ է ունեցել այդ համարձակ ֆրազը ասելու:

Գալիլէի հետ ունեցած սրտածմլիկ տեսութիւնը մեծ տպաւորութիւն գործեց Միլտոնի վերայ և լցրեց նորա հոգին խորին ատեւութեամբ դէպի ամեն տեսակ բռնակալութիւն, մանաւանդ հոգեւոր բռնակալութիւն: Ասելի քան քսան տարի անցած, այդ տպաւորութեան հեռաւոր արտայայտութիւնը մենք գտնում ենք նորա «Վորուսեալ դրախտ» և «Սամսոն ըմբիշ» երկերի մէջ, որ նա յօրինեց հիասթափութեան շրջանում, երբ կուրացած և չաղթահարւած թշնամիներից, իւր դստեր առաջնորդութեամբ սիրում էր շրջել պարտիզում, իսկ և իսկ այնպէս, ինչպէս Գալիլէն, և թելադրել իւր աղջկան նշանաւոր պօէմայի անմահ տողերը:

ՊՕԵՄԱՅԻ ԱՆՁԻՆՔ

Գալիլէ.

Միլտոն.

Կոյս, Գալիլէի գուստրը.

Գոմինիկեան վարդապետ, Խնկիզիցիայի գործակալ ¹⁾,

Սգնական գործակալի, աբեղայ:

Տեսարանը—պարտէզ. ծառերի ետեւից երևում է վանքի զմբէթը և խաչը:

¹⁾ Մինչև կեսանքի վերջը Գալիլէն մնաց Խնկիզիցիայի հսկողութեան ներքոյ: Վերահսկողութիւնը չանձնւած էր Խնկիզիցիայի մի գործակալի Ման. հեղ.

Բայց անուամենայնիւ շարժում է! (երկիրը)

E pur si muove!

Դ = չէ չէ:

ԵՐԵՒՈՅԹ I

Մտնում են ԴՈՄԻՆԻԿԵԱՆ և ՄԻԼՏՈՆ

ՄԻԼՏՈՆ

Ասացիք, հայր սուրբ, թէ այստեղ է նա.
Բայց չէ երևում:

ԴՈՄԻՆԻԿԵԱՆ

Ամեն երեկոյ

Արեգակի մայր մլտնելուց առաջ
Մեր ծերուկի կոյրը, ըստ սովորութեան,
Իալիս է պարտէզ իւր միակ գլատեր
Առաջնորդութեամբ և, կէս ժամի չափ
Նրջագայելով ծառուղիներում,
Կըրկին դառնում է իւր օթիւսնը:
Ինչպէս որ լինի, նա շուտով կը գայ
Իւր աղջըկայ հետ: Միայն խընդրում եմ,
Ի սէր Աստըծոյ, չը խօսէք հետը
Այնպիսի չուղի: Բաների վերայ,
Որոնք կարող են կենդանացընել
Յիշողութեան մէջ անցած օրերի
Դառնութիւնները:

ՄԻԼՏՈՆ

Խոստովանում եմ,

Հայր սուրբ, չը դիտեմ, թէ այուզի բաներ:
Ասելով, ինչից կամենում էք զուր
Ազգուշացընել:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Կարելի բան է,
 Որ զուք անգիտակ լինիք ծերունու
 Անօրինութեան? Ողջ աշխարհ գիտէ:
 ՄԻԼՏՈՆ

Անօրինութեան?

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Ջարմանալի է!
 Ֆլորենցիայում ¹⁾, իմ ազնիւ պարոն,
 Ումնից կամենաք, հարցրէք — իսկոյն
 Ձեզ ամեն մէկը կ'ասէ. «Գալիլէն
 Ամբարիշտ, անկրօն խաւացի է,
 Որ, չը նայելով, որ եօթանասունն
 Նրդէն ծալել է, հետախուզում է
 Ասործոյ մատեանն, հակաճառում է
 Ասործոյ խօսքին և սատանայի
 Թելադրութեամբ հետամուտ է միշտ
 Արարչագործի ստեղծագործութեան
 Բոլոր գաղտնիներն մերկացնելու,
 Գաղտնիք, որ, սակայն, անհասանելի
 Եւ անքննին է, ինչպէս ասած է
 Եւ Ոուրբ զըրոց մէջ»:

ՄԻԼՏՈՆ

Այդ չը գիտէի.

Ընդհակառակը, ես լըսած էի,
 Որ նա, Գալիլէն, Խաւիայի փառք
 Եւ պարծանքն է, գիտութեան ասողը,
 Որ նա, չը նայած իւր խոր ծերութեան,
 Երիտասարդի տակաւին խանդով

¹⁾ Վերածնութեան չըջանում (XIV, XV և մասամբ XVI դարում)
 Ֆլորենցիայի Խաւիայի լուսաւորութեան կենտրոնն էր:

Եւ աշխուժութեամբ շարունակում է
Բընութեան դադունին երևան հանել,
Նոր աստղեր փրնտրել հաստատութեան մէջ,
Մեր երկրագընդի պըտոյաների հետ
Առաջ և առաջ մըղել իւր միտքը
Եւ իմաստութեան մատեանի վերայ
Լուսոյ նորանոր շողեր տարածել:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ (հեգնութեամբ)

Նոր աստղեր փրնտրել հաստատութեան մէջ,
Մեր երկրագընդի պըտոյաների հետ
Առաջ և առաջ մըղել իւր միտքը...
Գեղեցիկ բառեր! բառեր, որոնցից
Նորասէրների խելքը թըռչում է,
Այնքան հըրճոււմ են: Բայց և նոյնժամայն
Ինչ անբովանդակ և անմիտ բառեր!
Օ, ցաւալի է! Որքան փոխել են
ժամանակները, և որքան մեծ է
ժամանակակից գալթակղութիւնը!
Ասացէք խընդրեմ, միթէ մեր հայրերն
Մեզանից պակաս երջանիկ էին
Առանց ձեր այդ ճնոր աստղերի, առանց
Բընութեան դադունին հետախուզելու,
Առանց զանազան պըտոյաների? Հա?
Նոքա բախտաւոր չէին մեզանից?

ՄԻԼՏՈՆ

Ես այդ չը գիտեմ:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Իսկ ես այդ գիտեմ:

Հաւատ, հեղութիւն, պատկառանք և սէր—
Ահա այն փայլուն լուսատու աստղերն,
Որոնց որոնում էին թէ ծերը
Եւ թէ պատանին: Բայց այժմ—աւաղ!
Պերունիները նոյն իսկ, մոռացած:

Տիրոջ իմաստուն պատւիրանները,
 Կուրացած անմիտ նորասիրութեամբ,
 Ճըգնում են զըտնել անհասանելին
 Եւ անքննելին—քննել են ուզում!
 Էլ ինչ պահանջներ պատանիներից,
 Եթէ ծերերը արդէն մոլորւած
 Եւ գայթակղւած են? Եւ ինչ ասացիք
 Դուք իմաստութեան մատեանի մասին?
 Այդ ով է կարող լուսոյ նորանոր
 Շողեր տարածել մեր իմաստութեան
 Մատեանի վերայ? Որ մահկանացուն?
 Եւ գիտէք, որքն է իմաստութեան
 Մատեանը? Ահա—տեսնում էք դուք այս
 Աւետարանը? Ահա գերագոյն
 Մեր իմաստութեան միակ մատեանը,
 Այն սուրբ մատեանը, որ ճոր շողերի
 Բընաւ կարօտ չէ, քանի որ ինքը
 Էութեամբ լոյս է, աւելի պայծառ,
 Քան արեգակի բոլոր շողերը
 Միասին առած:—Այնտեղ մի՛ փնտրէք
 Նորանոր աստղեր, որքան մեր աչքին
 Տեսանելի են հաստատութեան մէջ—
 Այն էլ բաւական! Նոր աստղեր կ'ուզէք,
 Փընտրեցէք այստեղ, այս սուրբ գրքի մէջ,
 Ուր ամեն մի բառն—մի փայլուն աստղ է!...

ՄԻՆՏՈՆ

Տիրոջ պատկերով ըստեղծւած մարդը
 Իւր հոգու խորքում շըրում է մի մասն
 Արարչագործի իմաստուն մրտքի,
 Եւ մարդու միտքը չը գիտէ կապանք.
 Աւելի ազատ, քան թէ ամպերը,
 Աւելի արագ, քան թէ կայծակը,
 Թըռիչքների մէջ է միայն և եթ

Իւր կենդանութեան խորհուրդն առնում.
Անշարժութիւնը—մեռելութիւն է
Մարդկային մըտքի—Հայր սուրբ, մեղանից
Ոչ ոք չէ կարող մի սահման դնել
Մեր մըտքին. ինքը մեծ բընութիւնը
Ազատութիւն է պարգևել նորան:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Ո՛չ, Նա ինքըն է, Տէր Աստածըն է
Այդպիսի սահման դրել մեր մըտքին—
Եւ մեզ ասել է. «իզուր մի՛ քըննէք
Այն, ինչ իսկապէս անքըննելի է!»
Եւ վաչ աչն դռող մահկանացուն,
Ով կ'անգիտանայ երկնային Տիրոջ
Այս սուրբ բարբառը: Ահա Գալիլէն
Մեզ լաւ օրինակ: Նորա միտքըն էլ
Խիզախեց ճախրել տիեզերքի մէջ,
Զեր ասածի պէս, և թևակըտուր
Թըռչունի նման՝ գլորեց գետին.
Տիրոջ բարկութիւնն, ինչպէս մի կայծակ,
Փայլեց աչքերին—և աչն աչքերը,
Որ յաւակնութիւն ունէին պատուել
Սուրբ վարագուրով ծակած գաղտնիքը
Անդըրերկնային, ոչ միայն ասողեր
Այլ ևլս տեսնել չը կարողացան,
Նոյն իսկ սիրեցեալ դաստեր երեսը
Զը պիտի տեսնեն և ոչ մի անգամ!
Երբ արեգակը երկնականմարում
Պայծառ շողում է և արար-աշխարհ
Լուսաւորում է ճառագայթներով,
Գալիլէի շուրջ—խաւար է տիրում:
Երբ գիշերները Աստած վառում է
Իւր ճրագները հաստատութեան մէջ,
Եւ ամենայն ոք ըսքանչանում է

Նոցա վառ տեսքից, Գալիլէի շուրջ—
 Խաւար է տիրում, միշտ և միշտ խաւար,
 Սիրտ մաշող խաւար:—Եւ այսպէս տհա
 Սարսափելի է Ամենակարող
 Հօր բարկութիւնը: Թող այսուհետեւ
 Գալիլէն փնտրէ նորանոր աստղեր
 Եւ իմաստութեան մատեանի վերայ
 Լուսոյ նորանոր շողեր տարածէ!...

ՄԻԼՏՈՆ (առանձին)

Օ, այս մոլեւանդ Ֆանատիկոսից
 Ինկէզիցիայի դարձ հոռ է փրշում!

ԴՈՄԻՆԻԿԱՆ

Սակայն այդ մի կողմ: Ասացէք խնդրեմ,
 Ումից լսեցիք դուք այդ կարծիքը
 Ճերունու մասին?

ՄԻԼՏՈՆ

Զը գիտեմ, ո՛ր էր:

Անճանօթ մի մարդ:

ԴՈՄԻՆԻԿԱՆ

Բայց զոնէ կ'ասէք,
 Թէ որտեղ արդեօք դուք հանդիպեցիք
 Այդ անճանօթին:

ՄԻԼՏՈՆ

Հայր սուրբ, դուք գիտէք,
 Ես օտար մարդ եմ և անկարող եմ
 Ես զոհացում տալ ձեր հարցումներին:
 Երբ ես խընդրեցի, որ Գալիլէի
 Տեղն ինձ յայտնէ, նա ուրախութեամբ
 Յանձնառու եղաւ ուղեկից լինել
 Ինձ մինչև այստեղ:

ԴՈՄԻՆԻԿԱՆ

Քանի տարեկան:

Կը լինէր?

ՄԻԼՏՈՆ

Իրաւ զըժւարէ ասել:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Մօտաւորապէս — հասակըն առած

Թէ երիտասարդ?

ՄԻԼՏՈՆ

Երիտասարդ էր:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Շատ բարի: Յետոյ՝ ինքը նիհար էր

եւ բարձրահասակ?

ՄԻԼՏՈՆ (առանձին)

Ես չեմ սխալւել.

Ինկւիզիցիայի գործակալի հետ

Գործ ունիմ: Լաւ է, որ ըզդոյշ եղայ

եւ աւելորդ խօսք չը թըղցրի բերնիցս:

(Գոմինիկեանին) Այո, նիհար էր. բայց բարձրահասակ—

Ո՛չ — նա աւելի միջահասակ էր.

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Լաւ, շատ լաւ: Յետոյ՝ աչքերը փայլուն

եւ խորը ընկած?

ՄԻԼՏՈՆ

Այդ չը գիտեցի:

(Առանձին) Հայրսուրբը անշուշտ երիտասարդին

ճուղակի մէջ է կամենում ձգել:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Գեղեցիկ: Բայց նա Ֆլորենտացի էր?

ՄԻԼՏՈՆ

Չը գիտեմ: Կարծեմ:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Դէհ, ազնիւ պարօն,

Մընացէք բարով: Սեփական գործով

Շուտով աշտակերպ պիտի հեռանամ

Եւ, որովհետեւ ես ձեզ այլեւս
 Գուցէ չը տեսնեմ—ուստի հէնց այժմ
 Ես ձեզ մաղթում եմ բարի ճանապարհ
 Գէտի հայրենիք:—(Առանձին) Ծըպտի լրտեսը
 Ինձ յայտնեց երէկ, որ նա տեսել է
 Լէոնարդոյի ձեռքին արդեւած
 Մի գիրք, որ անշուշտ մեր Գալիլէի
 «Իլալօգն» է ¹⁾: Վաղուց է արդէն
 Այդ երիտասարդ պարոնի մասին
 Սաստիկ կասկածանք է իմ մէջ ծագել:
 Մեր սուրբ պարտքըն է սանձել ըմբոստին
 Եւ չար որոմը արմատից կորզել,—
 Այդպէս է Ասուած մեզ հըրամայել:
 (գնում է):

ԵՐԵՒՈՅԹ II

ՄԻԼՏՈՆ (մենակ)

(Նրկար նաւելով Գոմինիկեանի ետեւից)

Ինկիզիցիայի արդեօք թունաւոր
 Օձերից չէր սա, այն սև օձերից,
 Որ, պատսպարւած Տիրոջ անունով,
 Իրանց զխոռամներն են առաջ տանում,—
 Նենգամիտ և չար—
 Ընտիր և արդար և ճշմարտասէր
 Անձանց ոտի տակ որոգայթ լարում,
 Վիշապի շնչով հանգցնում լոյսը
 Վերածնութեան, ազնիւ, անկաշառ
 Էակների զէմ դարանակալում,
 Զար իժի նըման վըշշալով սողում,

¹⁾ «Իլալօգի» մէջ, ուր Գալիլէն խօսում է երկրի շարժման մասին, Սիմպլիցիօ ծածկանուշով և որդիծական ոգով նկարագրւած է Ուրբանոս VIII պապը, իբր ներկայացուցիչ հին աւանդութիւնների և մարդկային մտքի անշարժութեան:

Գալարում մարդկանց զարշապարի մօտ
Եւ գաղտուկ խածում?!...

Օ՛ բարի Ասուած!

Ինչու սիրեցեալ Քո որդոց բաղլը
Յանձնում ես զու այս հալածող և նենգ
Ինկի իզեցիացի գործակալներին?
Միթէ չես տեսնում, որ մինչ մեր հոգին
Թըռչում է վերեւ, ձրգտում է հասնել
Յորուն ասողերով զարդարւած գահիդ,
Մըտքի և խըղճի այս դահճները
Գիշատիչների անդուծ հրրճանքով
Փետտում, կըտրատում են մեր թևերը.
Մինչդեռ մեր միտքը, իւր հորիզոնը
Ընդարձակելով, ողջ տիեզերքի
Անհունութեան մէջ ծախրել է ուզում,
Ազատ արծւի պէս, նոքա շըղթացով
Կաշկանդում են մեզ, կտակապում երկրից
Եւ ծահիճների անշարժութեան մէջ
Ըստիպում են մեզ, զեռունների պէս,
Քարշել անարժան մեր գոյութիւնը!...
Օ, արդար Ասուած! ցասման ըռպէին
Ինչու հըրանիւթ շանթընկէցները
Դու չես թօթափում ինկի իզիցիացի
Դարանագործ, պիղծ այս ճիւղների
Բաղժութեան գըլխին?... (հեռից երևում է
Գալիլէն իւր դստեր հետ):

Ահա Գալիլէն.

Խըղճալի պատկեր! Այն էլ դուստրըն է,
Ապաբաղդ աղջիկ! Ինչպէս հրեշտակը
Արքայութեան մէջ առաջնորդում է
Իւր նորեկ հիւրին և ցոյց է տալիս
Նորան եղեմի բոլոր փառահեղ
Տեսարանները, նոյնպէս էլ կարծես
Այս կոյսը հօր հետ շըրջագայում է

Մառուղիներում, բայց միայն, աւաղ,
Այն տարբերութեամբ, որ հէզ ծերուկը,
Այքի լոյսից շուրկ, չէ կարող երբէք
Ոչ մի բան տեսնել, բացի խաւարից!...
(Գալիլէն և Կոստ առաջ են գալիս):

ԵՐԵՒՈՅԹ, III

ԳԱԼԻԼԷ. ԿՈՅՍ. ՄԻԼՏՈՆ (առանձին)

ԿՈՅՍ

Նըստարանի մօտ ենք, հայրիկ: Կ'ուզես
Փոքր ինչ նըստենք?

ԳԱԼԻԼԷ.

Ո՛չ, դուստր իմ, չըրջենք:
Ինկիզիցիայի բանտի մէջ երկար
Նստելուց, իրաւ, շատ յոգնել եմ ես.
Բայց իմ հանգիստը—չըրջելու մէջ է:—
Ինչ զով է օղբ!

ԿՈՅՍ.

Եւ ինչ դուրեկան!
Իսկ վերև երկինքն այնպէս մոյգ—կապույտ
Եւ այնքան մաքուր! Միմիայն այնտեղ,
Արեմուտքի մօտ, զուտ ոսկու նման,
Մի քանի կըտոր ամպեր են շողում
Եւ կարծես թէ մայր—մանող արևին
Հրաժեշտի ողջոյն են տալիս: Ափսոս,
Որ դու չես կարող տեսնել, հայրիկ իմ!

ԳԱԼԻԼԷ

Այո, որդեակ իմ! Այլևս երբէք
Յաւիտեան կարող չը պիտի լինիմ
Տեսնել բընութեան գեղեցկութիւններն:
Շուրջըս մութ խաւար—և ուրիշ ոչինչ:

ԿՈՅՍ

Օ, անբախտ իմ հայր!

ԳԱԼԻԼԵ

Իմ ձեռքով տընկած

Մառերըն արդէն հասակ են առել,
Եւ պըտուղներով ծանրաբեռնել են,
Ինչպէս ասում ես—չեմ կարող տեսնել
Եւ այդ ծառերը! Զըրկւած եմ ընդ միշտ
Եւ քեզ տեսնելու կարողութիւնից,
Քեզ, անգին դըստրիկ, որ իմ զառամեալ
Մերութեան միակ ըսփովիչըն ես,
Միակ նեցուկը...

ԿՈՅՍ

Գէթ այսուհետեւ

Քեզ խընայէին արժանապատիւ
Հայրերը և էլ իւրաքանչիւր օր
Զը գային հանգիստըդ վըրդովելու
Իրանց խորամանկ հարց ու փորձերով,
Թէ ով է եկել? եւ երբ? եւ ինչու?
Գէթ այսուհետեւ գաղտնի աչքերը
Կադարեն հեռից վերահըսկելուց
Ամեն մի քայլիդ և գաղտագողի
Ախանջ դընելուց ասած—լըսածիդ!

ԳԱԼԻԼԵ

«Ինկէրզիցիա!»— Միթէ, աղջիկըս,
Զը գիտես դու այս բառի իմաստը?
«Ինկէրզիցիա!»— մարդկային մըտքի
Հրէշաւոր ծընունդ, որ յօրինւած է
Իսպառ ջընջելու երկրի երեսից
Այն ամենը, ինչ ազնիւ է և վեհ,
Ինչ լուսաւոր է և յառաջադէմ!
Դըստրիկ իմ! հօրըդ փըրկութիւն չը կայ
Ինկէրզիցիայից!...

ԿՈՅՍ

Բայց ինչու? Ինչու? Միթէ քեզ սակաւ
Հալ ու մաշ արին քո դահիճները?

Այսուհետ էլ ինչ ահ ունին քեզնից,
 Կոյր, թոյլ և անզօր մի ալեորից?
 Հարց ու փորձ, տանջանք և բանտարկութիւն—
 Միթէ բաւ չէր այս?

Նոքա բազմամեայ

Քո աշխատանքի քաղցրիկ արդիւնքը
 Անաթէմայի մասնեցին. նոքա
 Անարատ անունդ հերետիկոսի
 Անւամբ կընքեցին. նոքա անկըօն
 Քեզ հըռչակեցին, և, որ ամենից,
 Անտանեկին էր քո հոգու համար,
 Հարկադրեցին, որ ծունկ խոնարհած
 Կարդինալների բազմութեան առջև
 Հրաժարուես բոլոր գաղափարներից,
 Որ քարոզել ես, և քո շըրթունքով
 Դու նըզովք կարդաս քո համոզմունքին
 Եւ քո դաւանած ըսկըզբունքներին...

ԳԱԼԻԼԵ

Երբէք, աղջիկըս, դու այդ չը կըրկնես!
 Ես հրաժարուամ իմ համոզմունքից
 Եւ իմ դաւանած ըսկըզբունքներից?
 Ո՛չ, աւելի հեշտ է կաթիլ կաթիլ
 Քամեկ իմ մարմնից ամբողջ արիւնըս,
 Քան թէ դուրս կորզել ամենափոքրը
 Իմ անկապտելի գաղափարներից!
 Այո՛, արդարեւ, ես չը դիմացայ
 Խոշտանգումներին, որ կըրուամ էի
 Իմ ոսոխներից, և նոցա ձեռքով
 Յօրինած անարդ հրաժարականըս
 Կարդացի: Սակայն նոյն ակնթարթում
 Սեփական արիւնս բողբոջեց իմ դէմ
 Եւ գըլխիս զարկեց, և ես նոյն ժամին,
 Տաքացած, ինչպէս ամեհի գաղան,

Ոտի կանգնեցի, թըշնամիներիս
 Առաջ ձըգելով խայտառակ թերթը,
 Գոռացի ես. «E pur si muove!»
 Եւ դու ասում ես—եւ հրաժարւել եմ
 Իմ համոզմունքից? (վանքի զանգերն հնչում են)
 Վանքի զանգերն

Ահա հընչում են: Աղջիկըս, գուցէ
 Դու կը ցանկացիր աղօթել, գընան:

ԿՈՅՍ

Այո, հայրիկըս: Երթամ, աղօթեմ,
 Որ Տէրը փըրկէ քեզ վերջ ի վերջոյ
 Հոգեւոր դասի հալածանքներից:

ԳԱԼԻԼԵ

Գընան, որդեանկ իմ: Ես այստեղ մենակ
 Կը շըրջեմ, մինչև դու վերադառնաս:
 (Կոչը գնում է: Գալիլէն, գաւազանի
 միջոցով որոշելով ձանապարհը, սկսում է քալել):

ԵՐԵՒՈՅԹ. IV

ԳԱԼԻԼԵ և ՄԻԼՏՈՆ

ՄԻԼՏՈՆ

Ինչ վեհ կերպարանք, ինչ վըսեմ քայլածք!
 Հանգըստեան կարօտ թըշառ ուրւական,
 Մարմնացած բողոք տըղիտութեան դէմ!
 Ինչ շահ, որ արդէն բանախց ազատ ես?
 Գեղեցկատեսիլ երկնականարը
 Քեզ համար մըռայլ բանտի կամար է!

ԳԱԼԻԼԵ (կանգ առնելով)

Այս ում ձայնըն եմ ես լըսում իմ մօտ?

ՄԻԼՏՈՆ

Աղնիւ Գալիլէ, ձեզ մօտ կանգնած է
 Մի երիտասարդ, որ եկաւ այստեղ

Անձամբ տեսնելու. այն մեծ ծերունուն,
 Որ տանջանքների բովի մէջ անգամ
 Չը թողեց ձեռքից լուսոյ ճրրագը
 Եւ իւր սուրբ կոչման չը դաւաճանեց
 Երբէք իւր օրում:

ԳԱԼԻԼԵ

Առողանուլթիւնդ

Կարծես մատնում է մի երիտասարդ
 Օտարականի. իսկ ձայնիդ մէջ կայ
 Մի ազնիւ հընչիւն, որ պողպատի պէս
 Ինձ դէպի քեզ է քարշում... մօտեցիր,
 Տուր ձեռքդ: Այժմ աւելի որոշ
 Ասան ինձ, ով ես?

ՄԻԼՏՈՆ

Ես—անգլիացի

Ճանապարհորդ եմ, անունըս—Միլտոն:
 Վաղուց է արդէն հրապուրում էր ինձ
 Մարդկային մշտքի վերածընուլթեան
 Այս սուրբ օրրանը: Եւ ինչ գեղեցիկ
 Նըկարագիրներ կարդացած էի
 Տեղիս ճոխ, փարթամ բընուլթեան մասին!
 Իտալիացի պայծառ երկինքը,
 Բարեխառն օդը և գեղածիծաղ,
 Անուշ գարունը՝ դիւթի: զօրութեամբ
 Ինձ ձըգում էին դէպի այս աշխարհ:
 Բացի այդ, ինձ քաջ յայտնի էր նաեւ,
 Որ այստեղ, նախկին Հըռովմի փառքի
 Բեկորների տակ՝ Կիկերոնների,
 Վիրգիլիոսների աճիւնն է թաղւած:

ԳԱԼԻԼԵ

Ուրեմըն այդպէս իմ հայրենիքը
 Քեզ դուր է գալիս? Այդ խիստ շոյում է

Ազգասիրական իմ ըզգացմունքը:
Բայց դու ամեն բան տեսար?

ՄԻԼՏՈՆ

Կարծում եմ:

Ինչ արժէր տեսնել, բոլոր տեսայ:
Տեսայ ես Ալպեան ըսպիտակափառ
Զիւնազարդ լեռներն և Ապենինեան
Ժայռեր, ձորերը և նոցա միջև
Անցնող սրբընթաց լեռնավըտակներն:
Տեսայ Վեղուվը, տեսայ Քաղաքը
Յաւիտենական, ուր կենդանացան
Մըտքիս մէջ նորից հին-հին դարերի
Անթիւ պատկերներ. Հռովմի հերոսներն
Ինձ ներկայացան իրանց անվեհեր
Կերպարանքովը: Տեսայ նորագոյն
Գեղարւեստների ձեռակերտները
Եւ ըսքանչացայ: Եղայ գիտութեանց
ձեմարաններում և արժանացայ
Անշափ սիրալիր ընդունելութեան ¹⁾:
Մի խօսքով, ամբողջ Խալիլայի
Գեղեցկութիւնը, փառք ու պարծանքը
Աւքովըս տեսայ, և, ինչպէս քաղցրը,
Կախարդիչ երազ՝ լիքը հրաշալի
Երեոյթներով, անջինջ կը մնայ
Յիշողութեանս մէջ խորը զըրոշմեւծ
Օրհնեալ Խալիլան: Իսկ Ֆլորենցիան
Անդիմադրելի ոյժով քարշում էր
Ինձ դէպի իրան. փափագում էի

¹⁾ Ֆլորենցիայի բանաստեղծները ներբողների միջ զովում էին միաբերան և փառաբանում Միլտոնին, որ աղ ժամանակ հաղիւ 30—31 տարեկան էր. աղքատ մեծ տպաւորութիւն էր գործել նա խալիլայում իւր ընդունակութիւններով և հարցասիրութեամբ:

Տեսնել ոչ այնքան ես այն վայրերը,
 Որտեղ փայլել են գեղարւեստի մէջ
 Դանտէ և Պետրարկա և Անջէլլօ,
 Որքան մանուսկրի իմ բաղձանքն էր
 Աչքովըս տեսնել այն մեծ ծերունուն,
 Որ հանդիսացաւ սուրբ ճրջմարտութեան
 Զինւոր-նահատակ:

ԳԱԼԻԼԵՅ

Երկար ժամանակ

Կը լինի, որ դու Խալիլայում ես?

ՄԻԼՏՈՆ

Տարին լըրացաւ և դեռ աւելի.
 Բայց Խալիլայից ես չեմ կըշտացել:
 Դեռ Յունաստանը մըտադիր էի
 Այցելել, սակայն իմ այս մէկ իղձը
 Կը փնայ անկատար, և այն ով գիտէ,
 Գուցէ յաւիտեան:

ԳԱԼԻԼԵՅ

Ինչու անկատար?

ՄԻԼՏՈՆ

Իմ հայրենիքը տաքնալի մէջ է.
 Խառնակ դըրութիւն և ալէկոծում
 Ժողովըրդի մէջ ¹⁾... Ես պիտ ըշտապեմ,
 Որպէս զի ինքըս մասնակից լինիմ
 Նորա վիճակին: Նա, ով սիրում է
 Իւր հայրենիքը, անտարբեր հոգով
 Կարող չէ լըսել նորա աղէտի
 Պատմութիւնները:

¹⁾ Այդ միջոցին Սկովտիան ոտի էր կանգնել իւր անկախութիւնը պաշտպանելու, իսկ Անգլիայում Կառլոս I պատրաստում էր իւր անկումը:

ԳԱԼԻԼԵ

Օ, Ալբիոնը,

Գիտեմ, սուրբ երկիր է ազատութեան.
Եւ այնտեղ հոգու եռուն ոչ երբ
Փանգով չեն պատիլ անգործութեան մէջ.
Այնտեղ գործելու կայ լայն սասարէզ:
Բայց Իտալիան...

ՄԻԼՏՈՆ

Օ, շարունակեցէք.

Ես ուշիուշով ձեզ պիտի լսեմ:
Ձեր բերնից ելած ամեն մի խօսքը,
Ինչպէս սուրբ պատգամ, ես պիտի պահեմ
Իմ սրբախի խորքում!

ԳԱԼԻԼԵ

Անսովոր, բարձր

Ոգևորութեան վեհ ձայն եմ լրսում:
Քո ներշնչանքը ասես հուր վառեց
Իմ մարած հոգում: Նորից յիշեցի
Ես իմ վաւրուուն իդէալների
Ծաղիկ հասակը, երբ հազար ու մէկ
Յոյսերով ժըպտում էր ինձ ապագաս,
Եւ հըսկայական ծըրագիրներով
Ըզրադւած էր միտքըս զիշեր-ցերեկ,
Ինչպէս սիրահարն անուրջների մէջ
Շոյում, փայփայում է գեղեցիկահու
Չքնաղ պատկերը, ինչպէս սօէտը
Ոգևորում է ստեղծագործական
Իւր ցընորքներով, ես ևս նոյնպէս
Հոգով ըզմայլւած էի երբեմն
Երկնականարի լուսատուներով:
Երջանիկ օրեր! Ինչ կար ինձ համար
Աւելի քաղցրիկ և երազելի,
Քան նորահընար հեւադիտակով

Նայել ասողերին և զիտել նոցա
 Ճանապարհները, կամ ողջ էութեամբ
 Խորունկ թափանցել անհուն բընութեան
 Երևոյթների դեռ և. քս անխոյզ
 Եւ խորախորհուրդ պատճառների մէջ!
 Բայց հազար ամսոս! Գուհ հօ տեմնում ես,
 Թէ, իմ անսահման սիրոյ փոխարէն,
 Ինչպէս հատուցեց ինձ բընութիւնը,
 Որ իւր կըրծքի մէջ անըսպառելի
 Ողորմութեան հետ պահած է անզուսպ
 Եւ մեծ չարութիւն: Նա, հանգցնելով
 Աչքերիս լոյսը, աշխարհն ինձ համար
 Դարձրեց խաօս և անյոյս խաւար,
 Խորտակեց բոլոր ոսկի յոյսերըս,
 Յիր ու ցան արեց ճըրագիրներս
 Եւ յափըշտակեց իմ միակ զէնքը,
 Որով պաշտպանուում և կըռուում էի
 Խաւարի որդոց հրոսակների դէմ!...

ՄԻԼՏՈՆ

Ողբալի վիճակ!

ԳԱԼԻԼԵ

Բայց բընութիւնից
 Ոչ պակաս անգութ վարեցին ինձ հետ
 Լուսաւորութեան և ճըշմարտութեան
 Թըշնամիները: Օ, եթէ միայն
 Կարողանայիր երեւակայել
 Ինչպիսիքիս զառաւորների
 Մանր հարց ու փորձը, նոցա օձային
 Գալարումները, նոցա զիւական
 Շինծու ժըպիտը և շարսխընդաց
 Նոցա անէծքը, որով կամեցան
 Պըզծել գիտական պարապմունքներս!
 Սակայն խըստակեաց ճըգնաւորի պէս

Անտրրտունջ, անձայն գուցէ տանէի
 Օրէցօր աճող իմ տառապանքը,
 Միայն չը մարէր աչքերիս լոյսը.
 Օ, այն ժամանակ լուսաւոր շաւղում
 Ձէի վախենալ երբէք ոչ կըռւից,
 Ոչ պարտութիւնից! Իսկ այժմ արդէն
 Իմ գոցութիւնը չ'ունի ոչ խորհուրդ
 Եւ ոչ յենարան. անպէտք արարած,
 Որ միայն տեղ է բըռնում աշխարհում!

ՄԻԼՏՈՆ

(առանձին) Ո՛հ, ցաւալի է տեսնել հանճարեղ
 Մըռքի հերոսին, որ գիտէր երբեմն
 Սաւառնել վերեւ և տիեզերքի
 Գաղտնիքը կորզել անյայտութիւնից,
 Հիմա յուսահատ և թեակըտուր
 Անգօր զալարում է իւր ձեռքերը
 Տանջւած, չարչարւած թըշնամիների
 Անվերջանալի հալածանքներից!...

(Գալիլէին) Ազնիւ Գալիլէ! Որքան էլ թըշնառ
 Եւ ծանր լինի ձեր այդ բաժինը,
 Բայց հաւատաւի եմ ես—նոքա, որոնք
 Գիտեն ինչ ասել է ճըշմարտութիւն
 Եւ սուրբ ըսկզբունք, նոքա պիտ' ասեն,
 Որ քո վիճակը ոչ թէ անկում է,
 Ոչ թէ պարտութիւն, այլ միայն և եթ
 Ճըշմարտասէրի վրսեմ յաղթանակ!
 Ո՛հ, արիացէք! Վեհ Գալիլէի
 Ամբիժ անունը դեռ և ըս երկար
 Գարեբ շարունակ անշուշտ պիտ' հընչէ,
 Ինչպէս կորովի, ըսփոփիչ բարբառ,
 Կոցա ականջին,
 Որոնք մարտընչում են լուսոյ համար
 Եւ յանուն լուսոյ կըրում են խաչը

Մարտիրոսութեան, ինչպէս Դալիլէն!
 Ով գիտէ, գուցէ ես ելս մի օր՝
 Նոյն աղէտալի վիճակին հասած՝
 Հիասթափութեանս տըխուր բոպէին
 Այս անյոյս աչքերն, այս վաստակարեկ
 Պատկերըն յիշեմ, և ձեր անւան մէջ
 Ես արիութեան և թարմ ոյժերի
 Նոր աղբիւր գըտնեմ!...

ԳԱԼԻԼԵ

Թող Ասուած ընդ միշտ

Քեզ հեռու պահէ Ինկւիզիցիայի
 Պահապանների սուր ճիրաններից.
 Նոքա սովոր են խոր ակա քաշելով
 Եւ արտասուքը աչքից սրբեւում,
 Ի ցոյց մարդկութեան, բազմութեան առջև
 Բացականչել. «սէր և եղբայրութիւն,
 Օրհնեալ ժողովուրդ, միութիւն և սէր!»
 Բայց սակայն ինչ են նոցա գործերը?—
 Միմիայն ծաղրը այդ սուր յօսքերին,
 Կործանիչ, ինչպէս յուզւած բընութեան
 Խառնակած տարրերք—հըրդեն, երկրաշարժ
 Կամ ալէկոծում!... Եւ ով հասցըրեց
 Ինձ այս վիճակին, եթէ ոչ դոքա,—
 Այդ խաւարասէր և նենգ գասակը,
 Որ միայն խորին տըգիտութեան մէջ
 Գիտէ որոնել իւր համար սընունդ
 Եւ իշխանութիւն, որի աչքերը
 Ասեղների պէս ծակում են լուսոյ
 Ճառագայթները, որ դրժոխային
 Տանջարաններով և խարոյկներով
 Պատրաստ է իսպառ բընաջինջ անել
 Այն ընտիր անձանց, որոնց երկինքը
 Յըղում է աշխարհ—բընէած մարդկանց

Նորոգ և բանուկ կեանքի կոչելու,
Աշխարհի չորս կողմ պայծառ գիտութեան
Ջահեր վառելու և մրտքերի մէջ
Ամուր գամելու քննադատութեան
Հետախույզ ոգին!...

ՄԻՆՏՈՆ

Ինչ բարձրը հոգի,
Եւ սակայն որքան անարժան վիճակ!

ԳԱԼԻԼԵ

Ես քրիստոնեայ եմ: Եւ ձի կարող է
Ինձ կրշտամբելով երեսիս ասել.
«Վատթար քրիստոնեայ?» Ո՞ւմ սիրտը կը տայ
Բացարձակ կերպով ինձ չանդիմանել,
Ասելով թէ ես Փրկչի քարոզը
Սրբոյս խորքի մէջ չեմ կըրել երբէք,
Թէ ուրացել եմ սիրոյ սրբութիւն,
Թէ ազգ, մարդկութիւն, ամբողջ տիեզերք
Սիրած չեմ այնպէս, ինչպէս իմ անձը,
Եւ դեռ աւելի? Բայց սակայն դու տես,
Որ հերետիկոս և ամբարտաւան
Ինձ հըռչակեցին աշխարհի առաջ,
Շինծու յանցանքներ բարձեցին վերաս,
Դատաւարտեցին և չարչարեցին,
Եւ առտողափէն միայն պակաս էր,
Որպէս զի արդէն հատարեալ լինէր
Նահատակութիւնս! Եւ ինչ էր մեղքըս?
Իմ անհուն սէրը դէպի գիտութիւն
Եւ այդ գիտութեան ճշմարտութիւններն,
Որ ակներև են անարտո անձանց,
Մոլեռանդութեամբ կուրացածներին—
Անտեսանելի: Եւ այսպէս ահա
Այն, ինչ կարօտ էր քաջալերութեան,
Դարձաւ առարկայ հալածանքների:

ՄԻՆՏՈՆ

Իայց ով էր արդեօք, որ հալածանքի
Առաջին նըշանը տըւեց?

ԳԱԼԻԼԵ

Ով էր?

Նորին Սըրբուլթինն Ուրբանոս պապը
Եւ Ֆանատիկոս արբանեակների
Ամբողջ վոհմակը:
Ինչպէս բըռնկեաժ մի տան դըռներից
Հըրկիզեալները ահաբեկ խրմբով
Խուժում են փողոց, յուսահատ հեծծում,
Այնպէս էլ նոքա, իրար անցնելով,
Աղաղակեցին. ճնշողվք և անէծք!
Մոլի Գալիլէն աթէիստական
Մըտքեր է ցանում ժողովըրդի մէջ,
Միամիտներին չարամըտութեամբ
Գըրզըռում է մեր դասակարգի դէմ,
Հայհոյանքներով հակաճառում է
Սուրբ Գըրոց անսուտ ճըշմարտութեանը!...
Ինկւիզիցիայի անողոք դատին
Յանձնել անչապաղ աչդ անօրէնին!՝
Ահա աչդ օրից կանգնած է իմ դէմ
Ամբողջ կըղերը որոգայթներով
Եւ թըշնամանքով! Իայց երդւում եմ ես,
Թըշնամուս անգամ չէի ցանկանալ
Ինկւիզիցիայի ճարպիկ սարգերի
Յանցի մէջ ընկնել: Այն ոստայնի մէջ
Յանկարծակի չէ մեզ մահը հասնում,
Այլ շաբաթներով և ամիսներով
Նախ պէտք է տանջւել, հալ ու մաշ լինել,
Հառաչել, ողբալ, մաղերը փետտել, —
Եւ ապա միայն գալիս է մահը
Մեզ ազատելու մեր տանջանքներից!
(Հուսից հրկում են Գոմինիկեանը և օգնականը):

ԵՐԵՒՈՅԹ V

ԳԱԼԻԼԵ, ՄԻԼՏՈՆ, ԴՈՄԻՆԻԿԵԱՆ, ՕԳՆԱԿԱՆ

ԴՈՄԻՆԻԿԵԱՆ

Գալիլէ!

ՄԻԼՏՈՆ

Ո՛վ է?

ԳԱԼԻԼԵ

Վատթարագոյնը

Ինկելիցիայի դորձակալներին!

Երևի գաղտուկ մեզ լըսում էին...

Իմ գուտորը չ'եկաւ. ես անհանգիստ եմ:

ՄԻԼՏՈՆ

Ինչ? Միթէ երկիւղ կայ, որ ձեզ նորին

Կալանաւորեն?

ԳԱԼԻԼԵ

Աղջիկըս չ'եկաւ!...

ԴՈՄԻՆԻԿԵԱՆ (առաջ գալով)

Հակառակասէր, ըմբոստ ծերունի!

Մենք կարծում էինք, որ դու մեղմացել,

Խեղբի ես եկել, Բայց աւագ, այժմ

Նոյն խկ Աստըծոյ արդար սլափով

Ըստանալուց յետ, կամակորութեամբ

Դու դեռ տակաւին շարունակում ես

Հայհոյել Տիրոջ!...

ԳԱԼԻԼԵ

Տիրոջ? Օ, լըկտի

Սըտախօսութիւն!

ԴՈՄԻՆԻԿԵԱՆ

Ահա իմ վըկան —

Ու չը հայհոյեց?

ՕԳՆԱԿԱՆ

Այո, հայհոյեց:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Հայհոյեց և մեզ, որոնց Ասուածը
Միջնորդ է ընտրել իւր կարող կամքի
Եւ հաւատացեալ ժողովրդի մէջ:
Մեզ չը հայհոյեց?

ՕԳՆԱԿԱՆ

Այո, հայհոյեց:

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Սնպատկաւ լեզուով հայհոյեց նաեւ
Ուրբանոս պապին: Սա չը հայհոյեց?

ՕԳՆԱԿԱՆ

Այո, հայհոյեց:

ԳԱԼԻԼԷ

Օ, բարի Ասուած,

Դու հօ տեսնում ես?

ՄԻԼՏՈՆ

Սուրբ հայեր! գուցէ

Դուք լաւ չէք լըսել...

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Քեզ, երիտասարդ,

Ես խորհուրդ կը տամ Իտալիացից
Շուտով հեռանալ: Ինչպէս որ ծովը
Եզերք է ձըգում իւր մէջ քայքայւած
Գէշ ու զիականերն, այնպէս մեր հողը
Իւր վերայ երկար չէ կարող պահել
Անհաւատներին:

ՄԻԼՏՈՆ

Առանց խորհրդի ես պիտ հեռանամ
Իտալիացից: Իսկ ինչ մընում է...

ԳՈՄԻՆԻԿԵԱՆ

Դեհ, առաջ: Իսկ դուք, ծերունի, մեզ հետ
Համեցէք նորին Սըրբազնութեան մօտ:

ԳԱԼԻԼԷ

Սուրբ հայեր! գիտեմ, որ դուք կարող էք

Ինձ շատ չարձակել: Թոյլ տըւէք խընդրեմ,
 Երկու խօսք ասեմ աղջըկաւ—յետոյ
 Տարէք, ուր կուգէք. վանքից նա իսկոյն
 Կը վերադառնայ:

ԴՈՄԻՆԻԿԵԱՆ

Անկարելի է!

Քո ասելիքը մենք կը հաղորդենք
 Քո դըստեր: Այժմ առանց այլ և այլ
 Վարանումների—դու մեզ հետեիր!

ԳԱԼԻԼԵ

Մնաս բարով, Միլտոն: Ինձ շնորհակալ!
 Օ, դուստր իմ, դուստր իմ... (գնում են)

ԵՐԵՒՈՅԹ VI

ՄԻԼՏՈՆ (մենակ)

Ես քեզ մոռանամ? Ոչ, երբէք, երբէք!
 Օ, եթէ միայն այս կոյր ծերունու
 Հոգուն մի ժամով միայն ներշնչէր
 Սամսոնի ոյժը—ինչ սարսափելի
 Վըրէժ կը լուծէր նոր փրկըշտացի
 Թըշնամիներից! Թըշնա Գալիլէն
 Դարձեալ ցանցի մէջ! Իտալիա, Իտալիա!
 Ըսթափւիր և տես-լաւագոյն, ընտիր
 Քո զաւակները ինչպէս տառապում,
 Ինչպէս ողբում են Ինկիզիցիայի
 Ճընշող լըծի տակ! Ըսթափւիր, ինչպէս
 Իմ հայրենիքը արդէն ըսթափւել,
 Ոտի է կանգնել... Դէհ, Միլտոն, առաջ!
 Եւ դէպի Անգլիա! Նա քեզ կոչում է!
 Դու այս օրւանից սուրբ ճըշմարտութեան
 Զինւոր գրեցիր, անհանդուրժելի
 Բըռնակալութեան—անհաշտ թըշնամի!

Ինչպէս Գալիլէն, միշտ հաւատարիմ
 Դու պիտի մընաս այդ վըսեմ կոչման
 Մինչև գերեզման!
 Բայց ահա դուստրը: Երթամ ընդ առաջ
 Յւ գըթբախտ դէպքը հաղորդեմ նորան:

1895 թ. փոլիս-օգոստոս

Մանգլիս:

ԾԱՆՐ ԽՆԴԻՐ

(Նամանդուկիւն)

Ա. ԱՊԵԼԵԱՆԻ

I

Կարծիք Սահակը մեր գիւղում մի խեղճ, միամիտ և բարի մարդ էր: Ամեն տեսակ մարդու կը հաւատար, մոքովը չանցկացնելով, թէ աչդ մարդիկ կարող են երեսանց իրան բարեկամ ձեռնալ, իսկ ներքուստ թշնամի: Նա ինքը իւր հասկացողութեամբ շատ էր կրկնում, թէ գիւղացիք, շնորհիւ տնտեսական դրութեան անկման, ընկել են և բարոյապէս. բայց և այնպէս եթէ մէկի հետ զործ ունենար՝ Սահակը չէր կասկածիլ, թէ աչդ մարդը կարող է իրան խաբել, իրան մի վատութիւն անել: Բեմն եթէ կը նկատէր իւր հետ զործ, հաշիւ ունեցող համագիւղացու չար դիտաւորութիւնը կամ արարքը, որով վերջինս իւր խիղճը ցելսի մէջ շարտած աշխատում էր դէպ իրան քաշել, ձեռքից ոչինչ չթողնել և զրա համար գործ դնել սուտ երդում, հայհոյանք, բռունցքի սպառնացումն և այլն, Սահակը երեսը շուռ կը տար, կը թքէր և

— Տար, աչքդ կոխիր, որ կշտանաս, կ'ասէր ու կը հեռանար:

Ձարութեան առաջ նա կը յուզէր, բայց նրան չէր դիմադրիլ, այլ վիրաւորաւ զգացմունքով և ատելութեամբ մի կողմ կը քաշէր, յաղթանակը չարութեանը թողնելով: Դա խեղճերի առանձնացատկութիւնն է: Եթէ զրա վրայ աւելացնենք և այն, որ կարծիք Սահակը հաշիւ անելը չգիտէր, այն ժամանակ գիւղացոց շատ խեղճ մարդ է՝ արտայայտութիւնը կատարելապէս կ'ամփոփէր իւր մէջ կարծիք Սահակի բնաւորութեան էութիւնը:

Իսկ գիւղացոց տնտեսական դրութեան անկումը, շնորհիւ հողերի պակասութեան, սերնդի անհամեմատ աճման և նորանոր պահանջների՝ շատերին գայլեր էր դարձրել: Էգոիզմի ամենածայրայեղ, զգուշի և ատելի ձևը մուսք էր գործել այդտեղ:

—Հիմա էնպիսի ժամանակներ են, որ ինչքան կարող ես քեզ քաշիր, ասում էին գիւղացիներից շատերը, որոնց համար այլ ևս ոչ մի սրբութիւն չկար,—ամեն տեղ, ամեն ժամանակ աշխատիր ձեռքիցդ բաց չթողնել. էլ ժամանակ չի ուրիշի մտին մտածելու, ամեն մարդ իրա օգտի համար պիտի մտածի: Առջադ ես՝ ուրիշին կոխ տուր, ունեցածը ձեռքիցը խլիր:

Եւ ամենքը ղեկավարւում էին այդ սկզբունքով: Միջոցների մէջ խտրութիւն չկար, խաբեբայութիւն, ուրացողութիւն, սուտ երդում, երեսին սուտ խաչ հանել, խարդախութիւն, գողութիւն, կաշառակերութիւն, բռնութիւն, ծեծ—այս ամենը ապրուստի համար սովորական միջոցներ էին դարձել: Արդարութեան, ճշմարտութեան և խղճի ձայնը խեղուած էր այդտեղ: Ամեն ոք հպարտանում էր այստեղ-այնտեղ իւր արած խաբեբայութիւններով, ծիծաղում, քրքջում էր մի որ և է խեղճի կամ թոյլի վրա գործ դրած բռնութեամբ և այլն:

Այդպիսի դեերի ճանկն էր ընկել և խեղճ Սահակը: Գիւղական վաշխառուները յանդգնաբար և լրբաբար ծծում էին նրա արիւնը, այդ մարդու խեղճութիւնից և ներողամտութիւնից օգուտելով: Համագիւղացիք անխիղճ և անամօթ կերպով հաշիւների ժամանակ նրան խաբում, կողոպտում էին և ոչոքի միջոցով աշխատում նրա ունեցածից շարունակ խլել:

Այդ դժոխային մթնոլորդին երկար չդիմացաւ կարճիկ Սահակը: Նա զոհ գնաց լիրբ կեղեքիչներին և շուտով կորցրեց իւր նշանաւոր արտը, որի վրա շատերը տնկել էին իրանց աչքերը: Զրկեց Սահակը իւր միակ նեցուկից և մխիթարութիւնից, որը նրան կեանք ու եռանդ էր ներշնչում և առանց որին նա ցամաքն ընկած ձկան նման էր: Կոտրեց, շատ կոտրեց Սահակը, շատ չքաշեց նրանից յետոյ, հիւանդացաւ ու մեռաւ:

—Հողից զրկւեցի, բաց չմի թողն էլ է, չտեսայ, որ մխիթարւեմ, ասում էր նա հիւանդ ժամանակ:

Իւր որդի Օւռն մօտ մի տարի էր, որ պսակել էր: Հարսը՝ Պիմին՝ սկեսայրի հիւանդութեան ժամանակ չղի էր, բայց Սահակը թողան երես չտեսաւ և մեռաւ հարսի ազատելուց երեք ամիս առաջ:

II

Պսակեց Օւին աջն օրերում, երբ ցեցերը ուտում էին նրա հօր ունեցածը, երբ կարճիկ Սահակը պարտքի տակ ընկած պարտատէրերի ձեռքին այս-այն կողմն էր օրօրւում:

Մեռաւ հայրը և մնաց որդին ծանր դրութեան մէջ: Եթէ մենակ լինէր, մի կերպ կը կառավարէր: Բայց նա շալկած ունէր մի բեռ ևս. կինը, մի երեխայ, յետոյ էլի երեխաներ, որ պիտի դալին... Այնուհետ աղքատութեան ճանկը ընկած՝ նա հալումաշ կը լինէր: Կինը աշխատասէր կին էր: Նա չէր նմանւում գեղջկուհի աջն տիկիներին, որոնք, գրեկ կարգաւ սովորած լինելով, արհամարում են գիւղական աշխատանքը և մտածում են միայն ուտել խմելու և հագնելու մասին: Ո՛չ, դա մի չարքաշ կին էր, որ հասկանալով տան դրութիւնը, աշխատում և աշխատում էր: Նոյնն էր և Օւին, բայց սեպհական հող չունենալով, մարդ ու կին իրանց աշխատանքը գործ էին զնում ուրիշի օգտին չնչին վարձատրութեամբ և մի կերպ կառավարւում:

Բայց ահա անցան մի քանի տարիներ: Օւռն զաւակների թիւը, շնորհիւ կնոջ առատաբերութեան, արագութեամբ աճում էր, իսկ տան դրութիւնը օրէցօր վատթարանում: Երեսայոց կերակրել, հագցնել, ուտում տալ էր հարկաւոր, բայց Օւին վնայ էնպէս, որ հաց հացի հասցնում էր: Մնացել էր մի երկու կտոր հող, որի բերածը շատ աննշան էր: Շերամի որդիից էլ չնչին եկամուտ էր ստանում: Նախ որ թթենիներ քիչ ունէր և երկրորդ՝ այնպիսի սերմավաճառի ձեռք էր ընկնում, որը սերմը ձրի տալով Օւռն և դրա նման խեղճերին՝ պայմանաւորւում էր բոժոժը ինքը վերցնել և բոժոժի փութի համար իւր ցանկացած գինն էր նշանակում:

Այդպիսի սերմավաճառներ շատ կային մեզ մօտ, որոնք պատրաստ էին աղքատների վիզ կտրելու, և կտրում էին:

Օւռն տղայքն էլ հասած չէին, որ կողմնակի օգնութիւն հասցնէին իրանց հօրը, հարուստ-արխտոկրատ գիւղացիների համար

բանւոր վարձւէին վար անելու, աղբ կրելու ¹⁾, այգի փորելու, քաղ հանելու, խոտ, եօնջա ²⁾ հնձելու, առու փորելու, փայտ հանելու ³⁾ և ջրակալ անելու ⁴⁾ համար: Նրանք հասած չէին, որ հաջրը որդոց օգնութեամբ միասին մի քանի հողեր վերցնէր չարէքով կամ կիսով և կամ նրանց օտարութիւն ուղարկէր փող աշխատելու: Ընդհակառակը՝ Օւու որդիքը փողբիկ զաւակներ էին, մէկը միւսից մի տարով կամ մի քանի ամսով մեծ, որոնք զեռ միայն ձագուկների նման ուտել-խմել էին ուզում: Վերջին ժամանակներս Օւին եօթ զաւակ ունէր. չորս տղա և երեք աղջիկ, բոլորն էլ մանր-մունր երեխաներ: Մեծը 12 տարեկան էր, ամենափոքրը մէկ տարեկան, իսկ կինը կրկին յղի էր: Յաւալի էր նայել այդ դժբաղդ արարածների վրա, որոնք լոյս աշխարհ էին ընկել անխուսափելի հանգամանքների շնորհիւ, երբ այդ մանր-մունր տղայքը բոբիկ ոտներով, գլխաբաց և համարեա կիսամերկ թափառում էին փողոցներում կամ թաւալում աղբի ղեղերի վրա: Նրանց կապոյտ կտաւէ հնամաշ բաճկոնները ցնցոտիներ էին դարձել, իսկ դոցա փեշերը երկար ժամանակ մարմնից անբաժան մնալով, մաշւելով և կտոր-կտոր լինելով, ասես կերած էին: Փեշերը առաջից մաշւելով և այնքան էին կարճացել, որ այդ թշւառներից ոմանց փորը աչքի էր ընկնում: Վերած էին և նրանց օձիքները: ԱնդրաՎարտիք երկուսը միայն ունէին հագած. դա էլ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ բազմապոչ կարկտանների մի ժողովածու, որի ծնկների մասերը ծակոտած էին:

Բոլորի բոբիկ ոտներն էլ սեացած և ասես քարացած էին: Նրանց համար ոչինչ էր ցեխոտ և քարքարոտ տեղերով վազվզելը: Նոյնն էր և նրանց ձեռքերը, որ պատած էին հաստ, սև և ճաքճըքոտած կեղևով: Վտիտ էին նրանք և գունատ: Մի տեսակ վայրենական երկչոտութիւն էին արտայայտում նրանց դէմքները: Փախչում էին մարդկանցից, եթէ նրանց խօսեցնելու լինէին, իսկ խօսցնողը յետևից կը գոչէր.

—Ո՛ւր ես փախչում, էջ զողածուտ:

¹⁾ Կրաստով տեղափոխելու: ²⁾ Առուցի նման բույս: ³⁾ Փայտ կտրելու: ⁴⁾ Զրելու, ուռեցելու:

Իսկապէս գողեր էին և մարդկանց առաջ անասելի հայհոյանքներ թափող: Այգիներում շարունակ ասպատակութիւններ էին անում, իսկ գոմերից ձու գողանում: Բռնւում, թակւում էին, բոցցէլի շարունակում իրանց փեշակը:

Թակը այդ երեխաների համար պակաս չէր և տանը. մայրը ծեծում էր նրանց ամենաչնչին պատճառներից անգամ դրդւած. օրինակ, երբ երեխաները տանը խաղում, գոչում, երգում էին, կամ բակի հողը քանդում և իրանց համար անակ շինում: Ծեծում էր հայհոյելով և անիծելով.

— Կտորէք դուք, շան լակոտներ, ազատւենք ձեզանից, ծընւած օրներդ քողանար, չծնէիք: Հողը գլխներիդ լինի:— Եւ այդ ամենի մէջ լսւում էր որդոց գոցութեան պատճառով անբաւականութեան և ատելութեան մի խուլ ձայն:

Ինչպիսի յարաբերութիւն ասէք չի ստեղծում աղքատութիւնը մօր և զաւակների մէջ: Եւ այդ անէծքը թափում էր որդոց գլխին այն մայրը, որը շուտով մէկին ևս լոյս աշխարհ պիտի հանէր: Աճում էին Օւու երեխաները ինքնազլութիւն, վայրենի դրութեան մէջ: Նրանք կամ զիւղական սրիկաներ կը լինէին, կամ մարդալեզու տաւարներ, բթացած, քարացած ուղեղով: Ճակատագիրը նրանց կեանքի ակիւքների մէջն էր շարտել և հաւանական է, որ նրանք սրիկաներ դառնային աղքատութեան և այն դժոխային մթնոլորդի շնորհիւ, որի մէջ շնչում և սնունդ էին առնում նրանք:

Աղքատ, շատ աղքատ էր Օւու տունը: Կթանից զուրկ էր նա տարին տասերկու ամիս: Ուտում էին մեծ մասամբ ցամաք հաց, լոբի, իսկ երբեմն բրնձեղէն: Միմիայն իրանց կաշու մասին մտածող համաշիւղացիներից շատ քիչերը երբեմն նրան ողորմութիւն էին հասցնում ուտելիքի կամ խմելիքի մէջ: Իսկ շատերը աշխատում էին խեղդել այդ ընտանիքի վերջին շունչը ևս, որի շնորհիւ նա կտորած սալի նման քարշ էր տալիս իւր ցաւալի դրութիւնը:

Ահա ազատւեց Օւու կինը: Բերածը աղջիկ էր: Մի բօղաղ էլ աւելացաւ այդ տանը: Ո՞վ պիտի կշտացնէր դժաւ ստամոքսը: Անբաւական էր մայրը, մանաւանդ որ բերածը աղջիկ էր. և մի ներքին ցաւ ճնշում էր թէ նրա և թէ ամուսնու կուրծքը:

— Հիմա էնքան կայ, որ եղածներին պահենք, մի բօղաղ էլ

աւելացաւ, մտածում էին նրանք և կախում իրանց մթնած ու զժգոյն դէմքերի սև-սև յօնքերը:—Ախր մի մարդ, որ ապրուստի ճար չունի, նա ինչու պիտի զաւակներ աշխարհ հանէ ու զրանց կրակի մէջ գցէ իրանց հետ միասին:

Այս անգամ նորածինը երկար չապրեց: Մկրտութիւնից երեք շաբաթ անցած՝ մեռաւ նա: Հետեւեալ օրը քահանան իւր սարկաւազի և Օւու հետ մանկան գերեզմանատուն տարան, թաղեցին և կարգից յետոյ վերադարձան Օւու մօտ ճաշելու: Օրը թէև ուտիս էր, բայց հացից ու լոբուց ուրիշ բան չկար:

Ճաշեցին, վերկացան, պահանջեցին թաղումի վարձը, բայց Օւին, որովհետև մի կոպէկ էլ չունէր գրպանումը, խոստացաւ յետոյ վճարել: Քահանան սարկաւազի հետ դուրս գնացին: Այնուհետեւ կան մի քանի հարեան կանայք, նստեցին, մխիթարեցին մօրը և սկսեցին զրուցել:

—Շատ լաւ եղաւ, ասում էին նրանք. համ աղջիկ խիզան էր, մեռաւ պրծաւ, հեշտ չէ աղջիկ պահել մեծացնելը, համ էլ, Օւի, քեզ համար թեթեւութիւն է: Դու էլ խեղճ ես, որդի, մի սիւրիւ: Քիւլֆաթ ունես, վաչ քն, որ պահում ես: Դա էլ որ մեծանար, ցաւ ու դարդից զատ ուրիշ բան չէր բերիլ քեզ համար: Բողազ է, հաց էր ուզելու:

Այդ րոպէին Օւու երկու աղջիկը և մէկ տղան, որ փոքրիկներ էին, մօր մօտ վազեցին և հաց խնդրեցին:

—Ան, աղի, հսաաց, սոված ենք, մենք չենք կերել:

—Կորէք, ինչքան կերել էք, հերիք է:

—Ան, սոված ենք:

—Կորէք գլխիցս, տաշտումը էլ հաց չի մնացել:

—Ան, ա՛ա, հաց տուր: Եւ նրանք արտասուեցան:

—Բաւամ, դուք ոչ կշտանաք: Փորներդ ծակւի, ձեզանից պրծնենք, ասաց մայրը բարկացած և, մի-մի կտոր հաց տալով նրանց, դուրս արաւ տնից:

—Գնացէք փողոցը. տանը լնչ կայ որ...

—Վնչ, մէկը միւսի յետեւին գնան, ասաց հարեանուհիներից մէկը աղջիկների մասին,—Օւի, խեղճ ես, որդի, դրանք էլ որ փոքրիկի ճանապարհով գնան, երկուսին մի գերեզմանի մէջ դնենք, քեզ

համար մեծ թեթեւութիւն կը լինի: Աղջի, Սեմի. դարձաւ հարեւանուհին Օւու կնոջը, էլ հերիք է, որդի, մէկ էլ որ երեխայ բերեցիր, էլ մեր երեսը դուրս չգաս:

Մարդ ու կին միմեանց երեսի նայեցին, ժպտացին և կարմրեցին:

—Շան աղջիկ, ասաց մի ուրիշ կին, էդքան էլ երեխայ բերել կը լինի, պա էս տղան խեղճ չի, ասի իսկի ծնւածներին չի-իմանում ինչպէս պահի: Դամազլըդ Ասուած կարի:

—Դժւար է, շատ դժւար, խօսեց Օւին. ես ասում եմ մի մարդ, որ իրան զօռով է պահում, կերակրում, հագցնում, նա իսկի կնիկ չպիտի տանի: Էդ մեղք է: Պա իմ երեխայքը խեղճ չե՛ն: Հարուստների երեխայոց վրա նայելով ինչեր ասես մտքներովը չեն անցկացնում: Ախր նրանք էլ աղքատութեան ձեռքին խեղդւելու են: Պա ես ասի նրանց ինչո՞ւ կրակի մէջ զցեմ:

—Այ որդի, ի՞նչ արած, պատասխանեց մի հասակաւոր կին, առանց կնիկ ինչպէս կը մնաս գիւղում: Քո հայրը, քո պապը ինչ ճանապարհով գնացել են, դու էլ է՛ն ճանապարհով պիտի գնաս:

Օւին ոչինչ չկարողացաւ պատասխանել, երբ տեսաւ, որ իսկապէս, առանց կնոջ գիւղում չի կարելի ապրել, բայց և այնպէս ներքին մի ձայն մեղադրում էր նրան և ինքնատեւութեան զգացմունք էր յառաջացնում նրա մէջ:

III

Երեկոյեան դէմ էր, որ կանայք վեր կացան գնացին: Մնաց Օւին տանը նստած և մտքերի մէջ խորասուզւած: Թաղումի ազդեցութեան տակ փոքր ինչ տխուր էր նա: Մտածում էր իւր դրութեան մասին: Ի՞նչ պիտի լինէր նրա վերջը: Մի օր ինքը վայր էր ընկնելու մեռնի, արդէն 40-ին մօտիկ մարդ է: Ի՞նչ պիտի անեն էդ մանր-մունք երեխայքը: Ի՞նչ պիտի ուտեն, ո՞վ պիտի նրանց հագցնէր, պահպանէր, ուսում տար: Դեռ ինքը կենդանի է, որ էդ օրումն են, իսկ որ վեր ընկնի, մեռնի... Ինչո՞ւ ասի ամուսնացաւ: Բայց նա յիշեց այն հասակաւոր կնոջ խօսքերը և միտքը կանգ առաւ մի ուրիշ հարցի վրա: Ինչո՞ւ իրա հայրը էնքան խեղճ պիտի լինէր, որ զրկէր հողերից և վշտից մեռնէր: Յետոյ մտածեց, թէ ասի ինքն էլ չպակաս խեղճ չէր հօրից: Քսան և ութ տարեկան

տղամարդ էր էն ժամանակ, պա չէր կարող պահպանել իւր տունը
 և հօր խեղճութեանը չզոհուէր: Նեղացաւ Օւին մոքումը իւր վրա
 ևս, մանաւանդ որ ինքը ամուսնացել էր հէնց այն օրերում, երբ
 հայրը անտանելի դրութեան մէջ էր գտնուում: Ինչո՞ւ հայրը այդ
 պատիժը տւեց նրան: Բայց շատ էլ հայրը ցանկացաւ, ինչու ինքը
 Օւին էնքան կարճամիտ գտնուեց, որ կատարեց հօր ցանկութիւնը
 և կին տարաւ: Բայց նա այստեղ կրկին յիշեց հասակաւոր կնոջ
 խօսքերը և իւր մեղքը թեթեւացնելու համար առաջ բերեց հե-
 տեալ մտածմունքը ևս: Ի՞նչ անէի, հայր էր, մինուճար որդին
 էի, մայրս մեռած, տանը կին էր հարկաւոր, ուզում էր ինձ պա-
 կել, հարս, թոռն տեսնել: Աղքատութեան ձեռքում դա նրա հա-
 մար մխիթարութիւն կը լինէր: Ի՞նչ պիտի անէի, կարող էի կանգ-
 նել հօրս դէմ ու ասել. չէ, հայր, չեմ ուզում:

Յետոյ կրկին նեղացաւ իւր վրա, այս հարցը մոքումը իրան
 տալով. «շատ բարի, Օւի, որ հայրդ ասեց պսակւիր, քո մոքովը
 իսկի անցկացաւ, թէ չէ, հարկաւոր չի կնիկ տանելը, աղքատ ենք:»
 Եւ իւր մեղքը թեթեւացնելու համար նրա միտքը յանկարծ
 անցաւ կնոջ վրա: «Եղպէս էլ դամազլըղ կը լինի: Դեռ երեխան մի
 տարեկան չդառած, ոտը ծանրանում է: Երկու երեխայ էլ մեռել
 են: Որ նրանք էլ մնացած լինէին, ի՞նչ կը լինէր ճարներս: Լաւ
 պրծանք նրանցից, իրանք էլ լաւ պրծան: Մեռան, անմեղ հոգիք,
 արքայութիւն կը գնան որ ապրէին, ի՞նչ օր պիտի տեսնէին. աղ-
 քատութեան ձեռքին կը տանջւէին և մինչև իրանց մահը մի ու-
 րախ օր չէին տեսնիլ: Աղքատութեան տունը Ասուած քանդի:
 Շատ ծանր ցուէ, մանաւանդ էն մարդու համար, որը տուն, կնիկ,
 երեխաներ ունի: Ուրիշների որդիքը ուսումնարան են գնում, բան
 են սովորում, որ յետոյ մարդ դառնան, աշխատանք կարողանան
 անեն: Պա ես չեմ ուզում, որ իմ որդւոցն էլ ուսում տամ, մարդ
 դառնան: Հայրը որ իրա տղին կարգին պահելու և ուսում տալու
 չլինի, էլ նա ինչո՞ւ է հայր: Ասենք ժամանակ-ժամանակ ճարս
 կտրած ասել եմ. ուսումը ինչ պէտք է. ուսում առածների գլուխ-
 ները իւղոտ են եկել, որ իմ որդոց ուսման մասին էլ մտածեմ,
 բայց դա ախր սխալ է եղել: Ես գիտեմ որ սխալ է եղել, ամա
 ճարս կտրած՝ ասել եմ:

Տօն օրեր են գալիս, զատիկ, ջրօրհնէք, ամենքը հազնուում, զարդարւում են, ուրախ սրտով եկեղեցի են գնում, հարուստ սեղանի են նստում: Բայց ի՞նչ է լինում մեր դրութիւնը: Ելի էն կարկաւած կտաւէ շորը, էլ էն բոբիկ ոտները, էլի էն չոր սեղանը: Երեխայքս գալիս ասում են, հայրիկ, էս առ, էն առ, մեր հարեւանի որդիքը զարդարել են: Մնում եմ կամ լուռ, կամ յոյս եմ տալիս և կամ բարկանում եմ, որ էդպէս բան ինձանից էլ չուշեն, ամա սիրտս ներսից կտոր-կտոր է լինում: Ել ի՞նչ որդիք ծնել, լոյս աշխարհ հանել, եթէ չես կարողանալու ոչ պահես, ոչ հագցնես և ոչ ուսում տաս մարդ դարձնես: Որդի ես ծնելու՝ տաս աղքատութեան ձեռքը, որ սա համ ծնողների ջանը ուտի, համ էլ էն անմեղների հոգիները լափի: Ինչո՞ւ ախր:

Եւ մի ծանր, ճնշող ու յուսահատական զգացմունք ամբողջապէս պատեց Սուր հոգուն: «Բայց դա անցած գնացած բան է, շարունակեց մտածել Սւրին, սրանից յետոյ պիտի մի ճար գտնել, որ էլ երեխայ չբերի կինս: Բերածները մեղքեր են մեր վզին թափւած, քանի որ աղքատ ենք, նրանց չենք կարողանում մարդաւարի պահել և դաշտը արած անտուն-անտէր հէյւանների են նման: Համ էլ ժամանակ է, որ այսուհետ մենք՝ մարդ ու կնիկ՝ փոքր ինչ էլ մեր հոգու մասին մտածենք: Ուրեմն շատ լաւ կը լինի, որ սրանից յետոյ մարդ ու կնիկ առանձնանանք: Այո, էդ է միակ ճարը, էլ հերիք է...»:

Այդ եզրակացութեանը եկաւ Սւրին վերջ ի վերջոյ, և այդ եւքը՝ նրան հոգեպէս փոքր ինչ թեթեւացրեց: Իւր միտքը յայտնեց կնոջը: Սա կոտրւեց, իր առատաբերութիւնը մի պատիժ, ցաւ և վիրաւորանք համարելով: Դժբախտութեան դառնութիւնը ամբողջապէս զգաց նա և իրան մեղաւոր համարելով այդ ամենում՝ խոնարհեց ամուսնու առաջ: Նոքա պայմանաւորւեցին այնուհետեւ բաժանել իրանց ամուսնական անկողինը, թէև այդ նոր դրութիւնը նրանց երկուսի համար էլ շատ ծանր էր:

IV

Բայց ահա անցան մի քանի ամիսներ: Մի երեկոյ Սւրին նըստած էր իւր տանը գլխակոր և ունքերը կիտած մտածում էր, թէ

երբ մկրտութիւնը անել տայ: Նրա կինը կրկին երեխայ էր բերել
 և այս անգամ ծնւածը տղայ էր: Անցեալ երեխայի թաղման
 վճարը դեռ մնում էր, հիմա էլ մկրտութեան վարձը պիտի տար:
 Նա մտածում էր, թէ ումնից պարտք վերցնէ այդ փողը: Երկրորդ
 անգամ տէրտէրը էլ չէր ընդունիլ ապաւիկ վարձով կարգ կատարելը:
 Դա նրա կանոններից մէկն էր:

ՊՈԻՇԿԻՆԻՑ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԷ

*
* *

Ես կարծում էի. սիրտըս մոռացաւ
Սիրոյ տառապանքն — էլ չի տանջւելու.
Ես ասում էի. «Ինչ կար ու անցաւ,
էլ չի կրկնւելու, էլ չի կրկնւելու»:

Անցաւ սիրոյ վիշտ, անցաւ և՛ թախիծ,
Խաղաղ նիրհեցին և՛ վառ անուրջներ...
Բայց ահա նորա եռացին նորից
Քո ոյժն զգալով, մեծազօր դու սէր...

26 դեկտեմբերի, 1894 թ. Մոսկւա:

ԲԼԲՈՒԼ

ՊՈԻՇԿԻՆԻՑ

Վառ զարուն է՝ Լուռ այգու մէջ խորին, խաղաղ գիշերին
Արևելքի խօսուն բլբուլն սէր է երգում վարդ-եարին.
Բայց լուռ է վարդն... Սիրոյ երգին նա անզգայ, անտարբեր,
Օրօրում է թըփի վերայ և խոր նիրհում ողջ գիշեր...

Ձէ որ դու էլ այգւպէս, պօէտ, գեղեցկութեան անկենդան
Երգ ես ձօնում... Օ՛, ուշքի եկ, քեզ մի՛ մատնիլ կորստեան...
Տէ՛ս, նազելիդ քեզ չի լսում. նա անփոյթ է, անզգայ.
Դու նայում ես — նա ծաղկում է. ձայն ես տալիս — ձայն չկայ...

2 սեպտ. 1895 թ. Մոսկւա.

ԻՆՁ ԱՍՈՒՄ ԵՆ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

Ինձ ասում են. «Զուր ես այդպէս, ո՛վ պօէս»,
Օր ու գիշեր դու սէր երգում աշխարհին,
Եւ ոգեղմայլ ու սրբոագին երգիդ հեռ
Փառաբանում նաեւ սիրած քո եարինս:

Ինձ ասում են. «Հաւատացիր, որ սիրուն
Զարժէ բընաւ մարդ իւր կեանքը նըւիրէ.
Խաբուսիկ են և՛ սիրոյ վարդ, և՛ զարուն,
Ե՛ւ նազելիդ վաղն ուրիշին կը սիրէ»...

Բայց իմ սիրտը խուլ է մարդկանց այն ձայնին,
Նա օրհնում է թէ սիրոյ վիշտ, թէ պատրանք.
Նա բարձրաձայն սէր է երգում աշխարհին,
Նորա համար առանց սիրոյ չը կնչ կեանք...

17 սեպտ. 1895 թ. Մոսկւա.

ՓՈԹԻՒՑ-ՔՈՒԹԱՅԻՍ

մանապարհորդական տալառորութիւններ

Յ. ՄՈՒՐԱԳԵԱՆՅԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Փութալիսում, ինչպէս ինձ ասեցին, 220 տուն հալ են հաշւած: Պրանք մշտապէս մնում են ալետեղ և իրանց համար ունին առանձին մի քարաշէն սիրուն եկեղեցի քաղաքի գեղեցիկ տեղում՝ երկու հալ մշտական քահանաներով: Բացի դրանից, 10-ի չափ էլ ժամանակաւորապէս մնում են ալետեղ նորեկ հալ տներ:

Ինչ որ ասեցի մի քիչ վերը հրէաների համար, նոյնը կարելի ասել և հալերի համար. աչն է որ՝ ալետեղի հալերն էլ ոչնչով չեն տարբերւում տեղացի իմէրէլներին: Հրէան գոնէ մասամբ իր ցեղային ֆիզիոնոմիայի շնորհով իսկոյն աչքի է ընկնում, հալը ալդ էլ չունի. ոչ մի տարբերութիւն չի նկատւում հալի և վրացու մէջ—աղղալնութեան ու ցեղային ինքնությունութեան նշանները աչքան անհետացել են դրանց մէջ: Ազգայնությունան ամենաառաջին ու գլխաւոր պայմանը—լեզուն, որ մի աղղի անդամներին բաժանում է միւսից, որ արտապատում է իր մէջ ալդ աղղի ողին և առանձնապատկութիւնները, նա ինքն է ամենից առաջ կուլ գնացել քաղաքի տիրապետող վրաց լեզուի մէջ: Ամբողջ ամիս մնացել եմ ալդ քաղաքում և ալդքան ժամանակամիջոցում՝ կը հաւատածք, եթէ ասեմ, որ քաղաքի համարեա ոչ մի տեղում, ոչ մի անկիւնում հալերէն խօսք, հալերէն լեզու չեմ լսել: Նոյն իսկ հալերէն իմացողները, ինտելիգէնտ մարդիկն անգամ՝ նրանք էլ իրարու հետ վրացերէն են խօսում. երևի հալերէն խօսելուց ամաչում են! Ես տեսել եմ, որ նոյն իսկ հալոց եկեղեցում

¹⁾ Տես «Մուրճ» № 8, 1895 թ.

հալերէն իմացողներն էլ վրացերէն են խօսում ու փոփոխում իրարու հետ: Միևնույն լեզուով են խօսում եկեղեցու մէջ ժողովրդի հետ և քահանաները, որոնք ամեն մի քարոզ ու ծանուցում անպատճառ վրացերէն պէտք է ասեն. ի հարկէ՝ ուրիշ կերպ չի լինի. քանի որ՝ եթէ հալերէն ասի, մեծ մասը չի հասկանալ: Բայց և այնպէս չէ կարելի չնկատել, որ ալդտեղ սովորութիւնն ու նախապաշարմունքը քիչ դեր չեն խաղում: Չպէտք է սրբացնել ժողովրդի միջի նախապաշարմունքներն ու աւանդական անշարժութիւնը, ալ պէտք է հետզհետէ աշխատել զարթեցնել ժողովրդի մէջ ազգային ինքնաճանաչութեան զգացմունքը և արծարծել նրա մէջ սէր դէպի իր մայրենի լեզուն:

Գուցէ ինձ կը նկատեն, որ այդ պակասը թողնելու է դպրոցին, նա կը լրացնէ ժամանակով: Այդ ճիշտ է, բայց ոչ բոլորովին. որովհետեւ ամեն բան, կեանքի ամեն մի վերանորոգութիւն չի կարելի դպրոցից սպասել, նրա վրա թողնել ու անտարբեր կերպով խաբիափել անշարժութեան խաւարի մէջ: Ո՛չ, այդպէս, չէ. կեանքը, մանաւանդ մեր պէս փոքրիկ ազգերի կեանքը այնքան չեւ է մնացել իսկական կեանքից, որ այդքան անտարբերութիւնով երբէք չենք հասնիլ մեր նպատակին: Վերանորոգութիւն ու կենդանութիւն է հարկաւոր կեանքի ամեն մի քալում. ով ընդունակ չէ նորոգւելու, ով չէ ուզում նորից ծնւել, նա չի ապրի և արժանի չէ որ ապրի:

Բայց դո՞նէ դպրոցը արտապատում է արդեօք այդ լոյսը, ինչքան ինձ լաշտի է՝ 30 տարուց աւելի է ինչ ալստեղ դպրոց կալ: 30 տարին քիչ բան չէ. և այդքան ժամանակամիջոցում այդ հաստատութիւնը չի կարողացել տալ մի սերունդ, որ իր պարտքը համարէր խօսել այնպէս, ինչպէս որ պէտք է խօսէր հալը. ինչպէս որ մինչև հիմա էլ խօսում է այդ ազգի մեծամասնութիւնը իր հալածական ու նւիրական հալերնիքում: Ել ինչ ուսումնարան է, երբ ալստեղ էլ երեխաները իրար հետ հալերէն չեն խօսում, այլ վրացերէն. այդ ես իմ աչքովս եմ տեսել ու ականջովս լսել. թէև իմ տեսածս դասի ժամանակ չէ եղել, բայց միևնույն է—դասի օրերին է եղել, դասամիջոցներին, ուսումնարանի գաւթում խաղալիս: Իսկ թէ դասերին էլ ալդպէս են խօսում, թէ չէ, այդ չգիտեմ և չեմ տեսել. ինչ որ տեսել եմ, այն եմ ասում:

Բայց ինչքան էլ քիչ բան արած լինի ուսումնարանը Վութալիսի հալերի համար, բայց և էլի համարձակ կարելի է ասել, որ այդ քաղաքի օտարացած ու օտարախօս հալ ժողովրդի կեանքում ամենամըխիթարական երևութը՝ այդ ուսումնարանն է: Ելի այնտեղ է, որ ալսպէս թէ այնպէս լսում է դո՞նէ մայրենի մոռացւած լեզուն, թէև ոչ այնքան հարազատ ու ընտանի, վրացերէն լեզուի ազդեցութեան տակ կորցրած իր մայրենի ոգին:

Հալոց ուսումնարանը տեսնողի վրայ գրսից գեղեցիկ տպաւորութիւն է թողնում. երկարականի, քարաշէն, փառաւոր, ընդարձակ ու լուսաւոր շէնք, հալոց եկեղեցու գաւթում, մի շատ գեղեցիկ տեղում, Բիօնի ձախ ափին, սլարտէզներին ու անտառի դէմոզէմ: Ահա մի քանի տեղեկութիւններ ալ ուսումնարանի տնտեսական և ուսումնական դրութեան մասին, որ ես կարողացաւ իմանալ 1893 թւին, Քութալիսում գտնւած ժամանակս, ուսումնարանի տարեկան ակտի ժամանակ աւագ-ուսուցչի կարգացած տեղեկագրից: Ուսումնարանը երկդասեան էր և միևնույն ժամանակ՝ երկսեռ. միևնույն շէնքի մէջ սովորում էին թէ տղաներ և թէ օրիորդներ: Միայն տղայոց համար ուսումնարանը հիմնւել է 1862 թւին, իսկ օրիորդաց բաժանմունք բացւել է 1875 թւին: Ուսումնարանը տարեկան մօտ 2 հազար ուսւլու չափ եկամուտ ունէր՝ եկեղեցուց, ուսումնարանապետական խանութներէր, մոսկոպանակ Յովնանեանից և պատահական աղբիւրներից ստացւող նպաստներից: Տղայոց ուսումնարանը միդասեան էր (ալդպէս էր գոնէ 2 տարի առաջ, իմ գնացած ժամանակը), 2 բաժանմունք ունէր. աշունհետև նրանք աւարտում էին: Առաջին 3 բաժանմունքում նրանք աղջկերանց հետ միասին էին նստած, իսկ 4-դ ու 5-րդ բաժանմունքներում՝ միայն օրիորդներն էին: Ուսումնարանը տարւալ վերջում մնացել էին միայն 80 հոգի. դրանց մեծ մասը նույնպէս օրիորդներ:

Ահա մի քանի տեղեկութիւններ և նրանց առաջադիմութեան մասին, որ ես կազմել եմ 1893 թւի քննութիւնների ժամանակ իմ շածններից: Հալերէնից՝ թուլ էին. իրանց կարգացածից հասարակ ու ամենապարզ բառեր չէին հասկանում. նրանց խօսածքի ու արտասանութեան մէջ հալի ոգի չէր երևում: Բաց, չնայելով դրանց, խիստ ձևականութեան քետն էին ընկել. քերականական տերմինոլոգիա, մինչև անգամ երկրորդ բաժանմունքից հոլով և խոնարհումներ էին պահանջում, նրանցից՝ որ երկու խօսք հալերէն կապով չէին կարող ասել: Անհետ ալ: դատաւարտութիւնը, մեծ անարդարութիւն կը լինէր՝ եթէ չլիչէինք աշն հանգամանքն էլ, որ աշակերտների մեծ մասը, համարեա ամենքը, ուսումնարան մտած ժամանակ՝ հալերէն չեն իմանում: Տանը նրանց հետ ալը լեզուով չեն խօսում, ալ վրացերէն. ալը լեզուով են մեծանում և ալը լեզու էլ ոգին ստանում:—Լիօնից էլ թուլ գտալ, թուլութիւնը իսկապէս ոչ աշնքան կրօնական տեղեկութիւնների չգիտենալու մէջն էր, որքան լեզու պատմելու մէջ: Ի՛նչ օգուտ մի բան գիտենալ, երբ չկարողանաս արտաւայտել գիտեցածը: Ուրբ պատմութիւնները սովորելու և պատմելու համար, պէտք է լաւ խօսել գիտենալին, մինչդեռ նրանց պակասը հէնց նրա մէջն էր: Ալդտեղ էլ նկատուում էր նույն ձևականութիւնը, շարական, ժամամուտ անդիր անել, թէև դրա մեղքը աշնքան յսուցչինը չէ, ինչ-

քան մեր ծրագիր կազմողներին, որ, առանց մտածելու, գրել ու ծրագրել են ինչ որ իրանց մտքին է եղել—Ռուսերէնի մէջ լաւ էին. բառերի պաշարը, խօսելու վարժութիւնը և քերականական տեղեկութիւնները բաւարար էին. լաւ էր նոյնպէս և ռուսերէն գրութիւնը,—Փաբանութեան մէջ նոյնպէս թուլ էին, բերանացի հաշիւ համարեա չգիտէին. նրանց իմացածը միայն գրաւոր հաշիւն էր, աչն էլ թուլ ու կիսատ: Այստեղ միայն, ինչպէս երևում էր, ծրագրին շատ չէին հետեւել. թերի էր անցած. այսպէս՝ II բաժանմունքում գործողութիւնները անցել էին միայն 1—50 թւերի սահմանում (փոխանակ՝ մինչև 100-ի), III բաժանմունքում՝ 1—1000 միայն (փոխանակ՝ մինչև ուղած թւերի սահմանը): Նրեխաները հասարակ բազմապատկութեան պարզ աղիւսակը հին ձևով՝ —կամ անդիր, առանց հասկանալու էին հաշոււմ, բացադրում և կամ գումարերք էին հաշոււմ. (օրինակ՝ 5×8 գտնելու համար, փոխանակ հաշիւը 10×8 -ից կամ 5×10 -ից հաշուելու, ուղղակի նահապետական եղանակով՝ իրար վրայ ութ-ութ աւելացնելով էին գնում):

Ուսուցչական խումբը բաղկացած էր մի քահանայից, որ բացի կրօնի և մի քանի առարկաների դասատուութիւնից, աւագ-ուսուցչի պաշտոն էլ էր վարում. մի ուսուցչից և երկու վարժուհիներից, որոնցից մէկը՝ ռուսաց լեզուի և ձեռագործի համար էր, միւսը՝ վերակացունու և օգնական—վարժուհու պաշտոնով:

Գրելով այս նկատողութիւնները, իմ նպատակը չէ եղել անել որևէ ակնարկութիւններ այս կամ այն անձի վերաբերմամբ, վիրաւորել սրան կամ նրան: Անկեղծաբար ասում եմ, որ այդ հարցում, այս տողերը դրած ժամանակը, ինձ չէր հետաքրքրում որ և է անձնաւորութիւն. ինձ հետաքրքրում է միայն ուսումնարանի դերը, այդ ժողովրդի ներկայ վիճակը և ընդհանրապէս հաջողութիւն ինքնաճանաչութեան խնդիրը:

Ակտի օրը եկեղեցում պատարագին ուսումնարանի օրիորդների խումբն էր երգում միաձայն, Ակտի ժամանակ էլ, ճիշտ է, միայն երկու երգ երգեց, բայց այդքան էլ բաւական էր, որ այս օտարախօս տեղում լսողի վրայ քաղցր ու մխիթարական տպաւորութիւն թողնէր: Փոքրիկ հայուհիների բերանից լսւած երգը տակն ու վրայ էր դարձնում մարդու սիրտը, չուսի կաջձեր ցոլացնելով նրանում և մոռացնել տալիս նրանց հալերի անտարբերութիւնը:

Յաւալի է, որ ուսումնարանը աչնքան չէր հետաքրքրում ժողովրդին ժանաւանդ հարուստներին և պաշտօնեաներին. այսպէս էր երևում գոնէ ակտին: Այդ օրը նրանց համարեա մէկ մէկ կանչում հրաւիրում էին, որ գան հանդիսատես լինեն: Նկողների միծ մասը կանաչք էին տիկիները ու օրիորդներ:

Այսքան հալ օրիորդներ, և մէկը չկար, որ ներկայացունաներին մասնակցէր ինձ ասացին, որ նոյն իսկ դպրոցի վարժուհին չէ կարողանում մասնակցել՝ մեր գաւառական շատ տեղերում տիրող չափազանց նախապաշարմունքի պատճառով (օրիորդի համար անպատիւ ու անպատշաճ է համարում—դուրս գալ բեմի վրայ)։ Զիշտ է՝ շատ տեղ այդպէս են նախապաշարած, շատ տեղ են այդպիսի սխալ, միակողմանի, անարդար ու նախապաշարած կարծիք չափում կին մարդու վրայ, բայց այդ չէ նշանակում, թէ այդպէս պէտք է մտածի ու հասկանալ նաև դպրոցի վարժուհին։ Ել ինչ լուսաւորութիւն է, ինչպէս կարող է նա դաստիարակել, երբ նա շարունակ մտածում ու վախճում է ուրիշների չափած սխալ ու անարդար կարծիքից և հաւատ չունի իր վրայ։

Բանն աջտեղ է հասնում, որ հալ-սիրողները երբեմն ստիպւած են լինում կանանց դերերի համար հրաւիրել վրացուհիներին, քանի որ իրանց ներկայացրած բաների մի մասն էլ վրացերէն է լինում. թէև այդ էլ մի առանձին միտք չունի, քանի որ վրացերէն ներկայացումներ քաղաքում միշտ լինում են և աչն էլ աւելի լաւ ուժերով, քան պատահական հալ-սիրողները։ Աֆիշան ու տոմսակներն էլ սովորաբար հալերէն չեն գրում. աֆիշան ռուսերէն ու վրացերէն եմ տեսել, իսկ տոմսակը միայն ռուսերէն։ Դրա համար կարող են արդարանալ, քանի որ աջտեղի ոչ մի տպարանում հալերէն տառեր չկան (այդպէս են ասել ինձ)։ Հալոց ուսումնարանի դահլիճը ունէր իր համար մի փոքրիկ ու անշուք բեմ, դահլիճը ինքն էլ մեծ չէր աջքան. սովորաբար՝ հալ-սիրողների ներկայացումները աչտեղ են տրեւիս եղել։

Կարծում եմ որ միմիայն դէպի ուսումնարանը չէ որ անտարբեր են. նոյն անտարբերութիւնով են վերաբերում այդ մարդիկ և դէպի գուտ եկեղեցական կարիքները, երեսփոխանի ընտրութիւնը և այլն։ Ինձ թւում է թէ աչտեղ ոչ մի ընտրութիւն չէ կատարւում ժողովրդի գիտակցական մասնակցութիւնով իհարկէ, ինչ խօսք որ կը լինին մի-երկու բացառութիւններ, ինչպէս և ամենամատարներ ու թմրած հասարակութեան մէջ էլ կը պատահեն, բայց իմ խօսքը ընդհանուրի վրայ է և ոչ թէ բացառութիւններին։

Մինեոյն միղերալին անտարբերութիւն է նկատւում և հալոց գրականութեան վերաբերմամբ նրանց ունեցած հետաքրքրութեան մէջ։ 500-ից աւելի հալ տները հազիւ կարողանում են ստանալ մի-երկու «Մշակ», մի չորս հատ «Աղբիւր», «Տարազ», «Արձագանք» և մի-երկու օրինակ էլ «Արաքս»։ 1893 թվի ամառը, երբ ես աչտեղ էի, ամբողջ քաղաքում ոչ մի տեղ «Մուրճ» չգտալ, գուցէ ստացւում էլ էր, ես տեղեկութիւն չունեմ, բայց ինչքան հարցրել եմ, ոչ մէկը չէ խմացել ստացող կալ, թէ չէ։ Համարձակ կարելի է ասել, որ, եթէ ստացւելիս էլ լինէր, հազիւ մի-երկու

օրինակ կը լինէր, եթէ աւելի լինէր (Քուժալիսում «Մուրճ» չէր ստացում և ալժմ էլ չի ստացում: Խմբ): Այն ժամանակաւ գրադարանում էլ ոչ մի հաւերէն թերթ չկար: Նա էլի մասնատր բան է. ալնքան մարդ չի զարմանալ. զարմանալին ալն է, օր ալսօր Քուժալիսում կալ քաղաքական հասարակական ձրի գրադարան-ընթերցարան. ալդ քաղաքում 200-ից աւելի մշտական հալ տներ լինեն, ու մէկ հատ հալերէն թերթ ստացելիս չլինի ալդ հասարակական կոչւած ընթերցարանում? Վարծում եմ, որ եթէ ընթերցարանի վարչութիւնը մեղաւոր է նրանով, որ հաւասար ու լիակատար կերպով չէ զոհացնում քաղաքի ամեն կարգի հասարակութեան մտաւոր ու ողեկան կարիքներին, եթէ ալդ էլ, իհարկէ, իրանից է եղել կախւած, ու զանցառու է դոնեւել, ինքը հալ հասարակութիւնը պակաս մեղաւոր չէ նորանից, որ իր անտարբերութիւնով ու անշարժութիւնով՝ իրան մոռացնել է սալիս: Մթթէ չկար մէկը ալնքան հալերի մէջ, որ հասկանար ալդ կարիքը և ընթերցարանի վարչութեան ուշադրութիւնը հրաւիրէր ալդ արդար ու օգտակար պահանջի վրալ: Նրեակալում էք, ոչ մի հալ թերթ չստացել հասարակական գրադարանում, ալն էլ նահանգական քաղաքում, ուր 200 տնից աւելի հալ կալ, ճշմարիտ որ անհաւատալի է երեւում: Ախալցխալի նման գաւառական լետ մնացած քաղաքումն անգամ, հալոց բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի բացած հասարակական ընթերցարանումը մինչև անգամ թուրքերի ու հրէաների համար էլ լըրագիր էր ստացում, թէև ալնտեղ, ինչքան լիչում եմ, հալիւ միալն մի թուրք էր դնում գալիս և ոչ մի հրէալ, և քաղաքումն էլ թուրքեր համարեա չկան: Ալն ինչ Քուժալիսի պէս քաղաքում, քաղաքալին հասարակական ընթերցարանում մոռանում են հալերին, կամ որ աւելի ճիշտն է, — հալը ինքն իրան չէ տեսնում. մոռանում է իրան, խաւարին ու անշարժութեան մատնելով:

Մթթէ նոլն անշարժութեան ու ինտելիգէնտ անձնէր դործող ոլժերի պակասութիւնից չէ, որ ալդտեղ դու մինչև օրս էլ չէ ալողւել բանալ բարեգործական ընկերութեան տեղական ճիւղ, որովհետև թէև կան մի-երկու եթիտասարդներ, բալց ցնցող, շարժողներ չկան. իսկ իրանք իրանց շարժելու էլ ոչ ոք ցանկութիւն չունի:

Քուժալիսը իր շրջակալ գաւառներով ու շրջաններով (բացի Արդալինի ու Սուխումի շրջաններից) եկեղեցական-վարչական կողմից կաղմում է մի առանձին գործակալութիւն: Բացի Քուժալիսից՝ հալեր կան Շարօպանի գաւառի Չխար և Սալխէրէթ գիւղերում. ամեն մէկում մօտաւորապէս 60-ական տուն, ուր հալերն իրանց համար ունին եկեղեցի ու ծխական ուսումնարան: Հալեր կան նոլնպէս և Լէչխումի գաւառի Լալալի

գիւղում, մօտ 30 տուն. նրանք էլ ալս վերջին տարիներին ուղտ մ էին եկեղեցի շինել, բայց չգիտեմ՝ շինեցի թէ ոչ, Կան մի քանի տուն հալ էլ Բաճալի գաւառի Օնի աւանում մօտ 15 տուն:

Ինչ խօսք, որ մտաւոր-ազգային տեսակէտից դրանց վիճակը անմխիթար պայմանների մէջ կը լինի. օտար աշխարհ, չորս կողմը իմէրէլ, ո՛վ պէտք է աջնոնդ հալերէն խօսի և ումից պիտի սովորեն հալերէնը: Այս վերջին տարիներս էր, որ նրանց մասին մեզանում սկսեցին խօսել ու մտածել: Ամենից առաջ Չխարում բացւեց հալոց ծխական ուսումնարանը. խոկ ալս մի-երկու տարի է, ինչ անմոռանալի Գրիգոր Արծրունու աղղու հրաւերից չեսու, օգնութեան ձեռք մեկնեց և դէպի միւս մոռացւած ու անպատշեան դատապարտւած Սաշխէթ գիւղը, ուր այսօր բարեգործական ընկերութեան տւած նպաստի շնորհով լուում ու հնչում է հալերէն մոռացւած խօսքը և աշխատանք է թափւում—լցնել մալքերի ու սիրական խօսքը ալ օտարացած ու մոռացւած հալերի որդոց սրտերի ու հոգու մէջ:

Ինչպէս լաւտնի է, Քութալիսի նահանգը բաղկացած է եօթը գաւառներից և երեք շրջաններից՝ Բաթումի, Արդւինի և Սուխումի: Գաւառները սրանք են. Քութալիսի, Շարուպանի, Բաճալի, Լէչխումի, Սենակի, Զուգդիդի և Օզուրգէթի: Ամբողջ նահանգում ինչը հարկւր քսան հազարից աւելի բնակիչ են հաշւում, որոնց մի աննշան մասը միաջն օտար աղղից են, մնացածն ամենամեծ մասը վրաց ցեղին են պատկանում. իմէրէլ, վրացի, լազ, սւանէթ, գուրիացի և աջարացի: Բնակիչների թւի կողմից նա ամբողջ Կովկասում միաջն Կուբանի վիճակից քիչ բնակիչ ունի. միւս բոլոր նահանգներից աւելի բազմամարդ է: Բնակիչների խտութեան կողմից էլ նա ամբողջ Անդրկովկասում ամենախիտ բնակեցրած նահանգն է. ալղտեղ մի քառակուսի վերստի վրայ 30 մարդ է գալիս: ¹⁾

¹⁾ Երանօթութիւն «Մուրճ»-ի խմբ.: Ահա Քութալիսի նահանգի աղ-գաբնակութեան վիճակագրութիւնը, 1886 թվականի վիճակագրութեան համաձայն, որ վերջնագոյնն է և համարւում է ամենաճիշտը:

Հաշւելով նահանգի եօթը գաւառները և երեք շրջանները (օկրուգ), ալն է Բաթումի, Արտւինի և Սուխումի շրջանները, Քութալիսի նահանգն ունէր 1886 թվականին ընդամենը 923.306 բնակիչ երկու սեռից: Աղգաբնակութեան գլխաւոր տարրերն են Քութալիսի, Շարուպանի և Բաճալի գաւառներում գրեթէ բացառապէս իմերէլներ, Լէչխումի գաւառում $\frac{2}{3}$ իմերէլ, $\frac{1}{3}$ -ըսւանէթ, Զուգդիդի գաւառում միւրգրէլներ, Սենակի գաւառում միւրգրէլներ և մասամբ իմերէլներ, Օզուրգէթի գաւառում գուրիա-

Հասկանալի է, որ աչդքան բազմամարդ ու խիտ բնակեցրած նահանգում հողի մեծ պակասութիւն պիտի գրացաւ, ինչպէս որ իրաւի էլ լսուած է, մասնաւորապէս Բաճաշի դաւառում, ուր, ինչպէս ասում են, հողի մեծ պակասութիւն կա: Ճշմարիտ է եւ ինքս աղտեղ չեմ ման եկել և ոչ էլ ստուգել եմ աչդ լուրը, բայց և աշնպէս, ինչքան ես դիտել եմ, պէտք ի ասեմ, որ իմ տեսած պանդուխտ իմէրէնների մեծ մասը աչդ գաւառից է լինում: Ամեն անգամ երկաթուղիով գնալիս, տեսել եմ ինչպէս Բիօնի և Կւիրիլի կաշարաններից խումբ-խումբ մարդիկ են նստել, գործիքներով լիքը խուրջինները ուսերին: Դրանց մեծ մասը հիւսնեւր են լինում, որոնք տունը-տեղը թողած, օտարութիւն են գնում՝ մի կտոր հաց ճարելու համար: Դրանց Սև ծովի ափերի ամեն քաղաքում ու աւանում էլ կարող էք պատահել:

Բայց ահա և իմ առածներս քաղաքի մօտերքում: Գալով աշն խճուղիով, որը մօտ շինւած է գիւղատնտեսական ուսումնարանը, Բիօնի աջ ափով, գետի չետադարձ ընթացքով, մեր առաջ բացւում է մի լայն հովիտ, որի մէջտեղից հոսում է գետը. երկու կողմից մացառներով ծածկւած բլուրներ: Տեղ-տեղ բլուրների գլխին երևում էին հատ-հատ տներ, մօտը սիմինդրի արտեր: Տեղ-տեղ շինւած էին բարձր, թեք և անլարմար

ցիք:

Բուն նահանգի մէջ միակ կարևոր քաղաքը Քութայիսն է 22.643 բնակիչներով երկու սեռից. մնացած դաւառների վարչական կենտրոնների մէջ Զուգդիդի աւանն ունի 1078 բնակիչ և Օղուրդէթ քաղաքը 1.472 բնակիչ, մււսները՝ հազիւ 2—300 բնակիչ և աւելի պակաս: Փոթի նաւահանգիստ քաղաքը (4.709 բն.) առանձին վարչական միութիւն է և գաւառ չունի: Բաթում քաղաքը ունի 14.803 բն., Արտւին աւանը 6442 բն., Սուխում քաղաքը 412 բն.:

Քութայիս քաղաքի 22.643 բնակիչների մէջ իմերէլներ, գուրիացիք ու մինգրէլներ կազմում էին 15.200 հոգի (9.255 արական և 5.945 իգական), հրէաներ 2.788 հոգի. հաւեր 2.370 հոգի (աշն է՝ 1275 արակ. և 1095 իգական). ռսներ 1.526 հոգի (815 ար. և 681 իգ.). լոյներ 214 հ. (152 ար. և 61 իգ.). տաճիկ 114 (107 ար. և 7 իգ.), ալլ ազգեր (լեհահացի, գերմանացի, պարսիկ, ֆրանսիացի, լեզգիներ և օսեր) 432 (որոնցից 302 արակ. և 103 իգական). Հաւերի թւի մէջ հաշւած են լուսաւորչական և հաւ-կաթոլիկներ միասին. ցոյց չի տրւած իւրաքանչիւրը առանձին: Գաւառների մէջ հաւեր գտնուում ենք միայն Շորապանի գաւառում 116 հոգի (59 ար. 57 իգ.), Լեչխումի գաւառում 140 հոգի (72 ար. 68 իգ.): Քութայիսի նահանգի վրա հաշւող երեք շրջաններից Բաթումի շրջանում հաւեր կալին 749 հոգի երկու սեռից և Բաթում քաղաքում 3458 հոգի (2609 ար. 849 իգ.). Արտւինի շրջանում 2853 հոգի և Արտւին աւանում ևս 4922 հոգի երկուսեռից. Սուխումի շրջանում 1037 հոգի և Սուխում քաղաքում ևս 53 հոգի բնակիչ երկու սեռից: Ծան. խմբ.

տեղերում, փռած բլուրների լանջերին: Շատ քիչ էին պատահում տների մեծ խմբեր, գիւղեր համարեա բոլորովին չտեսալ ալդ ճանապարհին. միայն հատ-հատ, կամ 2—3 մօտիկ տների խմբեր էին երևում: Տաս վերստի չափ գնացել եմ ալդ խճուղու հետ և միմիայն ալդպիսի բլուրներ, պառակներ ու մացառապատ սարեր եմ տեսել գետի երկու կողմը. հարթութիւններ ու դաշտեր չեն պատահել: Հարթ դաշտերը քաղաքի միւս կողմն եմ տեսել, դէպի Րիօնի կապարանի կողմը նաւոդ երեսի վրայ: Տեղ-տեղ անմատչելի թեք տեղերն էլ մշակած էին, թէ և տեղ-տեղ էլ կալին մշակելու չարմար տեղեր, բայց անպէտք մացառներով բռնած էին: Երևում էր, որ սրանք մինգրէլների և Սև ծովի ափերի թիւրքանալ զաղթականների պէս՝ աչք-քան ընդունակ ու վարժ չեն անտառոտ ու մացառոտ տեղերը բանալու և արտ դարձնելու մէջ: Ինչ կ'անէին, եթէ նրանց տեղը լինէին սրանք. չորս կողմը ծառերի աշխարհ. կատարեալ ծառերի թագաւորութիւն է նրանց տեղը, բայց աշխատասէր ու բանող թիւրքանալը իրանց կամքին չէ թողնում ծառերին ու մացառներին, որոնք, չափ ու սահման կորցրած, մի գլուխ առաջ են գնում և ուր հասնում են՝ իրանց անմատչելի ցանցերն են փռում, երկրագործի առաջը կտրում ու կապում: Թիւրքանալը ալդտեղ կուի է մղում, հսկայական կուի անվերջ փռած ծառերի թագաւորութեան դէմ և նրանցից խլած հողից ստանում է իր հացն ու ապրուստը:

Հէնց բոլորովին քաղաքին մօտիկ սկսում է անտառը, աւելի մացառոտ ու միշտ. պիտանի ծառեր չէին երևում: Երկաթուղու կապարանի մօտից, համարեա բոլորովին քաղաքում, գեղեցիկ ու բարձրավանդակ ընդարձակ հարթ տեղեր կան, որ անմշակ ու անխնամ մնացել են. ոչ խոտ կը լինի և ոչ ցանք. քանի որ ամբողջապէս կաղնու ծառի փշոտ արմատներով և նոր դուրս եկած չիւերով է ծածկւած: Երևում է, որ մօտիկ ժամանակ ալդտեղ էլ կաղնու ալդպիսի անտառ է եղել, ինչպէս որ մի քիչ հեռու կալ ու պահպանել է մինչև հիմա էլ: Ինչպէս երևում էր՝ քաղաքի տեղ պիտի լինի. դրա ժաքերը շատ մեծ դժարութիւններ կ'անի. եթէ ունենար էլ, տեղը կը հանէր. որովհետեւ եթէ ուրիշ բան էլ չլինէր, գոնէ խոտի, արօտի տեղ կը լինէր, և ալդ քիչ բան չէր լինի քաղաքի համար, քանի որ ինչքան ես կարողացալ տեսնել, քաղաքի չրջականերում լաւ խոտատեղեր չկան: Չգիտեմ հեռուները, գիտեմ միայն, որ քաղաքի մօտերքում ալդպէս էր: Իսկ եթէ իմ տեսած մալերով դատելու լինենք, աչքպէս էր երևում, որ հեռուներն էլ գիւղերումն էլ խոտի ու արօտի պակասութիւն պէտք է լինի:

Մալը թէ քաղաքում և թէ գիւղերից բերած՝ ընդհանրապէս տեղ-քով փոքր ու վտիտ կազմւածք ունէր: Քաղաքումն էլ միւսը իմ գնացած ժամանակը համարեա միշտ թանդ է եղել. ալդպէս՝ ամառը ծախում էին

Ֆունտը 11 կոպեկի: Մալերը սովորականներն են. եզ, կով, դոմէշ, խոզ, ինչ որ Փոթիում և ճանապարհին հանդիպեց մեզ: Գոմէշը միայն Փոթիում տեսաւ, ճանապարհի գիւղերում համարեա ոչ մի տեղ չէր հանդիպում: Աով շատ քչերն ունէին քաղաքում, իսկ խոզը շատ կար, մանաւանդ քաղաքի ծաւրերում, ուր, ինչպէս երևում էր, աղքատ մարդիկ էին մնում:

Հողը թէ քաղաքում և թէ շրջանում, ամեն տեղ, տեսքով՝ դժգոյն, դեղին, մոխրագոյն է և, ինչպէս ինձ թւում էր, թույլ ու անրեր. ոչ ու պարարտութիւն չունի. սեռեցք ամենևին չէր երևում. բաղադրութիւնով աւելի կաւալին, բայց ոչ ծանր, այլ թեթև ու բան չբերող. մի բան միայն լաւ էր, որ շատ խորն էր և տակը բոլորովին քար չէր երևում: Արտերում մնացած սիմինդրի ծղոտները ամեն տեղ փոքր ու վտիտ էին երևում: Վաղաքից դուրս, Բիոնի երկու կողմունն էլ շատ արտեր կալին. բոլորն էլ սիմինդրի. տեղ տեղ գետից հեռու պատահում էին, թէ և քչով, նոյնպէս և ցորենի ու հաճարի արտեր, իսկ քաղաքում՝ մի-երկու տեղում, բամբակի և դոմիլի ցանքեր, բայց շատ փոքր տեղ ցանաւ. թութունի պլանտացիա ոչ մի տեղ չտեսաւ: Քութալի շրջականերում թութուն չեն աճում, մի կողմ թողնելով նրա 3 շրջանները, թութուն լինում է միայն Օզուրգէթի գաւառում, տարեկան՝ 4—5 հազար պուղ:

Ամենքին չալտնի կը լինի, որ Քութալի նահանգի ամենաառաջին բերքը սիմինդն է (եզիպտացորեն), որ, եթէ չեմ սխալում, ոչ միայն ամբողջ Աովկասում, այլ և դուցէ ամբողջ Առաստտանում մի նահանգ չկալ, որ աչքքան սիմինդր արտադրէր: Բացի դուցէ միայն Արգինի շրջանից, ամբողջ նահանգում կերած հացը գլխաւորապէս սիմինդրն է, և ոչ մի հացաբոյս աչքքան չի աճողում աղ տեղերում, ինչքան սիմինդրը: Նահանգի մէջ պմենից աւելի սիմինդր ստացւում է Սուխումի շրջանում. իսկ ամենքից աւելի ցանում են նրա մօտիկ՝ Սէնակի գաւառում: Ամբողջ նահանգում մօտաւորապէս 250 հազար դեսետին տեղ սիմինդրն է բուծում:

Պաշտոնական վիճակագրական աղբիւրներին նախելով, ամենից շատ ցորեն ստացւում է Շարոպանի գաւառում. Սենակի ու Զուգդիդի գաւառներում հողի սաստիկ խոնաւութեան պատճառով ցորեն համարեա չի լինում:

Կարտոֆիլ (գետնախնձոր) շատ չի լինում նահանգում. բոլոր գաւառներում ու շրջաններում հազիւ մի 20 հազար պուղ տարեկան (պուղը 16 ֆրաս. քիլո):

Դրա հակառակը՝ լոբիան համեմատաբար աւելի է լինում. ամենից աւելի լինում է Շարոպանի գաւառում, — տարեկան 40 հազար պուղ՝ որ ամբողջ նահանգում ստացւած բերքի մի քառորդը կը լինի:

Շնաւելով, որ հողը ծառի և պարտէզի համար աչքքան էլ վատ չէր բաւական թուլ էր և խորը, թէ և պարարտութիւն չունէր, բայց և աչքպէս պարտիզպանութիւնը, ինչպէս երևում էր, աչքքան տարածւած չէր գոնէ

քաղաքում և նրա մօտիկ չրջականերում: Եղածներն էլ գլխաւորապէս քաղաքի հիւսիս-արեւելեան և արեւմտեան մասերումն էին և թէև շատ էին, բայց փոքրիկ բաներ էին և մեծ տեղ չէին բռնում: Գրանք գլխաւորապէս խաղողի փոքրիկ ալիւններ: Էին: Բոլորովին մի հատ պարտէզ չկար քաղաքի հարաւային կողմում, դէպի Րիօն գնացող ճանապարհի վրայ, թէև աղտեղ պարտէզի: համար դիրքով շատ գեղեցիկ, հարթ ու լարմար տեղեր կալին: զետը մօտիկ, տեղը բաց և հարթ և ուղածիդ չափ ընդարձակ: Այդ տեղերի պակասը գուցէ միայն քամին կը լինէր, որ, կարծում եմ, աղտեղ աւելի պէտք է փչէր, քան քաղաքի միւս կողմերում, իսկ գրանից էլ ցուրտն աւելի կը լինէր:

Խաղողն ու գինին աւելի լինում են Քուլթալիսի ու Շարոպանի գաւառներում: Աւելի անուշ հանել են Սւրբի գինիները (Քուլթալիսի գաւառ): Քուլթալիսի կողմերում երկու տեսակ խաղող է մշակւում, այսպէս կոչւած մէկը՝ «մաղլարի» (բարձրացող, ծարերի վրայ թողնւած), միւսը «դաբլարի» (ցածը, ցիցերի վրայ):

Ինչպէս չալտնի է, նահանգի հողալին ու կլիմայական պայմանները ձեռնտու են խաղողի մշակութեան համար, եթէ չլինէր ֆիլոքսերան, որ վերջին տարիներս կարծէք բուն է դրել ալդ նահանգում ու չի հեռանում ահադին վնասները տակ գցելով ալդետէրերն և մեծ չարւած տալով գինեգործութեան զարգացմանը ալդ նահանգում: Այդ անկոչ և աւերիչ թշնամուն դէմ դնելու և նրանից ազատելու համար, 1891 թւից, ինչպէս չալտնի է, Կովկասեան ֆիլոքսերալին մասնաժողովը բացել է Կւիրլիա աւանի մօտ այսպէս կոչւած «Սակարի օրինակելի սնկարանը», որ հակաֆիլոքսերալին չափութիւն ունենան և լարմարին տեղական պայմաններին: Տնկարանը գտել է, որ ամերիկական «*riparia*» կոչւած տեսակը լիովին համապատասխանում է վերը քիչած չափութեանը, ուստի և առանձին ջանք ու խնամք է գործ դնում ալդ որթի մշակութեան վրայ:

Քաղաքի ոչ մի կողմը փեթակով մեղու չտեսալ, բացի վերը քիչած գիւղատնտեսական ուսումնարանի 4—5 փեթակից: Այն ինչ՝ ալդ տեղերը, համարեա ամեն տեղ, մեղով կլիմայի ու անտառաշատ բնութեան շնորհով կարելի էր աջողութիւնով մեղու պահել, մանաւանդ որ ալդ տեղերում ալնայիս բուսեր չէին մշակում, որ կարողանալին վնասել մեղուն, ինչպէս օրինակ թութունը ու արեւածաղիկը, որ շատ են վնասում մեղուներին և մեծ արգելք են մեղապահութեան գործին: Հէնց նոյն իսկ պարտէզներում ու ալգիներում միթէ չէր կարելի մեղու պահել, մանաւանդ գիւղատնտեսական ուսումնարանի մօտից անցնող խճուղու ուղղութիւնով, որտեղ թէ աւելի տաք է, թէ անտառը մօտիկ է և թէ ցուրտ քամիներից ազատ ու պաշտպանւած: Բոլոր գաւառների մէջ ամենից աւելի մեղու ստացում է Շարոպանի գաւառում:

Թէ՛ն Բուժաւիտի շրջակայ գիւղերը չեմ ման եկել, բայց գիւղացիներին շատ եմ տեսել դաշտերում՝ արտերում բանելիս և քաղաքում՝ բան բերելիս: Նրանց երկրագործական գործիքները շատ պարզ ու հասարակ էին: Նրանց արօրը հասարակ չէնք էր և շատ նման է արխաղների արօրին: Խոփը շատ փոքր ու կարճ. իսկ փետակն էլ նրանց պէս՝ շատ մեծ ու լաջն բերանով: Սալը՝ սովորական վրացու սալ էր. բայց ուրիշ տեսակ փոքրիկ սալեր էլ ունէին, որ բանեցնում էին նրանք սովորաբար քաղաք փաշտ կրելու ժամանակ: Դրանք էլ երկու անիւ ունեն և բացի աջն, որ սովորական սալից շատ փոքր ու թեթեւ էին, առաջը կցւած ջուկ երկու փաշտ ունէին, որոնք անիւի տեղ՝ քաշէ քաշ քսւում էին հողին: Դա երևի նրա համար էր, որ սալը բարձր տեղերից ապահով ու անվտանգ լջնի: Նրևի բարձրից ու դառիվեր տեղերով էին բերում:

Գիւղացիները քաղաքում աւելի երևում էին գլխաւորապէս կիրակի և ուրբաթ օրերը: Ուրբաթ օրերին տօնավաճառ է լինում քաղաքում և չորս կողմից գիւղացիներ են գալիս, բան բերում ծախում: Նրանց բերածները սրանք էին. սալակներով՝ փաշտ, կանաչեղէն, (կոտեմ, տարխուն և այլն), մրգեղէն (բալ, թուժ, խակ ու մանր վալրի սալոր, հլակ), թէյի նման մի բան, որ թէյի տեղ են բանեցնում իրանք, գործիքների համար պատրաստի կոթցունե՛ր՝ բաւական լաւ շինւած պարտեզներն ու տան առաջը պատելու համար—ցիցեր, հաւեղէն (հաւ, բաղ), ապրեշումի թել (աւելի զեղին), զօմի, սիմինդրի ալիւր ու հաց, պանիր, գուլպաներ, նոցնպէս և ծախու մալ և մինչև անգամ—շուն: Բերում էին և իրանց ձեռքով շինած և քերած հացի տաշտեր, որ իմ տեսած հալ գաղթականների շինածներից շատ ստոր էին: Բերում էին էլի կաւէ ամաններ. նոցնպէս իրանց ձեռքով շինած ու թրծած, զանազան մեծութեան ու ձևի, հասարակ և տեսակ-տեսակ նաշխերով ու զարդերով: Դրանք շատ գեղեցիկ բաներ էին. ալը բանում, ինչպէս երևում էր, նրանք շատ վարժ ու հմուտ են: Եթէ չեմ սխալւում, ամբողջ Կովկասում ուրիշ ոչ մի տեղ աչնպիսի գեղեցիկ ու նաշխուն խեցիներ չեն շինում:

Գիւղացիները տեսքով խեղճ ու միամիտ մարդիկ էին երևում. հագուստը աղքատ ու հասարակ. շատերը ոտով էին գնում գալիս, մի քանիսը էշերով՝ բարցած. պատահում էին նոցնպէս ձիերով, բայց ձիերի սարքն ու կարգն էլ հասարակ էր մեծ մասին. օրինաւոր թամբ չէին ունենում: Գնացող-եկողների մէջ պատահում էին և կանաչք. նրանցից շատերն էլ ոտով էին գնում-գալիս:

Վերջացնելով այս փոքրիկ նկատողութիւնները իմէրէշների մասին, աւելորդ չեմ համարում դուրս բերել այստեղ աչն ընդհանուր տպաւորու-

թիւնը, որ անում է առհասարակ ալդ ժողովուրդը. աղքատ ու անհոգ գիւղացուց սկսած մինչև հարուստ կալածատէրը ու ապահոված աղնւա-կանը—իրանց կեանքի հասարակական երևոյթներում:

Իմէրէլը խիստ ինքնուրույն ազգ է. ինքնուրույնութիւնը նրա հասարակական կեանքի առաջին պայմանն է. Նա ինքնուրույն է դէպի ամեն բան, ինչ որ կապ ունի, ինչ որ վերաբերում է իր հալրենիքին, լեզուին ու հալրենաւանդ սովորութիւններին: Նա հալրենիքից չէ գաղթում սովորաբար. տունը, տեղը, իր աշխարհը չէ թողնում, չէ ամապցնում, չէ սոյա-նում նրան: Հող չունի, թէ փող չունի, աչսպէս թէ աչնպէս, իր սև օրը աչնտեղ է անցկացնում, նրանից չէ հեռանում: Որ նրանք իրաւի աղքատ են ապրում, որ գիւղացին նիւթապէս վատ վիճակի մէջ է նրանց մօտ,— ալդ ես աչնքան չգիտեմ, քանի որ նրանց գիւղերի ու նրանց տնտեսական դրութեան հետ մօտիկ ծանօթ չեմ: Բայց աչքանը տեսել եմ, որ մի փոք-րիկ կողով ձեռին՝ վերստեղով ճանփաչ է գալիս, թէ ինչ է մի խակ ու անպէտք սալոր է բերել, մի-երկու կոպէկ առնի, գնալ: Աղքատութիւնն ու խեղճութիւնն է, որ ալդքան ճանփաչ է տանում բերում. ունեցողը ալդ չէր անիլ: Նրանց մօտ էլ հողի պակասութիւն է. սեփական բաւա-րար հող քիչ կալ. հողերի մեծ մասը կալածական է. բայց էլի անհոգ, աղքատ ու խեղճ գիւղացին իր տեղը չէ ձգում, հալրենիքից չէ փախչում:

Նրանք ամենքը խօսում են իրանց մալրենի լեզուով. ոչ մի իմէրէլ չկալ, ու իր լեզուն չիմանալ: Մալրենի լեզուն անքան է կալել նրանց սրտին, աչնպէս է տիրել նրանց հոգուն, որ նուցն իսկ ինտելիգենտ մարդիկ, որոնք լաւ ռուսերէն իմանում են, ալդ լեզուով խօսելիս՝ չեն կարողանում աղատել մալրենի լեզուի ակցէնտից. ռուսերէն խօսելիս նրանք երբեմն տեղ-տեղ աչնպէս անախորժ ու խիստ կերպով են չեշտում, որ նրանց վրացի-ութիւնը մարդու ականջն է ծակում: Մարդ իսկուցն կ'իմանալ որ խօսողը, չնայելով նրա ռուսերէնի մէջ ունեցած հմտութեանն ու վարժութեանը, անպատճառ իմէրէլ է, ինչպէս երևում է, մալրենի լեզուն նրանց մէջ սրբութեան պէս պահում, պաշտում են. կարծում եմ որ քիչ կը պատահի նրանց ինտելիգէնտ չրջանում, որ ալդ լեզուով չխօսեն: Ոչ թէ միաչն տանը, իրանց մօտ, ալ մինչև անգամ՝ ինչպէս ինձ պատահել է տեսնել, պաշ-տօնական շատ տեղերում, ուր վրացիներ են ծառայում, ամեն մի զիմո-ղի հետ էլ վրացերէն են խօսում, առանց հարցնելու, թէ զիմողը վրացե-րէն գիտէ թէ ոչ:

Աղգանձները նրանք միւ պէս չեն փոխում, նրանց «ձէ» ու «չելի» ամեն տեղ համարձակ հնչում է թէ պաշտօնեալ մեծաւորի դռանը և թէ հասարակ խանութների կախարաններին: Համարեա ամեն մի կախարա-նին ռուսերէնի հետ զրւած է լինում և վրացերէնը— թէ ումն է և ինչի խանութ է:

Իմէրէլը նոյն աւանդապահութիւնն է ցոյց տալիս և զրսից, իր շորի ու արտաքինի վերաբերմամբ: Ոչ միայն հասարակ, անպաշտօն մարդիկ, ալ և շատերը պաշտօնեաներից դեռ իրանց սիրելի ու անբաժան չօխալից ու զէնքերից ձեռք չեն վերցնում. իսկ աղուականներից հօ համարեա ամենքը ալզպէս են: Աղուական լինել և գօտիից զէնք չունենալ կախած, զա տեսնած բան չէ: Դէպի հալսնաւանդ լիշատակները աջնալիսի պատկառանքով ու եռանդով վերաբերող մարդը—նոյն զգացումներն է տաժում և դէպի զէնքը:

ՊԱՏԿԵՐԸ

Շ Ա Ն Թ Ի

Պառկած ես հոտ՝ պատկերին մէջ,
Դուն չար աղջիկ, ու կը ժըպտիս.
Մեղմ ժպիտ մը, որ չունի վերջ,
Ինչպէս տենչանքն իմ սրտիս.

Ամօթխածի կեղծ դիմակով
Ու նազանքով մը զեղանի
Ծածկել կուգես կոյս վերմակով
Լեցուն կուրծքըդ հոլանի.

Մինչ ես խաբւած՝ պատկերիդ դէ
Զեռքերս վեր կ'առնեմ մեղմիկ,
Որ վրայէդ քաշեմ, նետեմ
Այդ ծածկոյթը երջանիկ:

1894, փետր. 2

Լ. Կոբեկ:

ԱՍՈՒՊԸ

Շ Ա Ն Թ Ի

Այդ աղջիկը երէկ տեսայ.
Հեղ մը միայն, այն ալ վերջին.
Յարժես ասուպ մը թիւրասահ,
Որ կը կորչի աչքիդ առջին.

Հազիւ գողցայ ակնարկ մ'իրմէն,
Ակնարկ մը վառ ու տենչարժարժ.
Եւ ժպիտ մը իր այտերէն,
Որ ինձ ձօնել ուզեց յանկարծ.

Հազիւ հըսայ փափկիկ թաթին
Հրաժեշտի պատըրւակով.
Եւ զգացի քայլ մը անդին
Սրտէս բան մը մնաց իր քով:

1892, Յուլիս 11

Պօլիս:

ԱԶԱՏԻԱԾ ԲՈԼՂԱՐԻԱՆ

ԵՐԻԱՆԳ ԴԱԶԱՐԵԱՆԻ

I

Բոլղարիայի ազատութեան պատմութիւնը բաւական ծանօթ է մեր հայ ընթերցող հասարակութեանը: Կարդալով մի շարք թարգմանական փոքրիկ գրւածքներ, վերաբերեալ բոլղարների վերջին արիւնալից պատմութեանը, կարդալով «Լուսադէմին» մեծ վէպը, որ կարծես ամփոփումն է՝ ստրկութիւնից ազատել ցանկացող ազգի հերոսական մարտիրոսութեան՝ հայ ընթերցողը կարողացաւ գաղափար կազմել բոլղարների մասին թէ՛ որքան նրանք թանգ էին զանաաւորում իրանց ազատութիւնը, թէ որպիսի ծանր զոհաբերութիւններ արեցին նրանք՝ այդ ազատութիւնը ձեռք բերելու համար: Նրանք ոչինչ չխնայեցին կռւի մէջ. կինը խրախուսում էր իր ամուսնուն և ուղարկում էր պատերազմ, քոյրը համբուրում էր իր «յեղափոխական» եղբոր ոտները և այնպէս ճանապարհ գցում նրան. գառամեալ ծնողները օրհնում էին իրանց կտրին՝ զաւակներին և երգեցնում էին՝ գնալ, մեռնել հայրենիքի ազատութեան անունով: Ով որ կարդացել է «Լուսադէմին» վէպը, ով որ ոգևորւել և արտասւել է այդ գիրքը կարդալիս, նա շատ լաւ յիշում և զգում է այն ամենը, ինչ որ կատարւում էր Բոլղարիայում ազատութեան լուսադէմին. յիշում է այն մեծ հերոսներին, որ նահատակեցան հայրենիքի ազատութեան կռւի մէջ, յիշում է թէ՛ որպիսի բռն ու զգասիրական ոգով էին ներշնչւած այն ժամանակէն բոլղարները, թէ ինչպէս անողոք վճռել էին նրանք՝ կամ

ազատուել տաճիկների իշխանութիւնից, կամ մեռնել միասին... Եւ նրանք ազատուեցան: Շատ ժամանակ չէ այդ ազատուիլը—17 տարի է միայն անցել, և այդ կարճ ժամանակամիջոցում ազատութիւնը անթիւ բարիքների հասցրեց Բոլղարիային: Մի ժամանակ տաճիկների բարբարոսութեան խաղալիք դառած ազգը, — ճնշւած հալածւած, ստորացած ու անպատուած քրիստոնեայ Բոլղարիան, այժմ եւրոպական տէրութիւնների շարքն է մտել. Եւրոպայի ընդհանուր քաղաքակրթական օրէնքներով ու սովորութիւններով է կառավարոււմ, գիտութեան, լուսաւորութեան ամենանոր արդիւնքներն է վայելում...

Այժմեան Բոլղարիայի քաղաքական-հասարակական կեանքը մեծ հետաքրքրութիւն է շարժում Եւրոպայում, և եւրոպացի ճանապարհորդները մանրամասնօրէն ուսումնասիրում և նկարագրում են այդ «նոր ազգի» կեանքը, ձգտումները, նիստ ու կացը: Անգլիացի նշանաւոր հրապարակախօս Էդուարդ Ռայսի մի շատ հետաքրքիր գիրք է հրատարակել, որի մէջ մանրամասնօրէն արձանագրում է Բոլղարիայի արդի կեանքը, իր քաղաքական, հասարակական և տնտեսական պայմաններով ¹⁾:

Ի՞նչ գրքի առաջաբանում Ռայսի նկատում է, որ ինքը միջազգային քաղաքական խնդիրների մէջ ամենից շատ հետաքրքրուում է արևելեան հարցով, որ այդ հարցը մի առանձին պիւնթի: Բնաւորութիւնն է ունեցել նրա աչքում՝ այն բոլոր հետեւանքներով, որ կարող է ունենալ Եւրոպայի համար, դրա վերջնական լուծումը:

Տաճկաստանի անկումը, հեղինակի կարծիքով՝ անխուսափելի է մօտիկ ասպագայում: Եւ որովհետեւ այդ անկման ժամանակ՝ Բալկանեան տէրութիւնների մէջ ամենից կարեւոր դերը Բոլղարիային է պատկանում, ուստի, նոյնիսկ այդ տեսակէտից, շատ կարեւոր է մօտիկ ծանօթանալ այդ երկրի հետ, և տեսնել թէ՛ որքան առողջ զարգացման սաղմեր է պարունակում իր մէջ բոլղարական ազգը՝ իր ապագայ պատմական դերը կատարելու համար: Անցեալ տարւայ սկզբին Էդուարդ Ռայսի գնացել է Բոլղարիա, մնացել է այնտեղ շարունակ մի քանի ամիս և այդ ժամանակամիջոցում,

¹⁾ Տե՛ս. «Русскія Вѣдомости» №№ 177—189

ճանօթանալով երկրի հետ, պատմում է իր գրքի մէջ իր ամեն տեսածն ու լսածը:

II

Ամենից մեծ տպաւորութիւն է արել անգլիացի հրապարակախօսի վրայ՝ Բոլշարիայում տիրող սոցիալ-տնտեսական կարգը, որ շատ բնորոշ և յատուկ է այնտեղի համար, որ իր կնիքը դնում է տեղական կեանքի բոլոր երևոյթների վրայ: Լորդերի, խոշոր կալւածատէրերի և ահագին բազմութեամբ աղքատ դասակարգի, պրոլետարիատի երկրից՝ Եգուարդ Պայսի յանկարծ ընկել է Բոլշարիայի նման մի նոր երկիր, որ ներկայացնում է ռամկական տէրութեան ամենամաքուր տիպարը, մի երկիր, որտեղ չկայ ոչ հարուստ և ոչ աղքատ (? Խմբ.), որտեղ ամեն մարդ իր տրամադրութեան տակ ունի մի կտոր, և ըստ կարելոյն՝ հաւասար կտոր հող, մի երկիր, ուր գոյութիւն չունին արտոնացեալ դասակարգեր, ուր չկայ ոչ մի տեսակ սոցիալական տարբերութիւն, խտրութիւն ազգաբնակչութեան մէջ (? Խմբ.): Եւ ահա այս պատճառով՝ հեղինակը իր գիրքը անւանել է «Ռամկական տէրութիւն» (The Peasant State.) ցանկալով առանձնապէս շեշտել ամենից խիստ աչքի ընկնող յատկութիւնը: Ազգաբնակչութեան ընդհանուր թիւը կարելի է որոշել՝ երեք ու կէս միլիօն՝ կլոր թւով: Թէև Բոլշարներից լինում են բաւական թւով գաղթողներ, մուսուլմանութիւն ընդունողներ և շատ մեւնոյղներ, բայց, այնու ամենայնիւ, բնակիչների թիւը արագ աճում է, այնպէս որ իւրաքանչիւր տարի մօտաւորապէս երկու հարիւր հազարի է հասնում աւելացածների թիւը ¹⁾: Աղքատ ժողովրդի տնտեսական պայմանները, ազատութիւնից զկնի, լաւացել են շօշափելի կերպով — նկատում է Պայսի — և եթէ այդպէս շարունակւի աճումը՝ տասը տարի յետոյ ազգաբնակչութեան թիւը կը կրկնասպառկւի: Ներկայումս եղող բնակիչներից ⁵/₇ մասը կամ երկու միլիոն ու կէս ժողովուրդ պարապում է երկրագործութիւնով, և դրանց մէջ էլ շատ

¹⁾ Բնակիչների աճելութեան ալդ թիւը, որ կը կազմէր մօտ 60/0, մենք զրականապէս անհաւատալի ենք համարում և կարծում ենք որ հեղինակի ալդ տեղեկութիւնը որ և է թիւրիմացութեան արդիւնք է:

ՂԵԱՆ. Խմբ.

մեծ մասը մանր հողատերեր են: Իսկ վարձկանների, ուրիշի հողի վրայ աշխատողների թիւը սաստիկ քիչ է: Հուճքի ժամանակ՝ դաշտային աշխատանքներ կատարելու համար՝ Բոլղարիա են գալիս հարեան երկրներից մշակներ, — գլխավորապէս Մակեդոնիայից: Պատահում է և այնպէս, որ գիւղացին, վերջացնելով իր դորձը՝ սեփական հողի վրայ՝ գնում, վարձով աշխատում է իր հարեանի մօտ: Բոլղարիայում դեռ չէ կատարւած հողագործական վիճակագրութիւն, և այդ պատճառով դժւար է որոշել ճիշտ կերպով թէ որքանի է հասնում գիւղացու հողատիրութեան չափը, իսկ փորձած և տեղական պայմանների հետ լաւ ծանօթ մարդիկ ասում են, որ այդ չափը հասնում է, իւրաքանչիւր գիւղացու համար, երեք ակրի, թէև պատահում են և աւելի փոքր հողաբաժիններ: Բոլղարիայի զանազան գիւղերը այցելելուց, Անգլիայի ճանապարհորդը ընդհանրապէս եկել է ոչնչ եզրակացութեանը, որ այդ երկրում թէև բարեկեցութեան վիճակը այնքան էլ նախանձելի չէ, բայց չկայ տղքատու թիւն այն մտքով, ինչ որ սովորաբար պատահում է արեւմտեան Եւրոպայի տէրութիւնների մէջ: «Բոլղար գիւղացիք համեստ, և նոյնիսկ կեղտոտ են ապրում, բայց նրանք կուշտ են, տաք, թէև կոպիտ են հագնւած, և վայելում են մինչեւանգամ որոշ չափով «կոմֆորտ»: Նրանք խնայող են և այդ համեստ խրճիթների տէրերից շատերը աւելի շատ խնայած փող կունենան, քան թէ Անգլիացի որևէ Ֆերմէր-գիւղացին, որը շատ զոհ կը լինէր ապրել այդպիսի մի կալածի վրայ, այդ նոյն կենսական պայմանների մէջ»:

Բոլղարների մասին շատ անգամ կարելի է լսել աննպաստ կարծիքներ, — ասում է Ռայսի, — որ նրանք անհամակրելի ազգ են, չահասէր են, անկուշտ և ապերախտ են, որ նրանց մէջ չկայ պատւի և ինքնասիրութեան զգացմունք: Ես չեմ կասկածում, աւելացնում է նա, որ այդ կարծիքների մէջ կայ որոշ չափով ճշմարտութիւն, բայց առհասարակ չափազանցրած են: Բացի դրանից՝ Հէոր Հէնց երէկ ազատւեցան Բոլղարները դարաւոր ստրկութիւնից, երբ նրանք ստիպւած էին ապրել միապետական բռնութեան ըէժիմի տակ, և այն էլ մի այնպիսի ազգի, որը օտար էր նրանց թէ ծագումով, թէ լեզուով և թէ կրօնով: Դեռ շատ ժամանակ չէ, որ նրանք

ստրուկ էին, և պէտք է միայն զարմանալ, որ այդ ազդը դեռ էլի պահպանել է շատ գեղեցիկ յատկութիւններ և քիչ է վարակել այն բոլոր բարոյական թերութիւններով, որոնք անխուսափելի հետեանքներ են ստրկային վիճակի:

Երբ ուզում են ցոյց տալ թէ՛ բոլորացոյց մէջ թոյլ են ազնութեան և ճշմարտասիրութեան զգացմունքները, մատնացոյց են անում մի քանի առանձին դէպքերի վրայ: Բայց հազիւ թէ այդ կարող է ազգային ընդհանուր ոգու արտայայտութիւն համարել: Նամանաւանդ որ այդ հապճեպ եզրակացութիւնների դիմաց կարելի է դնել ուրիշ կարծիքներ, որոնց յայտնող մարդիկ շատ մօտից դիտել են բոլորական կեանքը և ժողովուրդը: Ահա, օրինակ՝ պրինց Յովսէփ Բատտենբերգը, (հանգուցեալ իշխան Ալէքսանդրի եղբայրը)՝ ինչ կարծիք է յայտնում բոլորների մասին: (Այս կարծիքն յայտնւած է իշխան Ալէքսանդրի հրաժարելուց բաւական յետոյ): Բոլորները—ասում է նա—լուրջ, աշխատասէր, հաստատակամ ժողովուրդ են. նրանք ունին այն բոլոր յատկութիւնները, որոնք կ'օգնեն նրանց, Բոլորարիայի արդիւնաբերական զարգացման օրերում, առաջնակարգ դեր խաղալ Բալկանեան թերակղզու վրայ: Բոլորիան՝ հարուստ, պտղաբեր երկիր է,—նա ապագայ է խոստանում: Նոյնանման մի կարծիք է յայտնում և Ֆրանսիացի ճանապարհորդ նաւապետ Լամուկսը. Բոլորացոյց բնակորութեան գերակշռող յատկութիւնն է՝ որոշ լրջութիւն և գործնական ոգի: Առհասարակ՝ բոլորացիք սառն են, համբերող և սակաւախօս: Նրանք բարոյական ժողովուրդ են, շատ աշխատասէր և խնայող: Մեզ հետաքրքրող գրքի հեղինակն ինքն էլ շատ լաւ բաներ է լսել բոլորացոյց մասին՝ այնտեղ ապրող օտարազգի եւրոպացիներից: Նրկաթուղու գլխաւոր գծերից մէկի դիրեկտորը ասել է, թէ Բոլորիան այն հազաւազիւտ երկրներից է, որտեղ կարելի է պայուսակով փողը թողնել սենեակում՝ առանց փակելու դռները և լուսամուտները: (Այդ բանում սակայն համոզւել է նաև ինքը, հեղինակը):

Օտարազգի բանկի մի կառավարիչ ասել է, որ նա իր երկարամեայ ծառայութեան ընթացքում, զանազան երկրներում, հազիւ է տեսել այդպիսի ազնիւ վերաբերութիւն դէպի իր պարտականութիւնները, ինչ որ նկատելի է բոլոր գիւղացոյց մէջ: Միւս կող-

մից՝ մի անդլիացի, որ վաղուց ապրում է Բոլղարիայում, վկայել է բոլղարների եռանդի և բարեխղճութեան մասին՝ աշխատանքի վերաբերմամբ: Շատ միակողմանի և անհեթեթ բան կը լինէր, եթէ այդ ասածների վրայ հիմնւած՝ եզրակացութիւն անէինք բոլղարացոց անխտիր աղնութեան մասին, բայց և այնպէս՝ այդ ամենը ցոյց են տալիս—նկատում է Դայսի,—որ բոլղարները ոչինչով պակաս չեն շատ ուրիշ ազգերից և նրանց դատապարտելը կարեւոր հիմունքներից զուրկ է:

III

Բոլղարների կեանքով հետաքրքրուողը ապշում է թէ՛ իրքան մեծ է այդ ազգի մէջ ուսումն առնելու ծարաւը: Գիւղական շրջաններում հասակաւոր դասակարգի մէջ՝ կարգաւ-գրել զխոցողների թիւը շատ սակաւ է. թուրքերի իշխանութեան ժամանակ ոչ ոք, մինչև անգամ գիւղական հոգևորականութիւնը՝ չէր հոգ տանում ամենատարրական ուսում ատարածելու վրայ անգամ: Վայց երկրի ազատութիւնից յետոյ՝ գիւղական ժողովրդի մէջ հիւանդութիւն դառաւ իրանց որդոցը ուսումնարան ուղարկելու ցանկութիւնը, և ձրի ուսման սխտեմը, որ մտցրած է երկրում, ջերմ համակրութեան է արժանացել ազգաբնակչութեան կողմից: Ուսման այդ ծարաւը բացաղբւր համար՝ Դայսի հետեւալ խորհրդածութիւնն է անում. «Բոլղարիայում սաստիկ զարգացած է հայրենիքի թէ՛ անցիակ փառքի և թէ՛ ապագայ երջանկութեան ու մեծութեան դադափարը: Ուղիղ է, թէ սխալ, միայն Բոլղարիայում հաստատ կերպով հաւատացած են, որ ժողովրդի մէջ ուսում, լուսաւորութիւն տարածելը ամենաէական պայմանն է, որ Բոլղարիան մեծանայ և իրան վայել զիրքը ստանայ աշխարհիս երեսին: Միւս կողմից ամենուրեք տարածւած է և ուրիշ, ակելի գործնական, հասկացողութիւն, որ ուսումը բաց է անում ճանապարհ դէպի հասարակական, տէրութեան ծառայութիւնը, որ միակ զբաղմունքն է, երկրագործութիւնից յետոյ՝ այդ երկրում: Արդիւնաբերութիւնը և վաճառականութիւնը թոյլ են զարգացած այստեղ: Արքունական ծառայութեան մէջ հազիւ թէ գտնւի մի մարդ, որի ծնողները հասարակ գիւղացի չլինէին, և տեսնելով այժմ մինիստրների և ուրիշ պաշտօնական

անձանց առաջդիմութիւնը, ամեն մի բոլշար գիւղացի աշխատում է իր որդուն էլ սւսման տալ, որովհետեւ տէրութեան մէջ ամենաբարձր դիրք վայելող մարդիկ տարբերւում են հասարակ գիւղացիներից միայն իրանց ստացած ուսումով—ուրիշ ոչինչ: Վերջին տեսակէտը հաստատւում է և նրանով, որ Բոլշարիացում համեմատաբար աւելի քիչ ուշադրութիւն են դարձնում կանանց ուսման գործը զարգացնելու վրայ:

Յամենայն դէպս՝ աներկբայելի է այն Ֆակտը, որ՝ Բոլշարիայի ազատութիւնից յետո՛յ՝ այստեղ լայն կերպով տարածւած է տարրական կրթութեան սիստեմը: Սահմանադրութեան օրէնքի համաձայն սկզբնական կրթութիւնը պարտաւիճի և ձրի է, և այդ օրէնքը իրականապէս շատ լայն գործադրութիւն ունի: Իւրաքանչիւր քաղաք, աւան և գիւղ ունի իր ուսումնարանը և ուսուցիչը: Քաղաքներում ուսումնարանի շինութիւնը ամենագեղեցիկն է, գիւղերում ամենամաքուրը՝ բոլոր խրճիթների մէջ: Ուսումնարանի շինութեան ծախսը, ուսուցչի ռոճիկը, գրքերի, տետրակների և այլ ուսումնական պիտոյքների հոգսը՝ մասամբ ընկնում է տէրութեան վրայ, մասամբ էլ քաղաքային վարչութիւնների և գիւղական հասարակական վարչութիւնների վրայ: Իւրաքանչիւր տարի ազգային ժողովը՝ մի նշանաւոր գումար է հաստատում ժողովրդական կրթութեան գործի համար: Այսպէս, օրինակ, 1894 թւի նախահաշի համեմատ, կրթութեան գործի համար նշանակւած է եղել—ուսական դրամով հաշւած—մօտ երեք ու կէս միլիոն ռուբլի, որ կազմում է ամբողջ տէրութեան ծախքերի մի եօթերորդ մասը: Այդ գումարից մի մասը գնում է ազգային լուսաւորութեան նախարարութեան վրայ, ուսումնարանական տեսուչների և Սոֆիայում գտանուող «բարձրագոյն դպրանոցի» վրայ, իսկ մնացած գումարից՝ կիսով չափ ծածկւում է քաղաքային և գիւղական ուսումնարանների ծախքը: (Այդ ծախքի միւս կեսը լրացնում են տեղական օրգանները): Ուսում առնելը ձրի է թէ լրացնում են տեղական օրգանները: Ուսում առնելը ձրի է թէ սկզբնական և թէ միջնակարգ ուսումնարաններում: Վերջիններում սահմանւած է տարեկան մի չնչին գումար (7—8 ռուբլու չափ) ուսման վարձ, որ լիովին գործ է դրւում ուսումնարանական գրադարանների օգտին: Ութից մինչև տասներկու տարեկան հասակը,

ամեն երեխայ պէտք է ուղարկւած լինի ուսումնարան, և այդ պարտադիր ուսումը ոչ ոքի կողմից ընդդիմութեան չէ հանդիպել: Ուսուցչի աշխատանքը վարձատրուած է գոհացուցիչ կերպով. սկզբնական ուսումնարաններում ուսուցչի ռոճիկը 500—800 ռուբլու է հասնում տարին, իսկ միջնակարգ ուսումնարաններում 2000 ռուբլ.:

Առհասարակ մատաղ սերնդի կրթութեան գործը աջողութեամբ է առաջ գնում, և նոյն իսկ այն ձևողները, որոնք միջոց ունին իրանց որդոց արտասահման ուղարկելու, վերջին ժամանակ՝ աւելի լաւ են համարում թողնել իրանց մօտ, եթէ միայն չեն ուզում պատրաստել նրանց որ և է մասնագիտութեան համար: Այս վերջին դէպքում՝ նրանք իրանց որդոց ուղարկում են կամ Կ. Պոլիս, կամ Ռուսաստան, Ռումինիա, Աւստրիա, Գերմանիա և Ֆրանսիա: Այդտեղերից նրանք մի քանի տարի յետոյ վերադառնում են հայրենիք—իբր բժիշկներ, իրաւաբաններ, ճարտարապետներ և այլն: Դրանք են կազմում գլխաւորապէս տէրութենական զանազան պաշտօնական անձինք:

Խօսելով տէրութենական ծառայութեան մասին՝ Դայսի նկատում է, ի միջի այլոց թէ՛ երկար տարիներ դիտելով զանազան ազգերի կեանքը՝ եկել է այն եզրակացութեանը, որ տէրութենական և հասարակական ծառայութեան դրութիւնը ամենալաւ չափ կարող է համարւել մի երկրի կուլտուրական զարգացման և առաջադիմութեան: Այն երկիրը, որի կառավարչական գործիչները յայտնի են, իբրեւ գործունեաց, ժրջան և ազնիւ մարդիկ՝ կանգնած է ուղիղ ճանապարհի վրայ, յառաջդիմում է: Եւ ընդհակառակ՝ եթէ մի երկրի կառավարիչները անհոգ են, անփութ են դէպի իրանց պարտականութիւնները, և աւելի հակւած են դէպի կաշառակերութիւնը,—կարելի է հաստատ ասել, որ այդ երկիրը կանգնած է սխալ ճանապարհի վրայ, և աւելի տրամադիր է յետ գնալու, քան առաջդիմելու: Բողարիացում հեղինակը աւելի շատ առիթ է ունեցել շփուելու պաշտօնական անձնաւորութեանց հետ, քան թէ որ և է ուրիշ շրջանի, և այդ մշտական շփումից նրա դուրս բերած ընդհանուր սպաւորութիւնը կառավարչական պաշտօնեաների մասին՝ շատ նպաստաւոր է: Աերոյիշեալ երեք արժանաւորութիւններից՝ առաջին երկուսը—գործունէութիւնը և ժրջանութիւնը՝

վերաբերութեամբ իրանց պարտականութիւնների՝ շատ մեծ չափով զարգացած է Բոլղարիայի վարչական մարդոց մէջ: Աւելի զժւար է քիչ շատ որոշ զաղափար կազմել նրանց ազնւութեան մասին, մանաւանդ որ ճանապարհորդը, անկարող լինելով անձամբ ստուգելու այդ կողմը, պէտք է ստիպւած լինի լսել սրա կամ նրա կարծիքին, որ շատ տարբեր ու հակասական է լինում միշտ: Թէև շատ անգամ, գուցէ և իրաւացի կերպով՝ ասում են, որ բոլղար պաշտօնականները սիրում են իրանց կատարած որևէ ծառայութեան համար—իրանց պաշտօնին վերաբերեալ—վերցնել «կոմմիսիօն», բայց և դրա հակառակ՝ դարձեալ կարելի է առաջ բերել ուրիշ փաստեր, բոլորովին հակառակ բնաւորութեան: Դայսին չաճախ առիթ է ունեցել լսելու Բոլղարիայում ապրող օտարահայտատիներից անպիսի կարծիք, որ նրանք աւելի մեծ ուրախութեամբ կը հաւատան իրանց շահերը տեղական դատաստանին, քան թէ կը դիմեն հիւպատոսների պաշտպանութեանը և հովանաւորութեանը: Ի հարկ է այդ կարծիքը չէին ունենաց օտարահայտատիները բոլղարական դատաստանի մասին, եթէ այդ դատաստանը ներկայացնող աստիճանաւորները լի ենին կաշառակեր ու անբարեխիղճ մարդիկ:

IV

Յայտնի է, որ թուրքաց իշխանութիւնից ազատւելուն պէս՝ Բոլղարիան ստացաւ սահմանադրական կառավարութիւն: Սակայն, Դայսիի ասելով՝ սխալ կը լինի կարծել, որ Բոլղարիայում գոյութիւն ունին պարլամենտական հիմնարկութիւններ այն ձևով, ինչ որ մենք տեսնում ենք առհասարակ սահմանադրական երկրներում: Բայց նոյնչափ սխալ կը լինի նաև կարծել թէ՝ սահմանադրական սկզբունքների բացակայութեամբ՝ երկրի կառավարութիւնը գոտանում է աւտոկրատիական (միապետական) ընթացի տակ: Եթէ անհրաժեշտ լինէր որոշել «Ռամկական տէրութեան» այժմեան ընթացի—ասում է Դայսի, ես կասէի, որ այդ երկիրը հիմնովին կառավարում է ռամկական սկզբունքներով՝ չափաւորեալ գործնական աւտոկրատիայով (միապետականութիւն): Բոլղարիայում բարձրագոյն իշխանութիւնը գոտանում է իշխանի, մինիստրների և ազգային ժողովի ձեռքում: Իշխանը, աւելի շատ իրաւունքներ ունի, քան թէ միւս սահմանա-

դրական երկրներում տրւում է բարձրագոյն պետերին: Թէ տեսականապէս և թէ գործնականապէս՝ նա է նշանակում մինիստրներին, զօրքերի հրամանատարն է և նրա անձնական համակրութիւնը, կամ հակակրութիւնը ազդեցութիւն է ունենում քաղաքականութեան վրայ, որ երբէք չի կարող տեղի ունենալ՝ աւելի կանոնաւոր սահմանադրական երկրներում: Բայց, այնուամենայնիւ, նրա միջամտութիւնը քաղաքական գործերում՝ հանդիպում է խոշոր արգելքների: Նա նշանակում և արձակում է մինիստրներին, բայց նա չի կարող պահել իր ուզած մինիստրներին պաշտօնի մէջ, եթէ դրան հակառակ է ժողովուրդը, արտայայտելով իր կամքը ազգային ժողովում: Զի կարող նա, եթէ նոյն իսկ մինիստրների լիակատար համակրութիւնն էլ ունենայ՝ հետեւել մի քաղաքականութեան, որին հակառակ է ազգը: Թէ իշխանը և թէ մինիստրները, իրանց բոլոր գործերի մէջ կարող են վստահ լինել միայն այն ժամանակ՝ երբ զիտեն, որ ժողովրդի ցանկութիւնը և համակրութիւնը նոյնպէս իրանց կողմն է: Ժողովի և զօրքի տրամադրութիւնը անհրաժեշտ է կառավարիչների համար՝ բոլոր կարեւոր գործերում: Ժողովի և զօրքի տրամադրութեանը միշտ համաձայն է երկրի ընդհանուր տրամադրութիւնը և ցանկութիւնը: Սկզբում, ազատութեան առաջին տարիներում, ժողովը չէր հասկանում իր իրաւունքները և հանդիսանում էր ոչ իբրեւ մի բարձրագոյն օրէնսդիր հիմնարկութիւն, այլ առաւել իբրեւ խորհրդատու և պաշտօնակատար: Շնորհիւ այդ հանգամանքի տէրութեան շատ տեղերում, բացի մի քանի զխաւոր կենտրոններից, ժողովուրդը շատ քիչ էր հետաքրքրւում քաղաքական խնդիրներով: Բայց մի քանի տարւայ սահմանադրական կարգերով ասլրելու փորձը սովորեցրեց բոլորական պարլամենտին՝ աւելի գիտակցօրէն վերաբերել դէպի իր դերը և իրաւունքները: Նշել են արդէն շատ դէպքեր, երբ այս կամ այն մինիստրը ստիպւած է եղել հրաժարւելու իր պաշտօնից՝ ոչ թէ այն պատճառով, որ իշխանը նրան չէ պաշտպանել, — այլ որովհետեւ նա չէ վայելել ժողովի համակրութիւնը և հաւանութիւնը: Ընտրողների մէջ էլ հետզհետէ կազդուււում է այն միտքը թէ՛ ուղարկելով իրանց ընտրած մարդուն ազգային ժողով, յանձնարարելով այդ պատգամաւորին պաշտպանել իրանց տեղական

շահերը՝ դրանով նրանք որոշ չափով ապահովութիւն են ստեղծում իրանց շահերի համար։ Նկատելի կերպով աւելանում է ժողովի ազդեցութիւնը նաև օրէնսդրութեան վրայ։ Իբրև ապացոյց բոլոր ժողովրդի քաղաքական հասունութեան՝ կարող է ծառայել այն հետաքրքիր յորդորը, ազիտացիան, որ տեղի ունեցաւ երկրի շատ անկիւններում՝ հակառակ տաճկաց կառավարութեան, որով Մակեդոնիայում եղած բոլղարական ուսումնարանները ենթարկւելու էին թուրքերի անմիջական հսկողութեանը։ Բոլղարիայի զանազան տեղերից պատգամաւորներ էին ուղարկւում մինիստրութեան մօտ՝ խնդրելով պաշտպան հանդիսանալ Մակեդոնիայի բոլղարներին, բողոքել տաճկաց անիրաւութիւնների դէմ։ Թուրքերի այդ ճնշումների դէմ բողոքելու նպատակով՝ Ֆիլիպպոլում մի մեծ ամբոխային միտինգ կազմեց, որին մասնակցում էին մինչև 8000 մարդ։ Նոյնաման զայրոյթի միտինգներ տեղի ունեցան նաև Շումլայում, Տըրնովում, Վարնայում և Ռուշուկում։ Այդ ազիտացիայի հետևանքը այն եղաւ, որ սուլթանը, զգոյշ գտանւելով՝ զիջեց և փոխեց իր հրամանը։ Խօսելով զօրքի և Ֆինանսների մասին՝ Դաւթի նկատում է, որ թէև Բոլղարիայի նման մի փոքրիկ տէրութեան համար անտեղի է մեծ քանակութեամբ զօրք պահելը, բայց հէնց բանն էլ այն է, որ ազգային ժողովում ամենից մեծ հաճոյքով ձայն է տրուում զինուորական ծախքերի համար, և սովորական չափից աւել զօրք ունենալը՝ այնուთեղ մի անհրաժեշտ բան է համարւում։ «Բոլղարները, — ասում է Դաւթի, — սաստիկ նախանձախնդիր են իրանց անկախութեան, և պարծենում են այն բանով, որ իրանք առանձին ազգ են կազմում։ Իսկ կատարեալ անկախութիւնը կարելի է պաշտպանել, նրանց կարծիքով, այն ժամանակ, երբ շատ զօրք կայ երկրում։ Խաղաղ ժամանակ Բոլղարիայում մօտ 40,000 է հասնում զօրքի թիւը, իսկ պատերազմի դէպքում երկիրը կարող է մինչև 100,000 մարդ դուրս բերել։ Որպէս բարոյական յատկութիւններ՝ կարելի է ասել բոլղարական զօրքի մասին, որ նրանց զինուորները ուժեղ են, տո՛լուն և կարգապահ։

V

Բոլղարիայի Ֆինանսական դրութիւնը շատ գոհացուցիչ է։ Իր ինքնուրոյն կեանքը նա սկսեց սուղ նիւթական միջոցներով։

Դայսիի ասելով այդ միջոցները $2\frac{1}{2}$ միլիոն ռուբլուց աւել չէին: Այդպիսի նեղ հանգամանքներում, այդքան չնչին միջոցներով, նոր կազմած տէրութիւնը հեշտութեամբ կարող էր պարտքի տակ ընկնել, բայց շնորհիւ բոլղարների չափաւորութեան և խնայողութեան՝ այդ բանը չպատահեց: Ֆինանսական վարչութեան մէջ գործ դրած զգուշութեանը ամենալաւ ապացոյց կարող է ծառայել հետեւեալ ընդունւած սովորութիւնը. — նախահաշիւ կազմելիս՝ մոտքը իսկականից զգալի կերպով քիչ հաշւել, իսկ ելքը, ընդհակառակ, ըզգալի կերպով շատ: Այդ ընթացքով՝ շարունակ տասնութէկ տարւայ մէջ՝ 1881-ից մինչև 1892 թիւը՝ միայն չորս տարի այնպէս պատահեց, որ իսկական մոտքը սպասածից բարձր չէր, և լոկ միանգամ իսկական ծախքը ենթադրածից աւելի դուրս եկաւ: Դրա հետեանքը այն եղաւ, որ տասնութէկ տարւայ մէջ տէրութեանական զանձարանի մոտքը գերակշռեց ելքին՝ 12 միլիոն ռուբլի զգալի գումարով: Բոլղարիան հողագործական երկիր է, որտեղ մանր հողատիրութիւնը գերակշռող եղանակն է սեփականութեան, որտեղ հարստութիւնը որքան կարելի է հաւասար է բաժանւած բնակիչների մէջ, և չկան համարեա մեծ հարստութեան տէր մարդիկ: Ամբողջ Բոլղարիայում — ասում է Դայսի — ինչպէս եւեւում է՝ հինգ հոգի միլիոնատէր չկայ, և որովհետև այնտեղ դրամական միութիւնը հաւասար է մի ֆրանկի, ուրեմն, կընշանակէ չկան հինգ հոգի, որոնք ունենային 40,000 ֆուլնտ ստերլինգ (մօտ 400 հազար մանէթ). Յիսուն հոգուց աւել չկան, որ ունենան 20,000 ֆ. ստեր. և հազիւ թէ կը գտանւեն 200 մարդ, որոնց ժառանգները վճարելու լինէին ժառանգութեան տուրք 5000 ֆ. ստերլինգ: Այս հաշիւը ինձ ցոյց տւեց Սոփիայում մի հմուտ առևտրական: Միւս կողմից՝ հազիւ թէ կը գտանւի մի բոլղարացի, որ լիովին կախւած լինի իր առօրեայ աշխատանքից, որ չունենայ որևէ եկամուտ իր հողից, տնից, կամ տաւարից: Ընդհանրապէս կարելի է խոսել, որ այդ երկրում ոչ դրամատէր կայ, և ոչ աղքատ: Մեծ կապիտալի բացակայութիւնը, որ հետեանք է չգարգացած վաճառականութեան և արդիւնաբերութեան, միևնոյն ժամանակ՝ ծառայում է, որպէս արգելք դրանց զարգանալուն: Արդիւնաբերական հիմնարկութիւնները, որոնք քիչ շատ նման են եւրոպական ֆաբրիկաներին,

Թուով հաւասար են ոչ աւել քան 641, ամբողջ տէրութեան մէջ:

Բոլորիայում եղած ժամանակ՝ Դալսի մեծ մասամբ անց է կացրել Սոփիայում և նրա գրքի մէջ շատ տեղեկութիւններ կան՝ նորակազմ տէրութեան մայրաքաղաքի և նրանում եղած հասարակական կեանքի մասին: Սոփիայի զարգանալը հեղինակի կարծիքով, բոլորիայի արած առաջադիմութեան խիստ արտայայտութիւններից մէկն է:

Սրանից քսան տարի առաջ Սոփիան մի աննշան տեղ էր, այնքան աննշան, որ քարտէզի վրայ նշանակելիս Արևելեան երկաթուղու գծի վրայ գտանուող կէտերը՝ աւելորդ էր համարւած յիշել այդ անունը: Իսկ այժմ՝ Սոփիան մի բազմամարդ և բարեկարգ քաղաք է, արևմտեան եւրոպական տիպով, և նրանում շատ աննկատելի են այժմ տաճկաց իշխանութեան շրջանի հետքերը: Վնձ շատ անգամ պատահել է, — ասում է Դալսի, — տեսնել Թէ Ամերիկայում և Թէ մեր կոլոնիաներում քաղաքների առաջ գալը և զարգանալը: Բայց ես չեմ կարծում, որ Կոլորադոյի մէջ Դենւէրը, կամ Կանսասի մէջ Օտտոման, կամ հարաւային Ամերիկայի մէջ Իոհաննեսբուրգը աւելի կարևոր ապացոյցներ լինէին մարդկային եռանդի և նախաձեռնութեան, քան Թէ Սոփիան՝ իր զբօսարաններով, հասարակական շինութիւններով, պարտէզներով ու ճեմելիքներով: Եւ աւելի զարմանալին այն է, որ այդ ամենը առաջ է եկել մի որևիցէ տասներկու տարւայ ընթացքում, լուսաւոր աշխարհից հեռու մի կենդրոնում, որ քիչ ժամանակ առաջ՝ Տաճկաց կայսրութեան ամենալեռնակած և անյայտ գաւառներից մէկն էր:

Հասարակական կեանքը, եւրոպական մոքով՝ դեռ չէ զարգացած Սոփիայում: Բնակիչների մեծ մասը փակ, ընտանեական կեանք է վարում: Հասարակական զւարճութիւններ և ընդունելութիւններ պատահում են միայն եւրոպական դեսպանների և քաղաքական ներկայացուցիչների շրջանում: Տղամարդկանց մէջ բաւական շատ է զարգացած ժողովարան և կաֆէ գնալու սովորութիւնը: Բիւլիարդը և թղթախաղը նրանց սովորական զւարճութիւններն են: Սոփիայից ճանապարհորդել է Դալսի երկրի խորքը, բաւական մօտ ծանօթացել է միւս նշանաւոր քաղաքների և կենդրոնների հետ, ինչ-

պէս են Ռուշուկ, Վարնա, Բուրգաս, Ֆիլիպոպոլ: Այդ քաղաք-
ների մասին էլ հեղինակը մանրամասն տեղեկութիւններ է տալիս:
Դայան աչցելի է նոյնպէս և Սերբիան, Ռումինիան, և, իր արած
դիտողութիւնների հիման վրայ, աշխատում է համեմատել այդ
տէրութիւնները Բսլղարիայի հետ, նրանց արած յառաջադիմու-
թեան, զարգացման տեսակէտից: Այդ համեմատութիւնից նա դա-
լիս է Բսլղարիայի համար նպաստաւոր եզրակացութեան. նրանում
աւելի շատ է գտնում հեղինակը՝ կանոնաւոր և աւողջ զարգացման
սաղմեր:

ԹՈՄԱՆՍ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Երկու հայդուկներ գնում-փախչում էին
Դէպի Ռումինիա տոճկական զօրքից,
Եւ, երբոր Դանուբն անցան, միւս ափին
Նստեցին յողնած փոշուց ու տապից...

Եւ, վերջին անգամ հայեացքը յառած՝
Կապուտին տուղ վեհ Բալկաններին,
Հայրենի երկրում աղօթքը սովորած՝
Նոքա լուռ, տխուր մրմնջում էին:

Դանուբն հոսում էր պղտոր կոհակով,
Խուլ որոտում էր ձորերի միջին,
Եւ մութ ալիքը անվերջ տրտունջով
Անխնայ ծեծում էր քարին ու ափին...

Ս'ի հայդուկն ասաց. «մի ինչ կարօտով
Ես կը մեռնէի հեռու Դանուբից...
Ի՛նչպէս կ'ուզէի, որ մահը շուտով
Ինձ ազատէր այս վիրաւոր սրտից...

Ո՛չ, հայրենիքը մերը չի դառնաց—
Թող յիշատակն էլ Դանուբը տանի—

Ասաց ու նեղեց քսակը մետաքսեայ,
Որ նա լցրել էր հողով հայրենի...

Միւսն ասաց. «Ի՞նչ է սե մահւան քունը,
Երբ օտար երկրում նրան պիտ զտնեմ,
Սարսափելի չէ տանջանք-արիւնը
Թէ բոլորի հետ ես նրան տեսնեմ»

Ո՛չ, ընկեր, դեռ չի բոլորիլ տարին,
Աշխարհի բանը կը գնայ իր կարգով.
Այնտեղ կը զարթնի Բալկանի որդին—
Եւ շտապ՝ կ'անցնենք Դանուբի ջրերով...

Լսիր. գնդակը երբոր սուլելով
Գայ, ամուր բաղխի իմ անվախ կրծքին,
Դու լըւած վերքս Դանուբի ջրերով
Եւ թաղիւր այստեղ, Դանուբի ափին:

Եւ կռից յետոյ կը պառկեմ ահա,
Եւ հանգիստ կը լինեմ ես բոլոր հոգով,
Որ լաց եմ եղել մեր երկրի վերայ
Արցունքի փոխան սրախս արիւնով:

Կ'անցնի ժամանակ—ողջ կ'անցնի անհետ,
Փոշիս կը խառնի գեղջուկի գուլթան.
Կ'երգէ գեղջուկուհին, Դանուբն էլ նրա հետ
Մի օրօր կ'երգէ յաւիտենական...

ՆԱՄՈՒՍ ՈՒ ՂԵՅՐԱԹ

Նւէր հալ տարհետաւորներին

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆՆԻ

Դեռ թոթովախօս մի մանուկ էի
Եւ եօթ տարեկան անդամ չկայի,
Երբ ինձ աւանդեց հայրս իմ անուս
Մի սրբազան խօսք՝—և դա էր նամուս:

Դպրոցի շէմքին դեռ ոտք չդրած
Դեռ նոր էի զիրք իմ ձեռքս առած,
Երբ մօրս համբոյր թրջեց իմ ճակատ
Ու պատուիրեց ինձ անել միշտ Ղէյրաթ:

Ահա և դպրոց... բայց ուսումնաւարտ
Լինել չկրցայ. հայրս էր աղքատ,
Նորա պատուէրով մտայ արւեստի,
Սիրեցի ես վաստակը համեստի:

Եւ այն օրերից, երբ ընկերացայ
Մուրճ՝ ու սալի հետ—բաղդաւորեցայ...
Քրտինքը ղէմքիցս ծորում է կաթ-կաթ
Ու միշտ յիշեցնում ինձ նամուս-ղէյրաթ:

1895 թ. Թիֆլիս:

ԿՈՎԿԱՍԸ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ
ԾԱՅ ԱՂԱ-ՄԱՅՄԱԴ-ԽԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
(Կրճանխի ճակատի 100-ամեակի առիթով)

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

Այնտեղ ուր այժմ ծաղկում ու փթթում է Կովկասի մայրաքաղաք Քիֆլիսը, հարիւր տարի առաջ աւերակների ահաւելի կոյտեր էին—շաղախւած բնակիչների արիւնով և խառնւած երկու սեռի ու մեծ ու փոքրի հազարաւոր զիականերով: Այդ գործը՝ Պարսկաստանի շահ Աղա-Մահմադ-խանի գործն էր, որը 70.000 զօրքով շտապ արշաւանքով եկել էր Վրաստանի թագաւոր Հերակլ II-ին ստիպելու որ սա հնազանդութիւն ընդունի: Վրաստանի թագաւորները՝ Պարսկաստանին ստորադրեալ էին համարւում: Պարսից շահերի թագադրութեան հանդէսին, Արպաբիլում, պէտք է սուրը մերկացրած կանգնած լինէր Վրաստանի թագաւորը: Մինչդեռ Հերակլ II-ը արդէն բանակցութիւններ էր ունեցած Ռուսաստանի հետ, և վերջինիս հովանաւորութեան ներքոյ էր 1783 թւականի դաշնադրութեամբ, որ կռել էր ռուսաց կայսրուհի Կատարինէ II, իւր թագաւորութեան առաջին իսկ տարում: Այդ պատճառով Ռուսիան զօրք էր պահում Վրաստանում: Քրիստոնեայ Ռուսաստանի հովանաւորութիւնը Վրաստանին կատաղեցնում էր այն ժամանակ դեռ ևս զօրեղ Թիւրքիային և Պարսկաստանին: Ռուսաստանի բարեկամութիւնից ետ կանգնեցնելու համար շահ Աղա-Մահմադ-խանը քանիցս պատուիրակներ էր ուղարկել Հերակլ II-ի մօտ.—բայց միշտ էլ իզուր: Նոյն իսկ Վրաստանի սահմանները մոնղոլիս՝ նա նորոգեց իւր առաջարկութիւնը: Կրկին իզուր. Հերակլը հաստատ կամք չայտ-

նեց Ռուսաստանին հաւատարիմ մնալ: Եւ պատրաստեց կռիւ: Վճռական հանդիպումը եղաւ սեպտեմբերի 11-ին 1895 թ., Թիֆլիսի արւարձանում՝ Կրճանիսի դաշտում: Վրացիք սարսափելի պարտութիւն կրեցին, Թիֆլիսը մատնեց կոտորածի և աւերման: Վրաստանը այդ օրից ի վեր այլ ևս ոտի կանգնել չկարողացաւ. մի քանի տարուց յետոյ ծերացած և կոտրւած Հերակլ II մեռաւ և նորա յաջորդ Գէօրգի XIII-ը 1801 թւականին կամաւոր կերպով ստորագրեց Վրաստանը Ռուսաստանին պատկանելու և յաւիտեանս հպատակելու դաշնագիրը: Եւ Վրաստանը իբր պետութիւն վերացաւ: Վաստայլ դառաւ հպատակ Վրաստանը՝ մահմեդականին վասսալ լինելուն զերպոյսեց քրիստոնէայ զօրեղ պետութեան հպատակ լինելը, —այդ ճակատագրական վախճանն ունեցաւ այն քաղաքական դրութիւնը, որ ստեղծւեց Կրճանիսի ճակատամարտով, որի հարիւրամեակը լրացաւ ներկայ սեպտեմբերի 11-ին:

Մանօթանունք նախ Վրաստանի այն ժամանակեայ դրութեան և կռիւ երկու հերոսների՝ Հերակլ II-ի և շահ Աղա-Մահմադ-Խանի հետ:

Վրաստանը, չորս դար շարունակ՝ XIII մինչ XVI-րդ դարը՝ ծանր փորձութիւններ կրելուց յետոյ, զրեթէ անկման անդունդին հասնելով՝ սկսել էր արդէն մտնել լուսաւորութեան և բարեկարգութեան շուղի մէջ, Վախթանգ VI-ի, Օրէնսդիր կոչւած Թագաւորի՝ ժամանակ, XVII-րդ դարու վերջին և XVIII-րդ դարու սկզբին: Վրաստանը շարունակ պէտք է պաշտպանւէր մի կողմից պարսիկների և տաճիկների, միւս կողմից՝ լեզգիների անդադար յարձակումներից, պաշմանների, որոնք այնքան խանգարում էին նորա կուլտուրական խաղաղ զարգացմանը: Վախթանգը առաջինն էր որ կազմեց մի օրէնսգիրք, և յայտնի է թէ դրա համար ինչ ծառայութիւն մատուցեց Մխիթար Գօշի հայոց Դատաստանագիրքը, որ կազմւած էր դեռ XIII-րդ դարում: Թիֆլիսում հիմնուում է առաջին վրացոց տպարանը, և մի շարք գրական գործիչներ Օրէնսդիր Թագաւորի հետ միասին աշխատում են գրականութեան զարգացման համար:

Գիտական-գրական այդ յառաջդիմութիւնը շարունակուած է նաեւ Վախթանգ VI-ից յետոյ՝ Թէյմուրազ II-ի և Հերակլ II-ի ժամանակ։ Բացի մանր դպրոցներից՝ հիմնուած են դպրանոցներ (սեմինարիաներ), մէկը Թիֆլիսում, միւսը Թելաւում, տպւում են նոցա համար դասագրքեր, նորոգւում է տպարանը, կազմւում է ծրագիր Գորիում բարձրագոյն դպրոց բանալու՝ երկու հին լեզուների և մի նոր լեզւի՝ ֆրանսերէնի՝ դասաւանդութեամբ։ Եւ թագաւորացն Իոհան, հեղինակը «Վալմասթթա» գրքի, կազմում է մանրամասն ծրագիր՝ Վրաստանի պետական կազմի մէջ եւրոպական ռեֆորմներ մտցնելու համար։

Չուզինթաց յառաջդիմութեան այդ առաջին քայլերի հետ, Վրաստանը 18-րդ դարում նաեւ քաղաքական յաջողութիւններ ունեցաւ։ Բուն Վրաստանի—Քարտալինայի—Թագաւորութեան հետ միացաւ Կախէթիայի Թագաւորութիւնը—Աստուած, ի հարկէ, դոցա Թագաւորութիւններ անւանի! Բացի այդ, Թէյմուրազ II զիւանագիտական յաջողութիւններ ունեցաւ, իսկ նորա որդի Հերակլ իւր ժամանակի քաջամարտիկ զօրականներից էր։ Դեռ ևս միայն 15 տարեկան էր նա, որ պատերազմական յատկութիւններ ցոյց տւեց լեզգիների վրայ ունեցած յաղթութեան մէջ, Ալազան գետի միւս կողմում։ Ակնածուութեամբ էին նայում նորա վրայ նաեւ տաճկաց սուլթանը և պարսից շահը։ Նազիր-շահը իւր մօտ է հրաւիրում մերթ հօրը (Թէյմուրազին) և մերթ որդուն (Հերակլին) մասնակցելու համար դէպի Աղանստան և Հնդկաստան վարած արշաւանքներում։ Հերակլ II փայլուն յաղթութիւններ տարաւ տաճիկների վրայ—Ասպինդիի կռիւ մէջ—և Ադերբէյջանի խաների վրայ. իսկ Երևանի, Փանձակի և Շուշայ խաները նորան հարկատու էին, վճարելով 50—200 հազար ռուբլի ամեն մէկը, փոխարէնը պաշտպանութիւն գտնելու պայմանով։ Հերակլի պատերազմական այդ յաջողութիւնները հաւանական էին զարձնում այս տարածւած լուրը թէ ռուսաց արքունիքը կամենում է Հերակլին ստորագրել Իրանի դահլ, և թէ Հերակլը այսօր չէ վաղը պիտի տիրապետէ ամբողջ Պարսկաստանը։ Եւ այդ իսկ պատճառով Հերակլի մօտ ընծաներով էին գալիս պաշտպանութիւն և հովանաւորութիւն խնդրելու համար՝ նոյն իսկ Թաւրիզի, Խոյի, Ուրմիայի և այլ խաները։

Հերակլ II-ի մի բնորոշումը տեւել է այն ժամանակեայ Կովկասեան զօրագնդի հրամանատար գեներալ-պորուչիկ իշխ. Պոտեոմ-կինը, (որին չպէտք է շփոթել հռչակաւոր Փելլմարշալ և Կատարինէ II-ին այնքան սիրելի իշխան Գրիգորից Ալեքսանդրովիչ Պոտեոմկինի հետ), երբ Հերակլը 62 տարեկան էր, այն է 1784 թ. և Հերակլ թագաւորը միջակ բոյով է, թունդ բնաւորութեան տէր. հայեացքը սուր է: Ամեն անգամ խօսելիս հայեացքներ է նետում յօնքերի տակից, գուցէ նրա համար, որ նկատի դէմքի շարժումները այն մարդու, որի հետ խօսում է: Մի փոքր կորացած է ծերութիւնից, լինելով 62 տարեկան, բայց զեռ առօջ է: Նա մէկն էր այն մարդկանցից, որոնք ամենից շատ գիտեն երկումոքանի խօսել: Այր ոչ սովորական խելքով, սակաւ անգամ համբերող, զարմանալի գործունեայ, հսկում է ամբողջ դիշերը, իւր տէրութեան գործերը ինքը վարելով. քիչ է քնում: Փորձառութիւնից տեղեակ է ասիական քաղաքականութեանը. ձգտում է իւր ազդը վերափոխել եւրոպական ձեով: Բարեպաշտ է այնքան, որ ամեն օր և անպակաս ներկայ է լինում ժամասացութեան և մանաւանդ իւր կաբինէտում երկու ժամ զբաղւում է աղօթներով, որից նորան ոչ մի դիպւած ետ կանգնեցնել չի կարող:

Չնայած, սակայն, որ Վրաստանը վերածնութեան նշաններ էր ցոյց տալիս, չնայած նաև Հերակլ II-ի պատերազմական մեծ համբաւին, (վրաց աղբիւրները, գուցէ չափազանցնելով՝ նորան մասնակցել են տալիս մինչև 150 կռիւներում), Վրաստանը այդ ժամանակ ներքին քաղաքական ողբալի վիճակի մէջ էր: Ինչ էր իսկապէս Վրաստանը, եթէ ոչ մի փոքրիկ պետութիւն, թէև աւելի մեծ քան Երևանի, Գանձակի, Շաքիի, Շամախու, Շուշայ խանութիւնները առանձին-առանձին վերցրած: Պէտք է իմանալ որ Իմերեթիան էլ իւր համար առանձին թագաւորութիւն էր կազմում ¹⁾, թէև այդտեղ թագաւորում էր այդ ժամանակ Սալումոն I, վրաց Հերակլ II-ի

¹⁾ 1424 թականին Վրաստանի թագաւոր Ալեքսանդր I բաժանեց իւր տէրութիւնը իւր երեք որդոց մէջ՝ Իմերեթիալի (Մինդրէլիալով և Գուրիալով), Քարթալինալի (բուն Վրաստան) և Կախեթիալի. վերջինս, որպէս ասացինք, Հերակլի ժամանակ միացաւ Քարթալինալի հետ:

Թուրք Ուրեմն Վրաստանը այնուամենայնիւ մի փոքրիկ պետութիւն էր։ Բայց այդ փոքրիկ պետութիւնը ունէր մի բազմամարդ Թագաւորական տուն, որի անդամների յաւակնութիւնները չէր կարող յագեցնել մի այդպիսի փոքրիկ երկիր։ Հերակլ II պսակւած էր երեք անգամ, և ունէր 24 զաւակ, իսկ նորա ժառանգ Գէորգին ունէր 23 զաւակ։ Եւ ամեն մէկը մի-մի Թագաւորազն էր՝ արու թէ էգ—ամեն մէկը իւր մեծամեծ պահանջներով։ Բացի այդ, Հերակլի տղերքը իրար ինտրիգներ էին լարում զահի ժառանգութեան համար, և նոցա մայրը—Թագուհի Գարիջանը կամ Գարիան—ճարպիկ կերպով սնուցանում էր այդ ինտրիգները։ Եւ Հերակլ II, այնքան համբաւաւոր իբր պատերազմող—ամենաթուլ հայր էր և բարձր հեղինակութիւն չունէր իւր որդիների վրայ։ Հօր համաձայնութեամբ որդիքը բաժանել էին ամբողջ երկիրը մանր մասերի. իսկ հօր, գէթ իբր տէրութեան պետի, իբր Թագաւորին անպայման հպատակելու զգացմունքը շատ թուլացել էր նոցա մէջ։ Այսպէս, օրինակ, Ասպինձիի կուրի ժամանակ (տաճիկների դէմ) Թագաժառանգ Գէորգի, որ հրամանատար էր վրաց զօրքի ձախ թւին, հրաժարւեց կատարել Հերակլի հրամանը՝ առաջ գնալ դէպի կենտրոնը, և նորա այդ վարմունքը անպատիժ մնաց։

Եւ Թիւրքիան ու Պարսկաստանը ամեն կերպ, նաև կաշառքով, աշխատում էին ուժեղացնել Թագաւորից որ և է բանի համար անբաւական տարրերը։ Այդպիսիներն էին՝ Գարսեան ճաւճաւաձէ, չնայած որ նա շատ բարերարւած էր Թագաւորից. ապա Կսանի Երիսթաւ իշխանները, Իւան Օրբելիանի և ուրիշներ, որոնք խաղաղութեան ժամանակ ինտրիգներ էին լարում Թագաւորի դէմ, իսկ Աղա-Մահմադ-խանի արշաւանքի ժամանակ քիչ էր մնում աշկարայ գործէին Հերակլին կործանելու համար։

Հերակլի ներքին թշնամիների թւում մի յիշատակարանի մէջ ¹⁾, որ գրել է 1844 թւականին Հերակլի Թուրք (Թագաւորի Թեկդէ աղջկայ որդին) իշխ. Ա. Զ. Զամբակուրեան-Օրբելիանի, յիշում են նաև, և մինչև իսկ առաջին կարգում՝ Թիֆլիսի հայերը, որոնք իբր թէ ղեկավարւում էին այն ժամանակ դեռևս Ռուսաստանի հայոց առաջնորդ

¹⁾ Տպւած վրաց Մոսմէ ամսագրում, Ներկայ 1895 թ.:

(յետոյ կաթողիկոս) Յովսէփ արքեպ. Արղութեանից, և որ այդ կուսակցութիւնը աջակցում է եղել թաղաւորի զէմ գործող վրացի իշխաններին: Մի կողմն ենք թողնում թէ թագաւորի թոռան այդ խօսքերի մէջ որքան ճշմարտութիւն կայ և թէ որքան փանտաղիա կարող է խառն լինել զահակորոյս ընտանիքի մօտիկ ազգականի մեղադրանքների մէջ, մանաւանդ Թիֆլիսում դեռ այն ժամանակ թւով և տնտեսապէս իշխող այլազգիի վերաբերմամբ. բայց վրացի իշխանների վատութեան մասին բոլոր աղբիւրները, դոցա մէջ նաև Զաքարիայեան-Օրբելիանինը, միաձայն են. և, բացի վերոյիշեալ վրացի դաւադիր իշխաններից, մնում է առանձնապէս չիշել իշխան Բեւազ Անդրոնիկովին, որի վատութեան աստիճանը մարդու հաւատալը չի գալիս, բայց այնուամենայնիւ պատմականապէս ճիշտ է: Երբ, ծանր րոպէում, թագաւոր Հերակլը պատուիրակ է ուղարկում Կախեթիայի կառավարիչ թագաժառանգ Գէօրգիի մօտ, Սղնախում այդ իշխ. Բեւազ Անդրոնիկովը, որ երկրի մօռւբան էր (կուսակալ), պատուիրակին չթողեց անգամ Գէօրգիի մօտ գնալ, ասելով թէ նա տկար է և ոչ ոքին չի կարող ընդունել!

Ասում ենք որ ամբողջ թագաւորութիւնը բաժանւել էր արքայորդիների վրայ, և որ Հերակլ II-ին որդիքը չէին հնազանդւում: Բայց, ինչպէս երևում է, ոչ միայն որդիքը չէին հնազանդւում իրենց հօրը, այլ և ժողովուրդն էլ չէր լսում այդ իշխաններին: Դորա ապացոյցը քիչ ներքև դեռ կը տեսնենք:

Ահա այսպէս էր ներքին դրութիւնը մի թագաւորութեան, որը պէտք է ճակատ դնէր հրէշ Աղա-Մահմադ-Խանի ահագին զօրքին:

Չի կարելի առանց տրագիկական զբաղմունքի կարգալ այն մեծամեծ յոյսերով լիքը ճառը որ խօսում է Հերակլը իւր զինւորական խորհրդի մէջ՝ զօրավարներին և ազալարներին, երբ մըտածում էք, որ, իւր ծրագրով, թագաւորը պէտք է կարողանար 80.000 զինւոր ժողովել՝ թշնամուն ընդդիմադրելու և յաղթելու համար (չէ որ Հերակլը մինչ այդ ժամանակ երբէք չէր յաղթւած!), և վերջը, երբ Աղա-Մահմադ-Խանը արդէն Թիֆլիսին էր մօտեցել,

որքան զօրքով Հերակլը ընդառաջ գնաց? — Մաղր է թուում, բայց նորա դուրս բերած զօրքի թիւը առաւաւելն հասնում էր 7000 հոգու! Այն ութսուն հազարը, որ ապաստում էր Հերակլը, պէտք է կազմէր այսպէս. 16.000-ը Կախեթիացից և Կիզիկիացից. Քարտալինիան, Արագւայի ձորը և Ղազախ-Քորչալուն պարտաւորւում էին տալ ամեն մէկը աասնական հազար մարդ: Իմերեթիան խոստանում էր օգնութեան գալ 10.000 հոգով: սպասւում էր նաև, որ Դաղստանի և Բալաքանի ¹⁾ ժմար-խանը դուրս կը գար 25.000 հոգով: Եւ քացի դորանից, Հերակլը յոյս էր դնում ռուսների վրայ: Ռուսաց զօրքը 1790 թւականին ետ էր կանչւել Վրաստանից: Այդ ժամանակ (1787 — 1791) Ռուսաստանը իւր երկրորդ պատերազմն էր մղում Ցաճկաստանի դէմ: Մայիսի 1895 թ. Հերակլը մարդիկ ուղարկեց գննարալ Գուզովիչի մօտ՝ յայտնելով վտանգը Ալեքսէյչանին մօտեցող Աղա-Մահմադ-խանից, և որովհետև յոյսը դրել էր միայն Շուշլայ խանի վրայ, ուստի պահանջում էր, 1783 թ. դաշնադրութեան համաձայն, 3 հազար մարդ:

Բոլոր այդ ոյժերի գումարումը պէտք է վերջացրած լինէր օգոստոսի վերջերքը, որովհետև շահի արշաւանքը սպասւում էր սեպտեմբերին: Եւ առաջուց ամեն պատրաստութիւն տեսնւած էր զօրքերը ընդունելու համար:

Հերակլի սպասածը սակայն չեկաւ: Վերը չիշեցինք ինչ գաւառորքան պէտք է զօրք տար: Բայց սպասածը չիրագործւեց. Կախեթիացի կառավարիչ Գէօրգի, ընկած Ռեւազ Անդրոնիկովի ինտրիգների ոստայնը, տեղից չշարժւեց. Յարութիւն Արարատեանց, որին այս դէպքում պէտք է հաւատալ, իբրև ականատես պատմում է թէ իշխ. Գէօրգին (Սղնախի արքայորդին) շատ անգամ էր ժողովել իւր հօր խնդրած զօրքը և քաղաքից ճանապարհ դրել դէպի Քիֆ-լիս. բայց նորա հպատակներն այնքան կամակոր էին, որ կողմնակի ճանապարհներով վերադառնում էին իրենց տները, ըստ որում նոքա այնքան իրենց հայրենիքի պաշտպանութեան համար չէին հոգում, որքան մտածում էին, որ ժամանակին արտերից իրանց հացերը հաւաքեն, գինի շինեն և իրանց ընտանիքի ապրուստի

¹⁾ Բալաքանը Դաղստանի քաղաք էր՝ Վրաստանի սահմանադիւսին:

հոգսը քաշեն: Այսպիսի անհնազանդութիւն էլ ցոյց տւին նոքա պատմողի Սղնախ եղած ժամանակը, երբ արդէն Շահը բոլորովին մտեցել էր Թիֆլիսին¹⁾: Միայն թագաւորազն Վախթանգը ներկայացաւ 500 արագւեցիներով (Արագւայի ձորի բնակիչներ) և թուշ-փշաւ ու խեւսուրներով, փոխանակ 10.000-ի. Կիզիկիայից²⁾ եկաւ 1000 մարդ. իրենց պապին անօգնական չթողին նաև թագաւորազն Գալիգ և Խոհան, իսկ Խմերեթիան խոստացած տասը հազարի տեղ՝ ուղարկեց միայն... երկու հազար, առաջնորդութեամբ Ալլումն թագաւորի (Հերակլի թու) և Զոհրաբ Պերեթելիի: Չեկաւ նաև ռուսաց օգնութիւնը, որովհետև մայիսին Հերակլի պահանջած օգնութիւնը ռուսաց կայսրուհին վճռեց տալ միայն 4-ն սեպտեմբերի, իսկ այդ հրամանը ստացաւ Գուգովիչը միայն հոկտեմբերի 1-ին 1795 թ., երբ Թիֆլիսը արդէն աւերակների կոյտ էր դառել և ամեն բան վերջացել էր: Մի խօսքով, բոլորը ինչ վճռական ժամին Հերակլը կարողացաւ թշնամուն դիմադրել, որպէս ասացինք արդէն՝ մինչ 7 հազար զինուոր էր և ոչ աւելի: Ողորմելի բան էր զազան թշնամու դէմ, որի հետ այժմ պիտի ծանօթանանք:

Մէկը ամենաահաւելի հրէշներից, որ երբ և իցէ ճանաչել է մարդկութիւնը—դա Աղա-Մահմադ-խանն էր: Իսպառ զուրկ այն ամենից, ինչ ընդունակ է մարդու սրտի մէջ արծարծել որ և է սէր ու համակրութիւն դէպի մարդկային արարածը: Բնութիւնը և մարդիկ վիրաւորել էին նորան դեռևս մանկութիւնից, և կարծես ամբողջ ազգերի վրայ էր ուղղում լուծել իւր վրէժը թէ բնութիւնից և թէ մարդկանցից: Նազիր շահը (որ թագաւորեց 1736-ից մինչ 1749 թ.)³⁾ նորան բանտարկել էր Շիրազի բանտում և ներքինի (սկապէց, եւնուխ) դարձրել:

¹⁾ Յար. Արարատեանցի կեանքը, մասն II.

²⁾ Կիզիկիա կոչւում է այն փոքրիկ երկիրը, որ գտնւում է Սղնախից դէպի հարաւ-արևելք, Գոմբորեան լեռների բարձունքների վրայ և մասամբ նոցա հիւսիսային կողմում: Ներկայումս Կիզիկիայում, որքան մեզ կայտնի է, 22 գիւղ կայ:

³⁾ Նազիր-շահը կոչւում էր նաև Թահմազ-Ղուլի-խան: Նա չաջորդեց Շահ-Թահմասին 1736 թւին:

Բայց նա կարողացաւ բանտից փախչել: Նադիր շահից յետոյ Պարսկաստանից կտրւեցին կամ ապստամբեցին շահ Աբբասի (Թաղաւորեց 1586—1628) և Նադիր շահի ժամանակ Պարսկաստանի հետ միացրած այլ և այլ իշխանութիւններ և Թաղաւորութիւններ (արևելեան կողմում Աֆղանստան, արևմտեան կողմում ի միջի այլոց նաև Կովկասի խանութիւնները)¹⁾: Այսպիսով հասնում էր պարսից Թաղաւորական Թիւրքմէն ցեղի անկումը, որի հիմնողն էր Իսմայիլ-Սաֆիի (1501—1523): Նադիր-շահից յետոյ, որ սպանւեց 1749-ին իւր վրանի մէջ իւր իսկ պահապանների ձեռքով, դառն ժառանգելու համար մեծ խռովութիւններ ծագեցին. շատ նահանգներ ապստամբեցան. զանազան տեղերում զանազան իշխաններ կամ շահեր նըստեցին. Մաշհադի մէջ Թաղաւորեց Նադիրի Թուր Դահ-Ռուխ-կոչւածը. Ատրպատականում Թաղաւորեց Նադիրի եղբորորդի Ադիլ-շահը, որի եղբայրը՝ Միրզա-Խերահիւմը՝ յետոյ կուրացնելով հարազատ եղբորը, ինքը շահ դառաւ: (Այդ երկպառակութիւնների ժամանակն էր որ Նադիր-շահի Խորասան տարած Զիւանշիրցի Թուրք խաշնարած գաղթականները վերադարձան կրկին Ղարաբաղ. այդ այն գաղթականներն էին, որոնց խաշնարածներից մինը դառաւ «Ջաուշի» Փանան, յետոյ ցեղի տանուտէր, յետոյ չիշեալ Ադիլ-շահի կողմից Ղարաբաղ ուղարկւած Ամիր-Ասլան-խանից «խան» տիտղոս ստացածը, իսկ յետոյ Շուշայ խանը, հայ մելիքութիւնների խորտակողը և ամբողջ Ղարաբաղի տէրը, որի որդի Խերահիւմ-խանի ժամանակ և կատարեց Աղա-Մահմադ-խանի արշաւանքը դէպի Վրաստան): Պարսկաստանի նահանգների տիրապետողներ եղան նաև Ալի-Մուրադ-խանը, Զէնդ-Քէրիմ-խանը, Ագատ-խանը, Մահամէդ-Հասան-խանը և ուրիշները: Իոցա մէջ յաղթող յանդիսացաւ զէնդ Քերիմ-խանը, որը նստեց Շիրազ քաղաքում, ոչ շահ տիտղոսով, այլ իբր Պարսկաստանի իշխող²⁾: Այդ ժամանակ նորա մօտ Շիրազում իբրև պատանդ պահուում էր Նադիր շահից ներքինիացրած Աղա-Մահմադ-խանը, որը չիշեալ Մուհամէդ-Հասան-խանի որդին էր, մազանդարանցի, ցեղով զաշար: Երբ Քերիմ-խանը մեռաւ 1779-ին, Աղա-

¹⁾ Համիմ. Իրոկհաուլի բառարանը՝ Պարսկաստան լոգւածը:

²⁾ Բաֆֆի. Խամուալի մելիքութիւններ:

Մահմադ-խանը փախաւ Շիրազից, եկաւ իւր հայրենի Մազանդարանի կողմերը, նւաճեց Մազանդարանը, Արաղստանը. իրան պարսից շահ հրատարակեց, Թեհրանը աթոռանիստ քաղաք ընտրելով: Եւ նորանից սկսեց Պարսկաստանի մինչ այժմ իշխող թագաւորական զաջար ցեղը: Աղա-Մահմադ Խանը, զաջար ցեղից, կոչւած էր Պարսկաստանի զօրութիւնը վերականգնելու: Նա հպատակութեան բերեց Թալիշը, Գիլանը, Մազանդարանը և պատրաստուած էր Պարսկաստանի թագը կրելու հանդէսը Արզաբիլում կատարելու, պահանջելով այդ հանդիսին վրաց թագաւոր Հերակլի ներկայութիւնը: Իւր բոլոր արշաւանքներում նա, զօրավարի յատկութիւնների հետ ի միասին, ցոյց տւեց անլուր գազանութիւններ:

Աղա-Մահմադ-խանի մի նկարագիրը տալիս է մի պատմաբան ¹⁾, որի համաձայն՝ հասակով փոքր և վտիտ՝ Աղա-Մահմադ-խանը հեռւից 14-15 տարեկանի էր նմանում: Նորա խորշումած և անմօրուս դէմքը նորան նմանեցնում էր պառւաւած կնոջ, իսկ դէմքի գծագրութիւնը, որոնք երբեք ախորժելի չէին, նորան սարսափելի կերպարանք էին տալիս՝ երբ նա զփոշ էր կամ բարկացած. իսկ այդ՝ շատ յաճախ էր պատահում:

Ատելութիւնը և արեան վրէժը փայլում էին նորա խորընկած աչքերի մէջ, որոնք, ներքին յուզման ժամանակ, կարծես ընկղմում էին կարմիր հրացայտութեան մէջ: Աղա-Մահմադ-խանի թափանցող հայեացքը զողի մէջ էր գցում նոցա, որոնց վրայ նայում էր նա, իսկ շահի բարակ ու սղմած շրթունքների արհամարական ժպիտը արտայայտում էր կատարեալ և խորին արհամարանք դէպի ամենը, ինչ շրջապատում էր նորան:

Բարձր սրածայր գլխարկը ծածկում էր նորա ածիւլած գլուխը, մեռելային կերպարանք տալով դեղին, անմազ և խորշումած երեսին, որ վկայում էր այն բնութեան հակառակ խեղաթիւրութեան մասին, որը, կատարւած լինելով նորա վրայ երեսոյց ժամանակ, դարձրել էր նորան, տարիքն առած հասակում, ամբողջ մարդկութեան ատեցող: Մարմնապէս խեղաթիւրւած՝ շահը դառաւ բարոյական հրէշ: Իւր խեղաթիւրութեան պատ-

¹⁾ Նադեժդին (Надежда—О Кавказе).

ճառ Նաղիր-շահի աճիւնը նա ամփոփել տւեց դէպի սէրայլը տանող կորիզորի յատակում, որ միջոց ունենայ ամեն օր կոխկրտել նորա ատելի փոշին, և նոյն ձևով նա կը կամենար ամբողջ մարդկային ցեղը մի գերեզմանի մէջ դնել, որ ամբողջ մարդկութիւնը ոտով կոխկռտել կարենար:

Նորա թողած հոգու իշխող կիրքը՝ իշխանասիրութիւնն էր, երկրորդը՝ ժլատութիւնը, երրորդը՝ վրէժխնդրութիւնը: Այդ երեքին էլ նա ծայրահեղ անձնատուր էր և մանաւանդ վրէժխնդրութեան: Պարսկաստանի բոլոր եղած պետերի մէջ նա եղաւ ամենաանգութը: Գթութեան, ողորմածութեան և մարդասիրութեան խօսքը երբեք չէր զուրս զալիս ներքինի-իշխանաւորի բերնից, որը վաղուց սովոր էր ատելութեան, վրիժառութեան և անթիւ անհամար մահապարտութիւնների¹⁾: Ինչ փոքրութիւնից Աղա-Մահմադ-խանին տիրապետեց ինքնասիրութիւնը և բարձրանալու միտքը, որին նա հետեւեց իւր ամբողջ կեանքը՝ հազւագիւտ տոկունութեամբ աննկուն ձգտողութեամբ:

Մարմնով չոր՝ Աղա-Մահմադ-խանը սովորեցրեց իրան ողջախոհութեան և գործունեաց կեանքին: Տասնեութ տարեկան հասակում նա արդէն պատերազմ էր մղում այն ճանապարհի վրայ, որ տանում էր դէպի Պարսկաստանի գահը:

Ահա այդ Աղա-Մահմադ-խանն էր, որ սեպտեմբերի 10 ին 1795 թ. մերձեցաւ Թիֆլիսին:

Պարսից շահ դառաւ նա 1794 թւականին: Քանի՞ տարեկան էր նա արդեօք: Կարելի է մօտաւորապէս հաշուել: Նաղիրը

¹⁾ Ահա անթիւ մահապարտութիւններից մի բնորոշ դէպք, որ պատմում է Բուսովովը: Թալիշի բէգերից մէկը խնդրել էր Աղա-Մահմադ-խանից գթալ և կեանք չնորհել նորան և իւր ցեղին, չանուն Ալի մարգարէի, որից ալդ ցեղը ուղիղ իրեն գծով սերւած էր կարծում: Աղա-Մահմադ-խանը չետաձգեց մահապարտութիւնը մինչ հետեւեալ օրը, բայց աջնպէս, որ եթէ նա երազի մէջ ոչինչ չտեսնի որ թելադրէր իրեն բէգին և նորա ցեղին ազատելու՝ աջն ժամանակ նաև նոցա չի խնայիլ: Հետեւեալ օրը առաւօտեան շահը մտաւ իւր «զիւանը» կարմիր զգեստով, առաջ որ հանդիստ քնեց և ոչինչ չտեսաւ. և իսկույն հրամայեց սպանել ծերունուն և նորա ցեղը:

մեռաւ 1749-ին. Պարսկաստանի ապագահ շահը դեռ ևս երեխայ էր, երբ Նադիրը նորան ներքինիացրեց: Կարելի է յամենայն դէպս ընդունել որ Նադիրի մահւան տարում Աղա-Մահմադ-խանը կը լինէր տասը տարեկան: 1794-ին ուրեմն նա կը լինէր մօտաւորապէս յիսուն և հինգ տարեկան:

1795 թւականի գարնանը Աղա-Մահմադ-խանը Թեհրանից արշաւեց Ատրպատական, նւաճեց Քաւրիզը, ապա ուղարկեց իւր եղբայր Ալի-Ղուլի-խան սարգարին դէպի Երևանի կողմը: Ղարաբաղի, Երևանի, Նախճաւանի և ուրիշ նահանգների ժողովուրդը, հայ և մահմեդական, կամենալով ազատուել սպառնացող աւերածքներից և կոտորածներից, իրենց զոյքերն ու անասուններն առած՝ մեծ բազմութեամբ անցան Վրաստանի սահմանը, զաղափար չունենալով այն զրկանքների մասին, որ նոքա պէտք է կրէին վրացի հարուստների և կալւածատերերի ձեռքից ¹⁾: Ալի-Ղուլի-խանը տիրեց Նախճաւանին, յուլիս ամսում բանակ դրեց Երևանի պարիսպների մօտ: Եջմիածնի Ղուկաս կաթողիկոսը, սարառփելով նորա մօտ եկաւ և ծանրագին ընծաներ ներկայացնելով՝ աղաչում էր խնայել վանքը: Ալի Ղուլի-խանը պատուով ընդունեց կաթողիկոսին, խոստանալով ֆլասս չհասցնել հայերին և վանքին, եթէ հայերը հաւատարիմ կը մնան Պարսկաստանին, ինչպէս միշտ եղել են: Երևանը առանց պատերազմի անձնատուր եղաւ. տեղական խանը իւր կնոջը և որդիներին պատանդ տալով՝ հպատակութիւն խոստացաւ ²⁾:

Ղուկաս կաթողիկոսը, բացի այդ, 100.000 ռուբլի վճարեց շահի պատերազմական ծախքերի համար. մի հանգամանք, որ զայրացրել էր վրացիներին: Դա իսկապէս փրկանքի գին էր: Նոյն կաթողիկոսը Եջմիածնի թանկագին իրեղէնները Թիֆլիս էր ուղարկած՝ աւարից զերծ պահելու համար:

Իսկ Աղա-Մահմադ-խանը նոյն միջոցին, ուրիշ ճանապարհով

¹⁾ Տես Յարութիւն Արարատեան կեանքը, II մաս:

²⁾ Բաֆֆի Խամսայի Մելիքութիւններ:

դիմում էր Ղարաբաղի կողմերը, որ այնտեղից անցկենայ Քիֆլիս Խուլափիրինի կամրջով նա անցաւ Երասխ գետը և լուր տւեց եղբորը, որ զաղարեցնէ արշաւանքը Երևանի կողմով և շտապէ իւր մօտ:

Գեւ ևս Երասխ գետը չանցած՝ շահը, որ քաջ տեղեակ էր Ղարաբաղի հայ մելիքութիւնների դրութեանը և թէ Շուշուայ խան (Փանահ խանի որդի) Իբրահիմի բռնակալութեանը՝ հրաման ուղարկեց Ղարաբաղի մելիքներին, հրաւիրելով նոցա, որ խոնարհւեն իրեն, խոստանալով որ ինքը կը վերահաստատէ նոցա վաղեմի իշխանութիւնների և արածնութիւնների մէջ, և որ նա կ'ոչնչացնէ Շուշուայ Իբրահիմ-խանին: Շահին յայտնի էր, որ մելիքները Իբրահիմ խանի դէմ կոււելու համար՝ իրենց յոյսը դրել էին Ռուսաստանի վրայ, որի արքունիքի հետ վաղուց յարաբերութիւններ էին սկսած: Բայց հայ մելիքները աւելի բարւոք համարեցին հաւատարիմ մնալ ռուսներին և, Աղա-Մահմադ-խանին ընդդիմադրելու համար, միացան նոյն իսկ իրենց թշնամի Իբրահիմ-խանի հետ: Բացառութիւն կաղմեց միայն Ջրաբերդի (Ղարաբաղի հինը հայ մելիքութիւններից մէկի) իշխանը՝ Մելիք-Իսրայէլեան Մելիր-Միջլումը, որը չկամեցաւ միանալ միւս մելիքների և հետեւապէս Իբրահիմ-խանի հետ, այլ միացաւ Գանձակի Ջաւադ-խանի հետ. և այդ երկուսն էլ իրենց զօրքերով մտան Աղա-Մահմադ-խանի բանակը ¹⁾:

Ի նկատի ունենալով մելիք Մեջլումի այդ արշաւանքում կատարած մեծ դերը, առաջ բերենք այն հանգամանքները որոնք տեղի տւին այդ հայ իշխանին Քիֆլիսի աւերման գործի հետ իւր անունը կապել և նոյն իսկ հայ Ժողովրդի անէծքին ենթարկւել:

Մելիք-Մեջլումը ականաւոր մարդ էր. Աղա-Մահմադ-խանի արշաւանքի մէջ նորա կատարած դերը շատ շօշափելի էր. նա և Գանձակի Ջաւադ-խանը գլուխ անցան առաջնորդելու Աղա-Մահմադ-խանի զօր-

¹⁾ Շահի բանակը մտածների մէջ քիչոււմ է նաև Մելիք-Աբով: Դա՝ Ղարաբաղի մելիքութիւններից մէկի՝ Գիւլիստանի՝ Մելիք-Բեղլարեան Մելիք-Աբովն է: Բայց դուցէ դա սխալ է. գոնէ Բաֆֆի (Սամա- մելիքութիւն.) ասում է թէ մելիք-Աբովը այդ ժամանակ արդէն մելիք-Մեջլումի հետ չէր, այլ միւս մելիքների հետ Շուշուայ բերդում պատսպարւեց:

քերը զէպի Շուշի և ապա մանաւանդ զէպի Թիֆլիս: Ինչու այդ մելիքը այդպիսի զիրք բռնեց և իւր անունը կապեց մի հրեշի կատարած աւերմունքների հետ: Ինչու նա վաստակեց հայ ժողովրդի, մանաւանդ Թիֆլիսի ժողովրդի նոյն իսկ անէծքը: Դաւաճան էր նա?

Դորա համար պէտք է մի փոքր մօտիկուց ծանօթանալ մելիք Մեջլումի քաղաքականութեան հանգամանքների հետ, որ մենք այստեղ կը ներկայացնենք, հիմնելով Րաֆֆիի՝ Խամսայի մելիքութիւնների գրքում արւած տեղեկութիւնների վրայ:

Մելիք-Մեջլումը թէև իսկական մելիք էր, բայց արդէն ոչ իւր իսկական երկրում՝ Ջրաբերդում: Նոյնպէս և մելիք-Աբովը: Մելիք-Մեջլումը հաւատարիմ քնաց իւր հօր (մելիք-Աթամի) քաղաքականութեանը, որպէս և մելիք-Աբով III շարունակեց իւր հօր՝ մելիք-Իւսուբի՝ և ապա իւր վաղամեռ եղբայր մելիք Բեգլար II-ի քաղաքականութեանը: Իսկ մելիք-Աթամը և մելիք-Իւսուբը այն մելիքներն էին, որոնք ոչ մի կերպ չէին հաշտուում այն բանի հետ, որ Վարանդայի մելիք-Շահնազարի ձեռնառութեամբ որ և է մահմեդական հովիւ Փանահը կարողանայ Շուշույ պէս տեղում բերդ շինել և տիրապետող զիրք բռնել Ղարաբաղում: Իսկ նոցա ժառանգներ՝ Ջրաբերդինը՝ մելիք-Մեջլումը և Գիւլիստանինը՝ մելիք-Բեգլար II ու ապա մելիք Աբով III, որոնց ժամանակ Փանահ-խանի որդի Իբրահիմ-խանը արդէն ոտնակոխ արաւ հայ մելիքների իրաւունքները և իրեն չլսողին՝ հալածում էր ու վարւում հետները որպէս ապստամբների, նոցա տեղը այլ մելիքներ կարգում, զոքա, մելիք Մեջլումը և մելիք Աբով, յամառեցին չճանաչել Շուշույ խանի գերիշխանութիւնը, անիծելով նորա բարեկամ մելիք-Շահնազարին ու միւսներին: Մահմեդական խանին Շուշուց դուրս քշելու, Պարսկաստանի ազգեցութիւնն Կովկասից վերացնելու և հայ մելիքութիւնները իրենց նախկին իրաւունքներով վերահաստատելու համար՝ մելիք-Մեջլումը և զաշնակից կամ գաղափարակից մի երկու այլ մելիքներ, շարունակելով իրենց նախորդների քաղաքականութիւնը, շարունակեցին նաև իրենց զիմնամները ռուսաց կայսրուհի Կատերինէ II-ին, Յովսէփ արքեպ. Արղութեանի միջոցով, որ մտերիմն էր իշխան Պոռոծմկինի, իսկ սա էլ՝ սիրելին կայսերուհու: Մրազիր-

ներ կազմեցին հայոց և կամ հայկական-վրացական իշխանութեան՝ Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ. իշխան Պետեովկին արդէն չիշոււմ էր թեկնածու հայոց այդ ծրագրւած իշխանութեան դահի համար, և այլն: Այդ մեղքները խոստանում էի՝ միանալ ռուսաց զօրքերի հետ, և պատերազմը նշանակւած էր 1784 թւականին: Ապասւած զօրքերը, սակաւն, չեկան, բայց այդ մեղքները շարունակում էին գաղտնի գործել նոյն յոյսերով: Խորհրդակից մեղքներն էին՝ Գիւլիստանինը (մեղք-Արով), Զրաբերդինը (մեղք-Մեջլում), Տիզակինը (Մեղք-Աւանեան մեղք-Բախտամ), որոնց միացել էր և Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը: Այդ խորհրդին չէին կանչւած Իբրահիմ-խանի կողմնակից և բարեկամ Վարանդայի մեղք-Շահ-նազարը, Խնդրիստանինը (մեղք-Ալլահվերդի), Գիւլ-Նաթաղինը՝ (Ռուստամ-բէկ), որոնցից երկու վերջինները նոյն իսկ Իբրահիմ-խանի նշանակած մեղքներ էին: Իբրահիմ մի պատուակով իւր մօտ հրաւիրեց չիշեալ հակառակորդ մեղքներին, մեղք-Մեջլումին և մեղք-Աբովին բանտարկել տւեց, իսկ մեղք-Բախտամին խանը մատնեց Պարսկաստանին, ուր նա կալանաւորւեց Արզաբիլում, իսկ նորա երկիրը՝ Տիզակը դարձաւ պարսկական գաւառ: Բանտարկւեց նաև Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը, ուր նորան թունաւորելով սպանեցին (1786 թ.), իսկ նորա եղբայրներին (որոնց մէջ և Սարգիս եպիսկ.) երկար ամիսներ չարչարեցին, և ապա մեծ տուգանքով ազատեցին: Նահատակւած Յովհաննէս կաթողիկոսի տեղ Իբրահիմ խանը Գանձասարի կաթողիկոսական աթոռը տւեց Երիցմանկանց վանքի (բայց Գանձակում իբրեւրահիմ խանին գաղտնապէս բարեկամ ապրող) Իսրայէլ կաթողիկոսին. վերջինս իւր ակնկալութիւնները կատարելու համար Իբրահիմ-խանի չորդորմամբ բռնեց ռուսաց հետ սննեալիք բանակցութիւնների թղթերը, որ չիշեալ երեք մեղքների և Յովհաննէս կաթողիկոսի կողմից բերել էին նորա մօտ, որպէս զի նա ևս ստորագրէր: Այդ թղթերը նա մասնեց Իբրահիմ-խանին, և որպէս զի իւր ձեռքում հլու պահէ, Իբրահիմ-խանը, Մեղք Շահնազարի խորհրդով, Իսրայէլ կաթողիկոսին տեղաւորեց ոչ թէ հետու Գանձասարում, այլ Շուշուն աւելի մօտ Ամարասի վանքում: Անարկւած թղթերը այն զոկու մէտներն էին, որոնց հիման վրայ Իբրահիմ-խանը կատարեց վերը չիշած բանտարկութիւնները: Սա-

կայն Շուշում բանտարկւած մեղիք Մեջում ու մեղիք Աբով շուտով զաղտնի կերպով ազատեցին նոցա հաւատարիմ մարդկանց ձեռքով ու անմիջապէս գնացին վրաց թագաւոր Հերակլի և ռուսաց զօրապետ Բուրնաշովի մօտ, որոնք 1787 թ. մօտեցել էին Գանձակ քաղաքին։ Նոքա խոստացան պատերազմել Իբրահիմ-խանի դէմ, բայց երբ, նոյն 1787-ին, ծագեց ռուս-տաճկական երկրորդ պատերազմը, Բուրնաշովը իւր ռուս զօրքով յետ կանչեց Ռուսաստան, և այսպիսով մեղիք-Մեջումի և մեղիք-Աբովի յոյսերը ի դերւ ելան։ Սոքա Հերակլի հետ գնացին Թիֆլիս։

Ռուսաց զօրքի հեռանալովը, Իբրահիմ-խանը աւելի յանդուգն դառաւ. իմանալով երկու մեղիքների Թիֆլիս գնալու մասին, նա Շուշի իբր պատանդ բերաւ մեղիք-Մեջումի մօրը և մեղիք-Աբովի ընտանիքից մի քանի հոգի։ Յետոյ մեղիք-Մեջումի երկիրը (Ջըրաբերդ) կողոպտեց, աւերակ դարձրեց, մեղիք նշանակեց այդտեղ Դիւնաթաղի Ռուստամ-բէկին, որը խանին սիրելի Խարաչէ կաթողիկոսի քրոջ ամուսինն էր։ Մեղիք Աբովի տեղ նոյնպէս ուրիշին նշանակեց։

Թիֆլիսից մեղիք-Մեջում և մեղիք-Աբովը շարունակեցին ռուսաց կայսրուհուն զիմուսներ անել, խնդրելով որ կամ օգնութեան զօրք հասցնի և կամ Դերբենդի շրջակայքում իրենց ժողովրդին զաղթելու տեղ շնորհի՝ մեղիքների սեփականութեան և մեղիքների ժառանգական իշխանութեան իրաւունքով։ Մեղիքները համաձայնում էին նոյն իսկ Ռուսաստան զաղթել նոյն արտոնութիւններով։

Յայտնի չէ թէ ինչ պատասխան տրեց նոցա, բայց նոյն ժամանակ նոքա յորդորում էին Հերակլին միանալ իրենց հետ՝ Իբրահիմ-խանի դէմ։ Նա խոստանում էր, բայց սպասել էր տալիս։ Այդ միջոցներին Հերակլը առաջարկութիւն է ստանում Իբրահիմ-խանից՝ որ Մեջում ու Աբով մեղիքներին իրեն յանձնէ, փոխարէնը խոստանալով ետ ուղարկել այն 3000 թուրք ընտանիքներին, որոնք առաջ վրաց հպատակ էին, բայց Ռոշալուի կողմերից փախել էին եկել Ղարաբաղ։

Հերակլը այդ անկալութեամբ, թէ գուցէ վախենալով Իբրահիմ-խանի վրէժխնդրութիւնից, մոռնում է կատարել խանի առաջարկը և իւր ապաստանած հիւրերին կալանաւորելով՝ խանի ձեռքը մատնել։ Տեղեկանալով սակայն թէ խանի առաջարկութեան և թէ այն մասին թէ Հերակլը

նոցա ձերբակալումը կամենում է եղել իբր թէ կատարել Թիֆլիսի Օրթաճալա կոչւած այգիներում սարքած մի ճաշկերոյթի ժամանակ (որ սահաճն դժւար հաւատալի է), մեղիքները փախուստ են տալիս և աստատանում Գանձակի Զաւադ-խանի մօտ, որը ինքը բարիքներ էր տեսել այդ մեղիքների նախորդների մօտ, ծանր օրերում: Զաւադ-խանը, բացի այդ, Իբրահիմ-խանի թշնամին էր: Այդ մեղիքների ժողովուրդներին Իբրահիմ-խանը տեղահան արաւ, Զըրաբերդի հայերին տարաւ Տիգակի գաւառը, Գիւլիստանինը՝ Խաչէն գաւառը: Մեղիք-Աբովի ժողովրդից, սակայն, 500 ընտանիք և մեղիք-Մեջլումի ժողովրդից 1000 ընտանիք գաղթեցին այդ միջոցներին Գանձակի գաւառը, ուր Զաւադ-խանը նոցա բնակութեան տեղ տւեց իրենց մեղիքների իշխանութեան ներքոյ, որպէս ժամանակաւոր հիւրեր:

Գանձակից հայ տարագրեալ մեղիքները սակայն հրոսակային խմբերով շարունակ վնասներ էին հասցնում Իբրահիմ-խանին, որը մի քանի անգամ դիմեց Զաւադ-խանին՝ խնդրելով սորա միջնորդութիւնը իւր հիւրընկալած մեղիքների հետ հաշուելու համար, որ նոքա դադարեցնեն թշնամական գործողութիւնները և, վերադառնալով հայրենիքը և տիրելով իրենց երկիրներին, վայելեն իրենց վաղեմի իրաւունքները: Բայց մեղիքները չէին կարող հաւատալ խաբեբայ մահմեդական խանի խոստումներին և շարունակում էին պնդել որ Շուշաւ բերդը քանդելի, Իբրահիմ-խանը հեռանայ իրենց նախկին հայրենիք Զիւանշիրի անսպասները...

Այդ ամենը առիթ տւին Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանին ռուսաց կայսրուհու ուշադրութիւնը նորից հրաւիրել հայերի վրայ: Նա կազմեց մի նշանաւոր տեղեկագիր, ուր ներկայացրած էին տիրապետող մեղիքների յարաբերութիւնները Ռուսաստանի հետ Պետրոս Մեծի օրերից սկսած. այդ տեղեկագիրը իշխ. Պոտեոմկինի միջնորդութեամբ ներկայացւեց կայսրուհուն 1790 թ. յունւ. 23-ին, երբ դեռ չէր վերջացել ռուս-թրքական երկրորդ պատերազմը: Բայց 1791-ին մեռաւ իշխ. Պոտեոմկինը, իսկ նոյն թւականի դեկտեմբերի 27-ին հաշտութեան դաշն կապւեղ Ռուսիայի և Թիւրքիայի մէջ. և երբ կայսրուհին այդպիսով միջոց գտաւ զբաղւելու հայերի և վրացոց գործերով, արդէն թէ հայերը և թէ վրացիները մեծ

տազնապի մէջ էին Աղա-Մահմադ-խանի պատճառով: Եւ մինչև որ կաշարուհին զօրք ուղարկեց վրաց Հերակլին՝ Աղա-Մահմադ-խանը իւր գործը արդէն տեսած-վերջացրած էր...

Մեր յօդուածի այս գլխում մենք զբաղւեցինք՝ այն մեղիքով, որը Աղա-Մահմադ-խանի զօրքերի գլխաւոր առաջնորդը դարձաւ Զաւադ-խանի հետ միասին: Մելիք-Աբով և մելիք-Մեջլումը, որպէս տեսանք, այլևս իրապէս տիրապետող իշխաններ չէին. նոքա տարագրւած մելիքներ էին, զո՛հ գնացած իրենց թշնամութեանը Ղարաբաղի հայ իշխանութիւնները խորտակած մահմեդական Իբրահիմ-խանին, և միևնոյն ժամանակ թէ յուսախաբ եղած ռուսաց խոստովներին և թէ վրէժ պահած վրացոց թաղաւոր Հերակլին, որը նոցա, իբր իւր հիւրերի, մի ժամանակ մատնել ուզեց իրենց յիսերիմ թշնամի Իբրահիմ-խանին: Մելիք-Մեծյումը և մելիք Աբովը, ուրեմն, տարագրւած և իրենց իշխանութիւնը կորցրած իշխաններ էին, բայց որոնք ձգտում էին այդ իշխանութիւնը ձեռք բերել և միաժամանակ խորտակել Ղարաբաղի գրեթէ տէր դարձած մահմեդական խանին. այդ նպատակին նոքա չկարողացան հասնել ռուսաց և վրացոց վրայ չոյս գնելով, և երբ Աղա-Մահմադ-խանը եկաւ՝ զոնէ մելիք Մեջլումը չոյս տաճեց նորա ձեռքով իւր սրտի իղձը կատարել և այդպիսով իւր աւանդական քաղաքականութեան նպատակին հասնել: Աղա-Մահմադ-խանը եկաւ ի աջնապիս ոյժով, որի դէմ անգոր էին կուլասեան իշխանութիւնները: Վրացոց թաղաւորը, որպէս տեսանք, հազիւ կարողացաւ 7000 մարդ դուրս բերել, շնորհիւ պետութեան ներքին կազմալուծութեան և իւր իսկ որդիների և վրաց իշխանների դաւաճանութեան. Իբրահիմ-խանը, իրեն հաւատարիմ մնացած և արդէն իսկ հպատակեցրած հայ մելիքներով, այնքան ոյժ ունեցաւ միայն, որ փակեց Շուշայ բերդի մէջ՝ լոկ ինքնապաշտպանութեան համար, առանց համարձակելու պատերազմի դաշտ դուրս գալ ահեղ թշնամու դէմ: Աւարիացի կամ Դաղստանի Օմար-խանը, որի փեսան էր Իբրահիմ-խանը, տեղից չշարժեց. ոչ համաձայնեց Աղա-Մահմադ-խանին զօրք ուղարկելով օգնել (թէև շահը խոստանում էր Օմար-խանի ուղարկած ամեն մարդու համար հարիւր մանէթ վարձատրութիւն տալ) և ոչ էլ համարձակեց նորա դէմ կուլելու: Գանձակի Զաւադ-խանը, որ կարևոր Փակտոր

կարող էր լինել Աղա-Մահմադի դէմ, եթէ միանար Հերակլի և Իբրահիմ-խանի հետ, նա էլ շահի բանակն անցաւ ¹⁾։ Իսկ նորա միանալը Իբրահիմ-խանի և Հերակլի հետ այն ժամանակ միայն կարող էր իրական օգուտ բերել, եթէ այդ երեք իշխանները և հայոց մելիքների զօրքերը կարողանային միանալ և մի՝ հրամանատարութեան ներքոյ գործել։ այդ բոլորովին սպասելի չէր, այնպէս որ, միանալով շահի հետ, Ջաւադ-խանը ազատեց միայն իւր քաղաքը այն ահրաւիրքից, որին յետոյ մատուցեց Թիֆլիսը։ Բաժանբաժան մանր իշխանութիւնները, առանց քաղաքացիական կրթութեան, որով միայն կարելի էր գործողութիւնների միութիւն առաջ բերել դէմ ընդհանուր զօրեղ թշնամու դէմ՝ ահա իսկական պատճառները թէ ինչու Աղա-Մահմադ-խանը, շնորհիւ իւր գերազանց ոյժի, կարողացաւ այն կատարել մեզանում, ինչ որ կատարեց։ Սուլեյի հաւանական է կարծել, որ եթէ հայ մելիքութիւնները խորտակած չլինէին (իսկ այդ բանին կարող էր օգնել Վրաստանը, եթէ լիաժ լինէր մելիք-Մեջլուսներին), նոքա, իբրեւ քրիստոնեայ իշխանութիւններ, իրենց զօրքերով շատ աւելի հեշտութեամբ կը միանային վրաց նոյնպէս քրիստոնեայ թագաւորութեան ոյժերի հետ — ընդհանուր ոյժերով գործելու թշնամու դէմ, քան երբ միանալու ոյժերը պէտք է լինէին մի կողմից Վրաստանը, միւս կողմից մահմեդական խանութիւնները, և հայ մելիքութիւնների ու վրաց թագաւորութեան մէջ տեղ ընկած Գանձակի խանութիւնը ստիպւած կը լինէր գնալ իւր քրիստոնեայ հարեանների շաւղով։

Շահը, այսպիսով, արդէն սարսափ էր տարածել։

¹⁾ Գանձակի Ջաւադ-խանը ոչ միայն թշնամական չարաքերութիւն ունէր դէպի Շուշաւ, Իբրահիմ-խանը, ալ և դէպի վրաց Հերակլ II։ Շահի արշաւանքի ամիսներն էր դեռ ևս, որ, ինչպէս տեղեկացնում է Յար. Արարատեանցը, Ջաւադ-խանի եղբոր որդի Ռահիմ-խանն օգնութիւն էր խնդրել վրաց Հերակլ թագաւորից, որ կարողանալ իւր հօրեղբոր ձեռքից խլել իւր հօր մահից յետոյ ապօրինի կերպով իրանից չափշտակած կալւածները։ Հերակլը, անշուշտ լաւ վարձատրութեամբ, կամաւորներ հաւաքեց Գանձակ ուղարկելու, զինելով նոցա նաև թնդանօթներով, երբ Աղա-Մահմադ-խանը երևաց։

Աղա-Մահմադ-խանը նախ մօտեցաւ և պաշարեց Շուշլայ բերդը, որը պաշտպանում էին Իբրահիմ-խանը և այնտեղ ժողոված հայ մելիքները իրենց զօրքերով: Քառասուն օր ապարդիւն պաշտպանումից յետոյ, շահը, իւր զօրքերի մի մասը թողնելով Շուշի բերդի մօտ, իւր գլխաւոր ուժերով դիմեց Թիֆլիս: Նորան առաջնորդում էին Գանձակի Ջաւադ-խանը և մելիք-Մեջլումը:

Հերակլը, իւր փոքրիկ զօրքով, արիւթեամբ ընդառաջ գնաց, և օգոստոսի երկրորդ կէսին մտաւ Ղազախ. այդտեղ սպասում էր նորան Աղա-Մահմադ-խանի դեսպանը:

—Ես արդէն անցել եմ Երասխը,—յայտնում էր նա վրաց թագաւորին,—բաց և այնպէս դեսպան եմ ուղարկում, որին հետևում եմ ես իմ զօրքով: Անւանի թագաւոր ես, և քեզ չարիք չեմ կամենում, եթէ դու կը կատարես իմ կամքը: Խոստացիր յարգել իմ ցանկութիւնը, ինձ մօտ ամանաթ ուղարկիր քո որդիներից միկին և թոռներիցդ մէկին,—և ես իսկոյն կը վերադառնամ:

Իբր պատասխան այդ առաջարկութեան՝ Հերակլը հրամայեց դեսպանին կալանաւորել և իբր գերի ուղարկել Թիֆլիս:

Այդ իսկ ժամանակ շահը արդէն Ղազախումն էր: Իւր զօրքերը Աղզամում կարգի բերելուց յետոյ, նա օգոստոսի 20 ից անց ճանապարհ ընկաւ, իւր առաջնորդների գլուխ ունենալով մելիք-Մեջլումին և Աբովին ¹⁾: Շոգ եղանակի պատճառով անհնարին էր

1) Համեմատել հալազդի գեներալ-լէյտենանտ Քիշմիշի գրքի հետ *Походъ Нахуръ-Шаха* (Նադիր-շահի արշաւանքները). նա զարմանալով հարց է տալիս թէ ինչն էր տրիպում այդ մելիքներին իրենց հալ-րենիքին դաւաճանել: «Նոքա, ասում է գեներալ Քիշմիշ, վազելում էին Հերակլի բարեհաճութիւնը (расположение), որի միջոցով նոքա զիմում էին ռուսաց արքունիք, օգնութիւն խնդրելով Ղարաբաղի խանի ճնշումների դէմ. բացի այդ, թաքաւորի թուլութեանն էին նոքա պարտական որ Վրաստանի գաղթեցրին իրենց գիւղացիներից 500 տուն, որոնք Շուշլայէր գիւղում տեղաւորեցին, ուր նոքա ցալսօր բնակւում են»: Եւ չետոյ հեղինակը կարծում է որ առանց օգնութեան այդ մելիքների՝ շահը ալեքան արագ չէր հասնիլ Թիֆլիս իրեն համար անծանօթ ճանապարհով և եթէ շահը ուշ հասնէր՝ թերեւ Խուսաստանից իւր ժամանակին օգնութիւն հասնէր և Վրաստանը ալն արհաւիրքները չէր տեսնիլ:

Մելիք-Աբովի մասին արդէն ասել ենք որ նորա մատնակցութիւնը

արագ առաջ ընթանալ, իսկ ահագին հեծելազորքը կերակրելու անհրաժեշտութիւնը ամեն քայլափոխում դադար էր անել տալիս, այնպէս որ 10 օրւայ յոգնեցուցիչ մարշից յետոյ հասան Գանձակ: Այստեղ Աղա-Մահմադ-խանը սպասում էր լէզգիների միանալուն, որոնց վարձելու համար այնքան ջանք էր անում Զաւադ-խանը: Պատասխան ստանալով լէզգիներից, որ ցանկացողներ չկան նորա զօրքը մտնելու՝ շահը սեպտ. 4-ին թողեց Գանձակը և արագ շարժեց դէպի Թիֆլիս:

Հերակլը նոյն ճանապարհով յետ ու յետ էր գնում դէպի Թիֆլիս, թշնամուց ոչ հեռու, բայց միշտ խոյս տալով կռւից: Այդպիսով նա նորան հասցրեց մինչև Սողանլուղ, ուր պարսիկները բանակ դրեցին: Այդտեղ Հերակլը իմացաւ որ իւր սպասած օգնութիւնները չեն եկել և որ չեն էլ լինելու... Դրութիւնը յուսահատական էր:

Պատմում են որ Գանձակից մինչ Սողանլուղ, որ 120 վերստ ճանապարհ է, Աղա-Մահմադ-խանը կտրեց մի օր ու գիշերւայ մէջ:

Սողանլուղը Թիֆլիսից եօթ վերստ է դէպի արևելահարաւ և այն տեղումն է, ուր վերջանում են Թելեթի բարձրութիւնները Քուր գետի աջ ափին: Այդ տեղերքում ամուր գիրք բռնեց նաև Հերակլը իւր զօրքերով, առաջուց նախազգուշացնելով Թիֆլիսի ազգաբնակչութեան՝ չամենայն դէպս ընտանիքներով դուրս գալ քաղաքից և Դուշէթի յետևի լեռներում պատսպարելու: Նորա հրամանով քաղաքը թողեց նաև թաղաւորի ընտանիքը: Թագուհի Դարիան ճանապարհւեց Անանուրի կողմերը: Նորան ուղեկցում էր փոքրիկ շքախումբ՝ գլխաւորութեամբ վրաց Անտօն կաթողիկոսի:

Աղա-Մահմադ-խանը ճիշդ գաղափար չունէր Հերակլի զօրքերի փոքրութեան մասին, և այդ պատճառով զգոյշ էր շարժում, իւր բանակի մէջ տեղ կանգնելով և նախազգուշական ամեն կարգադրութիւններ անելով՝ յարկարժուստ թշնամու յարձակման չենթարկւելու համար: Նա երկիւղ էր կրում նաև որ Քուրի ձախ ափում,

վիճելի է: Եւ Բաֆֆիի մօտ գտնում ենք, թէ մելիք-Աբովը իւր ժողովրդի մի մասը գաղթեցրեց Վրաստան, բայց գթգոհ լինելով ետ դարձաւ և որ մելիք-Մեջլում ու Աբով իրենց ժողովուրդների մի մասով ժամանակաւորապէս հաստատուեցին Գանձակի խանութեան մէջ:

կամ Օրթաճայայի և Կրճանիսի աչգիներում թագցրած զօրքեր չլինեն:

Չնայած, սակայն, իւր փոքրութեան՝ վրաց զօրքը քաջ կռուում էր, ամեն քաջլափոխում՝ վտանգի ենթարկւելով. երբեմն մոտում էին թշնամու բանակի խորքը և շփոթութիւն գցում պարսից զօրքի շարքերում:

Առաջին օրը, շաբաթ օր, սեպտեմբերի 10-ին առաջաւոր զնւերը կռւեցին Կրճանիսի դաշտում: Կրճանիսի դաշտը, որ Թիֆլիսի արւարձան է, սկսում է Քուրի աջ ափից և աստիճանաբար բարձրանում՝ դէպի սարերը, որոնք շրջապատում են քաղաքը: Վճռողական կռիւը տեղի ունեցաւ հետեւեալ օրը՝ սեպտեմբերի 11-ին:

Վրաց փոքրիկ զօրքը բաժանւած էր հինգ մասի, որոնցից ամեն մէկին առանձին զօրավար էր հրամայում: Գլխաւոր հրամանատար էր թագաւորազն Դաւիթ (Հերակլի թուը, թագաժառանգ Գէօրգիի աւագ որդին). նորա հետ էին թագաւորազն Իոհան, իշխ. Իւան Մուխրան-բատոնի (այժմեայ Բագրատիոն-Մուխրանսկից), թագաւորազն Վախթանգ, Կիզիկիայի մօուրաւ (կուսակալ) իշխ. Ջախար Անդրոնիկով, Օթար Ամիլախւարի. իմերէթցիներին հրամայում էր իշխ. Ջուրաբ Մերեթելի: Հերակլը կանգնած էր պահեստի զօրքի մօտ և ղեկավարում էր կռիւը:

Աղա-Մահմադ-խանը, զգուշութիւնից, իւր զօրքերի ետեւում կանգնեցրեց պարսիկների անհաշտ թշնամի թիւրքմէներին, հրամանով որ, փախուստի դէպքում, սպանեն ամեն մէկին, ով և լինի նա:

Կռիւը սկսեց առաւօտեան ժամ 7-ին: Առաջաւոր վաշտերը փայլուն կերպով կռւեցին: Հերակլը նորա օգնութեանը հասցրեց Վախթանգի վաշտը:

Բնորոշ հանգամանք. այդ օրը Թիֆլիսի բնակիչներից կազմեց լոթի-կամաւորների մի ջոկատ, քաջ մարդիկ, որոնք արքունիքի Մաշաբեկի ազգանունով երաժիշտի և կոմեդիանտի գլխաւորութեամբ մտան կռւի մէջ. ջոկատի գլուխ Մաշաբեկին՝ զէնքի տեղ ձեռքին բռնած ունէր դափ, որի վրայ նա ածում էր մի եղանակ, որ կատարւում է միմիայն քէչքերի ամենաթունդ ժամանակը. դորանով էր նա ոգևորում իւր մարդկանց, որոնք միացան կիզիկիացիների և թուշ-պշաւ-խեւսուրների հետ, որ և կազմում էին Վախթանգի ջոկատը:

Աղա-Մահմադ-խանը շատ զարմացել էր վրացոց այդ քաջութեան վրայ: Նա գործի կանչեց կռւի մէջ դեռ չմասնակցած մահադանդարանեան զօրքերը:

Զարդը դադարեց միայն ժամ 5-ին. վրացոց փոքրիկ զօրքի մեծ մասը տեղումը մնաց սպանւած, իսկ մնացած մասը չէր կարող ընդդիմադրել: Այդ ժամանակ Աղա-Մահմադ-խանը ուղեւորւեց դէպի Սէյդերաբադեան բարձրութիւնները, ուր կանգնած էր թագաւորազն Դաւիթ 3 հազար զօրքով: Դաւիթը հանդիպեց նորան զօրեղ հրացանա—և թնդանօթածգութեամբ: Պարսիկները մի կողմ քաշւեցին: Հերակլը այդ ժամանակ կամեցաւ մի վերջին յուսահատական քայլ անել՝ անձամբ դուրս գալով թշնամիների առաջ. բայց այդ քայլից շրջապատողները կարողացան ետ կանգնեցնել, ի նկատի ածելով այն աւելի մեծ վտանգը որ կ'առաջանար թագաւորի մահով: Հէնց այդ ժամանակ պարսիկ զօրքերի մի զօրեղ ջոկատ ետեւից յարձակւեց Վախթանգի և Իոհաննի զօրքի վրայ, ակնյայտնի նշատումով՝ ողջ բռնել նոցա և գերի վերցնել: Բայց նոքա կարողացան կտրել թշնամի զօրքը և գալ Հերակլի մօտ: Հերակլը ստիպւած էր ետ նահանջել մնացած մի բուռն վիրաւոր զօրքերով: Վախթանգից և Իոհաննից արիւն էր հոսում: Պարսիկները հալածեցին վրացիներին և մտան քաղաք: Դաւիթի թնդանօթները անընդհատ գործում էին. քաղաքային աշտարակից՝ Բոտանիկական այգու վերեւից՝ յուսահատ կերպով թնդանօթներ էր արձակում կոմենդանտներից մէկը, ոմն Աղալուա: Բայց ոչ մի բան չկարողացաւ ետ պահել պարսիկներին, որոնցով Թիֆլիսի փողոցները սկսեցին լցւել: Ականաւորեսների վկայութեամբ Հերակլը փորձեց մահ գտնել իւր քաղաքում, փախուստից չետ դարձնելով Հաւլաբարի կամրջի վրայով իւր շառատ ձին, բայց նորա ուղեկիցները այդ թոյլ չուէին:

Թագաւորազն Թէյմուրազի վկայութեամբ Իմերեթիայի թագաւոր Սալմանի զինւորները առաջինը եղան որ Թիֆլիսը սկսեցին թալանել: Հերակլը փախաւ և թագ կացաւ Դուշեթի ետեւը՝ Մտինուէտում, այդ տեղից յորդոր կարդալով ամբողջ ազգին՝ ոտի կանգնել և վրէժ հանել պարսիկներից: Բայց զուր ջանքեր էին դրօշա-

Թիֆլիսը մատնեց պարսիկ զինւորներին՝ կողոպուտի համար, մի քանի օր շարունակ:

Թիֆլիսը, որ աւերման մատնեց, հիմնեց Մ. րդ դարում Վախթանգ Գորգասլանի ձեռքով. այդ քաղաքը աւելի քան 13 դար Վրաստանի մայրաքաղաքն եղաւ: Եթէ մի քաղաք քաղաք էր դառնում արհեստաւորներով և վաճառականներով, պէտք է կարծել որ նաև Թիֆլիսը քաղաք էր դառել հայ գաղթականների շնորհով: Վրաստանի նոյն իսկ այժմեան քաղաքները, որպէս Գորի, Գուշէթ, Թելաւ, — Գուշէթ՝ հայկական տարրից են բաղկացած մեծ մասամբ, որպէս և Թիֆլիսը, որը դեռ ևս դարուս սկզբում՝ մեծամասնաբար հայ բնակչութիւն ունէր, և իշխան Գարշօ Բեհբուղեանը, նկարագրած արշաւանքի ժամանակ, Թիֆլիսի քաղաքագլուխ էր: Թիֆլիսի հայոց եկեղեցիներից մի քանիսը շատ հին են՝ Թերևս հազար տարի առաջ հիմնաւ: Արհեստաւոր և առևտրական դասակարգերը, որոնք քաղաքի բնակչութեան հիմքն են կազմում, հայեր են եղել: Եւ աւանդաբար մինչ այժմ էլ դեռ Թիֆլիսի համքարութիւնները հայկական կերպարանք են կրում: Թիֆլիսում հայութիւնը այնքան հին է, որ նոյն իսկ վաղուց կազմել է մի կանոնաւոր՝ հին Թիֆլիսեցոց միայն յատուկ՝ հայերէն բարբառ, որով ոչ մի ուրիշ տեղում չեն խօսում, մի բարբառ, որի այնքան լաւ նմուշները տւել է երեւելի հայ երգիչ Սայաթ-Նալաւի, 18 դարում, մէկը Թիֆլիսում յիշեալ արշաւանքում նահատակուածներից: Ազգաբնակչութեան մէջ կային նաև ազնւական և իշխանական հայազգի ընտանիքներ: Պէտք է կարծել որ վրացի տարրը Թիֆլիսում կազմում են եղել գլխաւորապէս Թագաւորական տան անդամները, պետական բարձր պաշտօնեաների մեծամասնութիւնը, յայտնի թւով կալւածատէրեր, այգեպաններ և տան ծառաներ:

Թիֆլիսը աւելի քան 13 դար վրաց Թագաւորութեան մայրաքաղաք եղած ժամանակ՝ շատ անգամ ծանր օրեր է տեսել, վկայ լինելով Վրաստանի վրայ կառարած յաճախակի արշաւանքներին: Բայց և այնպէս՝ Թիֆլիսը մի գեղեցիկ քաղաք է եղել: Օտար հեղինակներից նորա մասին գրել են Ֆրանսիացիք՝ Շարդէն 1671 թ. և Ժոզէֆ Դըլապորո 1768 թ.

Շարդէնը այսպէս էր գրում.

« Դա մի գ'ղեցիկ քաղաք է և չըջապատւած է գեղեցիկ և ամուր սարիապանքով: Վեղեցիկ շինութիւններ կան թիֆլիսում, խանութները շատ սիրուն են շինւած և մաքուր են պահուած: Թիֆլիսի չըջականքը զարդալուծ են Կան շատ շինութիւններով, որոնք զարծութեան և ամառանոցների տեղ են ծառայում:

«Քաղաքը շատ բնակեցրած է: Ալեքսեյ ալեքան օտարալաններ կան, ուրիշ չկան աշխարհքիս ոչ մի տեղում... 1) Առուտուրը մեծ է: Քաղաքի պալատը ընդարձակ է և շքեղ. արժանի թագաւորութեան մաքաքաղաքի՝ իսր անւանի մարդկանցով: Պարսից հին քարտէշները անւանում են թիֆլիսը Դար էլմեւէկ, ալսինքն թագաւորական քաղաք:»

Դըլլապորուրը գեւա աւելի ևս ողևորւած է (սօսում 2):

Աղա Մահմադ-խանի արշաւանքի ժամանակ թիֆլիսը բռնում էր նորա այժմեան հին մասը, ուրեմն չկային Սոլոլակը, ոչ էլ տներ ուրիշ Կաւիզի սարի տակ, Վերայում, Վուկլայում: Քաղաքային պատը Սոլոլակի սարից իջնում էր ներքև և անցնում էր այն տեղով, ուր այժմ Վեւեամբնեան և Պուշկինի փողոցներն են, ուրեմն Միջին (Հայոց) փողոցի այն ծայրը, որ այժմ դուրս է գալիս դէպի Երևանեան հրապարակը: Այնտեղ, ուր այժմ Գոլովինսկի պրոսպեկտն է և Ալեքսանդրեան այգին, այն ժամանակ դատարկ տեղեր էին, ուր ձիարշաւներ էին լինում, զինավարժութիւններ կամ ժողովրդական զարծութիւններ:

Թագաւորական պալատները, վրաց կաթողիկոսների և անւանի իշխանների տները գտանւում էին ոչ հեռու այժմեան Եսարմըրկայից (Սալդատուկից բազար) և Մուխրանեան փողոցից ձգւում էին մինչև այժմեան Եքզարխի հրապարակը: Իսկ լաւագոյն տները պատկանում էին Մուխրանի-բառոնիներին, կախէթեան իշխաններ Աբաշիձէներին, Ամիլխաւարիին, Թումանովներին, Խերխուլիձէ, Որբեկեանի, Պալաւանդով, Տակտակով, Բարաթով, Յիլիանով, Մելիքով և այլ իշխաններին:

1) Չլինի թէ դորանով Շարդէնը հաւերին է ակնարկում:

2) Թիֆլիս քաղաքի մասին այս տեղեկութիւնները առաջ ենք բերում Կ. Կիպլէի բանասիրականից (տպւած Նովոն Աբազրենի, 1895 թ. 10 լույսի):

Եւ այսպէս՝ քաղաքը մատնեց կողոպուտի և աւերմունքի։ Եւ մենք ասացինք արդէն որ առաջին կողոպտողները եղան փախուստ տւած իմերէլ զինւորները, որոնք եկած էին քաղաքը պաշտպանելու։ Բայց նոքա ոչ միայն սկսեցին կողոպտել պարտութիւնից յետոյ, այլ կողոպուտ արին փախուստ տալով կռի զաշտից։ Այդպէս է պատմում թաղաւորացն Ղաւիթը, որ հրամանատարն էր Թիֆլիսը պաշտպանող զօրքի մի ջոկատի։ Վուլի ժամանակ, ասում է նա, սարսափելի իմերէլները, որոնք վրաց զօրքի մէջ էին, յիշելով այն վիրաւորանքը, որ տուեց նոցա երբ Հերակլը դուրս քշեց Իմերէթիայից Ղաւիթ թագաւորին, թողին թշնամուն և վազեցին Թիֆլիսի բնակիչներին կողոպտելու համար։ Նոյնը գրում է և Գուգովիլը իւր պաշտօնական զեկուցման մէջ կայսրահուն, 23 սեպտ. 1795 թ.։ «Ներք, գրում էր նա, սահմաններից հեռանալիս Թիֆլիսին էին մօտենում՝ իմերէլները յարձակում էին իրենց կեանքը ազատելու համար քաղաքից դուրս եկողներին և կողոպտում էին նոցա գոյքը»։ Նման վկայութիւն տալիս է և Բուսկովը։ Եւ մի վրացի նորերումս վկայեց մի յօդւածում թէ մինչև այժմ էլ դպրոցների վրացի աշակերտները ամաչացնում են իրենց ընկեր իմերէլներին «հայրենիքին դաւաճանած լինելու համար»։ Բայց ո՞վ ասէք որ չդաւաճանեց երկրին կամ թագաւորին, սկսած հէնց բուն վրացի իշխաններից շատերից, նոցա մէջ և գահաժառանգը. այդ արդէն տեսանք։

Իմերէլ զօրքի մասին նոյն մոքով տողեր կան նաև «Յարութիւն Արարատեանի կեանքի» մէջ։

Սեպտեմբերի 13-ին կատարեց Աղա-Մահմադ-խանի մուտքը Թիֆլիս։ Քաղաքացիք զիմաւորեցին նորան Ս. Սարգիս եկեղեցու մօտ և խնդրում էին խնայել իրենց։ Ներքինի շահը պատասխանեց թէ նա այնպէս պէտք է պատմէ Թիֆլիսը, որ նման լինի անդ զատաստանին։ Եւ նա կատարեց իւր խօսքը։

Հայ բնակիչներից ովքեր մնացել էին քաղաքում, պատուպարւած էին Բերդի Ս. Գէորգ եկեղեցու դաւթում։ Զանգակները զողանջում էին, ամենքը ահ ու գողի մէջ էին, երբ պարսիկները ներս թափւեցին. կոտորածների մէջ էր նաև մեր նշանաւոր հայ երգիչ։ Ժողովրդական բանաստեղծ Սալաթ-Նովան որ իւր կեանքի

վերջում վարդապետ էր ձեռնադրւել: Կատարւեցին սարսափելի գազանութիւններ: Եղիլութեան մասին թող պատմի գեներալ-լեյտենանտ Քիշմիշէը, որի աշխատասիրութիւնը արդէն յիշւած է մեր յօդւածում:

«Աղա-Մահմադ-խանը, քաղաքը մոնեղիս, կանգ առաւ այսպէս կոչւած Գանջու (Գոնձակ) դռների մօտ, ուր, նորա մերձաւորների խորհրդով, վաննա ընդունեց թագաւորական բաղանիքներում, այն յուսով թէ կը բժշկւի իրեն տանջող ցաւից. բայց որովհետեւ ջրի աղբիւրները անգոր եղան՝ զայրացած ներքինին հրամայեց հիմքից քանդել բաղանիքները: Յետոյ հրամայեց ցոյց տալ բնակատեղին ապստամբ վալիի (այդպէս էր անւանում նա վրաց թագաւորին. վալի նշանակում է նահանգապետ), որի պալատը Եքզարխեան հրապարակի վրայ էր: Պալատը բաղկացած էր երեք յարկից: Սարգափային յարկը ծառայում էր իբր մառան և սառցարան, երկրորդը՝ սալարօ (էրմիտաժ)՝ ամփոփում էր իւր մէջ թագաւորի հարստութիւնները: Նորա դռները զարդարւած էին խեցիներով և գոյնզգոյն քարերով, և իրենց վրայ զրականապէս ամենքի ուշադրութիւնն էին գրաւել, ովքեր միայն այնտեղ եղել են: Երրորդ յարկում՝ թագաւորական սինեակներն էին և. ընդունարանի դահլիճները, ընդամէնը մինչ 32 սենեակ: Դահլիճներից մէկը կոչւում էր ռուսի սենեակ, որովհետեւ նորանում ռուսական ձևով վառարան կար:

«Պալատի երկու կողմերում երկյարկանի երկու Ֆիդէլներ էին շինած, ամեն մէկում 20 սենեակ: Այդ սենեակներում տեղաւորւում էր թագաւորական շքախումբը. ախոռները կաշում էին հիւսիսային կողմից: Աղա-Մահմադ-խանը ցանկութիւն յայտնեց թագաւորական ապարանքներից մի լեռն կազմել, որի բարձրութիւնից նա կարենար աչքով անցնել այլուղ Թիֆլիսը: Նորա կամքը իսկոյն կատարեց. բայց պալատը քանդելուց առաջ պարսիկները վրայ թափւեցին նորան կողոպտելու: Հերակլի և շքախմբի գոյքերի մեծ մասը դեռ այդտեղ էին: Ոսկէ և արծաթէ մոմկալները, թանկագին քարերով զարդարած թասերը, ահագին մեծութեամբ ափսէներ, բադիաներ, մեծ ու փոքր ջրամաններ, զորդեր, փարչա և այլ և այլ տեսակի տնային սարքեր չարագործների ձեռքն ընկան: Կողոպտած իրերի մէջ գտնուում էր թագաւորի գայիսոնը և թագը,

որոնց ուսաց թագաւորն էր ընծայել ¹⁾։ Բայց զուր եղան ջանքերը գտնելու թանկագին ալմազը, որ Ազատ-խանը զիջել էր Հերակլին Նադիր-շահի գանձերից։ Երևի նա Թիֆլիսից վաղօրօք զուրս էր բերւած։ Պալատը կողոպտելուց յետոյ՝ զինւորները սկսեցին նորան քանդել։ Մի քանի ժամից յետոյ հրապարակի վրայ, ուր մարմարեայ շքեղ շապրանն էր, երկու մարմարեայ աւիւծներով, նոցա բերաններից զուրս ցայտող աղբիւրի ջրով, բաւականի բարձր սարդոյացաւ, որի զոյացնելուն ծառայեցին պալատին կից գտնուող փողերանոցի և դիւանխանայի շինութեան բեկորները։ Բացի այդ՝ հիմնադատակ քանդակեցին տները աղնականների մասում, որ պատկանում էին Ամիրխուարի, Աբաշիձէ, Թումանով, Մելիկով, Խերխուշիձէ, Տակտակով, Փալաւանդով, Սումբատով և այլ իշխաններին։

Բայց այդ կողոպուտներով և կործանումներով չվերջացան Թիֆլիսի դժբախտութիւնները։ Հասաւ նորա համար աւելի սարսափելի օրը—սեպտեմբերի 14-ը։ Յայտնի չէ թէ ով լուր էր տարածել թէ Հերակլին զրգոողները Պարսկաստանի իշխանութիւնը չըձանաչելու համար՝ հոգևորականներն էին։ Գաղանաբարոյ շահը հրամայեց, ի խրատ յետնորդներին, մահու պատիժ տալ բոլոր քահանաներին, թէ վրացոց և թէ հայոց։ Անմիջապէս գնացին նոցա բռնելու և ժողովեցին նոցա Սիոնի և վանքի մայր-եկեղեցիների գաւթներում։ Այստեղ նոքա ահ ու զոգով սպասում էին իրենց ճակատագրին։ Երկար չքաշեց գործը. դահիճները կապուտեցին նոցաձեռքերը, Քուրի բարձր ափերից ներքև գլորեցին, և նոքա գտան ալիքների մէջ իրենց գերեզմանը։ Բացառութիւն արւեց միտրոպոլիտ Դոսիթէոսի համար. նորան Քուրը գլորեցին, առանց ձեռքերը կապելու, իւր սեփական տան բալկոնից, որ Սիոնի եկեղեցու գաւթիթումն էր գտանուում։... Գերի բռնակցին քահանաների ընտանիքները, որոնք փրկութիւն էին որոնում գաւթում։

«Ապա պարսիկները սկսեցին կողոպտել եկեղեցիները ²⁾», որի մի-

¹⁾ Հերակլը ունէր և Հնդկաստանից Շամիր-աղալի ընծայ ուղարկած թանկագին թագ, դալիսոն և թուր։ Ծան. Ա. Ա.

²⁾ Եկեղեցիներից կողոպտած իրեղէններից շատերը, շահի թուլութեամբ, մելիք-Մեջլումը ետ տուց ըստ պատկանելոյն, թէև այդ բանը

ջոցին թոյլ տրեցին անուր սրբապղծութիւններ... Բարբարոսները դրանով էլ շբաւականացան. նոքա առաջ գնացին Հաւարարի կամուրջը, ուր դուրս էին բերել սբ. Նւատափիոսի մասունքները: Այստեղ նոքա զազանութիւններ կատարեցին. նոքա գերիններին քարշ տւին աշխտեղ և հրամայեցին ոտներով կոխկրտել մասունքները և կատարել այնպիսի սրբապղծութիւններ, որոնց նկարագրելը չի լինում: Այ մի վրացի կամ հայ, ներկաների վկայութեամբ, չուզեց կատարել չարագործների պահանջները: Անհնազանդները պցւում էին Քուրը և նոցա հետ սբ. մասունքները:

Այ միայն սրբութիւններ պղծելով պարսիկները ուզեցին ահ ու դողի մէջ պահել ժողովուրդը. քաղաքի բազարներում առուտուր էր լինում ջահէլ կանանց և աղջիկների, որոնց պարսիկները խնայել էին նոցա զեղեցկութեան համար: Վաճառողները պարսիկ զինուորներ էին, որոնց պատկանում էր որսը՝ ըստ օրինի: Բայց որովհետև զերի բռնւած էին նաև ծոցի երեխաներ—առնողները չէին վերցնում նոցա, որոնք երեխաներ ունէին: Այդ տեսնելով՝ վաճառողները, կամենալով իրենց ապրանքը աւելի լաւ գնով ծախել, երեխաներին կէսից կտրում էին, և այդ միջոցին սրախօսում էին թէ այդ նոքա անում են իրենց թրերի սրութիւնը փորձելու համար... Եւ ոչ միայն շահի զօրքում՝ եղող կիսավայրենի ցեղերն էին փայլում այդքան անմարդկային զազանութիւններում, այլ և զօրապետները իրար գերազանցել էին ուզում ամենաաղւելի անկարգութիւններով: Նոքա մտնում էին տները, բռնաբարում էին կանանց և աղջիկներին և յետոյ նոցա սլարգւում էին զինուորներին կամ ուղարկում էին Սողանլուղի բանակը, ուր նոցա ստիպում էին ամբողջ զիշերներ անցկացնել զղւելի օրգիւնների մէջ: Այդ արարմունքները մնացած փոքրաթիւ ժողովրդեան յուսահատութեան մէջ էին գցում, և քիչ չէր պատահում, որ կանայք, իրենց պատիւը պաշտ-

չազատել, մելիքին Թիֆլիզեցւոց ալա անէծքից (ըստ Բաֆֆիի)

Մելիք-Մեջլումը չուն դառնալ,

Զաւատ-խանը՝ պստիկ կուճի,

Մելիք-Մեջլումի աղգեմէն

Թող չըմնալ մէկը Շուշի:

Կրտ. Ա. Ա.

սպանելու համար, զէնքի էին դիմում... Բայց ամենասարսափելի անգթութիւնները կատարւում էին քաղաքացին պատի հիւսիսային կողմում, որի դարբազով փախչում էին ընտելիները: Այդտեղ պարսիկները սրի հարւածներ տալիս էին աջ և ձախ, տասնեակներ սպանելով տեղն ու տեղը: Բացի եկեղեցիներից, պալատներից և հասարակական շինութիւններից, քանդեցին նաև հողերը դարանոցը որ հիմնել էր Հերակլը, և տպարանը, որ հիմնել էր Վախթանգ VI, և մի քանի մասնաւոր գպրոցներ. այն աշակերտները, որոնք դեռ գպրոցներում էին մնացել, գերի տարւեցին: Ողջ մնաց Բեթլաացիների եկեղեցուց ոչ հետու գտնւող մեհեանը, որ մինչ այժմ էլ կայ և շինւել է Թիֆլիսի կրակապաշտներից մինչև մահմեդականութեան երևալը: Բոլոր ջանքերը նորան քանդելու ապարդիւն եղան: Ձինայեցին նաև կաթոլիկաց եկեղեցին, որ հիմնւած էր կապուցիաներից 1661 թ-ին, նորա գեղեցիկ գպրոցով, ուր ուսանում էին տեղի վրացիք և հայերը: Եկեղեցու հարուստ զրադարանը այրեցին, պատկերները և իրերը վերցրին տարան:

Պարսիկները տարան նաև քսան և երկու արկղ էջմիածնի թանկագին և հազւագիւտ իրեղէններ, որ քանի մի ամիս առաջ Ղուկաս կաթողիկոսը՝ վախենալով թէ պարսիկները կը թալանեն Աթուրը, ուղարկել էր Թիֆլիսի առաջնորդին՝ ապահով պահելու համար:

Ինչ վերաբերում է գերիների թւին, հաստատ դժուար է խօսք ասել, ենթադրւում է որ այդ թիւը եղել է մօտ տասը հազար հոգի:

Թէ ինչ տեսարան էր ներկայացնում Թիֆլիսը այդ ժամանակ, ընթերցողը կարող է գիմել նաև «Յար. Արարատեանի կեանքի» երկրորդ մասին:

Պարսիկների այդ բարբարոսութիւնների մասին պատմում է նաև հայ-աշուղ Չամչի-Մեղքօ, որ ականատեսներից էր.

«Քաղքեմէն տարած եսիրն, որն Աստրախան է հասի,

Որն Շաքի, որն Շիրւան, որն Կաղստան է հասի,

Որն Ղուբա, որն Բաքի, որն Գարբանտ է հասի,

Իրն թաւրիզ, որն Թեհրան, որն խորասան է հասի.

Նրանց նաչար հէրն ու մէրը ո՞ր մինն վաչ տան քաղաքիս:

Քաղաքն որ նեքս եկաւ հարիւր հազար զղլբաչն,

Մէկ մէկուց ալիւմիշ արին, գիւփ մէտի, զովում՝ դարտաչն.

Քահանէքը շուքն էր ուտում, ոչ մինն չմտաւ նաչն,
 Գետի պէս արիւն էր գնում, բոստան էր աղմորդուլ լաչն,
 Որդին մօրիցն էին խլում, էլ սուք ու չիւան քաղաքիս:
 Վարդապետներ կոտորեցին, լէշ էր ածած տէրտէրի,
 Ապրանք ու մսլ ու դովլաթ ին տարել, թաք տներն չէին էրի...
 Մէրս ձեռնեմէս խեցին, ջուխտ քոյր ու աղբերս տարան,
 Հօրս թրով սպանեցին, եսիր արին մէրս տարան,
 Զամի Մելքօն շատ լաց կլաւ, ասաւ՝ որդիս ձեռէս տալան... ¹⁾

Աղա-Մահմադ-խանը Թիֆլիսից շտապով դուրս գնաց սեպտեմբերի 20-ին, թերեւս մտածելով որ Հերակլը կարող է վրէժխնդիր լինել: Յամենայն դէպս նա երկրի խորքերը չգնաց և վերադարձաւ Պարսկաստան, ուր՝ Աֆղանխտանում, Ղանդահարի և Հերատի կողմերում՝ ապստամբութիւններ էին ծագել: Թէ չէ՝ նա մտադիր էր դեռ ևս Շուշի բերդը վերցնել: Այդ գործը նա յետաձգեց:

Մի քանի ամիս յետոյ, այն է 1796 թ. փետրւարի 19-ին ռուսաց կայսրուհի Կատարինէ II-ի հրովարտակով գեներալ կոմս Վալ. Ա. Զուբով հրաման ստացաւ 80.000 զօրքով օգնութեան հասնել Անդրկովկասի քրիստոնեաներին: Հերակլ II պէտք է միանար նորան: Զուբովի հետ էր նաև Ռուսաստանի հայոց առաջնորդ Յովսէփ արքեպ. Արղութեան, որը գեներալի հետ տեսնւեց Ղզլարում 1796 թ. մարտին: Զուբովը մայիսին վերցրեց Դերբէնդը և գերի առաւ Շըխալի-խանին: Ապա ռուսները վերցրին Ղուբա, յետոյ Շամախի, որի իշխանն էր Մուստաֆա-խանը: Յետոյ դիմեց Գանձակ, ուր Զաւադ-խանը առանց կռւի անձնատուր եղաւ: Այդ ամենից յետոյ Շուշուայ Իբրահիմ-խանը յայտնեց Զուբովին իւր հպատակութիւնը:

Գործը այս դրութեանն էր, երբ վրաց հասաւ Կատարինէ կայսրուհու մահը 1796 թ. նոյեմբ. 6-ին: Նորա յաջորդ Պաւէլ III ռուսաց զօրքը ետ կանչեց Անդրկովկասից, որ և կատարեց 1797 թ. գարունքին:

Եւ Աղա-Մահմադ-խանը մի երկրորդ արշաւանքով եկաւ պատ-

¹⁾ Ալ. Երկրեան. — տես «Արձագանք» 12 թու. 1895 թ.:

ժելու ացն ամենքին, որոնք անձնատուր էին եղել ռուսներին, և ամենից առաջ Շուշուայ Իբրահիմ-խանին: Վերջինս, դեռ նախքան Աղա-Մահմադ-խանը երասխը անցել էր, թողեց Շուշին, փախաւ Բալաքան, Դաղստանում, իւր աներ Սմար-խանի մօտ:

Աղա-Մահմադ-խանը, առանց ընդդիմադրութիւն գտնելու տեղական հայ մեկիքների կողմից (դոցա ժողովուրդները արդէն ցրւում էին սովի պատճառով), ուղևորեց Շուշի, որի դռները բացեցին առանց ընդդիմադրութեան. նա տեղաւորեց Իբրահիմ-խանի բնակարանում: Շահը մնաց Շուշում 25 օր: Գիշերը նորան խենջալով սպանեցին նոյն իսկ նորա մերձաւոր սպասաւորները՝ Սաֆար-Ալի-բէկ և Աբաս-բէկ: Սաֆար-Ալի-բէկին շահը սպառնացել էր որ պիտի սպանի, և մինչև որ ամէնի գազանը իւր խօսքը կը կատարէր՝ նա ինքը ընկաւ իւր ծառայի խենջալի հարձածների տակ, իւր ննջարանում, քնած ժամանակ:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ. Ն.—Մշակ և Նոր-Գար կուսակցութիւններ ու մի քանի խնդիրներ: Մոսկւա 1894, տպ. Բարխուդ., 104 էջ:

Պր. Մելիք-Թանգեանի գրքովը մի բողոք է, որի բովանդակութիւնը պարզ երևում է նորա հետեւալ խօսքերից.

«Այդ երկու կուսակցութիւնները ունին չաղակրատների երկու ահազին բանակներ, չաղակրատ ասելով հասկացում է շատախօս, փշախօս, դատարկախօս, վաչր ի վերոյ դուրս տուող: Նրկու բանակների չաղակրատները հասկացողութիւն չունին ոչ կուսակցութեան, ոչ ուղղութեան, ոչ կանոնաւոր վիճելու, ոչ կանոնաւոր խօսելու, հասկանալու, ոչ խնդրի ներսը թափանցելու, ոչ առողջ դատելու, ոչ սառն պաշտպանելու աչն խնդիրը, որի վրայ չաղակրատում են...»:

«Ահա աչս գոցնով են ներկայանում աշխարհի Ազատամիտ և Պաշտպանողական կուսակցութիւնների 90⁰%, որոնց ոչ թէ ուղեղն է գործում գիտնականօրէն, ալ մէջքի նեար-

դալին համակարգութիւնը. ուրիշ խօսքով, որոնք գործում են անգիտակցաբար, առանց քննելու և գլխի ուղեղի որոշ վճռին հնազանդելու. նոցա գլուխն ու ուղեղն են Մշակ և Նոր-Գար... Այսպիսի խմբերի, կուսակցութիւնների ալդ տեսակ կազմակերպութեան պատճառներից մէկը համարում եմ Մշակ ու Նոր-Գար և Արձագանք լրագիրները»:

Մենք ընդունում ենք, որ պարոնի նկատողութեան մէջ որոշ չափի ճշմարտութիւն կալ: Միայն թէ նա չէ կարողանում ապացուցանել իւր ասածները: Նա բերում է մի շարք օրինակներ, որոնք բոլորովին ուրիշ բան են ապացուցանում, քան ինքը հեղինակը ենթադրում է: Ծանօթանանք նորա բերած օրինակներից մի քանիսի հետ:

«Ազատամիտ չաղակրատների ալդ ահազին հեղեղը պաշտպանողականներին համարում է խաւարամիտ, անմիտ, հին, ոչ մի նոր բան չընդու-

Նող, ստող, խաբող, խնամութիւն անող, զրպարտող և այլն և այլն: Պահպանողական բանակի շաղակրատները լորդահոտան խռմըր նոցա համարում է թեթևոտիկ, անմիտ, խաբող, ստող, վալրիվերոյ մտածող, եկեղեցի քանդող, անաստուած, անկրօն...»:

Այդ փոխադարձ համարումները զարպանում են պ. Մելիք Թանգեանցին, մինչդեռ Նոքա մեծ մասամբ փշեակ երկու օրդաններէջ վերցրած ածականներ են: Ինչ վերաբերում է անարդարութեան, զրպարտութեան, ստախոսութեան... ալդ չատկութիւններով օժտւած են երկու կողմն էլ: Ի հարկէ պ. Մելիք-Թանգեան ալդ չի էլ հերքում:

Այն համարումները որ փոխադարձաբար ունին միմեանց վերաջ երկու թերթերի հետեողները, միայն նոցա շաղակրատ մասինը չեն, ալ նոցա լուրջ մասն էլ նոյնն է կրկնում, նոյնն է քարոզում: Ինքը պ. Մ.-Թ. օրինակ մշակական շաղակրատների թիւը հաշւում է 90%, կը նշանակէ ընդունում է որ գոնեա 10% լուրջ մշակականներ և նոյնքան էլ լուրջ նոր-դարականներ կան: Ի՞նչ էք կարծում, պ. Մ.-Թ., չեն համարումարդեօք ալդ լուրջ մշակականները պահպանողականներին խաւարասէրներ, հինը ուղողներ: Եւ միթէ ձեր լուրջ համարած նորդարականները մըշակականներից լուրջներին անկրօն համարելու պատրաստ չեն:

Մի ուրիշ օրինակ, որ բերում է պ. Մ.-Թ., կուսակցութիւնների շաղակրատութիւնը ցոյց տալու համար, աչն է, որ հասարակական ընտրութիւն-

ների ժամանակ Նոքա չեն ընտրում մէկ՝ ինքն ըստ ինքեան ազնիւ, եռանդուն մարդին, միայն աչն պատճառով, որ վերջինս պատկանում է հակառակ կուսակցութեան: «Եղբանւր, չեմ ընդունում, չեմ ընտրում, նրա ուղղութիւնը վնաս է, լաւ չէ, թէ կուղ նա լինի լաւ վարժապետ և լաւ տեսուչ»: Այդպէս է ասում կուսակցականը, որ և պ. Մ.-Թ.-ին դիւր չէ գալիս: Ի՞նչ իրաւամբ: Մէկ վարժապետ կամ տեսուչ կարող է շատ ուսեալ լինել: Բայց նա կարող է իւր տաղանդը, փորձառու իւնը, եռանդը և զիտութիւնը գործ գնել չետադէմ ուղղութեամբ: Ան եղբիւր մի սրտնարներ, որոնք իրանց տաղանդով, փորձառութեամբ, եռանդով և զիտութեամբ շատ դերազանց են: Բայց ալդ բոլորի հետ միասին Նոքա ունին արմատացած նախապաշարմունքներ, որոնցով թունաւորում են իրանց հետեողների ամբողջ էութիւնը: Այդպիսի գործիչները որքան ընդունակ լինին, աչնքան աւելի վնասակար են: Եւ ահա լառաջադէմ հալը ըմբռնելով որ տաղանդաւոր մեղականը չետադէմ ձգտումներ կը զարգացնէ անմեղ սաների մէջ, չէ կամենում նորան ուսուցիչ կամ տեսուչ ունենալ: Ի՞նչ ունէք սորա դէմ:

Առհասարակ հեղինակը վերո-վիշեակ կուսակցութիւններին մեղադրում է ոչ թէ բովանդակութեան, ալ ձեռի մէջ: Այդ օրդանների ներքին կեանքը, սկզբունքները, աշխարհայեցողութիւնը չէ նորան հետաքրքրողը, ալ նորա վարելու եղանակը, միթողը, մի խօսքով արտաքինը: «Երեքը մի բանում համա-

ձախն են — ասում է պարոնը — ոչ ինքնատիրութեան, ոչ ճիշտ կշռադատութեան, ոչ արդարութեան մէջ»։ Իսկ իւր գրածքի վերջին ահա թէ ինչպէս է արտապատում նա իւր պահանջը։ «Յանկանում ենք «Մշակ»-ի հրատարակութիւնը աջն ձեռով, ինչ ձեռով մենք առաջարկում. աւսինքն կշռադատութեամբ՝ արդարութեամբ, առանց եսի, կրքի։ Նոր-Վար և Արձագանքին կը ցանկանալինք, որ հրատարակին լրջութեամբ, ուղղամտութեամբ, կոյր եսը հեռացրած»։

Ուրեմն պ. Մ.-Թ. աչ ու ձախ ամենքին էլ չաջողութիւն է ցանկանում, միայն թէ նոքա կիրքը, եսը, անարդարութիւնը մի կողմը թողնելին։ Ասինքն պ. Մ.-Թ. չէ կարողանում անմիջապէս եզան եղջիւրները բռնել։ Մեր համոզմունքն է նորնպէս, որ «կուսակցութիւնների հարցը» վաղուց ժամանակ է մեր մէջ զարթոնեցնելու և լուծելու։ Միայն թէ աչ հարցը չէ կաշանում արտաքին ձևերի և չարաքերութիւնների մէջ։ Ի հարկէ մենք ևս ցանկանում ենք, որ մեր մամուլը մի կողմ թողնէր իւր հաջողական ձևերը, փրօն փրազները ու հակառակորդին իզուր զրպարտելը։ Բալց աչ դեռ բաւական չէ։ Եթէ Նոր-Վարը հրեշտակների ոճերով անգամ արտապատէ իւր սկզբունքները, աչնուամենայնիւ մենք նորան հակառակ ենք, որովհետեւ աչ սկզբունքները սխալ են, քննադատութեան չեն կարող դիմանալ։ Նոյնը եթէ Մշակը մի կողմը թողնէ իւր տղայական սրամտութիւնները ու լրջութեամբ ու քաղաքավարութեամբ պաշտպանէ իւր «մազի չափ» չչեղող ուղղութիւնը, չամենաչն դէպս մենք չենք կարող բաւականանալ, որովհետեւ Մշակը, միայն համեմատելով Մեղուների և Նոր-Վարների հետ անպաւան չառաջագէտ ուղղութիւն ունի, իսկ վերածած ինքնուրուքեան, նա չեւէ մնացել ժամանակից։ Մենք բոլորովին չենք հերքում Մշակի արդէն կատարած ծառայութիւնը։ Մշակը աչքի ընկնող տեղ ունի թէ մեր կեանքի և թէ մեր մամուլի կենսական պրոգրէսի մէջ։ Միայն թէ նա իւր գործը կատարելուց չետու նոր ժամանակի համար ուժասպառ է դարձել։ Նա չունի մի շարք սկզբունքներ, որոնք չաւտնել ու մշակւել են վերջին տասնեակ տարիների ընթացքում։ Կամ ուրեմն աչ սկզբունքները չափից դուրս անորոշ ու անգոյն կերպով են արտապատում։ Մշակը չէ ուսումնասիրում, չէ սովորեցնում, չէ ասպցուցանում, չէ համոզում, աչ դոգմատիկաբար քարոզում է, բացականչութիւններ է անում, շատ-շատ քարոզում է, ինչպէս միջնադարեան կաթոլիկ աստածաբանները։ Մինչդեռ մեր դարը մանրազնին կրիտիկալի դարն է։ Բաւականանալք առ ալժամ ալքանով։ Դէպքը գալուն մենք կ'ստենք մեր ամբողջ ատելիքը... Ուստի կուսակցութիւնների հարցով զբաղւել կամեցող պիտի մ'ի կողմից ջարդ ու փշուր անէ մեր չետադէմ կուսակցութիւնների դեռ ևս գործածող զէնքերը, ապա վերլուծէ չետ մնացած Մշակի ընթացքը և վերջապէս փորձէ մատնացուց ա-

թեամբ պաշտպանէ իւր «մազի չափ» չչեղող ուղղութիւնը, չամենաչն դէպս մենք չենք կարող բաւականանալ, որովհետեւ Մշակը, միայն համեմատելով Մեղուների և Նոր-Վարների հետ անպաւան չառաջագէտ ուղղութիւն ունի, իսկ վերածած ինքնուրուքեան, նա չեւէ մնացել ժամանակից։ Մենք բոլորովին չենք հերքում Մշակի արդէն կատարած ծառայութիւնը։ Մշակը աչքի ընկնող տեղ ունի թէ մեր կեանքի և թէ մեր մամուլի կենսական պրոգրէսի մէջ։ Միայն թէ նա իւր գործը կատարելուց չետու նոր ժամանակի համար ուժասպառ է դարձել։ Նա չունի մի շարք սկզբունքներ, որոնք չաւտնել ու մշակւել են վերջին տասնեակ տարիների ընթացքում։ Կամ ուրեմն աչ սկզբունքները չափից դուրս անորոշ ու անգոյն կերպով են արտապատում։ Մշակը չէ ուսումնասիրում, չէ սովորեցնում, չէ ասպցուցանում, չէ համոզում, աչ դոգմատիկաբար քարոզում է, բացականչութիւններ է անում, շատ-շատ քարոզում է, ինչպէս միջնադարեան կաթոլիկ աստածաբանները։ Մինչդեռ մեր դարը մանրազնին կրիտիկալի դարն է։ Բաւականանալք առ ալժամ ալքանով։ Դէպքը գալուն մենք կ'ստենք մեր ամբողջ ատելիքը... Ուստի կուսակցութիւնների հարցով զբաղւել կամեցող պիտի մ'ի կողմից ջարդ ու փշուր անէ մեր չետադէմ կուսակցութիւնների դեռ ևս գործածող զէնքերը, ապա վերլուծէ չետ մնացած Մշակի ընթացքը և վերջապէս փորձէ մատնացուց ա-

նեղ աջնպիսի մի ուղղութեան վերադ
որը կարողանալ ներկայումս իսկա-
պէս լառաջղիմական համարելու
իսկ ալղպիսի մի աշխատութեան

համար պ. Մ.-Թ. ինչպէս նորա գրքի
իւրաքանչիւր տողից երևում է, կա-
տարելապէս անձեռնհաս է:

Դոսթ. Սէֆրաշ Բառաշէտնց:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. «Հազարից մէկը» — վէպիկ, Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ.
1895. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեան, 200 երես գինն է 60 կ.

Առանձին համակրութեան ու
լարգանքի արժանի են աչն հեղինակ-
ները, որոնք իրանց գրածքի նիւթ
վերցնում են՝ հալածած ու տան-
ջած ժողովրդի կեանքը: Թէև վի-
պասանութեան մէջ զուրա բերելով
մարդկային թշուառութիւնը՝ անմի-
ջական ոչ մի օգուտ չենք տւած լի-
նիլ թշուառներին, բայց դարձեալ
թող, աւելի լաւ է բաւականութեան
մէջ ապրող դասակարգը՝ գրքերի
չնորձիւ գոնէ ծանօթանալ աղքատ-
ների, զրկւածների ու չարհարւած-
ների հետ: Այժմ ոչ, առօրեայ կեան-
քում, հարստութեան, բաւականու-
թեան մէջ ապրող մարդիկ՝ ամենևին
ժամանակ էլ չունին նկատելու թըշ-
ւառների, խեղճերի դրութիւնը: Առ-
օրեայ կեանքում՝ մեր տեսողութեան
նեարդերը թթացել են՝ չարունակ
մեր շուրջը աղքատութիւն, խեղճու-
ճութիւն տեսնելով, և մենք, համա-
րեա միշտ, անտես ենք առնում սո-
վից ու ցրտից տանջող մարդկու-
թիւնը՝ աչդ համարելով մի բնական
երևոթ, մի սովորական և անհետա-
քրքիր բան: Ո՛վ է, փողոցում անց-
նելիս՝ կանգ առնում ու մտածում
աչն աղքատի մասին, որ ձեռը կար-

կառած ողորմութիւն է խնդրում.
ո՞վ է մտածում նրա ընտանիքի, նրա
ազդականների մասին, ո՞վ է հետա-
քրքրում նրա անցեալով, նրա ա-
պագալով: Ամենաշատը պիտի շտա-
պով մի 5 — 10 կոպէկ չարտեն «աղ-
քատին» և ինքնագոհ զգացմունքով
հեռանան, գնան իրանց գործին:
Կամ թէ չէ՝ ամենօրեալ մեր տեսած
աղքատ գիւղացին, որ կարիքից
ստիպւած թողել է տուն, տեղ, հաւ-
րենիք, և եկել անասնական ծանր,
և ամեն տեսակ ստոր աշխատանք
կատարում է քաղաքում՝ մի քանի
կոպէկի համար, ո՞վ է նրան մարդու
տեղ դնում, ո՞վ է մտածում թէ՛ նա
էլ հոգի ունի, նա էլ ընդունակ է
ուրախանալու և տանջւելու, սիրե-
լու և առելու. նա էլ ունի հոգեկան
աչն բոլոր ընդունակութիւնները և
պահանջները, ինչ որ իրանք կու-
տուրական մարդիկ... Ո՛չ, կուտու-
րական մարդիկ ամենևին չեն էլ ըն-
դունում, որ աղքատը, գիւղացին,
մշակը և խեղճ արհեստաւորը, — ընդ-
հանուր անունով՝ ժողովուրդը՝ իրանց
նման մարդ է, իրանց հաւասար
մարդկային, բարոյական ընդունա-
կութիւններով, իրանց հաւասար

մարդկային — ընկերվարական իրա-
ւունքներով: Կուլտուրական մարդու
համար՝ գիւղացին — գիւղացի է, մը-
շակը — մշակ, արհեստաւորը — արհես-
տաւոր... Տգիտութիւնը, աղքատու-
թիւնը, սովը, մերկութիւնը, ամեն
տեսակ ֆիզիկական և հոգեկան զըր-
կանքները — նրանց համար բնական
են, սովորական են. նրանք — ժողո-
վուրդը — աչքս էս են մեծացած, աչք-
ս էս են սովորած: Իսկ ինքը, կուլ-
տուրական մարդը՝ բոլորովին ուրիշ
բան է. ամբողջ աշխարհը իր համար
է սահմանաւոր, ամբողջ կեանքի վա-
ղելիքները իրան են պատկանում:

Նւ ահա դուրս է գալիս մի «խղճի
տէր» մարդ, որ բոլորովին տարբեր
ւում է կուլտուրական մարդուց՝ թէ
խելքով, թէ զգացմունքներով, և թէ
իր սովորութիւններով: Նա վիճա-
կակից և արիւնակից է ժողովրդին,
նա ինքը ցաւում է ժողովրդի ցա-
ւով, տանջւում է նրա տանջանքնե-
րով: Նւ աչք իր ցաւի ու տանջանք-
ների պատմութիւններից «հազարից
մէկը» գրի է առնում և պատմում է
աշխարհին:

Պր. Մամիկոնեանի գրած վէ-
պիկը մեր առաջ բաց է անում գիւ-
ղական կեանքի խոր վէրքերը, մեղ
ոչ միայն հետաքրքրեցնում է աչք
վէրքերով, աչք և զգալ է տալիս գիւ-
ղական կեանքի դառնութիւնը, ներ-
քին ալեկոծութիւնները և փոթո-
րիկները... Վէպի բնաբանը աչք է
թէ՝ ինչպէս մի հոյակապ գիւղական
ընտանիք — նահապետական բոլոր ա-
ռաքինութիւններով օժտւած՝ քաջ-
քաւտւած, սնանկանում և վերջին չը-
քաւորութեան, մուրացկանութեան է

հասնում: Աչք ընտանիքը՝ Փիփ գիւ-
ղի (Փանձակի Նահանգի) բնակիչ
Թանան — ապօր ընտանիքն է. Նա
«գիւղի ամենահարուստ մարդկանցից
մէկն էր, — ոչխարատէր, տաւարա-
տէր», նրա տանից ջուխտ գութան
էր դուրս գալիս, նրա դրանը վեց
գրաստ կար միշտ: Յորենի, զարու,
կորեկի ամբարները լի, մառանում
գինու կարամները թաղած, նկու-
ղում իւղի տճերը շարած, պանրի
մոթալները դարստոած»: «Աչքս
չէն ու լի էր նրա տունը, Ատուած
մէջը նւտած»: «Նրա սեղանը մին
էր՝ մէջը հազար»: «Նրա կիներ, Զա-
ւուր-աքերը, երկիւղած և աստածա-
սէր կնիկ էր: Նա իւր չէն ու բա-
րելի տնից միշտ բաժին էր հանում
հարեաններին և չքաւորներին: Ո՛չ
մուրացկան, ոչ աղքատ, ոչ մի ուղող
նրա չէմքից ձեռնուռնալն լետ չէին
դարձած: Նա տրասէր էր, ողորմած,
նա հասարակաց մալը էր, հոգատար
ու սիրող: Ուրիշի ուրախութեանը
ուրախակից էր, վշտին էլ վշտակից
էր միշտ»: Աչք ընտանիքի առաքի-
նութիւնը և մարդասիրութիւնը, իս-
կապէս, եղաւ և նրա անկման պատ-
ճառը:

Հեղինակը աչք առաքինի, մար-
դասէր և բուն քրիստոնէալ Թանան-
ապօր ընտանիքի, հանդէպ դուրս է
բերում մի եկտոր գիւղացու ընտա-
նիք, — գողութեան, խաբէութեան և
ամեն տեսակ ստոր դործերի մէջ
կեղտոտւած, ընկած, արհամարւած և
վերջին աղքատութեան հասած՝ թոշ-
նան-թիւնի ընտանիք: Թանան-
ապէրը խղճում է սրան, առնում է
իր հովանաւորութեան տակ, պա-

հում, պահպանում է... և վերջը ալդոնոն Թիւնին լինում է իր բարերարի տունը քանդողը, նրա օճախը մարողը, նրա ունեցած ահագին հարստութեան տիրացողը, Ալս երկու ընտանիքների փոխադարձ չարերութեանց մէջ՝ արտափալում է ամբողջ հալ գիւղը՝ իր թէ առաքինի, լսեմ ու ազնիւ չատկութիւններով և թէ ալանդակ բարոյական թերութիւններով: Հեղինակը, կարծես դիտամբ, ակնարկելով քաղաքի անբարոյակալացնող ազդեցութեան վրա՝ ասում է թէ Թիւնին քաղաքում եղած, «սպասաւորութիւն և աման լպստել սովորած, զինեմներում փչացած» մարդ էր: Եւ ահա ալդոնոն «քաղաքում փչացած» մարդը դառնում է զիւղի մէջ մի ապականող տարր, որը հետզհետէ իր ձեռքը հաւաքելով գիւղի հարստութիւնը, ինքը իր օրինակով, իր ձեռք բերած ուժով՝ ապականում է գիւղի մարուր, նահապետական մթնոլորտը՝ չահապետական առաքինի ընտանիքը ընկնում, ոչնչանում է՝ և նրա տեղ բարձրանում է մի նոր անբարոյական ուժ, քաղաքի ազդեցութեամբ, քաղաքի ապրուստի եղանակով, խաբէութիւնով, դողութիւնով, վախառութիւնով սողորած մի ուժ: Եւ ալդոնոն — ստի, խաբէութեան, դողութեան, գաւազրութեան ուժը, որով օգտւում է Թիւնին, որպէս քաղաքից բերած մի գէնք, անհամեմատ աւելի կարող է գոյութեան կուր մէջ չաղթանակ տանել, քան թէ ալս ազնւութեան, առաքինութեան, աստածավախութեան ուժը,

որով առաջնորդւում է Թանան-ապէրը: Անբարոյականութիւնը միջոցների մէջ խտրութիւն չի գտնում, և նա տանում է չաղթութիւնը... Եւ ահա մեր աչքի առաջ կատարւում է մի ցաւալի, մի սրտաշարժ տեսարան: Մենք տեսնում ենք թէ՛ ինչպէս մի մեծ գիւղական ընտանիք — ազնւութեան և առաքինութեան մի կատարեալ ապաստարան՝ հետզհետէ ընկնում, քաղքալւում, ոչնչանում է բոլորովին՝ դառնալով անամօթ դաւաճանութեան, լրբութեան մի ողջակէզ: Հեղինակը, ցանկալով ալդոնոն, չուսահատեցնող սպաւորութիւնը մեղմացնել, վերջը գիտնում է արհեստական մի միջոցի. դուրս է բերում, որ Թանան-ապօր սպանւած կարծեցեալ որդի Վահանը կենդանի է, վերդառնում է, և իր հօր փոխարէն վրէժ է առնում: Եւ թող եւ տալիս ինձ կարծել, որ ալդ վերջաբան չինժու, տենդենցիական է, և հեղինակը իզուր է գիտել ալդ միջոցին: Վէպը, առանց զրան էլ չատ մեծ սպաւորութիւն է անում ընթերցողի վրա, և զրանից պարզ երևում է հեղինակի գրելու ընդունակութեան չափը:

Այնտեղ, հազար ավուտ, որ ալդ գիւղացի վէպը գրւած է գաւառական լսուր, տգեղ ու անհասկանալի ոճով: Ելլի մեզ համար հասկանալի կը լինէր, եթէ գիւղական տիպերը, որպէս իրական կեանքի ներկայացուցիչներ՝ խօսէին տեղական բարբառով: Բաւց ցաւն ալս է, որ ինքը, հեղինակն էլ գործ է ածում նոյն աղճատած, անհասկանալի ոճը: Վրքի նկարագրութիւնների ու պատկերների մէջ,

որոնք իսկապէս զուրկ չեն գեղար-
ւեստից՝ մենք անդադար հանդիպում
ենք աշտպիտի դարձածքների ու
խօսքերի. «սոթօթ, թափծու»,
«կաշմբուռ տղաները» — «ամբուռ քից
առաջ» — «պառաջատեց ու վիթի արա-
գութեամբ սուրաց միւս կողմը» —
«պօղ աչքերը» — «կուկու, ցուպլիկ
ասպարէզ մտաւ» և այլն: Բացի այդ
անհասկանալի դարձածքներից, կան
նաև ծիծաղելի ոճեր, օրինակ
«բարկացած ելեէջներով» — «ճրագ-
ները տղտղում էին» — «սոխակի դը-
զլոցը սրաքարաքում էր» (կատա-
րեալ չինականութիւն) — «չրթունք-
ների համեղ (?) հպումը» — «ծլփալի

համբուր» և և աղպիտի խօսքեր ու
ոճեր գրքի ամեն երեսում: Աշտպիտի
ծիծաղելի ոճերով ու դարձածքնե-
րով՝ շատ տեղ կորչում է վէպի
տպաւորութիւնը, և ընթերցողը սկը-
սում է կասկածել, վէպ է կարդա-
ցածը թէ անեկտոտ: Ջարմանալի է,
որ Հրատ. ընկեր. խմբագրական
մասնաժողովը անուշադիր է թողել
գրածքի այդ խոշոր թերութիւնը և
չէ ուզեցել վաղօրօք ազատել գըր-
ւածքը դրանից: Ընթերցանութեան
ժամանակ չաճախ պատահում են և
տառասխալներ:

Երանգ Ղազարեանց:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Խնդրի դրութիւնը Կ. Պոլսի մեծ ցոյցից առաջ:— Հայկական ռեֆորմների հաստատումն:

Հայկական խնդիրը, Անգլիայում, մարքիզ Սալսբերի'ի մինիստր-նախագահ դառնալուց քիչ յետոյ, պահպանողական մինիստրութեան առաջին օրերին մի նոր ուժգնութիւն ստացաւ. բայց մի քանի շաբաթ յետոյ՝ սկսեց լուռութիւն տիրել: Անգլիական նաւատորմի Միջերկրականում շրջող շատ սպանական զորք, և ժամանակը անցնում էր զիպլոմատիական յարաբերութիւնների մէջ Դրան և երեք մեծ պետութիւնների լիջն. սուլթանը շարունակում էր շրջողները «եֆորմների մայիսեան ծրագիրը, նա զիտողութիւններ էր անում՝ Կոնտրոլի խնդրի նկատմամբ, պնդում էր որ նահանգապետները նշանակեն մահմեդականներից և այլն: Խնդիրը թէև հրապարակի վրայ էր, բայց սկսել էր մի յայտնի անորոշութիւն տիրել, երբ Կ. Պոլսում, սեպտեմբերի 18-ին հայկական մի մեծ ցոյց եղաւ, մի ցոյց, որ պատճառ եղաւ մի ահաղին իրարանցումի թուրքերի և հայերի մէջ, և մի սոսկալի կոտորածի, որը, Կ. Պոլսում՝ սկսելով՝ տարածւեց Սև ծովի ափերի և ներքին նահանգների հայաբնակ գիւղ ու քաղաքների վրայ: Այդ կոտորածների գլխում առանձին զեր կատարեցին թիւք սո'ի թաները¹⁾: Ակներև էր, որ հայութիւնը ծան-

¹⁾ Թէ ինչ է սոֆթա և սոֆթալութիւնը, այդ մասին մեր ընթերցողներին չգիտեմ ես. պ. Ատրպետի մի էտիւդի վրայ, սուրած «Մուրճ» 1893 № 7—8, էջ 1143—1159: Մեր գիտցածով «Մուրճ»-ի այդ խօսքով միակն է թէ մեր և թէ օտար գրականութիւնների մէջ Սոֆթալութեան մասին, հետեւապէս արժէ որ նա թարգմանւի օտար լեզուներով: Ըստ այդ

կատանում անց էր կացնում մի ճգնաժամ, որը կարող էր ճակատագրական հետեանքներ ունենալ հայութեան ապագայի համար: Կ. Պոլսի կոտորածների մասին մանրամասնութիւնները կը պատմեն ներքե Մուրճի յատուկ թղթակցի բերանով. «պանաժ հայերի թիւը այդտեղ, այն տեղեկութիւններով որ հասնում են մինչ սեպտեմբերի 24-ը, հաշոււում էր մինչ 700 հոգի, իսկ աւելի ուշ ստացած թէև չստուգած տեղեկութիւններով, զոհերի թիւը մինչ երկու հազարի է հասնում, ըստ ոմանց՝ նաև դորանից էլ աւելի: Ընդհանուր պիտցութեամբ՝ սպանւածների մի մեծ մասը դաղտնապէս Բոսֆորն ու Մարմարա ծովն են նետւած: Աւելի ևս ճշող տրպաւորութիւն ունեցան լուրերը Տրապիզոնի և շրջականների կոտորածների մասին. Կ. Պոլսից եկած մի քանի հարիւր պատրաստւած սոփթանիի զրդմամբ և մասնակցութեամբ՝ հայերից շատ աւելի բազմամարդ տաճիկ ազգաբնակութիւնը այդ քաղաքում, սեպտեմբերի 26-ին, յարձակումն զործեց հայերի վրայ՝ ամբողջ հայ արու ազգաբնակութիւնը կոտորելու նպատակով, և, որպէս կոտորածից փախած և Բաթում ապաստանւած ականատեսները վկայում են՝ այդ քաղաքում հայ արու ազգաբնակութեան մեծ մասը թւով մինչ 1500 հոգի, իրօք կոտորւեց այդ օրը: Կոտորածը այդտեղից տարածւել է գիւղերը, հասել Բէյքուրտ, և անգլիական նորագոյն տեղեկութիւններին նայելով՝ նաև Վանում, Բաղէշում և Սիւսսում քիչ չէ արիւն թափւած:

Մինչ այժմ դեռ ևս անհնարին է եղած բոլոր զոհերի թիւը գէթ մերձաւոր ճշդութեամբ որոշել. սակայն մեր տրպաւորութիւնը այն է, որ ներկայ կոտորածները պատկանում են ամենախոշորներին, որ երբ և իցէ տեսել է հայութիւնը, մի կորուստ, որ նորա-

յուածի՝ սոփթաները իսլամական կրօնի վարդապետութեան քարոզիչները և նոյն վարդապետութեան ամենաջերմ զինւորներն են, որոնք իբր դասակարգ, թուլ չպիտի տան որ խալիֆը (սուլթանը) զուրանին և չէրիաթին հակառակ կառավարէ երկիրը, որով սոփթապետութիւնը խալիֆի ընթացքը զծող և որոշողն է հանդիսանում: Սոփթաները այն են, ինչ մի ժամանակ ենիչերիներն էին իսլամութեան համար, այս զանազանութեամբ, որ ենիչերիները զինւած զօրք էին, (1826-ին նոցա կոտորել տւեց սուլթան Մահմուդ II), իսկ սոփթաները զինւած դասակարգ չին կազմում:

նով մանաւանդ աղէտալի է, որ Կ. Պոլսից դուրս եղած կոտորածները պատահել են հայերի չսպասած ընդդէմ, չանկարծուտ, նենգամտութեամբ, առանց միջոցի ինքնապաշտպանութեան զիմելու:

Այժմ, երբ շատ բան դեռ ևս անյայտ է, դժւար է որոշել թէ ազգը մի քանի օրում որքան տոկոս կորցրեց այն ամբողջութիւնից, որը առանց այն թոյլ էր իւր թւով, և երբ այդ թւի նւազութեան պատճառով է, որ հայը զօրեղ ամբոխային ընդդիմադրութիւն չէր կարողանում ցոյց տալ այն կառավարչական քաղաքականութեան դէմ, որ կէտ նպատակ ունէր հայ ազգը բնաջինջ անելու: Այս նոր կոտորածների առաջ Սասունը արդէն պատմական անցեալին մատնեց:

Մենք յոյս ունենք, որ «Մուրճ»-ի գալ համարում մեզ կ'աջողւի ներկայացնել մեր ընթերցողներին կարելիին չափ ճշգրիտ տեղեկագիր սեպտեմբերի 18 ից դէս եղած կոտորածների:

Եւ ահա այժմ, այդ նոր սարսափելի կոտորածներից յետոյ միայն, հոկտեմբերի 5-ին Սուլթանը ստորագրեց պետութիւնների մայիսին առաջարկած ռեֆորմների ծրագիրը:

Նախ քան անցնենք հոկտ. 5-ին (նոր տոհարով 17-ին) սուլթանի ստորագրած ռեֆորմների իրադէին, տեսնենք դեռ ևս թէ ինչպէս վերաբերեց անգլիական մամուլը Կ. Պոլսի հայկական մեծ ցոյցին և թէ ինչ էր խոստացւում ռեֆորմների ծրագիրը սուլթանից ընդունել տալու մասին:

Ստանդարտ, որ անգլիական ներկայ կառավարութեան օրգանն է, նախ յայտնեց հետեւեալը, 23 սեպտ.

«Հայերի այդ վարմունքը մանաւանդ աններելի է, որ Անգլիայի ջանքերը յօգուտ հայերի արդէն սկսել էին իրենց պտուղները բերել: Ճիշդ է, Ռուսը աշխատում էր ամեն կերպ երկարացնել բանակցութիւնները, և դժւարութիւնները աւելի ևս մեծացել էին միւս պետութիւնների կապակցութեան պատճառով. բայց եթէ հայերը կարողանային դեռ մի փոքր էլ սպասել, անշուշտ Սուլթանը ստիպւած կ'ըլլէր ընդունել այն ռեֆորմները, որոնց վրայ պնդում էր լորդ Սոլսբերին: Կոմիտէները մեծ սխալ

գործեցին, ցոյց տալով Եւրոպային, թէ ինչպէս նոքա գիտեն կոտորածներ սարքել»:

Ապա Ստանդարտը 25-ին սեպտ., երեւի աւելի լաւ ծանօթանալուց յետոյ Սալսբրիի հայեացքի հետ, հետեւալը գրեց Թիւրքիայի հասցէին.

«Բոլոր կասկածները, որ կային Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսիայի կողմից ձեռնարկելիք միջոցների մասին Ստամբուլում 30 սեպտ. (նոր տոմարով, և 18 սեպտ. հին տոմարով) յուղմունքների առիթով՝ ցրեցին այն հեռագրի առաջ, որ մենք տալում ենք այսօր, այն է որ՝ երեք պետութիւնները գործում են ամենայն համաձայնութեամբ և վճռողական կերպով: Զորեքշաբթի (20 սեպտ.) նոցա ընդհանուր յայտագիրը առաջարկեց մեծ եպարքոսին: Ուրբաթ օր սըր Ֆիլիպ Կեռնի (անգլիական դեսպան) և Ռուսիայի ու Ֆրանսիայի դեսպանները երկար խորհրդակցութիւններ ունեցան նոր վեզիր Քիամիլ-փաշայի հետ, և երէկ, կիրակի (24 սեպտ.) ներկայացուց նոր հանրագիր:

«Վերջին յուղմունքների առթիւ դեսպան Կեռնին պնդում է որ անմիջապէս վերականգնել հասարակաց կարգը և անդորրութիւնը մայրաքաղաքում և ամենից առաջ որ դադարեն հայերին ձեռքակալել:

«Մնում է տեսնել թէ մեր նկարագրած սարսափելի տեսարանները Կ. Պոլսում չեն լինելու արդեօք նախերգանք Թիւրքիայի անբաղդութիւնների տարեշրջանի:

«Սալիդ-փաշային նշանակելը արտաքին դործոց մինիստրի պաշտօնում ցոյց է տալիս որ Թիւրքիան ցանկանում է հաշուել Եւրոպայի կարծիքի հետ, բայց Սալիդ-փաշայից և ոչ էլ Քիամիլ-փաշայից չպէտք է սպասել նոր քաղաքականութիւն, այլ ինքն սուլթանից: Ժամանակը վաղուց նորան ցոյց տուց, որ Մեծ-Բրիտանիան անշեղ է իւր պահանջների մէջ և որ Ռուսիան ու Ֆրանսիան չեա չեն կանգնիլ այդ պահանջները պաշտպանելուց:

«Յուզումները և վերջին շաբաթը հոսած արիւնը միայն նոր պատճառ կը ծառայեն, որ պետութիւնների հանրադրին անյապաղ պառասխան տրւի. իսկ եթէ դիպլոմատիական առաջադրութիւնները բաւարար չեն լինիլ՝ Դուռը պէտք է սպասի աւելի վճռողական գործողութիւնների:

Լոնդոնի Թագմս մեծ թերթը սպառնալիքի հետ Թիւրքիայի հասցէին՝ միացրեց աւելի կարեկցութիւն հայերի ողբալի վիճակի համար: Սեպտ. 23-ին (նոր տոմարով հոկտ. 5-ին) նա գրեց.

«Մենք արդար էինք պնդելով, որ հրացանաձողութիւնները աւելի կ'ազդեն սուլթանի վրայ, քան զիսլոմաթական առաջադրութիւնները: Ստամբուլում եղած յուզումների առաջին հետեւանքը եղաւ Քեամիլ-փաշայի նշանակումը, իբր մեծ եպարքոս: Մինչև անգամ եթէ հայոց գրգռմունքը վերագրենք յեղափոխականներին, այնու ամենայնիւ բազմաշարար ազգին չեն կարող գործադրել այն միջոցները, որոնք նշանակում են յեղափոխականների համար: Բաւերը անօգուտ են սուլթանի համար, և մօտ է այն բոլէն, երբ պետութիւնները խօսքից կ'անցնեն գործի:»

Եւ ապա նոյն Թագմսը յայտնեց թէ «Միջերկրական ծովում տեղ բաւականին կայ՝ երեք պետութիւնների միասին գործելու համար. բայց եթէ հանգամանքները ստիպեն որ Անգլիան միայնակ դործէ՝ նորան դժւար չի լինիլ կամ Կարմիր ծովում կամ Պարսից ծոցում գտնել այնպիսի կէտեր, ուր Անգլիան կարողանար զգալ տալ իւր ծովային ուժը:»

Երբ անգլիական թերթերը գրում էին այս տողերը, դեռ ևս չէին կատարւել Վ. Պոլսից դուրս եղած սարսափելի կոտորածները, և այն սարսափները, որոնց մասին դեռ ևս ոչինչ չգիտենք, թէև նորա ահագնութիւնը երևակայութեան մէջ նկարւում է իւր բոլոր դժոխային գոյներով...

Անգլիական թերթերը ուրեմն արդէն ակնարկներ էին անում որ Անգլիայի գործելու ժամանակը հասած է:

Այդ վճռական գործողութիւնների աւետումը պիտի լինէր արդեօք այն, որ Անգլիան դրաւեց Պարսից ծոցում գտնուող Բարէյն կղզին?

Սուլթանի հաստատած ռեֆորմները մեզ դեռ ևս յայտնի չեն իրենց բոլոր էական փոփոխութիւններով, որ մոցրած են երևում մայիսեան ծրագրի մէջ: Վերջին հեռագիրներից երևում է, սակայն,

որ սեփորմները իրագործելու համար նշանակում է կոմիտար ¹⁾ (արդէն հետագիրը անւանում է Ֆէթի-բէլին՝ եղբօրը Լիբանանի նահանգապետի. Լիբանանը—հիսա-ինքնավար նահանգ է): Նահանգապետները չեն լինելու քրիստոնեաներից, այլ միայն սոցա օգնականներն են քրիստոնեայ լինելու, մինչդեռ մայիսեան ծրագրով՝ նահանգապետի քրիստոնեայ լինելը պարտաւորիչ էր քրիստոնեայ մեծամասնութիւն կազմող նահանգներում: Նահանգապետները չեն նշանակելու տէրութիւնների հաւանութեամբ, ե. ոչ էլ նշանակելու են ամեն անգամ հինգ տարով: Սեփորմները տարածւելու են ոչ միայն Տաճկա-Հայաստանում, այլ ամբողջ Փոքր-Ասիայում, ուր քրիստոնեայ համայնքներ կան: Պա ունի իւր քաղաքական միտումը. եթէ սեփորմները, զէթ թղթի վրայ, սահմանափակւելին տաճկա-հայկական նահանգներով՝ դորանով ստեղծւած կը լինէր վարչական մի գլխաւորութեալ երկիր, նման նախկին Ռումէլիային, նման Լիբանանին, այդ դէպքում՝ պաշտօնապէս կը ծանաչէր մի երկիր՝ Տաճկա-Հայաստան անունով, որ հիմք կը ծառայէր ապագայ ոչ միայն վարչական, այլ և քաղաքական ջոկ մարմին: Սուլթանը այդպիսով խոց է տուել Հայերի Հայրենիքի համար առանձին վարչական կարգ ստեղծելու պաշտօնական խոստովանութիւնից: Տաճիկ կառավարութիւնը աւելի պատրաստ է գտնուել Ղուբանի հեռեկողների աչքում՝ իբր «չարիք» երեւցող մի բան թոյլ տալ բոլոր քրիստոնեաների համար, քան թէ մի փոքրիկ բարիք թոյլ տալ լոկ հայերի համար: Նա սովոր է եղել Տաճկա-Հայաստանին բացառական չարիք հասցնել, բացք բացառական բարիք—երբէք: Եթէ սեփորմները իրօք պիտի իրագործեն—տաճկա-հայերի համար թող պարծանքի մի տխուրոս լինի

¹⁾ Մայիսեան ծրագրի համաձայն բարձրագոյն կոմիտար (լանձնակատար) նշանակում է սուլթանը երեք պետութիւնների (Անգլ., Ֆրանս. և Ռուսիայի) հաւանութեամբ. նա կարող էր լինել թէ քրիստոնեայ (մահմեդական օգնականով) և թէ մահմեդական (քրիստոնեայ օգնականով): Տես երեք պետութիւնների մեմորանդումի ազդ մասը (ղլուխ VII) Մուրճ 1895 թ. № 6, էջ 552: Սգտում ենք դէպքից ուղղելու մեմորանդումի VII գլխի վերնագրի մէջ Մուրճ-ում (էջ 852) սխալ տպւած մի բառը. դորա վերնագրին է՝ «Սեփորմների գործադրութեան վրայ հսկող բարձր լանձնակատարը» (և ոչ «լանձնատուղը»):

այս գիտակցութիւնը թէ իրենց կրած թշուառութիւնների և իրենց արեան զնով ռեֆորմների բարիքներ վայելողները միայն իրենք չեն, այլ ամբողջ քրիստոնէութիւնը Փոքր-Ստիպուած Այդ գիտակցութիւնը աւելի թանկ է քան տաճկական կառավարութեան պաշտօնական խոստովանութիւնը՝ հայերի համար մի բան զիջած լինել ..

Երաշխաւորութիւնը այն բանի համար թէ ռեֆորմները սուլթանի ընդունելուց յետոյ՝ պիտի գործադրեն թէ ոչ, այն երաշխաւորութիւնը, որի վրայ այնքան ու այնքան պնդում էին Անգլիայում, — յայտնի չէ դեռ ևս որքան է ապահովեցրած մայիսեան ծրագրի սուլթանի կողմից փոփոխած նոր խմբագրութեամբ։ Աւայժմ միայն այսքանը գիտենք (ըստ հեռագրի ռուսաց հեռագրական դժուծ դորձակալութեան, որը զլանում է մեզ վերաբերեալ ամենանշանաւոր լուրերը ամբողջութեամբ հաղորդել), այսքանը գիտենք որ «օտար դելեգատների (երեք պետութիւնների դեսպանների) վերահսկողութիւնը կատարելու է դրագոմանների (միջնորդ պաշտօնեաների) անմիջական չարաբերութիւններով վերահսկող միացուն կոմիտէի հետ» ¹⁾։

Բացի նահանգապետներից, հեռագիրների մէջ խօսք կայ նաեւ ընդհանուր նահանգապետի մասին, որ մի նորութիւն է, և մեզ յայտնի չէ նորա պաշտօնը։

Մայիսեան ծրագիրը դեռ ևս կատարեալ երաշխաւորութիւն չէր տալիս ռեֆորմների իրագործման համար, այն ռեֆորմների, որոնք քաղաքական իրաւունքներ չէին հաստատում ժողովրդի համար, այլ լոկ վարչական բ՛րեփոխումներ. ծրագրի այժմեան խմբագրութիւնը, հաւանական է որ, այդ երաշխաւորութիւնը աւելի ևս երազական դարձրած կը լինի։

Նաեւ մեզ համար դրականապէս անհասկանալի է թէ այդ ռեֆորմներով ինչպէս է ապահովուում հայ ազգաբնակչութիւնը մասսային կոտորածներից...

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅԱՅ:

¹⁾ Մնացուած կոմիտէի մասին տես Մուրճ № 6, էջ 853։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ՅՈՅՅ ԵՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ Կ. ՊՈԼՍՈՒՄ

(«Մուրճ»-ի չափով թղթակցից)

I

Կ. Պոլիս, 19 սեպտ. 1895 թ.

Մօտաւորապէս տասնեւինգ օրէ ի վեր հաշ հասարակութեան մէջ տարաձայնութիւններ կալին թէ քանի մը ցուցեր պիտի ըլլան կառավարութեան դէմ և, ալդ ցուցի առիթով, առաջընէ պատրաստութիւններ կը տեսնուէին: Ալ և ալ շրջականերու մէջ թղթեր ցրեցան՝ չափարարող թէ ալ ևս պէտք չէ համբերել և եւրոպական քաղաքականութիւնէն խոշոր-խոշոր ակնկալութիւններ ունենալ՝ թէ, հակառակ ամեն տեղի և ամեն տեսակ կոտորածներու, մեր Պատրիարքարանն ու եկեղեցիները բաց են և ալն:

Այս ցուցը Ս. Խաչի կիրակին կամ երկուշաբթին ընել որոշած էր: Պատրիարքը, իմանալով, կըզգուշացնէ մերիները ալդպիսի անխոհմ ցուցի մը և կը ջանալ ապահովցնել թէ ինք հարկ եղած բոլոր միջոցները գործ դրած է աչքան երկար ձգած խնդիրը վերջապէս վերջացնելու համար քանի մը օրւան մէջ:

Ցուցին համար որոշած օրը Խաչին երկուշաբթին եղաւ. 18 սեպտեմբեր: Սակաջ տարաձայնութիւնը բերնէ բերան հասուցած էր մինչև կառավարական պաշտօնատուները, ու ամեն կողմ պատրաստութիւն տեսնւած էր ալդ տղաւական ցուցին առաջը անմիջապէս առնելու համար:

Նոյն առտուն Մալր-եկեղեցուն մէջ հաւաքւած էր մեծ բազմութիւն. քանի մը անձ իրենց ալդ օրւան ընելիքները կը հաղորդեն. ուրիշները ճառեր կը կարդան. օրիորդ մըն ալ չաջող բան մը կը խօսի ու ժողովրդի ալդ պատրաստութեան և ոգևորութեան մէջ՝ ձեր մէջ հանրածանօթ մի խմբագրի եղբայրը, հոն գտնւելով, ժողովրդին կը դառնալ կըսէ թէ իրենց բոլոր ըրածներն ու ընելիքները տղաւական են, խլն ինք են, իր բառովը:

Ժամը 5-ին ժողովուրդը ճամբալ կ'իջնալ Մալր-եկեղեցին դէպ ի Պապը Ալի, ուր կը գտնուի Բարձրագոյն Դուռը. ուրիշ տեղերէ ալ, խումբով կամ առանձին, կը գիմեն նոյն տեղը: Մալր-եկեղեցիէն ելող բազմութիւնը երգելով կը չառաջանալ մինչև Պապը Ալիի մօտերը. հոն իրենց կը զիմաւորեն ձիաւոր ոստիկաններ և անոնց առջև կը կտրեն: Հալերը կըսեն թէ Բարձր Մեծ Նպարքոսին ուղղւած թուղթ մը ունին, զոր իրենք իրենց ձեռքովը պիտի չանձնին: Ոստիկաններ արգելելու համար անոնց առաջ գնալը՝ կը չարձակին հալերու ալդ խումբին վրալ: Հալերը կ'ընկ կը պոռան, և ան կըսկսին դնդակներու տեղատարաիւր ճիշտ Բ. Իրան առջև:

Փախչող փախչողին. Պապը Ալիի ապարանքին ապահինները չըխըռնելու վար կիչնան, քանի մը ստիկան կը փուլին գետին. հազարապետ մը՝ և հարիւրապետ մըն ալ սպանած են: Զիաւոր ոստիկաններ ամեն կողմ կը վազեն և վալրկենապէս ամբողջ Պոլսի փողոցները ոստիկան զինւորներով կը պատւին: Հալերը կը դիմադրեն, բայց ահագին զօրութեան առջև տեղի կուտան: Զերբակալութիւններ կը սկսեն. կառքերով կը փոխադրեն, ոստիկաններու ընկերակցութեամբ, ձերբակալածներն ու վիրաւորւածները: Ժամը ճիշտ 5¹/₂-ին սկսած էր ալս ցոյցը: Շատեր կը լաջողին սակաւն փողոցներէ փախչելով ազատիլ: Հալերը կորսնցողին ալդտեղ 30—40 հոգի:

Պապը Ալիէն և մօտակալ փողոցներէն անցնող հալերուն վրա կը խուզարկւի. շատերու վրալ ղէնքեր կը գտնուին: Աւելորդ է նկարագրել թիւրք ամբոխի և ոստիկաններուն կատաղութիւնը, մոլեգնութիւնը: Սարսափ ամեն կողմ. խանութները կը փակին անմիջապէս: Տաճիկ պաշտօնեաներ թիւրքի կը դողան:

Տաճիկ խուժանը կը սկսի իր կատաղութիւնը թափել անցնող դարձող հալերուն վրալ, որոնց վրալ եղած միակ ամբաստանութիւնը հալ ըլլալն է: Նրբ հալ մը միջամտէ և պաշտպանել ուղէ, ինքն ալ առարկալ կըլլալ նոյն բարբարիկ գանակոծութեան: Ալս տեղատարափ ծեծին տակ մարդ խելկորոյս կըլլալ, եթէ սակաւն չմեռնի, ու ալդ վիճակին մէջ կը քաշկուտի դէպի բանտ:

Պոլսի մէջ հալերուն կողմէ ալս լանդուզն ցոյցին լուրը կը պտըտի ամեն տեղ, ու թիւրք սօֆթ աները կ'իջնան փողոցները վրիժառութեան համար. ղէմերին ելած հալերը կը զարնեն, կը ձգեն, կը նախատեն. մասնաւորապէս բեռնակիր զառակարդը կը տուժէ հալերէն: Սօֆթա մը փողոցէն անցնող հալու մը նախատական խօսքեր կ'ուղղէ. ու անդիէն տաճիկ անխաղաղ մը իր երկար թիովը մէջ կը նետւի և հարւածով մը խեղճ մարդուն գլուխը կը ջախջախէ: Ու ասանկ անդուլթ, անխնայ հարւածներ ամեն տեղ:

Սօֆթ ան Պոլսոյ մէջ ալս ազդեցութիւնն ունի հիմա, ինչ որ հարիւր տարի առաջ Նիւիչէրին երը: Ալս փաթթոցաւորները, Մուհամմէդի կրօնքին ալս վարդապետները, հալերու ղէմ չափազանց ատելութիւն ունին ու միշտ առիթ մը կը փնտռեն գեաւորները բնաջինջ ընելու համար: Տարիէ մը ի վեր ղէնքեր կը հալթհալթէին. բայց չլաջողեցան մինչև հիմա որ և է առիթ մը գտնել իրենց կատաղութեանց լագուրդ տալու համար: Առիթը ահա նոր ներկալացաւ:

Զերբակալութիւնները մէկ կողմէն, խժոժութիւնները միւս կողմէն կը շարունակին փութաջանութեամբ: Փողոցներէն, կամուրջէն անցնող դարձող հալերու վրալ խուզարկութիւններ կըլլան և, պզտիկ թուղթ մը

գտնւածին պէս՝ կը ձեռքակալին. իսկ անոնք որ կասկածելի կը թւին, անմիջապէս կը ձեռքակալին:

Բեռնակիրներ խումբ-խումբ բանտ կը տարին. որովհետեւ տարած-ւեցաւ տաճիկ շրջանակներու մէջ թէ հալերու բեռնակիր և հրշէջ դա-սակարգն է որ ալդ խռովութիւնը հանած է:

Գիշերը սոֆթաները, զինւած, կը լարձակին Քահթէ-Գալէի, Կէտիկ-Փաչալի, Գում-Գափուի կողմերը: Բաւական մեծ կոտորած և ձերբակալու-թիւններ: Սոֆթանները իրենց բռնածը կը ծեծեն և չետոյ կը լանձնեն ոտտիկաններուն, որ, առանց հարցաքննելու, զանի կ'առաջնորդեն բանտ: Մինչև ալսօր, երեքշաբթի իրիկուն, մօտաւորապէս 2000 հոգի ձեռքա-կալւած են:

Երեքշաբթի օր, Վալաթիոյ մէջ կռիւ մը կը ծագի սոֆթաններու և հալերուն մէջ. լոյները հալերուն կ'օգնեն. միշտ քանի մը մահ. Փողոցնե-րու մէջ խումբ-խումբ սոֆթաներ կը պտըտն իրենց լաչն չալւարին մէջ պահած ըլլալով վեցհարւածեան. իրենց վրալ բնաւ խուզարկութիւն մը չըլլար, որ տեսակ մը քաջալերութիւն է կառավարութեան կողմէ իրենց դործած նախճիրներուն, վայրագութիւններուն: Սոֆթաները ուղած են խմբովին լարձակիլ Պատրիարքարանի վրալ, բալց, որպէս զի դործը ալդ աստիճանի մեծ լանդամանք մը չառնէ՝ ոտտիկաններ Գում-Գափուի ամեն փողոցները կը պահպանեն և, ալսպէսով, միանգամայն չեն թողուր որ ալդ հալաշատ թաղէն հալեր դուրս ելլեն:

Վերջի վայրկեանին կիմացել որ Ուն-Գափանի, Գասըմ-Փողոցի մէջ ալ ձերբակալութիւններ եղած են: Ձերբակալութիւն ըսել ու անցնելու չէ. ծեծ, վիրաւորանք, տանջանք, տանջանք միջոցներ են ապստամբ հալերը մինչև բանդ հնազանդօրէն առաջնորդելու:

Տաճիկներու լուսաւորւած դասակարգը ուրախութեամբ կ'ողջունէ այս տեսակ ցոյց մը. բալց դժբախտաբար ալդ դասակարգը շատ քիչերէ կը բաղկանալ:

Հալերը, զեռ. չսկսած իրենց ցոյցները, զեռպանատունները լուր կը ձգեն: Ու տարածալնութիւն մը կար հալերուն մէջ թէ անգլիական զրահաւոր-ներ 8 ժամէն Վստիօրէն պիտի անցնեն. 40 ժամ կըլլալ. ամեն տեղ մահ, կոտորած. հազարաւոր ձերբակալութիւն ու զրահաւորները զեռ. չեմ գի-տեր ինչի, որի կըսպասեն...

Փողոցները գունդ-գունդ զինւորներ լեցւած են. ոտտիկաններ կը պտը-տին. չարունակ, խռովութիւն մը չծագելու համար: Միւս կողմէն ալ հա-լերը մեծ պատրաստութիւն կը տեսնեն. նորէն զէնք և զնդակ կը բաժնալի: Ամեն եկեղեցու բակ հալերու համար ապահով խորհրդատեղի և ժամա-ղրավաչք եղած է. շատեր քանի մը օրէ ի վեր ալդ սալապատակներու վրալ կ'անցնեն նոր ցոյցի պատրաստութեան մը մատնակցելու համար:

Տաճիկ լրագիրները սապէս պաշտօնական ծանուցում մը հրատարակեցին:

«Եւ ծանուցելի թէ, տեսնելով որ հալոց բեռնակիրի և ջրհանկիրի նման անհատներէ բաղկացած անձեր հոս ու հոն հաւաքուած են, ոստիկաններու և ոստիկան ղինւորներու միջամտութեան և Պատրիարքարան ուղղւած ղեկուցներու և լորդօրներու վրա՝ աչդ հաւաքումները պրեկցան: Շնորհիւ վեհ. Սուլթանին» (?) «կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ» (!!!???)»:

Նոյնպէս իրիկունս ալ տպւած թուղթեր կը շրջաբերէին, որով կ'անդորրեցնէին թէ հալոց կողմէ եղած ցուցերուն առաջքն սուսուած է և ապահովութիւնը առաջւան պէս կը տիրէ:

Ս. Պատրիարքը, աչս ցուցերուն առիթով, բնական է, որ չի կրնար պատասխանատւութիւն մը տալն՝ Վանի մը անդամ Բ. Դուռը կանչած են, բաց ինք, իր հիւանդութիւնը պատճառ բռնելով, մերժեր է երթալ:

Թիւրքերը անմեղ գառնուկի մը կը սեպէին հալը, անկարող կուլու, անկարող իր իրաւունքը պաշտպանելու. Պոլսի մէջ, թիւրքերու մալրաքաղաքին մէջ, Բ. Դրան դէմ սարքած աչս տեսակ ցուց մը հալերու կողմէ՝ բուրտովին կը շարունակէ, կը զարմացնէ: Միշտ իրենց հալերը ստորացած տեսեր են, ամեն հրամանի հնազանդ, ու պզտիկ զիմադրութիւն մը խակ իրենց արժանապատուութեանը, իրենց ղերիչխանութեանը նախատինք մը կը սեպեն:

Հեազհետէ տեղեկութիւններ կը հաղորդեմ՝ եթէ ողջ մնամ, եթէ չձերբակալիմ: Հաչ գպրոցները իրենց դռներ գոցեցին: Շատեր հաղորդութիւն առած են և կ'առնեն:

200—250 հոգի մեռած է մեզնէ մինչև հիմա:

ԱՏ. ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ.

Մեր թղթակիցը, վերը տպած գրութեան հետ ուղարկել էր մեզ Պոլսի թերթերում հրատարակած հետեւեալ պաշտօնական ծանուցումը, որի Ֆրանսերէնից թարգմանում ենք.

Կ. ՊՈԼԻՍ, 11 Ռեբի-իւլ-Ահիր 1313

1-ն հոկտ. 1895 թ. (հին տոմարով 19 սեպտ):

«Աւսօրեայ լրագիրներում տպւած մի ծանուցումն տեղեկացրեց թէ ինչպէս երէկ ցրիւ տրեցին մի քանի հալերի հաւաքումները:

«Նոքա, որոնք աչս խմբումներ լինէ զէնքը ձեռքին՝ ընդդիմադրեցին ժանդարմներին, բնական է որ կալանաւորեցին: Նոքա դատի կը

կոչւեն և կը պատժեն օրէնքների համաձայն, և նշանակւած պատիժները մասին կը հրատարակւի լրագիրներում:

«Այսու ծանուցում է, որ Ն. Կ. Մ. Սուլթանի բոլոր հպատակները, մահմեդական թէ ոչ-մահմեդական, ինչ դատակարգի և պատկանեն նոքա, պարտաւոր են իրենց պարտականութիւնը կատարել. ալն ամենքը, որոնք օրէնքին հակառակ կ'երթան, մեծ պատասխանութեան կ'ենթարկւեն և պատշաճ սլատիժը կը կրեն»:

II

Լ. Պոլիս, 24 սեպտեմբ. 1895 թ.

Նախորդ նամակովս համառօտ մը տեղեկութիւն տւած եմ օրւան խնդրին վրայ. անկէ ի վեր որ և է ցոյց մը տեղի չունեցաւ. սակայն թիւրքերու կողմէ ասդին անդին շարդեր և բարբարիկ պատիժներ. ձերբակալութիւնները անընդհատ քանի մը օր շարունակեցան. բազմ բանտարկւողներէն մէկ մասը ծեծելէն և առանց հարցաքննելու արձակեցին:

Եւ ինչ շարժառիթ կըլլան թուրքերը. հալերը երբ ճամբալ կ'իջնան դէպի Պապը Ալի, իրենց առջև ոստիկան-զինուորներու պատնէշ մը կը գտնեն. հալերը կը լալտնեն թէ մեծ եղարքոսին աղերսագիր մը ունին զոր իրենք իրենց ձեռքովը պիտի տան. ոստիկանները կը պահանջեն որ իրենց չանձնւի ալք թուղթը ու հալերն ալ ձգեն երթան. մերկաները կը դիմադրեն. ոստիկանները կը քաշեն իրենց սւրիւնները՝ քիչ մը հաչ նորից թափելու համար. հալերն ալ, ինքզինքն պաշտպանելու նպատակով կը ոտիպւէին գնդակով պատասխանել:

Որոշւած էր երկուշաբթի օր (18/30 սեպտեմբեր) ժամը 5¹/₂-ին գտնւել բարձրագոյն Դուռը. ու ամեն կողմէ, խումբերով կամ առանձին հալեր կը դիմեն Պապը Ալի. Զէմպէրլի-թաշ, Թուփու-բազար և Սիրքէճի զիմաղրութիւններ տեղի կունենան արդեւելու համար հալերուն Պապը Ալի դիմումը. Բարձրագոյն Դուռը հասնող հալերուն ալ նոյն տմարդի զիմաղրութիւնն ու սնարդանքները: Թիւրքերը առաջւնդ իմացած ըլլալով թէ ալք օրը հալերը պիտի չարձակին—իրենց խօսքովը—Պապը Ալիի վրայ, հոն բոլոր փողոցները զինուորներ կեցուցած և ձիաւոր ոստիկան-զինուորներ պահած էին ալ և ալ տեղեր, որ անմիջապէս շրջապատել ուղեցին ալք օրւան ապստամբ հալերը, ամեն փողոցի անցուղարձը արգելեցին վարկենապէս: Բազմ հալերն ալ բաւական խելաղի կը գտնւին. ձիաղաորւեցան ու ալ և ալ փողոցներէ չաջողեցան փախչելով ինքզինքնին ազատել՝ դէմքերնին ելլող ոստիկաններուն կրակելով:

Սոֆթանհիւու քաջագործութիւններու մասին արդէն զրաժ եմ. ասոնք Պոլսի կողմը ուր եւրոպացիներ չկան—անդթաբար, գազանաբար ձեռ-

քերնին անցած հալերը փողոյներէն կը քաշվուտեն, սուրի հարւածներ տալով մարմնի ամեն տեղերուն: Շատերը մեռած ու չատերն ալ կիսամեռ վիճակի մէջ են: Բնու սոֆիստներէն չեն տարբերիր զինւորները. բայց զինւորական օրէնքները սանձ մը կը գնեն իրենց անսանձ կատաղութեան:

Ոստիկան զինւորներ բանտին մէջ իրենց սուրերովը չարաչար կը ծեծեն շատ մը ձերբակալած հալերու գլուխները. ալս խեղճերը մեռած են:

Բանտին մէջ վիրաւորւած ու մեռած իրարու վրալ գիզած են ալ օրը. քանի մը լեռնալիներու պաշտօն լանձնւած է եղբի ներս տարւածները չարաչար ծեծել. շատեր ահագին վէրքեր կը ստանան ալ անխնայ հարւածներէն ու չատերն ալ կը մեռնին սոսկալի մահով մը: Մեռելներուն դիակները ծովին չատակը իջեցուցած են սկզբի օրը:

Ականատես մը կը նկարագրէ բոլոր ալս սպանութիւններն ու ծեծերը. ու կըսէ, թէ իր 15 ընկերները չարաչար ծեծելով՝ կը ջախջախեն բոլորին ալ գլուխները՝ ուղեղները դուրս թափելով: Բանտին մէջի մեռելներուն արիւնը ծածկելու համար 7 սալ կիր տարւած է բանտը:

Նրեքաբթի օր քանի մը զինւոր, սոֆիստներ և թիւրքեր կը պաշարեն Գարա-Աէօմբուկի հայոց եղեղեցին. բայց ոչինչ կրնան ընել. իրենց կատաղութիւնը կը թափեն մօտակալ ութը հալ տուններու վրա և տնեցիները ամենքն ալ կը խողխողվին. մանուկները սուրերուն ծալքը կանցնեն և հալ լղի կնոջ մը որովայնը կը պատռեն, մանկիկը դուրս հանելու համար, և անոր Շարուկ անուն աղջիկն ալ կ'առնան գնն:

Տաճիկ մտավաճառ մը թշնամութիւն ունենալով զրացի ածխավաճառի մը հետ, զանի փողոց կը քաշկոտէ և սոֆիստներու հետ կը սպանեն զանի և զաւակն ալ ծեծելով բանտ կը զրկեն:

Նրեքաբթի իրիկան թիւրք զինւորներ և բարբարոս խուժանը կը չարձակին Գառմ-փաշայի թաղին Հաճի Հասան իւանին վրա և ամբողջ խանը տակն ու վրա կ'ընեն. սպաննելով, աւրելով, կողոպտելով: Պէշիկ-թաշի մէկ ալ սոֆիստներն ու ոստիկանները կը չարձակին երեք Վանցի հալ բեռնակիրներու վրա, մէկը կը սպաննեն և երկուքն ալ շատ տեղերէ կը վիրաւորեն: Ալազմա Գարու թաղին մէջ ոստիկանների փալտէ հարւածներով Առաքել անուն հալու մը ուղեղը դուրս կը թափեն:

Ու ասանկ կռիւներ Գում-Գարու, Աէտիկ-փաշալ, Թաւուզ-փաշալ, Ճիպայի, Օղուն-Գափու, Ուն-Կաբան, Քէրէստէլէր, Սամաթիա, Սուլթան-Պէշաղիդ, Խանգիւղ, Ղալաթիա, Թովհանէ, Պէշիկթաշ, գրեթէ Պուսի ամեն թաղերու մէջ, բացի Բերալէն:

Հալերէն մեռած են 500 — 700 անձ, թիւրքերէն 50 — 100 անձ:

Ժողովուրդը խաներու անկիւններէն և անապահով տեղերէ ապաստանած է եկեղեցիները. Մալր-եկեղեցին և Բերալի Երրորդութիւնը 1000-ական հոգիէն աւելի կան: Եկեղեցական արարողութիւն չի կատարւիր վերջի օրերու. վստահելի անձերու միայն թող կը տրւի՝ եկեղեցու դռնէն ներս մտնելու. քանի մը լրտեսներ բանտարկւած են դատարանի մը մէջ. մէկու ականջը կտրած են:

Եկեղեցիներու ճակատը սուգի սե լաթերով ծածկւած է, սե լաթերուն վրայ ճերմակ խաչեր. անկարելի է չլուզիլ, երբ ներս մտնելի եկեղեցու դռնէն: Եկեղեցիները ապաստանած ժողովուրդին լաւ սնունդ կը տրւի. գիշերը շրջափակի մէջի շէնքերու մէջ կը պառկին: Կառավարութեան կողմէ որ և է արգելք չի կար մտնող ելողներուն, բայց երէկ ու ալսօր ոստիկաններ չեն թողուր որ մարդ ներս մտնէ. այս արգելքը նոյն իսկ քահանաներուն համար ալ: Թիւրքերը կը կասկածեն որ եկեղեցիներու մէջ շատ զէնք և ռազմամթերք պահւած կան:

Նախորդ երկուշաբթիէն սկսած Պոլսի խանութները—շատ քիչ բացառութեամբ—գոյց են. սեղանաւորական թղթեր անգանձելի կը մնան. շատերը վախերիտն զուրս չեն կրնար ելլել:

Օտար տէրութիւններու վեց ղեսպանները Պատրիարքարան եկան անցքին չաջորդ օրերը. և իրենց առաջին թարգմաններն ալ եկեղեցիները ալցեւեցին՝ ժողովրդին վիճակը տեսնելու և գանգատները լսելու համար:

Չորս անգամ Տատեան Արթին-փաշան Պատրիարքարան եկած է. Պատրիարքը իմացուցած է հաւերուն թէ խնդիրը լաւ վիճակի մը մէջ է, եթէ ալ հաւերու կողմէ անտեղի ցուցեր չըլլան. որովհետեւ կառավարութիւնը ինքզինքը արդարացնելու առիթներ կը փնտռէ:

Նորընտիր եպարքոս Քիամիլ-փաշա Անգլիոյ բարեկամ մըն է. և կը սպասուի որ խնդիրը խելացիօրէն կարգադրէ. ուրիշ անգամ մըն ալ Սալիդի չաջորդած է:

Մզկիթներու մէջ ազդարարւած է որ պէտք է հաւերու հետ աղէկ վարւիլ. անաստողները պիտի պատժւին: Այս ազդարարութիւնը ժողովուրդին հաղորդողը սոփթան է:

Տաճիկ պաշտօնատուները խիստ հսկողութեան տակ առնւած են. Մեծ պաշտօնեաներ շատ կը վախնան ապստամբ հաւերէ:

Զիաւոր և հետի գինւորներ խումբ-խումբ Պոլսի ամեն փողոցները կը պտտին և կը հսկեն:

Հետևանքը... դեռ անորոշ:

Հաջորդողները գոյց են: Երբ ստորագրւի ծրագիրը, եկեղեցիները ապաստանողները անմիջական գործադրութիւն պիտի պահանջեն, ինչպէս նաեւ անմիջական կարգադրութիւն Սասունի և սասունցիներու համար:

Գաւառներէն ալ լուրեր կը հասնին, Թէքիր տաղ (Ռոդոսո) հաւերը ջարդ մը կուտան թիւրքերուն:

Ա. ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ:

III

Աստուծոյ 18-ին յաջորդած երկու-երեք օրերի զէպքերի մասին Ստանդարտ անգլիական լրագրի յատուկ թղթակիցը հեռագրեց հետեւեալը սեպտ. 21-ին.

«Խառնակութիւնները Ստամբուլի մէջ նորոգեցին. կրկին ընդհարումներ եղան ոստիկանութեան հետ, որոնց հետեանքը եղան ոչ քիչ սպանածներ: Անկարգութիւնների շնորհիւ բոլոր խանութները փակած են, փողոցներում չըջում են զօրականներ, և քաղաքը իրապէս պաշարման դրութեան մէջ է: Երէկ (20-ին) ամենալուրջ գործը պատահեց Ղալաթայում: Ամենաշափաւոր վարկածը դորա մասին հետեւեալն է. հանգիստ իրա համար փողոցով անցնող մէկը, լաւ հագնւած մի հալ, լանկարծ ձեւերակալ-ւեց ոստիկանութեան ձեռքով, և նորա բնական ընդդիմադրութեան պատճառով՝ ամենքի աչքի առաջ սպանեց:

«Երէկ, ուշ երեկոյեան, կաւացաւ հողերի բազմամարդ խմբումն Վառիմ-փաշա թաղում: Ազդուեղ սոփթաները չըջապատեցին նոցա, որից չառաջացաւ ընդհարումն և կոտորած: Սպանւածների թիւը, զանազան ցուցմունք-ների համեմատ՝ տատանւում է 20-ից մինչ 150 հոգի: Ոստիկանութիւնը, անկասկած, թույլ տուեց քրիստոնեաների և մահմեդականների աղէ կռիւը:

«Հաւոց Պատրիարքը երէկ ստացաւ նամակ՝ հրաւերքով որ գալ Բ. Դուռը, բաւց առանց որ և է ուղեկցի: Պատրիարքը վճռեց որ աղէ-պիսի հանգամանքներում հրամանների նաղանդել նա չի կարող, և մնում է Պատրիարքարանի մէջ փակւած մի քանի հարիւր զինւած հալերի հետ: Իշխանութիւնները հրամայեցին նորան անձնատուր լինել, նշանակելով դորա համար ժամանակ մինչ օրւալ ժամ 3 և սպառնալով, հակառակ զէպքում, պատրիարքարանի և եկեղեցու շինութիւնը ուժով վերցնել: Ոստիկանութիւնը չըջապատում է շինութիւնը:

«Ճշգրիտ կարելի է հաստատ ասել, որ ոստիկանութիւնը երկու օր չու-նէր պատերազմական փամփուշտներ և հրաման էր ստացած լարձակում-ները չեալ մղել լոկ սրերով և հրացանների կոթերով: Նիթ, առաջին կողը եղաւ ոստիկանութեան կողմից, բաւց նա միայն բերանացի էր, իսկ ուժ գործ դրւեց առաջին հարւածից չետու, որ տուեց հալը:

«Նշեցնելով իւրեանցից ամենասարսափելին—8 հալերի կոտորելն է բան-տի շինութեան մէջ: Բացի աղէ զէպքից՝ հալերի վրալ գործած բոլոր բռնութիւնները կատարել են սոփթաները և մահմեդական ստորին խա-ւերը. ոստիկանութիւնը, զէպքերի մեծամասնութեան մէջ, բարւոք համա-րեց ամենեկին չխառնել:

«Բանի որ հալերը զէնք են կրում, պետութիւնները չունին որ և է locus standi միջամտելու համար. բաւց կարող է ըստէ գալ, երբ վտանգ կը սպառնալ բոլոր քրիստոնեաներին, և ալն ժամանակ պետութիւնները

կարող են ազատ գործել: Օտար գաղութների մէջ արգէն խօսում է ալիւմինիոցների մասին, որ ձեռք են առնում դեպանները նոցա հովանաւորութեան համար, բայց գործը մինչ անգոյս ղեռ չի հասել, և վտանգի մէջ գտնուում են դեռ ևս միայն հալերը:

«Պաշտօնում մեծ շփոթութիւն է տիրում: Մինիսարները խորհուրդը նիստ ունեցաւ երէկ ամբողջ գիշեր: Ամենքը հասկանում են որ ճգնաժամ է հասել և որ այլ չեղափոխական գործողութիւնները կը միանան չուսահատ հալերի գործածների հետ:

Յունական չեղափոխութիւնից դէս Կ. Պոլիսը ալսպիսի տերրոր (սարսափ) դեռ տեսած չէ»:

Նոյն Ստանդարտի հեռագիրը նոյն օրուայ (21-ին) երեկոյեան ժամին, հաղորդում էր. «Ապառնալիքը՝ ուժով վերցնել Պատրիարքարանը՝ դեռ ևս կատարումն չէ ստացած: Վերադառնում եմ Վում-Վափուից, ուր տեսաւ ահագին բազմութիւն, հաւաքած Պատրիարքարանի գաւթում: Քահանաները ասում են թէ չեն կարող ստիպել փրկութիւն որոնող հալերին՝ թողնել Պատրիարքարանը՝ վերջիններս հրաժարւում են թողնել այն ապաստարանը, որ տրւած է նոցա եկեղեցական իշխանութեան կողմից: Այտք է չուսալ, որ ուստիկանութիւնը ոչ չի գործադրել, ապա թէ ոչ՝ հալերին սարսափելի կերպով կոտորելը անխուսափելի կը լինի:

«Առ ալժամ Պատրիարքարան են բերւած միայն 7 սպանւածների դիակներ, բայց այժմ ամենքին չալանի է որ երէկ, Շաքուր-Չեմէլ-խանի մէջ տպանւած են 50-ից անելի հոգի և 100-ից անելի հոգի չեն գտնուում, իսկ Պատրիարքարանում հաշւում են որ, բացի վիրաւորներից, սպանւածների ընդհանուր թիւը 200-ից անց է:

«Սարսափելի վախ են կրում՝ ալսօրուայ (21 սեպտ.) երեկոյեան համար. փողոցները շարունակ շրջում են ձիաւոր և հետի ջոկատներ. չուս կալ թէ սպանուեմների շրջանը անց է կացած»:

Նոյն Ստանդարտին հեռագրւեց թէ՝

«Բոսֆորի երկարութեամբ գտնուող քաղաքներում և գիւղերում խռովութիւններ են կատարւում»:

ՄԵԾ ԵՊԱՐՔՈՍ ՔԵԱՄԻԼ-ՓԱՇԱ

Քեամիլ-փաշան, Կ. Պոլսի հայկական մեծ ցոյցի և դորան չաջորդած կոտորածներից մի քանի օր յետոյ, սեպտեմբերի 22-ին փոխարինեց Սալիդ-փաշային (Քուչուկ Սալիդ մականանւածին) մեծ եպարքոսի պաշտօնում: Սալիդ-փաշան դեռ ևս միայն մի քանի ամիս առաջ՝ մալխին էր փոխարինել Ջեւատ-փաշային:

Քեամիլ-փաշան մեծ եպարքոսի (առաջին մինիստրի) պաշտօն վարած է արդէն աւելի առաջ, և այն՝ երկար ժամանակ, այն է 1885 թ. սեպտեմբերի 13-ից (հին տոմար) մինչև 1891 թ. օգոստոսի 19, ուրեմն մօտ հինգ տարի։ Այդ ժամանակամիջոցում նա կարողացաւ ամենավտանդաւոր ճգնաժամերի միջով անցկենալ, առանց որ նորա դիրքը դորանով խախտուէր։ Այդ ժամանակամիջոցում նա ծանր խնդիրներ լուծեց. դրա էին՝ եզիպտոսի զորքերը, բանակցութիւնները և չաջողած ծրագիրը սըր Ռոլմոնդ Վոլֆի, աւղանական կոնֆլիկտը, Անգլիայի պայմանաւորւած պահանջը, որ անգլիական նաւերը ազատ կարողանան նեղուցները անցնել՝ որ չընդունեց Ֆրանսիայի, Գերմանիայի և Աստրիայի (սորհրդով), ռումբլիական ապստամբութիւնը և Արևմտեան Ռումբլիայի միանալը Բուլղարիայի հետ, վերջինիս ջանքերը, որ բուլղարական իշխանը պաշտօնապէս ճանաչէր, Մակեդոնիայի կրօնական կոնֆլիկտը, Կրէտէի խռովութիւնները, ապստամբութիւնը Եմենում (Արաբիա),—ահա այն խնդիրները, որոնցից նա դուրս պրծնել կարողացաւ, առանց իւր դիրքը խախտելու։

Քեամիլ-փաշան 1885-ից առաջ տաճկաց դեսպան էր Պետերբուրգում. և մեծ եպարքոս նշանակւելով՝ կարծւում էր թէ նա մի բարեկամ կը լինի Ռուսիային։ Այդ յոյսերը իսպառ ի դերեւելան. չնայած որ նա բաւարարութիւն չուեց Անգլիայի առաջարկին նեղուցների նկատմամբ (Ռուսիայի դէմ պատերազմի զէպքում պատերազմական նաւեր անցկացնել Դարդանէլի և Բոսֆորի նեղուցների միջով),—բայց Քեամիլ-փաշան ճանաչեց որպէս բարեկամ թէ միջին Եւրոպայի երրեակ նիզակակցութեան և թէ Անգլիայի։ Մանաւանդ նա շատ աշխատեց գերմանական ազդեցութեան աճելութեան համար Թուրքիայում, զինուորական և քաղաքացիական բարձր վարչութիւնները գերմանացիներ մտցնելով, բազմացնելով շինութիւնների կոնցեսիաները Գերմանիայի և Աստրիայի կապիտալիստներին համար։

Քեամիլ-փաշայի նորից կառավարութեան գլուխ անցնելը՝ Անգլիայում ընդունեց իբր բարեգուշակ քայլ սուլթանի կողմից. նոյնքան էլ թշնամաբար ընդունեց նա ռուսաց մամուլի մէջ։

ՆՈՐ-ԴԱՐԸ ԵՒ „ՉԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՋԸ“

Հենց որ Երեանի թեմում եռանդով «Նոր-Դար» տարածող Բենիկ վարդապետի թեմական տեսչութիւնից արձակւելու լուրն առաւ ալի թերթը, վերջինիս համար սկսեց Էջմիածնից ուղարկած իւր թակցութիւն-ներն ու լուրերն Նոր չրջան: Առաջ ամեն ինչ կատարեալ՝ ր, և լանկարծ, միանգամից՝ ամեն ինչ Էջմիածնում դառաւ վատ, խաւար, ամեն ինչ շուռ եկաւ: Ինչ մեղաւոր էր Բենիկի պաշտօնանկութեան համար Էջմիածնի, օրի-րինակ, խեղճ... քանքանը, բայց տեսէք որ Բենիկին հետաքննելու լուրը առնելուց լատոյ՝ նոյնիսկ՝

«Քանքանը կտրւել է, մաքուր ջրի նեղութիւն է, Նոր քանքանն էլ դեռ տեղ չէ հասել» (Նոր-Դար 13 սեպտ.):

Նոր-Դարը, Բենիկի արձակումից լատոյ՝ խիստ հսկող է դառնում և արձանագրում է թէ՝

«Ա. Էջմիածնի վանքի կառուրը քանդել, բոլոր քարերը վերցրել են» (տես նոյնտեղ):

Երկու օր չի անցնում, և արդէն Էջմիածնի մալր-եկեղեցու պատերն են ձեղքոտում. տեսէք՝

«Արապետ եպիսկոպոսը... ասում են, մի քանի ձեղքեր է նկա-տել Մալր-Աթոռի պատերի մէջ» («Նոր-Դար» 15 սեպտ.):

Նոյն իսկ սուրբ մեռոնը վերջանում է. Բենիկին արձակելուց լատոյ՝ Նոր-Դարի հաւար պարզւում է, որ ամեն տեղ խօս մեռոնը արդէն վաղուց վերջացել է և՝

«Անհրաժեշտ էր ս. մեռոնի օրհնութիւն կատարել, որովհետեւ ալա-տեղ էլ (Ա. Էջմիածնում) չկալ ս. մեռոն» («Նոր-Դար» 20 սեպտ.):

Դոցա հետ խառը գալիս են զպրոցական լուրեր:

Դպրոցների մասին հոգատարութիւնը թերթի կողմից զազաթնակե-տին է հասնում. սեպտեմբերի 5-ին Թիֆլիսի Ներսէսեան դպրանոցում նոյն իսկ ուսումը Նոր էր սկսում, բայց «Նոր Դար»-ի թղթակիցը Էջ-մածնից աղաղակում է՝

«Նրակապեցէք (երեւակապեցէք!), որ այժմ սեպտեմբերի 5-ն է, բայց մեր (Երեանի) թեմի դպրոցներից չատերը դեռ ևս փակ են:

Ամեն օր (Բենիկին հեռացնելուց չեսու՛ անշուշտ !) զանազան տեղերից տխուր լուրեր ենք ստանում» (Նոր-Դար 14 սեպտ.):

Բենիկին պաշտօնից արձակելը, տեսե՛ք որ, իւր ազդեցութիւնն անում է մինչև իսկ Թիֆլիսի թեմի վրայ, ուր դպրոցական վարչութիւնները սկսում են իրենց իրաւունքների սահմանից դուրս գալ և ահա թէ ինչ որոշումներ են անում.

«Սեպտ. 26-ին Վահագիւսի Կաթողիկոսի օծման տարեդարձն էր: Այդ տօնը ինչպէս մեզ հաղորդում են, տեղուս հաւոց դպրոցների վարչութիւնները որոշել են կատարել առաջիկայ կիրակի խաչվերաց տօնի օրը» (ուրեմն հոկտ. 1-ին): («Նոր-Դար» սեպտ. 26):

Իբր թէ, ուրեմն, այդ չի եղել Կաթողիկոսի կարգադրութեան համեմատ, ալ «տեղուս հաւոց դպրոցների վարչութիւնների որոշմամբ»!

Բայց, Բենիկից չեսու՛, ահա արձակում է «Նոր-Դար»-ի եռանդուն գործակալ Դանաբօզեան՝ ճեմարանի վերակացութեան պաշտօնից: Եւ իսկոյն Նոր-Դարը ճեմարանի մի վիճակագրութիւն է հրապարակ հանում և աւետում որ՝

«Այժմ» (այդ աժմ և միայն աժմ!) «ճեմարանում թիւքիացի աշակերտները համարեա բոլորն էլ վանեցի են» (իմա Կաթողիկոսի հայրենիքից) («Նոր-Դար», 28 սեպտ.):

Թերթը սկսում է վերալիչել նաև անցեալը, և հաղորդում է աժմ (1895 թ. սեպտեմբերի) արդէն սաստիկ հնացած մի լուր, թէ՛

«Ճեմարանից անցեալ տարի մօտ 100 հոգի է արձակւած»: («Նոր-Դար» 16 սեպտ.):

Դա մի լուր է, որ ընթերցողները գիտեն «Մուրճ»-ի դեռ ևս անցեալ տարւալ նուեմբեր-դեկտեմբերի համարից!

Բայց ահա արձակւում է նաև Կաթողիկոսի զիւանապետ Յուսիկ վ. Զոհրաբեան:

Եւ աժմ ահա մէկը միւսի չետից սկսում են չորդահոս կերպով տեղալ լուրեր «Ներկաւումս աչստեղ (Էջմիածնում) տիրած կարգերից զզւած» եպիսկոպոսների, (աւաղ, միայն երեակաւական) հրաժարականների մասին: Ահա ձեզ լուր Սինոդի անդամ Սարգիս եպիսկոպոսի մասին՝

«Գեր. Սարգիս եպիսկոպոսը, զզւած ներկաւումս աչստեղ տիրած կարգերից, հրաժարական է տալիս իւր պաշտօնից»: (Նոր-Դար, 16 սեպտ.):

Լուր՝ Արիստակէս եպ. Դաւթեանի մասին՝

«Ինչպէս լսում ենք, տպարանական ժողովի նախագահութիւնից հրաժարական է տալիս նաև գեր. Դաւթեան Արիստակէս եպիսկոպոսը»: (Տես թերթի նոյն համարը):

Լուր վանական կառավարութեան նախագահ Ներսէս եպ. մասին՝

«Գեր. Ներսէս եպ. Խուղալերդեանը մտադիր է մի վաճառք քաշել»:
(Տես թերթի նոյն համարը):

Եւ, իմացէք, ալիք բոլոր հայկականները («Նոր-Գար»-ի էջերում!) հրաժարական են տալիս իրենց պաշտօններին՝ «զղւած ներկալուստի տիրող կարգերին»՝ Բենիկ վարդապետի, Դանազողեանի և Յուսիկ վարդ. Զոհրաբեանի պաշտօնանկութեան մասին «Նոր-Գար»-ում աղմուկներ բարձրացնելու ժամանակ...:

Աւսքանն էլ բաւ է. աւելորդ և շատ երկար կը լինէր, եթէ առաջ բերէինք զանազան վարդապետների ու արեղանների մասին գրածները, որոնցից մէկը հեռանում է իւր պաշտօնից, միւսը (միշտ «Նոր-Գար»-ի էջերում, ի հարկէ) ալս ու ալն պաշտօնի է նշանակում, երրորդի համար՝ Կաթողիկոսի կարգադրութիւններից լետու՝ ինքը «Նոր-Գարն» էլ քիչ է մնում կարգադրութիւններ անի... և ալն և ալն, անվերջ...:

Եւ այս ամենը գրում է մի թերթ, որը դեռ երէկ Կաթողիկոսի ամեն մի խօսքը սրբութեան տեղ էր դնում կամ սրբութեան տեղ դնել էր ձեռնում. մի թերթ որ ուսանողներ էր երգում իւր թերթի մէջ Կաթ. ամեն մի վարչական կարգադրութեան համար, նկարագրում Վհախառնի ամեն մի շարժածքը, դտնում ամեն ինչ բարի, իմաստուն, առաքինի: Ատում ենք աղպէս էր երէկ, երբ Վհախառնում դիւանապետ էր մի Յուսիկ վ. Զոհրաբեան, որը դիւանապետ լինելու պատաւոր պաշտօնի համար ոչ մի առաւելութիւններ չէր ներկայացնում և դեռ ևս ոչ մի ծառայութիւնով չէր վաստակած մի աղպիսի համեմատապէս բարձր դիրք. ալո, ալի երէկ էր, երբ Նրեանի թեմական տեսչութեան պաշտօնումն էր մի անիորձ, զպրոցական ոչ մի հեղինակութիւն վաւելող, կատարելապէս անպարտ ունի Բենիկ վարդապետ, որի ալի պաշտօնին նշանակելը զարմանք պատճառեց Բենիկ վարդապետ, որի ալի պաշտօնին նշանակելը զարմանք պատճառեց Դանազողեանի մասին—որի վերակացու լինելը ճամարանում անշուշտ որ և է կարեւորութիւն ներկայացնել չէր կարող, եթէ ոչ միայն ալն, որ ալի պարոնը ճանաչած էր որպէս «Նոր Գար»-ի գործակալ!

Աղպիսի մարդիկ են, սակաւն, «Նոր-Գար»-ի թերթ տակ մտած պաշտօնեաները, և աղպիսի մի թերթ է «Նոր-Գար»-ը, որը պաշտօնեաների ալի և դոցա նմանների զօրքով անշուշտ ղեկավարել է ձգտում և աղի և եկեղեցի...:

Անցնենք սակաւն բուն խնդրին:

Հեռու մեզնից ալն միտքը, թէ մամուլը կոչւած է ուսանողներ երգելու զօրեղների առջև և կամ կուրդկուրուն դատաւիտումներ կարդալու, բայց ամբողջ երկու տարի շարունակ ուսանողներ երգել, ցնծութեան ձայներ արձակել, և լետու գալ ու լաւանել թէ ալի բոլորը անկեղծ չէին,

ալ զի պիտոմատութիւն էր—դա ծալրահեղ խաղառակութիւն է բարոյական կոչումն ճանաչող մամուլի համար: Իսկ նա, որ աչդպիսի խաղառակութիւն չանձն է առնում խոստովանելու—նա դորանով հրապարակօրէն խոստովանում է որ նա ոչ մի կոչում չունի:

Նոր-Դարը, իւր Բենիկներին ու Վանագօգեանների ցաւով բռնւած՝ չբաւականացաւ վերը լիչած և նոյա նման ծիծաղելի և միևնույն ժամանակ զարշահոտ լուրեր տպելով. նա աւելի ևս հեռուն գնաց. նա եկաւ փայտնելու, որ երկրէ տարի շարունակ իւր շռալած դովիստները կեղծ ու պատիր են եղել: Ահա թերթի խմբագրութեան խօսքերը.

«Եթէ մենք այս կամ այն հոգեորականին ընդունել ենք ովսաննաչներով, և կեցցէներով, աչդ արեւ ենք նրանց քաջալերելու, սիրտ տալու համար և ան երկիւղից՝ թէ կարող են աչդ հոգեորականները վնասել և իրանց կոչման բարձրութեան վրայ չմնալ» (Տես «Նոր-Դար», 23 սեպտ. № 171 առաջնորդող չօղւած «Թող մեզ հասկանան, մնացեալը հեշտ է», սիւնակ 3—4 ըդ.)

Հասկանում էք ընթերցող. Նոր-Դարը ովսաննաներ կարգաւով չի կամեցել տօնւած մարդու արժանիքը խոստովանել, ալ պիտի կոչութիւն է արել միայն. նա կեցցէներ է կանչել որպէս զի տօնախմբւածը իւր «կոչման բարձրութեան վրայ կանգնած մնալ», իւր ուղեղի մի անկիւնում, սակայն, պահելով իւր իսկական միտքը աչդ մարդու մասին, համարելով նորան «խաբեբա», «աւաղակներն պատժին արժանի», «կոմեդիանտ» և ալլն և ալլն: (Տես «Նոր-Դար» 21 սեպտ. № 169. «Չարիքը վերջ ունի», մի չօղւած որ իւր լպիրշութեամբ եղակի է մեր մամուլի տարեգրութիւնների մէջ):

Ահա անչէ հետաքրքրում թէ Նոր-Դարը ինչ կարծիք ունի այս ու այն անձի մասին. աչդ պատճառով և աւելորդ ենք համարում ամբողջութեամբ առաջ բերել աչդ թերթի «Չարիքը վերջ ունի» խորագրով չօղւածը. Բայց մենք չենք կարող անփութ գտնել դէպի մի թերթի գործելու եղանակը, դէպի նորա հրապարակախօսական պրակտիկան, որը դիպչում է ոչ թէ միայն անձերի պատւին, ալ և մամուլի պատւին, որի ներկայացուցիչներից մէկն է, սակայն, հանդիսանում Նոր-Դարը մեր երկրում: Մենք հասկանում ենք արդար զաչրոյթը, ուղղած վատ արարքների դէմ, զաչրոյթ, որի արտապատկութեան պատասխանատուութիւնը մարդ իւր վրայ է առնում. բայց մենք մամուլի կոչումին հակառակ ենք համարում մէկին խաբեբայ, աւաղակ, կոմեդիանտ համարելով հանդերձ՝ ասպարէզ վալ ու տարիներ շարունակ, գիտակցաբար, մտածւած կերպով ովսաննաներ և կեցցէներ գտնել նոյն աչն մարդու դիմաց, և քննող գալ ու արդարանալ աչդպիսի խաղառակ խաղաարարութեամբ թէ՛ մենք ովսաննաներով ու կեցցէներով կամեցել ենք աչդ անձին բարձր պահել և ալլն. աչն էլ աչդ-

պիսի չափաբարձութիւններ անել, երբ իւր հոգեհաւորած անձերը իրենց ցանկացած պաշտօնները չեն ստանում կամ ունեցածից զրկում են!

Եւ դեռ հրապարակախօսական անբարոյական պրակտիկայի հետ ծանօթացնելու համար աչդ թերթը փոտահայաւ հրաւիրել հասարակութիւնը ու դռնէն «Թող մեզ հասկանան, մնացեալը հեշտ է»! Դէ թող հասկանան, որ Նոր-Դարը պ ու լ ի տ ի կ ո ս ու լ թ ե ա մ բ տարիներ շարունակ կեղծել է, ստեր է ասել, խաբել է. թող հասկանան, որ նա իւր մտքի խորքումը մէկին կարող է խաբեբալ, աւաղակ, կոմեդիանտ ճանաչել, — բայց հրապարակի վրա նորան ուսանանքներ երգել, կեցցէներ դռնէն: Թող հասկանան նաեւ թէ երբ են Նոր-Դարի համար սկսում ջրի քանքաններ կտրել, և շինութիւնների կտուրներ քանդել, և դպրոցների մէջ խառնակութիւններ կատարել, երբ են մարդիկ սկսում Երկրի կարգ ու կանոններից զդուլ և վերջապէս երբ է երեկաւ սուրբը դառնում խաբեբալ, կոմեդիանտ!

Եւ իւր բացատրութիւնով նա, Նոր-Դարը, եկաւ ու խաւսեց որ կոմեդիանտը հէնց ինքն է որ կալ!

Լ ՈՒՍՈՒՆ Ի

ԴՐԱՄԱ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԳԵՂԱՐԻԵՍՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Սեպտեմբերի 10, կիրակի. Նորակազմ դերասանական ընկերությունը բաց արեց ներկալ թատրոնական սեզոնը «Ղարաբաղի աստղագետի» ներկալացումով: Այդ պիեսը համանուն լատինի վեպի փոխադրություն է, կատարած պ. Սարգսյանի և Վրուրի աշխատությունը: Պիեսի հիմքը պատմական մի անցք է, աչն է՝ Փանահ-խանի արշաւանքը և տիրապետությունները Ղարաբաղում: Պիեսի մէջ գերակշռում է վրական տարրը, իսկ գեղարւեստական ամբողջութեան մասին խօսք էլ չէ կարող լինել: Առաջին արարածում հանգուցը խճճւում է աչնպէս, որ կարծես պիտի սկսւի սիրոյ մի դրամա. մի կողմից՝ փեսաւացուի խոստմնադանցութիւնը, միւս կողմից՝ հարսնացուի եղբօր վիրաւորած պատիւը: Հետեւեալ արարածներում, սակաչն, մենք հարկադրած հրաժարում ենք մեր սպասածից: Վիրաւորած եղբայրը, որ աչնպիսի խրոխտութեամբ և սպառնալից հալեացքով երեսցել էր դրամալի սկզբում, ոտով ձեռքով կորչում է մինչև դրամալի վերջին տեսարանը, երբ նա կրկին պիտի լոյս ընկնէ և մի քանի հերոսական խօսքեր արտասանելուց չետո՛յ ինքն իրան քաջութեամբ սպանէ: Մեկիւք-Ջումշուդի սիրալին արկածները, ռոմանտիկական մանրամասնութիւններով զարդարւած, լուրջ հետաքրքրութիւն չեն ներկալացնում:

Բայց ահա բեմի վրալ ինքը Փանահ-խանը, մեկիւքների հաւաքողը իւր տիրապետական ծրագիրներով: Մեր հետաքրքրութիւնը անցնում է դորա կողմը. Մենք սպասում ենք թէ ինչ միջոցներով նա պիտի իրագործէ իւր նպատակը և որպիսի դիմադրութեան պիտի հանդիպէ մեկիւքների կողմից: Բայց նոյն իսկ ալդ տիրապետական ձգտումների հետ խառնւում է սիրոյ վեպը, և աչն հանդիսականը, որին չեն կարողանում չլացնել ոչ երգիչների դափն ու քամանչան, ոչ տղամարդու շոր հագած և հարեմից փախած զեղեցկուհին, ոչ խեղկատակի ծաղրածութիւնները, միշտ և միշտ մնում է անորոշ դրութեան մէջ և իրան հազիւ զսպում է, որ

չվերկենալ տեղիցը և չհարցնէ. «պարոններ, ինչ է նշանակում աչդ բոլորը? ինչ էք կամենում ասել, 'ի սէր Աստծու, ասացէք!»—Բալց մի կողմ թողնենք Փանահ-խանին էլ, մեղիքներին էլ, սիրահարներին էլ: Գրեթէ ամբողջ դրամալի ընթացքում չէ հեռանում մեր աչքից ինքը ասողագէտը, որը, ըստ երևութին, դրամալի հերոսը պիտի լինի:—Եթէ հերոսը դա է, պէտք է խոստովանենք, մեզ չէր հետաքրքրում նաև աչդ հերոսը: Չէ հետաքրքրում աչն պատճառով, որ նորա գործերը չեն հետևում մէկը միւսից, ինչպէս պիտի լինի աչդ դրամալի մէջ, այլ պատահական են: Նա ինքը չունի որոշ ձգտումներ, որոշ ծրագիր, աչ ուրիշների խորհրդատուն է: Նորա վիճակը նույնքան հետաքրքրական է սկզբում, որքան և վերջում: Նա կարող է լինել պիեսի գործող անձերից մէկը, բալց ոչ հերոսը: Այս ընդհանուր անհետաքրքրութեան պատճառն աչն է, որ պիեսի մէջ չկալ գլխաւոր գործողութիւն և գլխաւոր անձ, որոնց շուրջը պտտէին երկրորդական գործողութիւնները և անձերը: Պիեսը չունի իդէա: Դա նույն վէպըն է, դրամատիկական արտաքին ձև ստացած: Դրամա կարող էր ստեղծւել, եթէ հէնց առաջին արարւածում գործողութեան հանգուցը ուրիշ կերպ խճճւէր: Օրինակ, եթէ դուրս գալին մի կողմից մեղիքները իրանց ներքին երկպառակութիւններով, միւս կողմից Փանահ-խանը՝ իւր որոշ տիրապետական ծրագիրներով: Աչդ դէպքում ասողագէտը կամ աւելորդ կը լինէր, կամ կը կանգնէր ետին դժի վերայ:—Ինչ վերաբերում է պիեսի գործած տպաւորութեանը, կ'ասենք աչքանը, որ, եթէ մի առանձին զարթոթիւն նա չէր պատճառում, գոնէ կարելի էր լինում լսել առանց ձանձրանալու, չնորհիւ մի քանի շքեղ տեսարաններին:—

Գերակատարներից մի քանիորդ—պ. պ. Աբելեան, Ստեփանեան, Աւետեան, տ. Փառանձեմ—ինձ համար բոլորովին նոր էին: Բեմի վերայ նոցա տեսած չէի: Պ. Աբելեանի դերը, (մեղիք Բէգլար), զգրագրաբար, աչքան աննշան և փոքրիկ էր, որ ես չկարողացալ մի կարծիք կազմել նորա դերասանական ընդունակութիւնների մասին: Պարզ էր միայն, որ դա մի վարժած դերակատար է, որ գիտէ իրան պահել բեմի վրայ, ձախը եթէ ոչ աչքան բարձր, գոնէ ախորժելի, և կարողանում է մի մի առանձին վիճ ու ճնշող դիրք բռնել հակառակորդի վերաբերմամբ:—Միայն հետևեալ ներկայացումներին (մանաւանդ «Գոկտոր Շտոկմանի» մէջ) ես կարողացալ հասկանալ թէ ինչումն է նորա ուժը, ինչից պէտք է նա խուսափէ, և ինչն է կարօտ շտեկելու: Բալց աչդ մասին լետով:—պ. Ստեփանեանը (Փանահ-խան), երբ հէնց առաջին անգամ երևաց բեմի վերայ, հանդիսականների ուշադրութիւնը գրաւեց իւր ծանր քալւածքով, բեմական զուրեկան ձախով և պարզ առողջանութեամբ: Խօսելով «Փան-Բոգրի» մասին, ես միջոց կունենամ աւելի երկար կանգառնել նորա դերակատարութեան վերայ (Օլիւիէի դերում): Պրն. Տէր Դաւթեանը (ասողագէտը)

ըստ իւր սովորութեան չաճախ ծիծաղեցնում էր հանդիսականներին, մանաւանդ Նոցա, որոնք պատրաստ են քրքիջ կեցցէներ և ծափահարութիւններ բարձրացնել տեղի անտեղի, նոյն իսկ աջնալիսի վարկեաններում, երբ որ հանդիսականից պահանջում է միմիայն լուռ և լարած ուշադրութիւն. բայց նա ալդ չաջողեցնում էր ոչ աչնքան իւր ներկադրած անձի կոմիկական բնաւորութեամբ, որ նա չունէր, որքան իւր ձայնով, բացականչութիւններով և ծամածուլութիւններով:—Գալով պ. Վրուրի խաղին, ես պիտի ցաւ չախնեմ, որ նա չանձն էր առել կատարելու մի աչնալիսի դեր, որ բոլորովին դուրս է նորա ամպլուալից:—Սիրահարի դերը նորա ամպլուան չէ: Իսկ երբ նա իւր դերումն է, նորան չաջողում է ներկայացնել մի որոշ և ամբողջացրած տիպ կան դերասաններ, որոնք տարբեր բնաւորութիւն ունեցող տիպերը կարողանում են կատարել բաւական տանելի կերպով: Մինչդեռ պ. Վրուրը աչն դերասաններից է, որոնք իրանց ամպլուան կատարում են գերազանց, իսկ ամպլուալից դուրս նոցա խաղացածը անգոյն է լինում:

Ես լսել եմ, որ նա մեծ տիպականութեամբ կատարել է երբեմն Օրդոնի դերը («Տարտիֆի մէջ»). ես հաւատում եմ: Օրդոնը նորա ամպլուան է: Բաղդասար ազբարը—նորա ամպլուան է: Նորա ամպլուան է Փուրդէնը, Փորթ-Կանդէնը և ալլն: Անք դու ես ղժարանում ենք վերջնականապէս որոշել պ. Վրուրի ամպլուան: Առաջմ կասենք աչքան, որ նորան չաջողում է վերաստեղծել իսկական կոմիկական բնաւորութիւններ, մանաւանդ մարդու միամտութիւնը, ծիծաղալի ինքնավստահութիւնը և ալլն: Թատրոնը գրեթէ լի էր, եթէ չհաշենք յօթեակները: Առաջին ներկայացումը ահա արդէս անցաւ, հանդիսականները ցրեցին, որը զոհ, որը ղժգոհ: Հասարակութեան և բեմի մէջ ստեղծեց արդեօք մի որոշ հոգեկան կապ, մի բան, որ աչնքան հարկաւոր է թատրոնի ծաղկման համար? Ով գիտէ: Ալդ կ'երեւալ ապագայում: Վերջապէս մի կամ երկու ներկայացումը միթէ բաւական է, որպէս զի մի ալդալիսի կապ ստեղծէր? Խհարկէ ոչ: Թող ալժմ դերասանները բարեխղճաբար ուսումնասիրեն իրանց դերերը և հասարակութեան առջև բաց անեն բարձր գողափարներ և աղնիւ զգացմունքների աշխարհ, իսկ հասարակութիւնը իւր կողմից թող քաջալերէ ամենավեհ գեղարւեստի անձնէր երկրպագուներին:

Սեպտեմբ. 17. Կիրակի. Գոկտոր Շտոկման, — զրամա հինգ արարածով, Իրէնի: Երբ մարդ կարդում է ալդ պիեսը, կարծում է թէ բեմի վերաջ նա կարող է ձանձրալի լինել՝ չնորհալ երկար խօսակցութիւնների և, ըստ երեւոյթին, յակաւ գործողութիւնների: Բայց բեմի վերաջ նա ղործում է դեղեցիկ տպաւորութիւն, եթէ չասեմ նոյն իսկ բարձր տպաւորութիւն աչն պալմանով միայն, եթէ լաւ են կատարում դերերը:

Իրաման, եթէ կարելի է աչպէս ասել, հասարակական մի պիտէ է և աչքի է ընկնում իւր ինքնուրոյնութեամբ: Նիւթը ըստերևութիւն պրողպական է: Լողարանների խնդիր, լողարանների գլխաւոր բժիշկ, քաղաքապետը, տպարանատէր, խմբագրատուն և գրականագէտներ, ժողով և հրապարակական դասախօսութիւն—այս ամենի մէջ, կարելի է կարծել, չկալ մի որևէ բանաստեղծական տարր, և եթէ չկալ, ինչպէս նորան բանաստեղծական դարձնես? Բանն էլ հենց ալդ է: Հէնց նորա մէջ էլ կաջանում է գրամատուրգի տաղանդը, որ աչպիսի, ըստ երևութիւն, չոր ու ցամաք նիւթերից նա կարողացել է ստեղծել հասարակական հողի վերաջ դրած մի դրամա, որ, հետաքրքրական լինելով հանդերձ, դառնում է միննոյն ժամանակ և վերին աստիճանի սրտաշարժ վերջնութեւ արարւածում, աչն տեսարանում, երբ Շտոկմանը հանդիպում է ժողոված հասարակութեան սուրոյններին և հաջոյնանքին, փոխանակ խրախուսանքի. երբ նա չաւտարարւում է ժողովրդի թշնամի առանց ժողովրդի թշնամի լինելու, և մնում է գրեթէ մենակ կուռի դաշտում, իսկ նորա հանդէպ՝ քաղաքի երկչոտ և չողոքորթ բնակչութիւնը: Կուռը դրամաչի մէջ գաղափարի կուռ է, որ մղում է հերոսը: Կիրքը և զգացմունքները աչնքան դեր են կատարում աչստեղ, որքան դեր կարող են կատարել լուսաւորւած և կրթւած անձի մէջ: Գաղափարի կուռը—չատկանիշն է նորագոյն դրամաչի, ինչպէս կրքերի կուռիւր՝ Շեքսպերի ստեղծած դրամաչի բնորոշ չատկութիւնն է, որովհետև նորագոյն դրամաչի մէջ հերոսի գործողութիւնների գլխաւոր շարժառիթը աւելի գաղափարն է, քան թէ կիրքը (Ուրլէլ Ակոստա, Շտոկման), մինչդեռ Շեքսպերի դրամաչի մէջ շարժառիթը աւելի կիրքն է (Նախանձ, փառասիրութիւն և աչն): Գոկտոր Շտոկմանի հերոսը (իւրք Շտոկմանը) մի աչնիւ և իղէալական բնաւորութեան տէր բժիշկ է, ընտանիքի գորովագուծ հալ. և հասարակական գործիչ: Նորա եղբայրը քաղաքապետը է, ներկաչոյցիչ արիստոկրատական հասկացողութիւնների, հեղինակաւոր մի անձնաւորութիւն, որ ընդունակ է անխտիր միջոյններով իւր կողմը քաշելու բոլոր քաղաքայիններին՝ սկսած հրապարակախօսից մինչև հասարակութեան վերջին անդամը.— եղբայրը վեր է կենում եղբոր դէմ, եղէալները իրականութեան դէմ, և աչդ ընդհարումից առաջանում է մի զօրեղ դրամա: Բաւց հարկաւոր էր արդեօք գոկտոր Շտոկմանին համարեա թէ մեն մենակ թողնել մարտի դաշտում և նորա դէմ չարուցանել դրեթէ ամբողջ հասարակութիւնը? գուցէ աչդ հարկաւոր էր, որպէս զի հիւսթափւած հերոսը դրամաչի վերջում կարողանար արտասանել իւր դառն փորձերից դուրս բերած աչխարհաչացքը. վերջին խօսքը «Նա է ամենախմաստուն մարդը աչխարհիս երեսին, որ մնում է մենակ»:

Աչդ է արդեօք դրամաչի իղէան? Ուրեմն հեղինակը կամենում է ասել Շտոկմանի նման իղէալիստներին թէ «ահա ձեր մեծամասնութիւնը

առած բանը, որով դուք պարծենում էք, և այժմ խմացէք թէ ինչ է նշանակում մեծամասնութիւնը? Բայց ինչ որ էլ լինի զրաւալի միտքը, մեզ թուում է այնուամենայնիւ, որ հերոսը ալիքքան մենակ չէր մնալ: Եթէ ոչ մեծամասնութիւնը, հասարակութեան փոքրամասնութիւնը նորա կողմը կը լինէր, հէնց գոնէ միայն նոքա, որոնք գիտեն զոհել իրանց անձնական շահերը լոգուտ հասարակութեան և որոնց հափուժունքները չեն կարող փոխել ոչ զրկանք, ոչ սպառնալիք, ոչ երկիւղը: Նաեւ կը գտնուէին, որոնք կը կամենային լսել Շտեյնմանին և ոտուղել ճշմարիտը կամ օրալը:

Գալով դերակատարութեան, նախ և առաջ պ. Աբէլեանի մասին պիտի խօսենք:—Դիտոր Շտեյնմանի գերի մէջ նա լաւ է և հետաքրքրաւոր:—Առանց Լիֆէկտների ետեւից ընկնելու, ամենայն ճշտութեամբ և խելքով նա կատարեց իւր դերը: Նորա խաղի մէջ աչքի էր ընկնում ռեալականութիւնը: Շտեյնմանի բնավարութեան ողջ էութիւնը—նորա ազնուութիւնը, սիրած գործով հրապուրելը, հաշտական քնքով սէրը, անչաջողութիւններից առաջացած լուսահատութիւնը—այս բոլորը, առանց չափազանցութիւնների նա մեզ զգալ տուց: Նորա խաղի մէջ կան նաեւ մի քանի արժանաւորութիւններ, որոնց հանդիսականը չէ կարող չհաւանել: Այլ նորա բեմական քաղաքն է, մարմնին պատշաճ զիւք տալը՝ վաղիկանին համեմատ և աչքերի արտապատութիւնը: Ճիշդ է, նորա երեսը չարժան երես չէ, և դէմքի վերաջ դժւար կը լինէր կարգաւ հոգեկան շարժումները, եթէ աչքերը չլինէին: Բարկութիւն, զարմանք, արհամարհանք և աղպիսի զգացմունքներ նա կարողանում է ճշտութեամբ արտապատել իւր նաւածքի փոփոխութիւններով:

Գրամատիկական փոքր ի շատ, բարձր գերերի համար պ. Աբէլեանը անփոխարինելի ուժ է ներկայ խմբի մէջ: Մեծում է միայն ցանկանալ, որ նա աշխատէ հոգեբանական դժւար վաղիկանները աւելի խորը ըմբռնել և աւելի նորը ներկայացնել: Թո՛ղ մանաւանդ նա ուշ դարձնէ իւր արտասանութեան և ինտոնացիայի վերաջ: Այլ նորա դերակատարութեան թուլ կողմն է: Երբեմն, ինչպէս ես նկատեցի, նա չեշտում է ոչ ալն բառերը, որոնց վերաջ ընկնում է տրամաբանական չեշտը: Առողջանութիւնը պէտք է լինի պարզ և ճիշտ չեշտած: Բազի ալի, զգացմունքների փոփոխութեան համեմատ՝ նա չգիտէ փոփոխել իւր ձայնը: Իսկ դա շատ կարևոր է տպաւորութիւնը զօրեղ դարձնելու համար: Իմ ասածը ալն չէ միայն թէ, ըստ հարկի պահանջման, պէտք է բարձրացնել և իջեցնել ձայնը: ալի մասամբ նա անում է: Կս խօսում եմ ձայնի երաժշտականութեան մասին, ձայնի ոչ ալնքան քանակութեան, որքան որակութեան մասին: Առանց ձայնը բարձրացնելու, միայն եղանակի փոփոխութիւններով կարելի է տարբեր զգացմունքներ արտապատել՝ ուէր, արհամարհանք, հպարտութիւն: Լէստիզը շատ ճշմարիտ նկատում է, որ դերասանական

արեւստը բռնում է միջին տեղը պլաստիկական և տոնիկական արեւստների վերաբերմամբ: Գերատանը բեմի վերաջ մի արձան է, որ հոգի և շունչ է առնում, շարժւում և խօսում է, կամ երաժշտական և բանաստեղծական մի պատկեր, որ մարմնանում է և շօշափելի, ռելիեֆ կերպարանք է ստանում: Գերատանը պիտի իմանալ միմիկայի և ձայնի չտիւր և սահմանը, աչնպէս որ մէկը չգերակշռէ միւսից: Պաթետիկական վաւրկեաններում, երբ լուզած դերատանը արտատաւում է բառերը արագութեամբ և կրքով, պ. Աբէլեանը, դժբաղդարար, չկարողացաւ ցոյց տալ բաւականաչափ հմտութիւն: Աչպէս, օրինակ, չորրորդ արարածը, Շտոկմանի համար աչնպիսի մի ծանր տրագիկական վաւրկեան է, մանաւանդ աչն բոպէններին, երբ ժողովի առաջ նա թափում է իւր սրտի մէջ լցած բոյր բարկութիւնը և դառնութիւնները, որ դերատանը, չաջողութեամբ տանելով ալդ տեղը, կարող է թատրոնը սասանել և նոյն իսկ-արտատաւք առաջ բերել հանդիսականների աչքերում: Ալդ տեսարանը, սակաչն, բաւականին ազդու չէր պ. Աբէլեանի խաղի մէջ, և ազդու չէր չնորհիւ աչն թերութիւնների, որոնք վերաբերում են աւելի դիկցիային, քան շարժումներին, թէպէտ, գուցէ ձեռքերի շարժման ծաւրաչեղ արագութիւնը նոյնպէս վնասում էր ընդհանուր տպաւորութեանը: Դա աչնպիսի վաւրկեան էր, որ պահանջում էր աւելի տաք և բարձր ձայն, աւելի արագ և պարզ արտասանութիւն: Խոստովանում ենք, պ. Աբէլեանը աւելի քան ընդունակ և հետաքրքրական դերատան է: Գուցէ նա ունի դեռ շատ արժանաւորութիւններ, որ ես չեմ նկատել, և ուրիշ պակասութիւններ, որոնք խուսափել են իմ աչքից: Ալդ, ի հարկէ, կը լրացնենք ապագայում:

Գոկտոր Շտոկմանի հակառակորդը նորա եղբայրն է, հասարակական ականաւոր և դիրք ունեցող մի անձն, բժշկի հակապատկերը իւր բոլոր էութեամբ—աշխարհաչեացքով և բնաւորութեամբ—հոգով արխտոկրատ, արտաքուստ՝ հանդարտ և հպարտ, որովհետե գիտէ իւր ուժը և հեղինակոնք թուլ կողմերը և չէ քաշւում օգտւել ալդ թուլ կողմերից, երբ հարկաւոր է: Նորա դերը կատարում էր պ. Վրոլըրը, որ աշխատում էր ամեն կերպ ճշտութեամբ արտաչաւել նորա բնաւորութիւնը: Բալց չնաւած ալդ բանին, չէր չաջողւում բաւականաչափ ազդու և հետաքրքրական դարձնել նորան: Չպէտք է մոռանալ, որ նա գոկտոր Շտոկմանի հետ էր մաքառում, մի կորովի հոգու տէր և հաստատամիտ անձի հետ,—բալց աչնուամենաչնիւ չաղթութիւնը տանում է, ամենքին գրգռում նորա դէմ, նորա չղտերը խորտակում: Նա ներկայացուցիչ է մի աչնպիսի ուղղութեան, որի դէմ գոկտոր Շտոկմանի նման անձինք դարաւոր կռիւ են մղում և որոնց դեռ մինչե օրս չեն կարողացել չաղթել: Զօրեղի հակառակորդը և չաղթողը զօրեղը պիտի լինի: Պիեսի մէջ զրական ուժը կոււում է բացա-

սական ուժի դէմ: Ահա հէնց ալդ երկու ուղղութեան զօրեղ ներկայացուցիչները, երկու հակաւ արձանների պէս, պիտի դուրս պրծնէին բոլոր անձերի միջից: Պր. Վրոյլը պիտի շեշտէր նորա ուժը և մի մի աստիճանով բարձրացնէր նորա բոլոր չափութիւնները հանդիսականների առջև. արտաքինը պիտի լինէր աւելի ճնշող և ազդու, քաղաքը աւելի հաստատուն, ձայնը աւելի հանդարտ, բալց խորխոր, զլխի և ձեռքի շարժումները աւելի ծանրաշարժ, բալց խորախորհուրդ, սպառնալիքը աւելի անարկու, հեղձութիւնը աւելի կծու:

Պր. Ստեփանեանը «Ժողովրդական համբաւաբերի» հրատարակչի դերում վատ չէր, բալց կարող էր աւելի լաւ կատարել: Գորա համար հարկաւոր էր, որ թանձր գոցներով երեսար նորա փոփոխամտութիւնը՝ հանդամոնքների ճնշման ներքոյ:

Պր. Յարութիւնեանը, որ իւր մարմնին միանգամա՛ն անճոռնի դիրք էր տալիս բեմի վերաջ և չափը հանում էր իւր ծամածուլութիւններով, առաւել չափող կերպով շեշտեց ալդ փոփոխամտութիւնը: Առաջ Գովաոր Շտոկմանի հետ խօսելիս, մէջքը կռացնում էր, քաղցր ժպտում էր, քաղաքավարի էր: Հանգամանքները փոխւեցին, — նա մէջքը ուղղեց, դէմքը լրջացրեց, նոյն իսկ կոպիտ դարձաւ Շտոկմանի հետ: Պր. Յարութիւնեանը ալդ տիպը կարող է կոկել, և նորան ալդ կը չափողէ:

Պր. Տէր-Գաւթեանը լրագրի աշխատակցի դերում տիպական չէր: Նա, առհասարակ, շատ վարպետ է ծիծաղեցնելու մէջ, բալց թուլ է և անգոր, երբ գործը վերաբերում է բարձր գեղարուեստին:

Հասարակութիւնը աւելի սլակաւ էր, քան անցեալ անգամ:

Սեպտեմբերի 21, հինգշաբթի. Բաղդասար աղբար — կոմեդիա ելեք արարածով, Պարոնեանի: Նրը կէս տարի առաջ, առաջին անգամ ներկայացրին «Բաղդասար աղբարը», հասարակութիւնը շատ ցոհ մնաց, լրբադրական քննադատութիւնը մեծ գովասանքով խօսեց պիեսի, մանաւանդ պ. Վրոյլի խաղի մասին: Խրախուսած ալդպիսի վերաբերութիւնից, խումբը վստահացաւ, դեռ ևս տարին չ'անցած, երրորդ անգամ ներկայացնել ալդ կոմեդիան: Եւ ահա թատրոնը դատարկ: Վարելի էր գուշակել, որ դերասանները սրտով չափտի խաղան: Ալդպէս էլ եղաւ: Ներկայացման տպաւորութիւնը ալն չէր, ինչ առաջին անգամ, ալ փոքր ինչ աւելի թուլ էր:

Պիեսի չաջողութիւնը, սակաւն, կախւած էր պ. Վրոյլի խաղից, և նա, պարզ երևում էր, որ նախկին եռանդով չէր կատարում դերը, բալց դարձեալ ալնքան ճիշտ և որոշ էր. ներկայացնում Բաղդասար աղբոր տիպը, որ սրտով չխաղալը շատ չէր վեասում գործած տպաւորութեանը: Նորա խաղը խելացի էր և մտածած, շարժումները՝ տեղին: Չափազանցութիւնները — հեղինակի չափազանցութիւններն են: Պարոնեանի ալդ տիպը շատ չաջողած տիպ է: Պր. Վրոյլը նորից ապացուցեց, որ կարող է հե-

տաքրքրական լինել բեմի վերայ, ճշմարիտ զարճութիւն պատճառել, կենդանի տիպեր վերաստեղծել, եթէ միայն դերը իւր ամպլուան է:

(Բաղդասար աղբարը) — գեղարւեստական մի ամբողջութիւն է, իբր կոմեդիա, և կարծում ենք, շուտ չի հնանալ, միայն թէ բեմի վերայ չաճախ դուրս բերելով համը չհանեն: Հերոսի տիպը իրական է և շատ չաճախ կրկնում է նա: Բալց իւր վերայ մեծ համարում ունեցող աղ բաղտիկին ուղղակի վիմարացնում են. — նա տաքանում է, բարկանում է, բալց ոչինչ չէ դուրս գալիս բարկանալուց: Նա սպառնում է, — ծիծաղում են նորա սպառնալիքի վերայ: Նա արդար է, — մեղաւոր է դուրս գալիս: Բալց որքան մեծ է ալտեղ, ինչպէս առհասարակ, Պարոնեանի երկասիրութիւնների մէջ Մոլիերի աղբեցութիւնը Ոչ միայն Բաղդասար աղբոր տիպը, այլ և պիեսի շատ մանրամասնութիւնները լինեցնում են Մոլիերի կոմեդիաները: Հանդիսականը, աղ պիեսի ներկայացմանը, ակամաջ վիշտ է Մոլիերին: Իրաւաբանը, որ անց ու դարձ անելով բարկանում է մի անձի վերայ, որ բացակայ է բեմից, որ ցուց է տալիս թէ գիտէ մի քանի լեզուներ, վիշտ է Պանկրասին («Բռնի ամուսնութեան մէջ»): Բաղդասար աղբարը, որ մի առանձին լրջութեամբ սովորում է իւր դասը դատաւորների առաջ ասելու համար, վիշտանում է Ժուրգէնին (*Le bourgeois gentilhomme*), որ նույնպիսի լրջութեամբ սովորում է իւր դասը ուսուցչի առաջ: Իսկ Բաղդասար աղբարը իւր ամբողջ բնաւորութեամբ և գործելով վիշտանում է նամա՛ւաւանդ Ժորժ-Վանդէնին: Սա պսակել է մի ալն պիսի աղջկաչ հետ, որ բոլորովին իրան սաղ չէ գալիս. տարբեր կենցաղի, տարբեր հասկացողութիւնների տէր ամուսիններ են դուքա: Նույնը արել է և Բաղդասար աղբարը: Ժորժ-Վանդէնը փոշմանել է ընտրութեան վերայ, — փոշմանել է և Բաղդասար աղբարը: Համեմատութիւնը գեռ աւելի հեռուն է գնում: Ժորժ-Վանդէնի կինը անհաւատարիմ է ամուսնուն, Բաղդասար աղբոր կինն էլ անհաւատարիմ է ամուսնուն, Բաղդասար աղբոր կինն էլ անհաւատարիմ է: Ժորժ-Վանդէնը միշտ հետամուտ է կնոջ արարքին, արդարութիւն է որոնում, տաքանում, սպառնում է, վերջ ի վերջոյ ինքն է մեղաւոր դուրս գալիս, մինչև անգամ ստիպւում են նորան նեղութիւն խնդրել կնոջից: Միթէ նույն քաները չէ անում նաև Բաղդասար աղբարը? Բալց բանն այն է, որ մեր տաղանդաւոր երգիծաբանը, առնելով Մոլիերից աղ տիպը, հաւացրել է նորան, ինչպէս ինքը Մոլիերը, վերցնելով Պլաւտոսից Հարպագոնի տիպը (*Յւկլիոն*)՝ Փրանսիական ոգի է ներշնչել ժլատի բնասիրութեան, հասկացողութիւնների և նիստ ու կացի մէջ:

Նույն երեկոյեան ներկայացրին և մի փոքրիկ («Ճարտահատեալ դերասան»), որի հեղինակը ինձ չալտնի չէ, որովհետև ուփիշի վերայ չիշաճ է միայն թարգմանչի անունը, մի անարժան պիես, որը այլ բան չէ,

եթէ ոչ մի հրապարակական զրպարտութիւն թատրոնատէրների վերայ՝ Վոդելիկի սկիզբը ձանձրալի է, վերջումը նա փոքր ինչ կենդանանում է:

Սեպտեմբ. 28, հինգշաբթի: Ժ ա ն-Բ ո գ ռ ի, զրամա չորս արարածով, հեղ. Վաքրի'ի ¹⁾, թարգմանութիւն Ֆէլիքսի—Այս պիեսը ներկայացուած էր առաջին անգամ մեր բեմի վերայ, ուրեմն կարելի էր կարծել, որ թատրոնը լիքը կը լինի: Գոնէ մեր հասարակութեան ինտելլիգենտ մասը, մտածում էի ես, կը հետաքրքրւի այդ թատրոնական նորութեամբ: Բայց զարմանալի բան! թատրոնը դարձեալ դատարկ, ինչպէս նախորդ ներկայացմանը, հանդիսականներ թիւը գուցէ փոքր ինչ աւելի: Ասեմ անկեղծօրէն, իբր թատրոնի ծաղկման նախանձախնդիր անձերից մէկը, ես վշտացայ, տեսնելով վերեւ ամալի օթեակները, իսկ ներքեւ՝ դատարկ աթոռները: Ինչ է պատճառը այս ողորմելի ամաչութեան? Հարցնում եմ ինքս ինձ. ուր են այս երեկոյ մեր ուսուցիչները, վարժուհիները, իրաւաբանները, բժիշկները? Միթէ աւելի կարեւոր գործերը հոգա հարկադրեցին, որ իրանց տներում նստեն? Եւ չեմ խօսում մեր ունեւոր դասակարգի մասին—Աստուած նորա հետ! Բայց ինչ է չինում այս բոլորին մեր ինտելլիգենցիան—ահա մի հարց, որ մնում է անպատասխան: Ես դիմում եմ մեր բնական պատկառելի գործիչներից մէկին և հարցնում եմ. «ասացէ՛ք, խնդրեմ, ինչ է պատճառը, որ մեր հասարակութիւնը այս պիսի մի ամաչութեան է մատնել մեր այս թատրոնը?»

«Պատճառը—հասարակութեան անտարբերութիւնն է դէպի թատրոնը: Առաջին կարգերի գինը թող իշեցնեն մինչև 25 կ., մեր թատրոնը կրկին աչապէս է լինելու»: Անտարբերութիւն?... Ուրեմն բոլոր մեզքը ընկնում է հասարակութեան վերաւ, իսկ գերատանները մաքուր են և անմեղ? Ով գիտէ: Նա ինձ լաւտեց իւր դառը փորձերի եղրակացութիւնը: Իսկ ես ինչ կարող եմ ասել? Ինձ մնում է միայն սպասել և դիտել թէ ով է մեղաւոր, և ով արդար—արդեօք հասարակութիւնը, որ անտարբեր է, թէ դերասանները, որ չեն գոհացնում հասարակութեանը? Գուցէ երկու կողմն էլ մեղաւոր է: Գուցէ հէնց ինքը ժամանակն է մեղաւոր, որ բարեւաջող պայմաններ չէ ներկայացնում աչժմ թատրոնի ծաղկման համար?...

Աչապէս թէ աչնպէս, ես կարծում եմ, որ ոչ ոք չզղջաց, որ այդ երեկոյ մի քանի ժամ անցկացրեց թատրոնում: Ընդհակառակը, երևում էր, որ հանդիսականները ուրախ են, որ կէկէ են, որովհետեւ, որքան պիես վերնապիւրը անհետաքրքրական էր, այնքան աւելի հետաքրքրական էր նորա բովանդակութիւնը: «Ժան-Բոդրին» սիրոյ դրամա է, ոչ այն դրամաներից, որոնց բոլոր հետաքրքրութիւնը կապանում է սիրալին արկածների մէջ, ոչ. այլ դրա հետաքրքրութիւնը կենդրոնացած էր նուրբ

¹⁾ Օգիտա Վաքրի'ի մասին տես մահաց. Մուրճ 1895 № 2, էջ 352:

հոգեբանութեամբ նկարագրած սիրոյ տանջանքների մէջ:

Դրամատիկական դրութիւնը ալստեղ առաջ են բերել երկու հանդամանքներ — մի կողմից սէրը, միւս կողմից չերախտիք և պարտաճանաչութիւն: Գործողութիւնների ընթացքը պիեսի մէջ հետեւեալն է: հայրը (Բրիւէլ) պիտի մնանկանանալ, աղջիկը (օր. Նիւսի) համաձայնում է կին դառնալ մի հասակն առած հարուստ, ազնիւ և խելօք մարդու (Ժան-Բողրին), որը պարտաւորացրել էր նորա հօրը, ազատելով նորան սնանկութիւնից: Աղջիկը չարգում է ալդ պարոնին, բայց չէ սիրում, սրովհետեւ նա սիրում է մի երիտասարդ բժշկի (Օլիւիէ): Նա կարծում է թէ կարող էր զսպել իւր սրտում սիրոյ զգացմունքը: Բայց շուտով ալդ սէրը դառնալով տանջանքով արթնանում է նորա մէջ:

Այն երիտասարդը, որին սիրում է օրիորդը, նոյնպէս երախտագիտութեան զգացմունքով է կապւած Ժան-Բողրին հետ: Բանից զուրա է գալիս, որ նա Ժան Բողրինն է պարտական իւր կրթութիւնը, դաստիարակութիւնը և զիրքը: Առաջ նա փողոցի տղայ էր, ալժմ Ժան-Բողրին նորան մարդ է դարձրել: Սիրոյ ուժը, սակաւն, խլացնում է նորա մէջ երախտագիտութեան զգացմունքը: Նա զնում է աչն ճանապարհով, որ ցոյց է տալիս նորան բուռն սէրը: Ալդ ճանապարհի վերաջ նա երես առ երես հանգիպում է իւր բարեբարին: Գաղտնիքը բացւում է, կասկածը փարատւում, մեղապարտը խոստովանում: Ժան-Բողրին համար ստեղծւում է հոգեկան մի ծանր վաւրկեան, մի անհուն տանջանք: Նա լիչեցնում է երիտասարդին իւր արած բարութիւնները: Ամօթի զգացմունքից զարթնում է Օլիւիէի պարտաճանաչութիւնը, նա խոստովանում է իւր մեղքը և հրաժարւում է սիրոյ առարկայից: Բայց Ժան-Բողրին խելօք է և գիտէ, որ մարդ չէ կարող իրան զօռով սիրել տալ—*васильи милу не будешь*: Նա միևնույն ժամանակ աչնքան աղնիւ է, որ չէ կամենում տիրանալ աչն օրիորդին, որի սրտի մէջ իւր սիրոյ արձագանքը չէ լսում: Կնչպէս է վերջանում սիրոյ ալդ դրաման, չգիտենք, հեղինակը մեզ չէ պատասխանում: Ժան-Բողրին հրաժարւում է սիրոյ առարկայից և առաջարկում է օրիորդին, իբր փեսացուի՝ երիտասարդ բժշկին: Դա հեզնութիւն չէ, այլ դժուար դրութիւնից միակ ելք: Օլիւիէն և Նիւսին, միւս կողմից, ոչ մի կերպ չեն համաձայնում երախտամոռաց լինել: Ալստեղ վերջանում է գրաման: Ոչ խրատ, ոչ տենդենցիա: Բայց պարզ է ալստեղ հեղինակի նպատակը — ներկա աշացնել սիրոյ և երախտագիտութեան զգացմունքները աչն ցանցը, որի մէջ ընկել են երեք աղնիւ սրտեր և տանջւում են աչն վերջ: Նստում եմ աչն վերջ, որովհետեւ ալդ տանջանքները չեն վերջանում գրամալի մէջ ալ նոքա կարծես երկար, դեռ շատ երկար պիտի տևեն:

Դրամալի բոլոր ծանրութիւնը ընկնում էր օր. Ախաչեանի (Նիւսի),

պ. Աբէլեանի (Ժան-Բողրի) և (Օլիւիէի) պ. Ստեփանեանի վերադ. Եւ առաջին անգամն էի տեսնում օր. Ախաշեանին: Այդ իսկ պատճառով եւ չեմ կարող որոշ ասել թէ ինչու մէ Կալանում նորա բեմական ոլժը կամ թուրութիւնը: Այսքանը միայն պարզ էր, որ նա կարողացել էր ըմբռնել իւր նուրբ—հոգեբանական և դժւար դերը: Լիւսին սիրում է Օլիւիէին և աշխատում է մինչև վերջ թագցնել այդ զգացմունքը: Նա միայն չարգում է Ժան-Բողրիին, բայց պէտք է զգուշ լինի, որ նա չիմանալ թէ սիրած չէ: Նա իւր ապագայ բաղդաւորութիւնը զոհում է հօր պատիւը վերականգնելու: Այդ զոհաբերութիւնը զգալի է նորա համար, բայց պէտք է ցուց տալ, որ իբր թէ նորա կողմից ոչ մի զոհաբերութիւն: Նա իւր սրտի մէջ սիրում է և տանջում, բայց ոչ ոքի չէ կամենում լաւտնել իւր զգացմունքները: Որքան խոր է նորա սէրը, կրկնապատիկ աւելի զարգացած է նորա մէջ երախտագիտական զգացմունքը: Այս բոլորը ընդհանրապէս ճիշտ և զգացմունքով արտայայտեց օր. Ախաշեանը: Նորա սխալները նկատելի էին աւելի մանրամասնութիւնների մէջ: Նա շատ էր մոռալի, մանաւանդ առաջին արարածի մէջ: Նա այդպէս չպէտք է լինէր: Նա սիրում է Օլիւիէին, ուրեմն երջանիկ է, ուրեմն ուրախ պիտի լինի, քանի որ դեռ եւս դրամա չի ստեղծւել, և Օլիւիէի հետ միանալը դեռ անհնարին բան չէ: Նորա տանջանքը, նորա ողբերգական դրութիւնը դրամալի վերջում աւելի եւս զգալի կը լինէր հանդիսականների համար, եթէ հանդիսականները պարզ տեսնէին նորա տանջանքների աստիճանաբար աճելը: Ինչ վերաբերում է լեզւին և առողջանութեան, եւս պէտք է խստովանեմ, որ իմ ակա՛ջին քաղցր էր հնչում հայերէնը շնորհալի դերասանուհու բերնից, չնայել: Դաւառաբարբառի ազդեցութեանը: Մեր լեզուն, շնորհիւ մի քանի անուշ հնչիւնների և բաղաձայնների կուտակման, երբեմն շատ կոպիտ և տղիւ է հնչում: Հալի ձայակը, սակայն, նրբանայով պիտի նըրբացնէ և լեզուն՝ թէ ձևական թէ առողջանութեան կողմից:

Պր. Աբէլեանը արտաքուստ քառասուն և վեց տարեկանի տպաւորութիւն չէր գործում, մազերը սև էին, դէմքը թարմ երիտասարդի դէմք: Նա թւում էր աւելի մի 30 տարեկան երիտասարդ: Նորա դերի մէջ հասակը առանձին նշանակութիւն ունի, որովհետեւ այլապէս անհասկանալի է, թէ ինչպէս Լիւսին նման խելացի և լրջամիտ աղջիկը, Ժան-Բողրիին նման մարդուն թողած, կարողացել է սիրել Օլիւիէին, որը աւելի արժանի չէ նորան, քան բարերարը: Սրբ հասակը կարևոր դեր է կատարում պիեսի մէջ, դերասանը այդ հանգամանքը անպատճառ աչքի առաջ պէտք է ունենալ իւր գրիմը պատրաստելիս: Ինչ վերաբերում է Ժան-Բողրիին բնաւորութեանը, պ. Աբէլեանին չաջողւեց այդ ճշգրիտ ներկայացնել, պարզ էր, որ մեր առջև կանգնած է մի խիւօք, ազնիւ և շատ բարի մարդ: Այդ դերի ամենապաթետիկական տեղը վերջին արարածի աչն տեսարանն

է, երբ Ժան-Բոդրիի կնոջ (Լիւսի) և Օլիւիէի սէրը չափոնում է, և նա կշտամբանքով չանդրմանում է երկտասարդին, թէ նա խլեց իրանից իւր հոգու ամենաթանկագին գանձը: Այստեղ երևաց պ. Աբելեանի նույն անկարողութիւնը, որ էս նկատել եմ Շտովմանի գերի մէջ՝ չորրորդ արարւածում: Զ չրոյթը և վշտացած հոգու դառնութիւնը ալդ բոպէին նա կատարեալ կերպով չարտաչափեց:

Նորորդ պատասխանատու դերը (Օլիւիէ) կատարում էր պ. Ստեփանեանը: Իւր դերը նա չփչացրեց, բայց մի առանձին զարճութիւն էլ չպատճառեց իւր դերակատարութեամբ: Նա միևնույն ժամանակ ցոյց տուց իւր դերասանական որակիւթիւնը: Ալժմ կարելի է ստել, որ նա, իբր դերասան, ունի մի քանի արժանաւորութիւններ, որոնք կարող են զարգանալ ապագայում, և մի քանի պակասութիւններ, որոնցից կարելի է մասամբ ազատել: Նա ունի բնական գուրեկան ճաշն, որի բարձրութեան չափը, սակայն, ինձ դեռ չափնի չէ: Զաչնի մէջ կալ զգացմունք: Նա գիտէ պարզ և չեչտով արտասանել բառերը: Բայց նա զուրկ է միմիկայից, շարժումների կատարեալ ազգաստութիւն: Կոտում եմ շարժումներ ոչ միայն ձեռքերի, ալ և դէմքի: Յետոյ բեմի վերալ իրան վատ է պահում: Նրբեմն անց ու դարձ է անում աչքքան միօրինակ կերպով որ թուլանում է աչք խօսքերի ազդեցութիւնը, որ նա արտասանում է ալդ միջոցին: Առաջին արարւածում նա եկաւ բեմ, նստեց աթոռի վերալ աչքքան պինդ, որ կարծես վերջնալու միտք չունէր, աչքերը չառեց առաստաղի մի կէտին, բիւրբը թուցրեց զգալ ճակատը, և սկսեց խօսել աչքերի կոպերը արադ-արադ ճպճպացնելով, որոնց հետ միասին անախորժ կերպով շարժում էր և երեսի կաշին: Նթէ նորա բոլոր պակասութիւններ ի մի ամփոփեմ, ես նոցա կանւանեմ միօրինակութիւն: Միօրինակութիւն նույն իսկ զգացմունքների արտաչափութեան մէջ: Գրամալի մէջ առաջին անգամ երեալուց սկսած մինչև վերջին երեալթը նա մնաց նույն մուլ ուրականը: Կարծեմ, նա ոչ մի անգամ չժպտաց: Օլիւիէն աւելի չէ տանջւում, քան օր. Լիւսին, ալ ընդհակառակը, աւելի պակաս: Լիւսին զոհաբերութիւն է անում, ապագալ բաղդաւորութեան առաջը փակում է, Ժան-Բոդրիի հետ ամուսնանալով, տանջանքով ետ է մղում իրանից իւր սիրոյ առարկալին, իսկ Օլիւիէն—ոչ մի զոհաբերութիւն չէ անում, ապագան բաց է նուա առաջ, նա ազատ է իւր ընտրութիւնների մէջ, երախտամոռաց է և հետամուտ իւր սիրոյ առարկալին: Միթէ Օլիւիէի համար ուրախութեան վալրկեաններ չկալին զրամալի մէջ գոն, սկզբում? Նթէ ոչ, ուրեմն միթէ բոլոր վալրկեանները աչքքան հոգեառն էին և անտանելի, որ գոնէ փոփոխութեան համար մի ուրախ աչքով նալիլ չկարողանար իւր սիրած օրիորդի երեսին? Նա մարդ է, իսկ մարդուն չատուկ է նաչքքան ուրախանալը, որքան ախրելը: Լիւր

Թագ աւորը՝ որի հոգու վիշտը մեծ աստիճանի է հասնում, դարձեալ հնա-
րաւոր է համարում կառակներ անել իւր ծաղրածուի հետ և ժպտալ, եթէ
ոչ սրտանց, գոնէ աջւպէս, ինչպէս արեգակը երբեմն նաչում է փոթոր-
կալից ամպերի միջից: Ահ, ինչ չէ տալիս հեղինակը, պէտք է լրացնէ
ինքը գերասանը: Որքան անհուն լինի վիշտը, մարդ դարձեալ կարող է
ժպտալու վաչրկեան ունենալ: Որքան մեծ լինի ուրախութիւնը, մարդ
դարձեալ տրամելու լոպէսներ կունենալ: Բեմի վերալ պէտք է երևան մար-
դիկ իրանց հոգու բոլոր շարժումներով, բաւց ոչ անդրգերեզմանական
ուրականներ:

Համեմատաբար աւելի երկրորդական դեր էր Լիւսիի հօր դերը (Բրիւ-
էլ—պ. Վրոյր), Նոյա վիճակը, ճիշտ է, ազդում է աղջկալ դրութեան
վերալ, բայց նա ինքը ներգործական դեր չէ կատարում դրամալի ընթաց-
քում: Ինձ թւում է, որ հէնց իրան պիեսի մէջ բաւականին անգոյն է
դորա տիպը: Եթէ ալոպէս է, թող պ. Վրոյրը, երբ երկրորդ անգամ
դուրս գալու լինի Նոյն դերի մէջ, ինքը աշխատէ աւելի որոշ գծերով
ներկայացնել նորւն. եթէ հնարաւոր է, աւելի տիպական դարձնել,—մի
բան, որի համար նա ընդունակութեան ապացուցներ տւած է:

Տ. Ժեվրէի դերում վատ չէր տիկ. Փառանձէմը: Բայց կարծում եմ,
տիկնոջ աւելի լաջողում է ջահել հասակ և աշխուժ, ուրախ բնաւորու-
թիւններ, քան թէ հասակն առած և ծանր կ. նանց դերեր: Սակայն նորա
մասին, ինչպէս և միւս երկրորդական և երրորդական դերակատարների
մասին, դժբաղդաբար, ես միջոց չունեմ ներկալ գէպքում երկար խօսե-
լու: Ես սպասում եմ չարմար առիթի, որ նոցա գերասանական ընդու-
նակութիւնների վերալ աւելի երկար կանգ առնեմ: Նոցանից մի քանիսը
դեռ շատ նոր են և չառաջադիմելու չոյսեր են տալիս:

«Փան-Բողրիլից» լեռ ներկայացրին մի փղզվիլ «Վարձու կին»—Ալեք-
սանդրովի, Թարգմ պ. Վրոյրի: Այդ փղզվիլի մէջ շատ լաւ էր պ. Տէր-
Դաւթեանը (Ակ. կի Ակակիեիչի դերում):

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՓՈՒԱՐԷՆ միացնելու ամառուալ (լուրիս—օգոստոսի) համաբները, որոնք հալկական խնդրին վերաբերեալ նիւթերի մեծ կուտակման պատճառով՝ ալս տարի ջոկ-ջոկ հրատարակեցին, ամէն մէկը համապատասխան ամսուս, — «Մուրճ»-ի ներկալ սեպտեմբերի և հոկտեմբերի համարներն ենք միացնում, սեպտեմբերի համարը նույն ամսում դուրս բերելու անհնարաւոր եղած լինելուն համար:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ մասին Կ. Պոլսում, Տրապիզոնում և ալ տեղերում, Մուրճի ներկալ համարում հաղորդածներից դուրս՝ կ'աշխատենք ներկալացնել մի ամիսի և մանրամասն տեղեկադիր Մուրճի լաջորդ համարում:

ՎԱՐԱԳԱՇՆԱՆԻ «Բնական Հալոց պատմութեան» քննութիւնը, որ ձեռնարկել է Գալուստ Տէր-Մկրտչեանց Մուրճի համար և որից լուստեսաւ ալն մասը որ վերաբերում է Պատմութեան առաջին հատորին (տես Մուրճ № 6 և 7), կ'ունենալ իւր շարունակութիւնները՝ որոնք կը վերաբերեն Գարադաշեանի պատմութեան արդէն լուստեսած Բ և Գ հատորներին: Թէ երբ կ'աւարտուի լոզածը և կը տպուի շարունակութիւնը, ալդ կ'ախւած է գլխաւորապէս ալն դեռ ևս չաւարտած հետազոտութիւններից, որ անում է մեր գլխական աշխատակիցը Փաւստոս Բլազանդացու վրալ: Հեղինակի ենթադրութեամբ լոզածը պատրաստ կը լինի ալս տարւալ վերջը կամ դալ տարւալ սկզբներին:

ԷԶՄԻԱՄՆԻՅ, վեհափառ Կաթողիկոսի դիւանապետ Նշանակւած է Նահապետ վարդ. Նահապետեան՝ ի տեղի ալդ պաշտօնից արձակւած Յուսիկ վարդ. Զոհրաբեանի:

ԽՈՐԷՆ ԵՊ. ՍՏԵՓԱՆԷ, որ Աստրախանի թեմակալ առաջնորդի պաշտօնակատար էր, սեպտեմբերի 3-ին հրաժեշտ տւեց հասարակութեանը, ուղեորելով իւր նոր պաշտօնատեղին՝ Ղրիմի Ս. Խաչ վանքը: Խորէն եպիսկոպոսը կարճ միջոցում եռանդոտ գործունէութիւն ցոյց տւեց Աստրախանի թեմում, ինչպէս և սպասելի էր նորանից:

ԱԼԵԲՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՅԱԶՈՐԴ նշանակած է Բագրատ վարդապետ Թաւա-
քալեան, Սինողի անգամ նշանակւած Աշտ վարդապետ Շախեանցի
տեղը: Բագրատ վարդապետը աւելի առաջ եղած է վանահայր Դե-
րիկի վանքի Պարսկաստանում:

ՉԵՐԲԷԶՆԵՐԻ ԳԱՂԹ ՌՈՒՍԻԱՅԻՅ ԹԻՒՐԻԱ: Մենք արդէն մի անգամ
ծանուցինք որ Կուբանի սահմանցից (Հիւս Կովկաս) մահմեդական-
ներից շատ հոգի խնդրեցներ են տւած Թուրքիա գաղթելու թույ-
տուութեան համար (տես «Մուրճ» № 7, էջ 1038): Այժմ արդ գաղթը
արդէն կատարւել է: Գաղթողները մինչ 1000 տուն են, ենթադրա-
բար մօտ 4000 հոգի: Տաճկա-հալ թերթերում կարդում ենք, որ դո-
ցանից 1232 հոգի արդէն հասել են Թուրքիա, ուր կառավարու-
թիւնը նոցա Խզմիտի ճամբով Էնկիւրի ղրկեց՝ Պողազըան և Մատէն
զաւառակներում նոցա հաստատելու համար:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՏՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ: Կառավարիչ Սեմաուին տւած
բարձրագոյն հրամանով լաւտարարւած է, որ Ն. Մ. Թագուհի Կալս-
րուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնայի հովանաւորութեան ներքոյ հիմն-
ւում է առանձին հոգաբարձութիւն աշխատասիրութեան տների և
բանւորական տների համար: Հոգաբարձութիւն հաստատելու նպա-
տակն է նպաստել տալ կալսրութեան մէջ արդէն դոցութիւն ունե-
ցող աչք տեսակ հիմնարկութիւններին և աշխատել նոցա թիւը շա-
տացնել:

ՖՐԱՆՅԻՍԿ ՍԿՈՒԴԱՄՈՐ, որ Լոնդոնի չալտնի Դէյլի-ն իւր օրաթերթի
թղթակիցն էր Տաճկա Հալաստանում, սեպտ. 24-ին ժամանեց Թիֆ-
լիս: Վերջին ութ ամիսները նա Երզնքում էր: Ֆ. Սկուդամորը 40
տարեկան է, խօսում է նաև ֆրանսերէն և տաճկերէն: Ռուս-տաճ-
կական պատերազմից առաջ, նաև աչք պատերազմի ժամանակ Բոլգա-
րիայում էր. 1882-ին Եգիպտոսում էր, Արաբի փաշայի ապստամբու-
թեան ժամանակ և երկու անգամ մասնակցել է սուղանեան արշա-
ւանքում: Այժմ նա վերադառնում է Անգլիա, ուր մտադիր է մի
շարք դասախօսութիւններ անել տաճկա-հալերի ղրութեան մասին:

ԴԱՅԱԷԼ ԷՐԻՍՏՈՎԻ ՅՕԲԵԼԵԱՆ, Ներկայ հոկտեմբեր ամսի 22-ին տօն-
ւելու է վրաց գրող իշխ. Ռաֆ. Էրիստովի զբական գործունէութեան
50-ամեակը: Յօբելէական մասնաժողովը որոշած է աչք առնիթով
աչք օրը մաղթանք կատարել տալ, հանդիսաւոր տօն կատարել վրաց
աղնւականութեան թատրոնի դահլիճում, ուր յօբելէարը կ'ընդունի
շնորհաւորութիւնները. երեկոյեան նորա պատւին ներկայացումն
կը տրւի. կը կազմւի ֆոնդ նորա չիշատակին:

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՅ: Պետերբուրգի Բեստուժեան կուրսերում,
որ կանանց բարձրագոյն դպրոցն է Ռուսաստանում, խնդրատուներին

չատութեան պատճառով ներկայ տարում ուսանողուհիների թիւը որոշւած է 660 հոգի: Այդ թւի մէջ 220 հոգի ներկայ սեպտեմբերին նոր ընդունւածներն են (350 խնդրատուներէ): Այս տարի աւելանում է աւանդող առարկաների վրայ բուսաբանութիւնը: Կուրսերի նախկին ուսանողուհիներից, կուրսերի վերատեսչէ բարեխօսութեամբ ընդունւած են իւր ասիատէնտներ (պրոֆեսորների օգնականներ) 1893 և 1894 թ. աւարտածներից, երկուսը քիմիայի և մէկը լատիներէնի համար:

«ՀԱՅՐԵՆԻԹ»-Ի ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ վարժուհիներ պատրաստելու համար Պոլսի «Հայրենիք» օրաթերթը միտք էր չղացած իւր կողմից չորս աղջիկ զրկել Ֆրանսիայի Նանսի քաղաքի Վարժապետանոցը, որպէս զի նոքա այնտեղ իրենց ուսումը չարունակեն և, վարժուհու վկայական ստանալով, վերադառնան հայ դպրոցներում վարժուհութիւն անելու համար: Այդ չորս աղջիկներից մէկի ծախքը ինքը «Հայրենիք» լրագիրը իւր վրայ է առել, իսկ մնացած երեքի համար հանդանակութիւն էր բացած: Հանգանակութիւնը, որ մի տարի առաջ էր սկսած, մինչ ներկայ օգոստոսի 31-ը, տեւց 24.481 1/2 դրուշ արդիւնք, որ ասել է թէ աւելի քան 2000 ուրբլի: Չորս աղջիկները, որոնք են Զարէլ Նրամեան, Յուլիանէ Սարգսեան, Բրաբրոն Քէօմբարճեան և Վեհանուշ Բրիրեան, օգոստոսի վերջը ճանապարհ ընկան Նանսի: (Նկատենք որ Նանսի համալսարանական քաղաք է հիւսիս-արեւելեան Ֆրանսիայում, Գերմանիայի սահմանին մօտ: Վերջերքս տաճկա-հայ ուսանողների մի հոսանք է նկատուում դէպի այդ քաղաքը):

ՓԱՅՍԱԶՈՒԿ և ՍԱԻՐԱ հայ հարուստ գիւղերը Պարսկաստանում (Սալմաստի գաւառ) գնել է թաւրիղեցի Մաշայի-Բադր թուրք սեղանաւորը: Փալաջուկ ունի 227 տուն հայ բնակիչ (վաճառականներ և երկրագործներ): Նոր գիւղատէրը փոխանակ Նախկին 9 ից մէկի, սկսել է պահանջել բերքի 9-ից երեք: Այդ մասին բողոք է տրւած Թաւրիզ բալց գործը դեռ լուծումն չի ստացել:

ԽԱՐԲԵՐԴԻՑ տեղեկացնում են Հայրենիք լրագրին, թէ ներկայ տարւոյ մարտ ամսից մինչև օգոստոսի վերջը այդ քաղաքից 885 հաւերի անցագիր է տրւած: Եթէ աւսպէս չարունակելի, Խարբերդ կ'նաբնակ գաւառի չլսւած դժբաղդութեան մէջ պիտի ընկնի: Գնացողները մեծագոյն մասով գիւղացիներն են և գնում են Ամերիկա: Ամերիկայից վերադարձողների մասին թղթակիցը գրում է. «Ամերիկայից բերած դրամները գործածեցին անլուր գներով մէկմէկ կտոր հող առնելու, այդ հողերը չկարողացան շահագործել: Ամերիկայից բերած բարձր ու սովորութիւնը, կիսատ ու ծաղրիլի հանգամանքներով, կարող է

պատճառ համարել որ ունեցածի քիչ մնացածն էլ հասնէր, տները ձեռքը փոխեցին, կնիկների վրան-զլուխը թանկ լաթերով զարդարելու ելան և ալն»։ Եւ ասպա «կալերը տեղաւորելուց չետու, առանց չափազանցութեան պէտք է ասեմ թէ տղամարդ չալիսի մնալ ասկ կողմերը։ Շատ տներում և դաշտերում Չարսանճագի քիւրդ ծառաներ են բանեցնում»։

Խարբերդի հաւոց դպրոցից ֆրանսերէն լեզւի գասաւուլթիւնը վերացւեց, իսկ մնաց անդլիերէնը, որը միակն է ալժամ գնահատում. ալս տարւան ընթացաւարտներից անդլիերէն գիտցողները ամենքն էլ տեղ են գտել, իսկ ով միայն ֆրանսերէնը գիտէր՝ մնաց առանց գործի։

Առևտուր չկալ։

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, Կ. ՊՈԼՍՈՒՄ Կաղմ-ւել է մի ընկերութիւն կարօտ ուսանողներին օգնելու համար։ Ընկերութիւնը կոչւում է «կարօտ ուսանողներու նպաստամատուց ընկերութիւն»։ Նա պիտի նպաստէ զլիսաւորապէս ալն ուսանողներին, որոնք եւրոպական համալսարանների մէջ մանկավարժական գիտութիւն ստանալ են փափազում։ Այդ մարմինը կաղմելու զաղափարը, ասում է Հալիկնիք, չղացած է եղել երկու տարի առաջ, երբ պ. Լեոն Սեղբոսեան (Շանթ անունով «Մուրճ»-ի աշխատակիցը) Պոլսից մեկնեցաւ ու Գերմանիա գնաց կատարելագործելու համար մանկավարժական ուսումը։ Պր. Սեղբոսեանի հետ էր Նաև պ. Շամստանճեան, որ Նոն Նպատակով գնաց, բաւց ալժամ պատրաստում է գրական ասպարէզի համար։ Գոցանից չետու պատանի ուսանողներից, մանաւանդ Կ. Պոլսի կենտրոնական վարժարանի աշակերտներից, ոմանք փափազ լալոնեցին ուսուցչութեան պատրաստուիլ։ Եւ ահա ալս նոր ընկերութիւնը պիտի գալ նոցա օգնութեան։

Ներկալումս թիւրքա-հալերից մանկավարժութեան համար պատրաստում են մէկը կամ երկուսը Գերմանիալում, երկուսը Ֆրանսիալի Տուլուզ քաղաքի վարժապետանոցում և չորս հալ աղջիկներ՝ Ֆրանսիալի Նանսի քաղաքի վարժապետանոցում։

Այդ առիթով մենք կը նկատենք հետեւալը. ի նկատի առնելով որ ապագալում ուսուցչութեան պատրաստողները պէտք է գործեն հալոց դպրոցներում, և հետեւալէս լինեն իրար ընկեր նոլն իսկ միևնոլն դպրոցներում և իրար փոխարինող թէ իբր ուսուցիչներ և թէ իբր տեսուչներ. ի նկատի ունենալով որ նոքա կոչւած պիտի լինեն միևնոլն դպրոցական կենտրոնական իշխանութեան ներքոլ գործելու. ի նկատի ունենալով նաև որ ալք կենտրոնական ուսումնական խորհրդի մէջ բարձրագոլն մանկավարժութիւն ուսանողները

ժամանակով պիտի ներգործական դեր կատարեն,—ցանկալի է որ ալդ ապագազ դպրոցական գործիչները կրթւած լինեն կարելիին չափ միատեսակ մեթոդներով, դուրս եկած լինեն միեւնոյն դպրոցից։ Ալդ պալմանով նոքա մօտ ապագալում, թւով 10—20—30 հոգի, հալրենիք վերադարձած՝ կարող են մի զօրեղ մանկավարժական մարմին կազմել և ընդհանուր ուժերով կերպարանափոխել եղածը։ Հակառակ դէպքում, նոքա աւարտած կը լինեն ալ և ալ երկիրներում, ուր ուսուցանելու մեթոդների մէջ կարող են մեծ տարբերութիւններ և նոյն իսկ իրար հակառակութիւններ լինել, չխօսած արդէն ալդ ուսանողների տարբեր վարք ու բարքերի մասին, որոնք հարկաւ չեն նպաստիլ ալդ ապագազ գործիչներին իրար մերձենալու, իրար լարգելու և ձեռք ձեռքի տաւծ ընդհանուր գործ առաջացնելու։

Ալդ պառճաւով, մեր կարծիքով, նոր կազմւած նպաստամատոց ընկերութեան խորհուրդը, գործին արագ ծառայած լինելու համար, լաւ կ'անէր եթէ, նպաստ տալով հանդերձ՝ աշխատէր գէթ առաջմ ուղղել ապագազ ուսանողներին դէպի մի միակ երկիր և նոյն իսկ ալդ երկրի մի կամ երկու իբր լաւագոյն ճանաչւած բարձրագոյն վարժապետանոցները։

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈՒՅ միզ գրում են։ Քաղաքը սկսում է կերպարանափոխել։ ալստեղ բնակող զօրքի թիւը աւելացել է։ Թիֆլիս-կարս երկաթուղու կառուցումը բանող ձեռքեր է գրաւել դէպի քաղաքը, բնակարանները, որոնց մէջ քչերն են լաւ և լարմար, թանդացել են։ Գաւառում հացահատիկների հունձը ալս տարի շատ լաւ է, որով գիւղացիք կը կազդուրեն երկու տարի առաջ եղած անբերութիւնից։

ԳՐՈՉՆՕ՛Ւ ՆԱԻԹՂ։ Մեր ընթերցողներին արդէն չալտնի է (տես «Մուրճ» 1893 № 10), որ Հիւսիսային Կովկասում, Թերեկի նահանգի Գրոչնօ գաւառական քաղաքի մօտերքը երկու տարի առաջ երեացնաւթի ֆոնտան, ալդ դէպքը իւր վրալ մեծ ուշադրութիւն դարձրեց, և արդէն իսկ գուշակւում էր որ Գրոչնօ՛ն դառնալու է մի երկրորդ Բաքու։ Ալդ գուշակութիւնները ալժմ աւելի են արդարանում։ Ներկալ օգոստոսին հեռագիրը լուր բերեց թէ ալստեղ մի նոր ֆոնտան օրեկան խփում է 800 հազար փութ նաւթ։ Ալդ լուրը շատերից չափազանցւած թւաց, ալժմ լուրը լիապէս հաստատւում է, և ֆոնտանը, արդիւնագործութեան վարչութեան հաշւով, խփում էր նաւթ մինչ մի միլլիոն փութ մի օր ու գիշերալ մէջ։ Ֆոնտանը գտանւում է գրողնեան զօրաց հողաբաժնում (промышленный войсковой участок), որ կապալով է վերցրել պ. Կիրէեւ «Հալւերդով և Ընկ.» ֆիրմալով։ Նաւթի հոսանքը կանոնաւորելը, չնայած բոլոր ջանքերին, անհնա-

րին է եղած: Ֆոնտանը երևալու առաջին օրից խակ՝ ճալթը արագ սկսեց լցնել պատրաստած աւաղանը, ալնպէս որ բանւորները հազիւ կարողանում էին թումբը բարձրացնել, սեպտեմբերի 3-ին աւաղանի մէջ եղած ճալթը պատռեց թումբը, որ 6 արշին լաւնութիւն ունէր և երկու արշին բայձրութիւն, ու ճալթը հոսեց դէպի ստանիցալի (գիւղի) դաշտը ու Նեֆտեանկա գետակը որ թափւում է Սունժա գետ: Գլխարի բաժնի ատամանին հրամաւեց միջոցներ ձեռք առնել որ ճալթը չհասնի Սունժա գետը, որի ջուրը կը փչացնէր ճալթը:

ՄՈՒՂԱՆԻ ԳԱՇՏԻ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆԸ: Այն հետազոտութիւնները Մոզանի դաշտում, որոնց մասին լուսնարի և օդոստոսի համարներում խօսեցինք, աշնանս վերանորոգւում են, պէտք է կատարեն շարունակ ջրաչափումներ Արաքսում, հետազոտեն փութի ափունքները Զեւատից մինչև Սալեան, հետազոտելի ամբողջ Մուղանեան դաշտը Զեւատի և Լենքորանի դաւառների սահմաններում, Հետազոտող խումբը բաղկացած է հետեւեալ անձերից՝ տեղագրող (տոպոգրաֆ) Խոնկին, տեխնիկոս Մաւրիչե, բնագէտ Պիրոյկի, գիւղատնտես Սարգիս Մելիք-Սարգսեան և երկու օգնական տեխնիկոսներ: Խմբի անդամների մեծ մասը աշխատելու է դաշտի խորքերում:

Վերջնական խնդիրը՝ ալը ահագին դաշտը Արաքսի ջրով ոռոգելը և դաշտը գաղթականներով բնակեցնելն է:

ՍՈՒՒՈՒՄԻՅ գրում են: Վերջին ժամանակներս ամեն ամիս մի որ և է լանձնաժողով է գալիս մեզ մօտ: Նորերս աւտոնդ էր մի մասնաժողով, որը պէտք է չլջանի մի քանի պետական ազատ կալաձներ բնակեցնելու խնդիրը հետազոտելու: Ալը հողերը ծովի ափից հեռու են և զժաւար ացնելի ճանապարհներով: Հոկտեմբերի 3-ին եկաւ երկրագործութեան ղեկարտամէնտի վերատեսուչ Կոստըշով: Նովորոսիյսկի ֆաէտոնով հասել էր Սուխում 12 ժամում, ծովափեան խճուղիով: Կոստըշով Տուապսէ'ում տեղ տեւաւ գիւղատնտեսական զարոյց չինելու և Սոչի'ում ու Սուխումում՝ փորձնական կադրաններ չինելու համար:

ՆՈՐ ՆԱՀԱՆԳ: Ենթադրւում է՝ Սուխումի, Բաթումի և Արտւինի շրջաններից կաղմել մի նոր նահանգ (Չոկելով նոցա ֆուլթալիսի նահանգից): Պրոէկտը արդէն ներկայացրած է պետական խորհրդին: Նոր նահանգը կը ստանալ Զերնոմորեան (Սեծուխան) անունը:

ՄԱՀԻԱՆ ՊԱՏԻժ: արեւց Գանձակի զինւորական դատարանի կողմից՝ հինգ հողու, որոնք աւաղակալին չարձակում են գործել Կարադաղը-Էֆէնդի օղլիի տան վրայ, որի միջոցին սպանել են վերջինիս որդի Սաղաթալին'ին և վիրաւորել երեք ուրիշներին, որոնք եկած են եղել նորա աղադակի ձաջնին, օգնութիւն հասցնելու համար: Յիշեալ հինգ

աւազակները, որոնք մահաւան պատժի են դատապարտուել բնակիչներ են Գոկչալի գաւառի (բաքւալ նահանգ) Կադեան գիւղի, Դոքա են՝ Դալլակ-Մահմուդ Աբաս-օղլի, Սամէդ-Հուսէյն Ալի-օղլի, Աղալար-Ջէքա Չէշնալ-բէկ-օղլի, Ֆարդալի Մամադ օղլի և Խարալի Քերրալա-Մամադ-օղլի:

Զինւորական դատարանի նիստը շարունակւեց չորս օր, 15-ից մինչ 18 սեպտ. հաշւած, առաւօտ ժամ 10-ից մինչ ժամ 5 կէսօրից լետու:

Մեր ընթերցողներին լիշեցնում ենք, որ 1893 թ. հոկտ. 13-ին տւած Բարձրագոյն հրամանով՝ Կովկասեան կառավարչապետին իրաւունք է տրւած՝ մինչև երկրում աւազակութեան արմատախիլ լինելը՝ աւազակութեան, մտադրւած սպանութեան, ոչոք կողոպտելու, հրդեհելու, ապստամբութեան և իշխանութեանը զէնքով դիմադրելու մասին գործերը, ըստ իւր հալեցողութեան, ընդհանուր դատարանական հիմնարկութիւնների փոխանակ՝ չանձնել զինւորական դատարանին, մեղադրւածներին պատերազմական ժամանակի օրէնքներով դատելու համար: (Տես «Մուրճ» 1893 թ. № 10. «Նոր օրէնք Կովկասի համար» չօղւածը):

«ՄՈՒՐՃ»-Ը «ՀԱՅՐԵՆԻՔ»-ում: Կ. Պոլսի Հալիսի օրաթերթի 25-ն սեպտեմբերի համարում սկսում է Մուրճի 8-րդ №-ից արտատպւել (Փ. ստորագրութեամբ և լեզուն տաճկահայերէնի դարձրած) Վ. Փափազեանի «Նամակներ Անգլիայից» (Նամակ չորրորդ): Անցեալ տարիները Հալիսի քում Մուրճից արտատպւելին վէպիկներից և ուսումնասիրութիւններից ոմանք: Մեր աչք ժամանակ տւած հարցին աղբիւրը չիշատակելու մասին՝ Հալբենիքի խմբագրութիւնից և ոչ իսկ մասնաւոր նամակով պատասխան ստացանք:

ԲԱԶՄԱՎԷՊԸ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ: Բազմավէպ, իւր սեպտեմբերի համարում զբաղւում է Կովկասեան հալ լրագիրների լեզուով, կամ աւելի ճիշդը՝ օտար բառերի գործածութեան սովորութով. առաջ է բերում մի շարք օտար բառեր և դնում նոցա թարգմանութիւնները, առաջարկելով որ այս վերջինները գործածեն: Բազմավէպի առանջ բերւածներն մէջ կան անպիտանները, որոնց ուղիղ հալերէնը առանց աչք էլ գործ են ածում մեզանում (տոպոգրաֆիական՝ տեղագրական, էտնոգրաֆիական՝ ազգագրական, պոլիցիա՝ ոստիկանութիւն, դիրեկտոր՝ տեսուչ (վերատեսուչ?), պրինցիպ—սկիզբն (թէ սկզբունք) և այլն: Բաց արդէն ծիծաղելի է, երբ լուրջ կերպով Բազմավէպը առաջարկում է մարկիզի տեղ մարզպան կամ կուսակալ ասել, մին իստրի տեղ ոչ միայն նախարար, այլ և... հազարապետ: Իսկ international Բազմավէպը առաջարկում է փոխանակ արդէն ընդուն:

ւած միջազգային խօսքի՝ գործածել միջազգայնապաշտոն!!!
Ս. Ղազարում, երևում է որ, նույն իսկ խաղաղական ոգը չի ազդում
ճաշակի ներուժեան վրա:

ՀՐԴԵՀ ԲԱՔԻՈՒՄ: Սեպտեմբ. 14-ի առաւ. ժամ 5 ից սկսեց մեծ հրդեհ
Կասպեան ընկերութեան նաւթահանքում, Ռոմանում: Այրեց նաւթի
ֆոնտանը, հորի գազերի պաշտումի մի.ոցին ծանր աչրոցներ ստա-
ցան չորս բանար, որոնցից մէկը մեռաւ: Այդ աչրոզ ֆոնտանից
կրակը անցաւ Կրասնի իկեանի երկու նաւթահորերի վիշկաները,
Կասպեան ընկ. մի վիշկան և մասամբ նաև եղբ. Նորէլ ընկերու-
թեան մի վիշկան: Այսպիսով հրդեհից զաղար առին վեց հորերի
գործունէութիւնը, Կասպեան ընկերութեան աչրոզ ֆոնտանը տա-
լիս է օրական 50 հաւար փութ նաւթ, որը ամբողջապէս աչրում է:
Հրդեհի պատճառը դեռ չի պարզւած: Հրդեհը հանդցեց միայն սեպ-
տեմբերի 29-ին:

ՖՐԱՆՍԻԱՆ ՄԱԿԱԿԱՍԿԱՐՈՒՄ: Մաղադասկար մեծ կղզին, Աֆրիկայի
հարաւ-արեւելեան կողմում (Հնդկական ովկիանոս) աւելի քան կէս մի-
լիոն քառակուսի վերստ (կամ կիլոմետր) մեծութեամբ՝ նաւաւեց Ֆրան-
սիայից: Արշաւանքը վերջացաւ սեպտեմբեր ամսին մալթաքաղաքի վեր-
ցնելովը և տեղական հովանների թագուհու անձնատուր լինելովը: Կղզ-
ին, որ մեծ ապագա է խոստանում, ներկայումս ունի միայն 4—5 մի-
լիոն բնակիչ: Ֆրանսիան առաջիմ մտադիր է բաւականաճալ լոկ պրո-
տեկտորատ հաստատելով (ուրեմն վարելով ինչպէս Թունիսում և Ան-
նամ'ում, ճանաչելով տեղական իշխանութիւնը, սահմանափակումնե-
րով): Ասկալն վերջնական կառավարութեան ձևը դեռ ես որոշած չէ:

ՄԻՍՈՆԱՐՆԵՐԻ ԿՈՏՈՐՈՒՄ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ: Չինաստանի աջ մի քա-
նի քաղաքներում, ուր հաստատւած էին յրիտոնէական միսիո-
նարներ Եւրոպայից՝ չինացիք մի մեծ կոտորածք արին, որը դրդեց
Եւրոպական տէրութիւններին, չատկապէս Անգլիային՝ միջամտել,
պահանջով, որ երկրի կառավարիչը փոխի և չանցաւորները պատժեն:

ԿՈՐԷԱ, որի աւելիով եղաւ Չին-Նապոնական պատերազմը, պալատական
խառնակութիւնների ասպարէզ դառաւ: Էտելի մէջ, որ Կորէական
թագաւորութեան մալթ-քաղաքն է, զաւազրութիւն կազմեց թա-
գուհու գէմ, որը ջնրմ կողմնակից է աջն բանի որ Կորէան զաչնա-
կից լինի Չինաստանին, հետեապէս թշնամի էր Նապոնիային:
Դաւադրութեան գլուխը թագաւորի հայրն էր (Ուան-Կուն): Դաւա-
դրութեան գործադրութիւնը չանձնւած էր եապոնական սոլիներին,
որոնք Նապոնիայի իշխանութեան ֆանատիկոսներն են: Սպանե-
ցին թագուհին, պալատական միսիստը, թագուհուն չրջապատող
երեք կին, պալատի պահապաններից շատերը: Ապա թագաւորի

հայր Ուան-ուճը հրամայեց ձեռքակալել թագուհու կողմնակիցներից կարեւորագոյններին, նոր մինիստրներ կարգեց և իւր վրա՝ զիք-տատորական իշխանութիւն առաւ: Թագուհին 45 տարեկան էր և հռչակաւոր Մին ազգատոհմիցն էր: Նորա մարդը՝ Լի-Ուի՝ որ քսան երրորդ արքան է Հան ազգատոհմից, անունով դեռ կը շարունակի թագաւոր մնալ: Թագաժառանգ պրինց Լի-Տի ծնւած է 1873 թականին:—Անգլիական և ամերիկական նաւեր ուղարկեցին Սէուլի նաւահանգիստ Չեմուլպօ՝ Սէուլի մէջ եղած ղեսպանատները պաշտպանելու համար:

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ նորից փոխեց, և կոմս Կիլմանսէզի փոխարէն՝ մինիստր-նախագահ նշանակեց կոմս Բադենի:

† ԼՈՒԻ ՊԱՍՏԵՐ վախճանեց սեպտ. 29 (նոր տոմար): Պաստեօրը զիտութեան մէջ վեղաշրջողի դեր կատարեց: Նորա անունը դարձաւ ամենափառաւոր անուններից մէկն է և կը մնա՝ առմիշտ: Իւր բնագիտական գիւտերով և աշխատութիւններով նա հանդիսացաւ նաև իբր մեծ բարերար մարդկութեան:

Լուի Պաստեօր ծնւեց 1822 թւին: 1850-ական թականներին նա Լիլի համալսարանում պրոֆեսոր եղած ժամանակ զբաղեց կոման պրոցէսով, և գտաւ որ եռման գործում գլխաւոր դեր կատարողները ստոր օրգանիզմներ են—բակտերիաներ: Այդ գիւտը լետոյ դեռ մեծ հետեանքներ պիտի ունենար աչն բոլոր արդիւնագործութիւնների մէջ, ուր եռումն է կատարւում (գինեգործութիւն, զարեջրագործութիւն և այլն): Ապա 50-ական թականներին երկրորդ կիսում նա, ընդդէմ Պաւլէի, ապացուցեց թէ ոչ մի կենդանի արարած ինքն իրենից գոյանալ չի կարող և որ կողպած ամանի մէջ եթէ գոյանում են օրգանիզմներ, ալդ նրանից է որ ամանի մէջ օդի հետ սաղմեր են ներս մտնում: Ապա նա ցուց տուց աչն դերը որ կատարում են մանր օրգանիզմները փտելու մէջ. ալդ գիւտը մեծ նշանակութիւն ունեցաւ բժշկականութեան համար: Ապա Պաստեօրը զբաղեց չերամի որդնի հիւանդութիւններով և 5 տարի աշխատելով՝ հնար գտաւ առողջ որդներ արտադրելու՝ առողջ սերմերը քնկելով (ցելուլար սերմեր Պաստեօրի մեթոդով): Գորանով մեծ բարիք լառաջացաւ չերամապահութեան համար: Ապա նա շարունակեց զբաղել գինու և գարեջրի եռման և փճանալու պրոցէսներով, և գտաւ եղանակ գինին փճանալու պահպանելու (պաստեօրիզացիա) և եռման վնասակար արդիւնքները նազեցնելու համար: Ապա Պաստեօր զբաղեց սիբիրեան ցաւով և հաւալին խոլերազով, և գտաւ որ նոքա առաջանում են չատուկ միկրոբներով, որ գոյանում են արեան մէջ: Նա գտաւ միջոց՝ ալդ միկրոբների թունա-

ւորեցնելու ուժը նւազեցնելու համար՝ թուլացած բակտերիաներով պատւաստելու միջոցով որով պատւաստւած առողջները ապահովուած են վարակումից, Ղորանով նա մեծ ծառաւորութիւն արաւ գիւղատնտեսութեան: Նոյն մեթոդով նա գտաւ կատաղած շան թոնի միկրոբները և գտաւ պատւաստման միջոցով սղ թոնով վարակւածներին բժշկելու եղանակը: Այդ վերջին գիւտը ամենքին չալտնի է: Վերջին տարիներս նա վերատեսուչ էր Պարիզի «Պատտեօրեան ինստիտուտին», որ նւերւած է բակտերիաբիտական խնդիրների հետազօտութեան: Պատտեօրը մեթոդ հիմնեց, և այդ պատճառով նա ունեցաւ իւր գործը շարունակող աշակերտներ, որոնցից ոմանք արդէն չալտնի անուն են ստեղծել: Դեռ անցեալ տարի էր որ զր. Ռու գտաւ միջոց գիֆտերիտի դէմ:

Պատտեօրը թաղւեց Փրանսիական պետութեան հաշուով, Պատտեօրեան ինստիտուտում: Նորա թաղումը ամենափառաւորներիցն էր, ինչ երբ և իցէ եղել է: Թաղմանը ներկայ էին հանրապետութեան նախագահը, մինիստրները, ակադիմիկոսներ և այլ գիտնականներ, հազարաւոր պատգամաւորութիւններ և անհուն բազմութիւն:

† ՍՏԱՍՈՎԱ (Նաղեժդա Վասիլենա). Սեպտեմբ. 27-ին Պետերբուրգում վախճանեց տիկին Ստասովա, որը մէկն էր ամենշանաւոր և եռանդոտ գործիչներից Ռուսաստանում՝ կանանց բարձրագոյն կրթութեան համար: Նորա գործունէութիւնը սկսեց 40-ական թւականներին: Նա մեծ զգալնութիւն ցուց տւեց կանանց կրթութեան վերաբերեալ խնդիրների մէջ, առհասարակ: Դեռ օրիորդ ժամանակ նա մասնակցեց կիրաւնօրեալ դպրոցներ և կանանց տշխատանքի ընկերակցութիւններ կազմելուն: Նորա շուրջը հաւաքւում էին լաւագոյն երիտասարդ ուժերը: Նա մէկն էր գլխաւոր գործիչներից «աժան բնակարանների ընկերութեան»: Նորա աղղեցութեան ներքոյ կադմակերպւեցին աւսպէս կոչւած «ալարչիկեան կուրսեր», որոնց հովանաւորում էր ալն ժանանակալ կրթական մինիստր Դ. Ա. Տոլստոյ: Նոյն կինը կազմակերպեց ժողովարարութեան գործը ապագալ «բարձրագոյն կանանց կուրսերի» համար, որոնց բացւելու համար կանալք 400 ստորագրութեամբ խնդիրք մատուցին կառավարութեան—մի երեւթ, որ դեռ չէր եղած Ռուսիայում: 70-ական թւականներին կալացած բնագէտների համաժողովը պաշտպանեց այդ խնդիրքը, և կառավարութիւնը ընդունեց: Նորա անխոնջ ջանքերի շնորհիւ՝ կուրսերը բացւեցին և Ստասովան, իբր կուրսերի խորհրդի գլուխ՝ մնաց նոցա պահապան հրեշտակը, մինչև որ ալդ կուրսերը անցան տէրութեան ձեռքը: Ստասովան նախագահուհի էր Վիբորգ քաղաքի «մսուրների ընկերութեան»: Նա ընտրեց նաև նախագահ

նոր հիմնաւած «կանանց փոխադարձ բարեգործութեան ընկերութեան», վերջին ժամանակներս, 73 տարեկան հասակում, իւր թույլ աչքերով՝ նոյնպէս շարունակ նւիրած էր հասարակական կեանքին: Ստանդան թողեց ռուս հասարակութեան մէջ անմուռնալի զիշատակ:

ՆՈՐ ՍՏԱՅԱԾ ԳՐԳԵՐ

- 1) ՊԱԼԱՍԱՆԵԱՆ, Ստեփաննոս.— Պատմութիւն Հալոց սկզբից մինչ մեր օրերը: Երկրորդ տպագրութիւն: Հրատարակութիւն Թիֆլիսի Հալոց Հրատ. Ընկեր.: Թիֆլիս, տպ. Վրաց Հրատ. Ընկերութեան 1895 թ. գինն է 1 ռ. 50 կոպէկ:
- 2) ԼԵՅՔՈՒ, Ջոհն.— Հարիւր ամենալաւ գրքեր: Հին և նոր ժամանակի գլխաւորապէս բանաստեղծական ստեղծագործութեան կոլեկտեալական նիւթ: Թարգմանութիւն ռուսերէն թարգմանութիւնից Արշակ Նզդարեանի: Թիֆլիս, տպ. Ս. Վարդանիանցի, 1895 թ., գինն է 8 կ.:
- 3) ՇԷՔՍՊԻՐ, Թարգմ. Յովհ. Խան-Մասէհեանի.— Ինչպէս կ'ուզէք. Թատրերգութիւն 5 արարւածով: Հրատ. Թիֆ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Շարաձէի 1895. գինն է 50 կոպ.
- 4) ՄԱՍԻՎՈՆԵԱՆ, Մ.— Հազարից մէկը: Վէպիկ: Հրատար. Թիֆլ. Հալոց Հրատ. Ընկերութեան: Թիֆլիս, տպարան Յ. Մարտիրոսեանի: Գինն է 60 կոպէկ:
- 5) ՊԱՐՈՆԵԱՆ, Յ.— Մեծապատիւ մուրացկանները: Երրորդ տպագրութիւն: Հրատ. Թիֆլ. Հալոց Հրատ. Ընկեր.: Թիֆլիս, տպար. Վրաց Հրատ. Ընկ., 1895 թ., գինն է 40 կոպէկ:

ՎՐԻՊԱԿՆԵՐ Մուրճ № 6. Գալուստ Տէր-Սկրտչեանի խօսքում համապատասխան խօսքերը պէտք է ուղղել ալսպէս.

810.₃ (ալսինքն էջ 810, տող 3) պէտք է ուղղել՝ Արչակունիւնի պատմութիւնը. 813.₁ ներք.՝ իմ (տպւած է՝ եմ). 814.₃ ներք. Ուրարտու. 815.₁ շղթաները. 817.₉ հերձուած. 818.₉ ներք. Berlin 1894. էջ 819.₁₃ Մասքութք. 819.₁₇ Գամիրք. 820.₉ մեր Խաղտիքի. 821.₃ հաւանում (տպւած է՝ հաւատում). Նոյն էջ, տող 5՝ հալերինը. տող 17 Արմենիան. տող 23 Սելեկեանների. տող 24 Արտաքսիան. տող 32 Սենեքերիմի:

Նոյն խօսքում Մուրճ № 7.

962.₁₁ ներք. պէտք է ուղղել՝ անտիպ) վրալ: 963.₅ մեղ ծանօթ. 965.₁₀ ներք. կատարները. 966.₁₅ որ և բռնեցին. Նոյն էջ, տող 16 Աղամիանի. 969.₁₃ պարզութեամբ. 970.₁₀ լԱգրաս. Նոյն էջ, տող 18 գիտելով, գիտելով (տպւած է՝ գերելով, գիտելով). Նոյն էջ, տող

20 զհաւաստին (տպւած է՝ զհաւատին). 971.₁₈ անուն. 975.₁₄ Ներք.՝
ունեցանք:

Վրիթմկներ «Մուրճ»-ի անցեալ № 8 լրում. 1158.₈ (ալինքն էջ 1148,
տող 5-րդ) կատարել (ոչ՝ կատարելու մասին). 1159.₃₀ պալատալի
(ոչ՝ պալատալին). 1159.₃₈ քաղաքալին (ոչ քաղաքալի). 1159.₃₈
Քեորդ (ոչ՝ Գրիգոր). 1182.₈ ներքեից—1882 թ. (ոչ՝ 18 2 թ.):

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Անդրկովկասեան երկաթուղի:

Ճամբորդական գնացք № 1. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 30 ր., հասնում է Բաթում երեկ. 9 ժ. 45 րոպէ:

Ճամբորդական գնացք № 2. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում առաւօտ. 9 ժ. 40 ր., հասնում է Թիֆլիս երեկ. 9 ժ. 55 ր.:

Պոստային գնացք № 3. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս երեկոյեան 6 ժ. 50 ր., հասնում է Բաթում առաւ. 8 ժամ 15 րոպէ:

Պոստային գնացք № 4. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում գիշերաւ 11 ժ. 20 րոպէ, հասնում է Թիֆլիս ցերեկաւ 12 ժ. 25 րոպէ:

Պոստային գնացք № 3. Բաքուից Թիֆլիս, դուրս է գնում գիշերը 11 ժ. 5 ր. հասնում է Թիֆլիս երեկոյեան 5 ժ. 50 ր.:

Պոստային գնացք № 4. Թիֆլիսից Բաքու, դուրս է գնում ցերեկ. 1 ժ. 10 ր. հասնում է Բաքու առաւ. 7 ժ. 30 րոպէ:

Ապրանքա-ճամբորդական գնացք № 24. Թիֆլիսից Գանձակ, դուրս է գնում երեկեան 7 ժամ 27 ր., հասնում է Գանձակ առաւ. 7 ժ. 40 ր.:

Ապրանք-ճամբորդական գնացք № 25. Գանձակից Թիֆլիս, դուրս է գնում երեկոյեան 6 ժ., հասնում է Թիֆլիս առաւ. 7 ժ. 35 րոպէին Թիֆլիսից—Բորժոմ գնացքը դուրս է գալիս կէսօրից չետոյ 3 ժամին, առաւց վայրիջնելու Միխայլովօյում՝ հասնում է Բորժոմ. 8 ժամին 36 րոպէին:

Բորժոմից—Թիֆլիս գնացքը դուրս է գալիս գիշերաւ 12 ժամին 5 րոպէին, առաւց վայրիջնելու Միխայլովօյում՝ հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժամին 15 րոպէ:

Թիֆլիս Վլադիկաւկազի տրակտ:

Երթևեկութիւն ց1-ն նոյեմբերի 1895 թ.

Թիֆլիսից հինգ տեղանի կարեւորները դուրս են գնում առաւօտեան 7 և 9 ժամներին, վեցտեղանի օմնիբուսները կէսօրից չետոյ 3 և 5 ժամին: Հասնում են Վլադիկաւկազ հետեւեալ օրերը կէսօրից չետոյ՝ կարեւորները 6 ժ 50 ր. օմնիբուսները 7³⁰ և 9 ժ. 50 ր.

ՎԼԱԴԻԿԱՒԿԱՋԻՑ հինգտեղանի կարեւորները դուրս են գալիս առաւ. 5 և 9 ժամին, վեցտեղանի օմնիբուսները կէսօրից չետոյ 4 ժամին և 5 ժամին: Հասնում են Թիֆլիս հետեւեալ օրը կէսօրից չետոյ՝ կարեւորները 7 ժամ 25 ր. և 9 ժամին, օմնիբուսները 6 ժ. 40 ր. և 8 ժամ 25 րոպէին:

Լոյս տեսաւ
ԻԻԱՆ ՏՈՒՐԳԵՆԵԻԻ
„ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ“

(Стихотворенія въ прозѣ)

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Թարգմանեց

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԺԱՏՈՒՐԵԱՆ

Գինն է 50 կ., ծանապարհածախսով 60 կ.

Յանկացողները դիմում են Թիֆլիս Կենդրոնական գրավաճառանոցին կամ Թարգմանչին հետևեալ հասցէով՝ Москва, Большая Басманная Контора М. Л. Шоршорова.

Александрѣ Патурянѣ.

ԲԺՅԿ. Կ. ԱՐԺՐՈՒՆՈՒ

Հ Ի Պ Ն Ո Տ Ի Ս Մ

ՄԱՍՆ I

Անզգայական քուէն:—Քարացումն:—Քնայածութիւն:—Ներշնչումն:
Թովչութիւն կամ Հրապոյց:

Գինն է 25 կոպ.

ՄԱՍՆ II

Հիպնոսիամը հին դարերում:—Դիւականութիւն և Կախարչութիւն:
Սրբակրութիւն (մարգարէներ, քարոզիչներ):—Օրինակումն:—Ամբոխի հոգեբանութիւն:

Գինն է 15 կոպ.

Վաճառւում է Կենդրոնական գրավաճառանոցում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՈՍՍԻԱ“ „РОССІЯ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ 1881 թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԳՐԱՄԱԳՆՈՒԽՆԵՐ 20,500,000 ՐՈՒՔԼԻ
Ընկերութեան տնօրէններ թղթերը պահում են պետական բանկում:

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

աշխնքն զրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահակտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին:

1894 թւի չունարի 1-ին «Րոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրած էին 28.246 անձ 75,621,010 ռուբլի զրամագլխով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԵՊՔԵՐԻՑ

առանձին անձների, և թէ համագումար ապահովագրութիւններ դործարաններում ծառայողների և բանւորների, — սրկատեղիւով ապահովագրական վճարները՝ ղրկողէնդի փոխաբէն:

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալւածքները (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն):

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետալին, դամաքալին և ծովալին. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին չափաբարութիւնները ընդունում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37). Կովկասեան չըրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիւվսկաչա փ. տուն № 6. և բոլոր դորժակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրւում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւալին նաւատնակայաններում:

„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ի Ո Ւ Մ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ: ՎՊուրճ-ի բաժանորդագիրն է 10 ուրլի: Ուսուցիչները, ուսանողները, որպէս նաև արհեստաւորները վաչելում են 2 ուրլու զիջում, վճարելով 8 ուրլի: Բաժանորդագիրն կարելի է վճարել նաև մաս-մաս, սկզբում 5 (կամ 4) ուրլի, մնացեալը լրացնելով առաջին կիսամեակում:

Բաժանորդ գրւում են, զիմեւով՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, Թիֆլիս, Վիկտորինեան փողոց, տուն № 8:

Тифлис. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.

Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“

և կամ զիմեւով հետեւեալ անձերին կամ հիմնարկու թիւններին,

ԹԻՖԼԻՍ — } Բոլոր գրաւաճառանոցները:
ԲԱՔՈՒ — }

ԲԱԹՈՒՄ — պ. Սարգիս Մակարեան, Ծովխանեանի բանկ. գրասենեակ:
ԿԱՐՍ — պ. Աբէլ Ապրեսեան:

ԱԽԱԼՔԱԼԱՔ — պ. Զաւալ Տէր-Գրիգորեան:

ՆՈՒԻԻ — պ. պ. Աբրահամ Բունիաթեանց և Խաչատուր Խոջամիրեանց:

ԱԳՈՒՎԻՍ — պ. պ. Ստեփան Արասխանեանց և Աւետիս Դաւթեանց:

ՆԱԻԻՋԵԻԱՆ (Հին) — Արսէն վարդապետ Ղլոճեանց:

ՂԶԼԱՐ — պ. պ. Հմայեակ Մաժինեան և Կոստ. Գիւլնազարեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒԱՐ — պ. Արամ Շապովալեան:

ՄՈՍԿԻԱ — պ. Ալեքսանդր Ծատուրեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ — պ. Քր. Բաշինջաղեանին (Постин. дворъ № 7):